

Ա. Երևմյան, Դ. Թումասյան, Գ. Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԹՐԱՖԻԶԻՆԳԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Գիտական խմբագիր՝ Արա Երևմյան

Երևան 2009



«Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի դեմ պայքարի իրավական հիմունքները» վերտառությամբ սույն ձեռնարկի հրատարակությունն իրականացվել է ԱՄԿ և ԵԱՀԿ «Հայաստանում, Ադրբեյջանում և Վրաստանում թրաֆիքինգի դեմ պայքարի համապարփակ ծրագիր» և ՄԱԶԾ «Հայաստանում թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագիր. օժանդակություն կարողությունների զարգացմանը և աջակցություն տուժածներին» նախաձեռնությունների շրջանակում: Հեղինակներն օգտվել են Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ՄԲՄՄԿ) հեղինակած նյութերից:

Կարճ հատվածները կարող են օգտագործվել առանց հրատարակիչների հետ նախապես համաձայնեցնելու, սակայն նշելով աղբյուրը:

Short excerpts from the publication may be reproduced without authorization, on condition that the source is indicated.

Սույն ձեռնարկում ներկայացված տեսակետներն ու կարծիքներն արտահայտում են բացառապես հեղինակների մոտեցումները և կարող են չհամընկնել ԱՄԿ, ԵԱՀԿ, ՄԱԶԾ, ԵՄ և ՄԲՄՄԿ տեսակետներին և մոտեցումներին:

The views expressed herein solely belong to the authors of the book and can in no way be taken to reflect the official opinion of the European Union, ILO, UNDP, OSCE or ICMPD.

ISBN 978-92-9235-840-2

## **Գիտական խմբագիր՝ Արա Երևմյան իրավաբանական գիտությունների թեկնածու**

Հեղինակային կոլեկտիվ՝ Արա Երևմյան (գլուխներ 3, 4, 6), Դավիթ Թումասյան (3-րդ գլխի պարագրաֆ 3.4.3, գլուխներ 7, 8), Գեղեցիկ Գրիգորյան (գլուխներ 1, 2, 5):

Ձեռնարկում քննարկվում են թրաֆիքինգի քրեաիրավական բնութագիրը, միջազգային և ազգային կարգավորումը, թրաֆիքինգի կանխարգելումը, թրաֆիքինգի հետ կապված քննչական և օպերատիվ-հետախուզական գործունեությունը, զոհի (տուժողի) բնութագիրը և պաշտպանության հարցերը, հանցանքը կատարած անձանց պատասխանատվության և պատժի հիմնահարցերը, թրաֆիքինգի զոհերի ազգային ուղղորդման կարգը: Այսինքն, իրականացվել է համալիր մոտեցում և արդյունքում առաջարկվում են թրաֆիքինգի դեմ պայքարի որոշակի միջոցներ:

Ձեռնարկի նպատակն է աջակցել ազգային կառույցների ուժերով իրականացվող վերապատրաստման այնպիսի ծրագրի կայացմանը, որը կնպաստի Հայաստանում թրաֆիքինգի դեմ պայքարում ներգրավված իրավապահ մարմինների մասնագիտացմանը:

Ձեռնարկը նախատեսված է իրավապահ մարմիններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատողների համար: Այն կարող է օգտակար լինել հասարակական կազմակերպությունների, ուսանողների, դասախոսական կազմի, գիտաշխատողների և թրաֆիքինգի դեմ պայքարով հետաքրքրվող անձանց համար:

Հեղինակները շնորհակալություն են հայտնում Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ), Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) գրասենյակներին՝ ցուցաբերած տեխնիկական աջակցության համար: Ծրագրի իրականացումն անհնար կլիներ առանց Եվրամիության և Նորվեգիայի կառավարության ֆինանսական աջակցության:



Տպագրվել է «Էյ Ջի Փրինթ» տպագրատանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

**Բովանդակություն**

**Նախաբան**

**Ներածություն**

**Թրաֆիքինգի դեմ պայքարի բնագավառում հիմնական տերմինների բառարան..**

<b>ԳԼՈՒԽ 1. Թրաֆիքինգի դեմ պայքարի միջազգային իրավական հիմքերը</b> .....	15
1.1. Թրաֆիքինգը որպես մարդու հիմնարար իրավունքների խախտում.....	15
1.2. Միջազգային իրավական գործիքների արդյունավետությունը.....	19
1.3. Թրաֆիքինգի դեմ պայքարի բնագավառում միջազգային ակտերի բնութագիրը .....	21
1.3.1. ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիա.....	21
1.3.2. ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին 2000թ. թիվ 2 Արձանագրություն.....	23
1.3.3. ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող Յամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներս բերելու դեմ 2000թ. թիվ 1 Արձանագրություն.....	24
1.3.4. Եվրոպայի Լսորհրդի 2005թ. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին կոնվենցիա.....	26
1.3.5. Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին կոնվենցիա (թիվ 81) .....	28
1.3.6. Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին կոնվենցիա (թիվ 29) .....	29
1.3.7. Հարկադիր աշխատանքի վերացման մասին կոնվենցիա (թիվ 105) .....	31
1.3.8. Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման և վերացնելու անհապաղ միջոցառումների մասին կոնվենցիա (թիվ 182) .....	32
<b>ԳԼՈՒԽ 2. Թրաֆիքինգի գենդերային ասպեկտները և առանձնահատկությունները</b> .....	33
2.1. Թրաֆիքինգի գենդերային ասպեկտները .....	33
2.2. Թրաֆիքինգի գենդերային առանձնահատկությունները .....	34
<b>ԳԼՈՒԽ 3. Թրաֆիքինգի՝ որպես հանցատեսակի բնութագիրը</b> .....	37
3.1. Բրեականացման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում .....	37
3.2. ՀՀ քր.օր-ի 132 հոդվածով նախատեսված հանցագործության քրեաիրավական բնութագիրը .....	38

3.2.1. Թրաֆիքինգի սահմանումը ՀՀ քր.օր-ում	38
3.2.2. Թրաֆիքինգի տեսակները ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի	40
3.2.3. Ավարտված թրաֆիքինգ	41
3.2.4. Չավարտված թրաֆիքինգ	46
3.2.5. Հանցակցություն	47
3.3. Հանցակազմը	48
3.3.1. Հանցագործության օբյեկտը	48
3.3.2. Հանցագործության օբյեկտիվ կողմը	50
3.4. Հանցագործության սուբյեկտիվ կողմը	56
3.4.1. Շահագործման հասկացությունը	57
3.4.2. Չոհերի՝ շահագործման ենթարկվելու համաձայնությունը	58
3.4.3. Շահագործման ձևերը	60
3.5. Հանցագործության սուբյեկտը	66
3.5.1. Ընդհանուր սուբյեկտ	66
3.5.2. Հատուկ սուբյեկտ	67
3.6. ՀՀ քր.օր-ի 132 հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի որակյալ հատկանիշները	67
3.7. Թրաֆիքինգի հետ կապված այլ հանցագործություններ	69
3.7.1. Ընդհանուր ակնարկ	69
3.7.2. Կապված հանցագործություններ	70
3.7.3. Շահագործումը որպես կապված հանցագործություն	72
3.7.4. Պատասխանատվությունը փողի լվացման համար	74
<b>ԳԼՈՒԽ 4. Օպերատիվ-հետախուզական տվյալների հավաքագրում</b>	<b>78</b>
4.1. Օպերատիվ-հետախուզական տվյալների նշանակությունը	78
4.1.1. Հանցագործությունը քողարկելուն ուղղված գործողություններ	78
4.1.2. Եվրոպական մոտեցումը քրեական վարույթ սկսելու վերաբերյալ	80
4.1.3. Թրաֆիքինգի գործով վարույթ սկսելու առիթները	81
4.1.4. Օպերատիվ-հետախուզական գործունեությանը նպաստող հանգամանքներ	82
4.1.5. Օպերատիվ-հետախուզական տվյալների նշանակությունը	83
4.2. Թրաֆիքինգի վերաբերյալ օպերատիվ-հետախուզական տվյալների դասակարգումը	85
4.3. Թրաֆիքինգի վերաբերյալ օպերատիվ-հետախուզական տվյալների աղբյուրները	87
4.3.1. Սկզբնական օպերատիվ-հետախուզական տվյալների աղբյուրները	88
4.3.2. Խորացված օպերատիվ-հետախուզական տվյալներ	92
4.4. Սկզբնական և խորացված օպերատիվ-հետախուզական տվյալների մշակում	96

<b>ԳԼՈՒԽ 5. Թրաֆիքինգի քննության առանձնահատկությունները</b> .....	99
5.1. Գործի քննության սկզբունքները .....	99
5.2. Գործի քննության տարբերակները .....	99
5.3 Հարցաքննության առանձնահատկությունները .....	100
5.4. Ձուգահեռ ֆինանսական քննություն .....	102
5.4.1. Տեխնոլոգիաները որպես խնդրի մաս .....	103
5.4.2. Լրացուցիչ առավելությունները .....	104
<b>ԳԼՈՒԽ 6. Թրաֆիքինգի գոհի (տուժողի) պաշտպանությունը</b> .....	106
6.1. Թրաֆիքինգի գոհը (տուժողը)՝ որպես պաշտպանության միջոցների սուբյեկտ .....	106
6.2. Թրաֆիքինգից տուժողի՝ քրեական դատավարությանը մասնակցելու պարտականությունը .....	108
6.2.1. Կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում .....	108
6.2.2. Միջազգային իրավական մոտեցումը .....	109
6.3. Թրաֆիքինգի գոհի պաշտպանության հնարավոր սխեմաները .....	111
6.4. Թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ ՀՀ օրենսդրության ակնարկ .....	111
6.5. Վկաների պաշտպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրության ակնարկ .....	113
6.6. Վկայի (գոհի) պաշտպանության կարգավորումը .....	114
6.6.1. Պաշտպանության ենթակա անձինք .....	114
6.6.2. Քրեական դատավարությանը աջակցող անձինք .....	116
6.6.3. Քրեական դատավարության մասնակիցների ազգականները և մտերիմները .....	117
6.7. Վկաների պաշտպանության ծրագիր .....	119
6.7.1. Իրական կամ հավանական սպառնալիք .....	119
6.7.2. Ձեռնարկման ենթակա միջոցների վերաբերյալ համաձայնություն .....	119
6.7.3. Պաշտպանության կառուցակարգերը կիրառելու անհրաժեշտության և նպատակահարմարության հարցերը .....	120
6.7.4. Պաշտպանության իրականացման ժամանակահատվածը .....	122
6.8. Ձուգների նկատմամբ վերաբերմունքի սկզբունքները .....	123
6.9. Պաշտպանության հատուկ միջոցներ .....	126
6.9.1. Վկայի և պաշտպանության կողմի շահերի հավասարակշռությունը .....	126
6.9.2. ՀՀ Պետական պաշտպանության միջոցների համակարգը .....	128
6.9.3. Անանուն վկայությունների ինստիտուտը կամ, այլ կերպ ասած, պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունը .....	129
6.9.4. Պաշտպանվող անձի անվտանգության ապահովման միջոցները .....	132
<b>ԳԼՈՒԽ 7. Թրաֆիքինգ իրականացրած անձանց պատասխանատվության և պատժի հիմնահարցերը</b> .....	133
7.1. Թրաֆիքինգ իրականացրած անձանց բնութագիրը .....	133

7.2.Թրաֆիքինգով զբաղվող անձանց պատասխանատվությունը և պատիժը .....	138
<b>Գլուխ 8. Թրաֆիքինգի կանխարգելումը և թրաֆիքինգի</b>	
<b>գոհերի ազգային ուղղորդման կարգը .....</b>	<b>145</b>
8.1. Թրաֆիքինգի կանխարգելման էությունը և բովանդակությունը .....	145
8.2. Թրաֆիքինգի սոցիալական կանխարգելումը .....	150
8.3. Թրաֆիքինգի կանխարգելման գործընթացում միջազգային և հասարակական կազմակերպությունների մասնակցությունը .....	152
8.3.1.Թրաֆիքինգի կանխարգելման գործընթացում միջազգային համագործակցությունը .....	152
8.3.2. Թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով համագործակցող միջազգային կազմակերպությունները .....	159
8.3.3. Թրաֆիքինգի կանխարգելման գործընթացում հասարակական կազմակերպությունների մասնակցությունը .....	162
8.3.4. Թրաֆիքինգի ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը .....	164
<b>Գրականության ցանկ .....</b>	<b>170</b>
Հավելված 1. Թրաֆիքինգի դեմ պայքարի բնագավառում միջազգային իրավական գործիքներ .....	175
Հավելված 2. Թրաֆիքինգի կանխարգելման գործընթացում ՀՀ առանձին մարմինների իրավասության ընդհանուր ակնարկ .....	177

## Ներածություն

Թրաֆիքինգը որպես սոցիալական և իրավական խնդիր բազմաթիվ անգամ ուսումնասիրվել է և ներպետական, և միջազգային մակարդակով: Բննարկվել են դրա քրեաիրավական հարցերը, արդի վիճակն աշխարհում, նաև դրա զարգացումը, բայց ամփոփ ձևով թրաֆիքինգի ուսումնասիրությունը Հայաստանում դեռ չի կատարվել: Սույն ձեռնարկը բազմակողմանի ուսումնասիրություն է, որը հնարավորություն է տալիս իրազեկ լինել խնդրին և պայքարի արդյունավետ միջոցներ կիրառել Հայաստանում:

Սույն ձեռնարկում թրաֆիքինգը, մարդկանց առևտուրը և շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը դիտվում են որպես նույն՝ «թրաֆիքինգ» երևույթի տարբեր անվանումներ:

Սկսած 2002թ., երբ ՀՀ կառավարությունը ստեղծեց թրաֆիքինգի հարցերով խորհրդակցական մարմին, արձանագրվել են մի քանի դրական զարգացումներ. կատարելագործվել է թրաֆիքինգը քրեականացնող օրենսդրական դաշտը, իրավապահ մարմինները և մյուս դերակատարները սկսել են նույնացնել թրաֆիքինգից տուժողներին, և Հայաստանում գործող ՀԿ-ների ապաստաններից աջակցություն ստացող տուժողների թիվը զգալիորեն ավելացել է: Ընդհանուր առմամբ, թրաֆիքինգի դեմ պայքարի բոլոր մասնակիցների կարողությունները զարգացել են, թեև այդ կարողությունների ելակետային մակարդակը շատ ցածր է եղել:

2004թ. ՀՀ կառավարությունն ընդունեց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիրը: 2004-2006թթ. ընթացքում ՀՀ կառավարությունը որոշ քայլեր է ձեռնարկել թրաֆիքինգի մասին իրազեկությունը բարձրացնելու ուղղությամբ: Չնայած իրականացված բազմաթիվ ծրագրերին ու միջոցառումներին, թրաֆիքինգի դեմ պայքարի տարբեր ոլորտներում դեռևս առկա են զգալի բացեր:

Գործողությունների ազգային ծրագրի իրականացման համար թե՛ ֆինանսական, թե՛ մարդկային ռեսուրսները չեն բավականացնում: Թերություններից կարելի է նշել նաև տուժողների պաշտպանության կառուցակարգերի համակարգի բացակայությունը: Կարևոր է նշել, որ 2006թ. հուլիսին փոփոխություններ կատարվեցին թրաֆիքինգի մասին օրենսդրության մեջ, և էապես խստացվեցին պատիժները:

Զգալի քայլ էր ՀՀ կառավարության 2007թ. դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետությունում 2007-2009թթ. ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» որոշման ընդունումը, որի ռազմավարությունն ուղղված է ինչպես թրաֆիքինգի դեմ պայքարն իրականացնելու օրենսդրական բազայի ամրապնդմանը, այնպես էլ դրա իրականացման կառուցակարգերի ստեղծմանը:



Եվ վերջապես, մեծ նշանակություն ունի 2008թ. նոյեմբերի 20-ի N1385-Ա որոշմամբ ՀՀ կառավարության՝ Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը հաստատելը:

Տեսական աղբյուրների և պրակտիկայի վերլուծության արդյունքում՝ թրաֆիքինգի դեմ պայքարն ոսումնասիրելիս, կարելի է նշել թրաֆիքինգի առաջացման հետևյալ պատճառները՝

- մարդկանց խտրականության իրականացումը տարբեր հատկանիշներով,
- ընտանիքի ֆինանսական վիճակի անբավարար լինելը, որն անձին ստիպում է համաձայնել ցանկացած աշխատանք կատարելուն,
- անձանց կարիքներին համապատասխան աշխատանքի բացակայությունը քաղաքացիության երկրում, որի պատճառով աշխատանքի որոնումը ուղղվում է արտերկիր,
- կենսագործունեության տարբեր ոլորտներում գեներային անհավասարությունը,
- իրավական կուլտուրայի ցածր մակարդակը,
- անձանց հեշտ ներշնչվելու և վստահելու հոգեբանական հատկությունը,
- օրենքների իրագործման մեխանիզմների, տարբեր միջոցառումների (անհայտ կորած անձանց որոնում, փաստաթղթերի լրացում և այլն) իրականացման գործընթացների բացթողումները,
- թրաֆիքինգի եկամտաբերության բարձր լինելը:

### **Ձեռնարկի նպատակը**

Սույն ձեռնարկը նախատեսված է իրավապահ մարմիններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատողների համար: Այն կարող է օգտակար լինել հասարակական կազմակերպությունների, ուսանողների, դասախոսական կազմի, գիտաշխատողների և թրաֆիքինգի դեմ պայքարով հետաքրքրվող անձանց համար:

Ձեռնարկի նպատակն է աջակցել ազգային կառույցների ուժերով իրականացվող վերապատրաստման այնպիսի ծրագրի կայացմանը, որը կնպաստի Հայաստանում թրաֆիքինգի դեմ պայքարում ներգրավված իրավապահ մարմինների մասնագիտացմանը: Ուսումնասիրվել է նաև թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում առկա իրավիճակը և ներկայում ձեռնարկվող միջոցառումները, ինչպես նաև ապագայում հնարավոր միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ են ներկայացվել պետական մարմիններին, միջազգային կազմակերպություններին և քաղաքացիական հասարակությանը: Առաջնահերթ խնդիրներից է նաև օժանդակել թրաֆիքինգի դեմ պայքարի հայաստանյան գործելակերպի բարեփոխումներին՝ դրանք առավել համահունչ դարձնելու միջազգային լավագույն փորձին՝ այդ ուղղությամբ իրականացվող միջոցառումներն ավելի արդյունավետ դարձնելու համար:

Տվյալների աղբյուրները և տվյալների հավաքման մեթոդները համադրվել են, որպեսզի հնարավորության դեպքում հաստատվի ստացված տեղեկատվության ստույգ լինելը: Կարևոր տեղեկությունների տիրապետող անձինք են ընտրվել պետական մարմիններից, միջազգային

կազմակերպություններից և ՀԿ-ների ներկայացուցիչների թվից՝ հաշվի առնելով նրանց դերը հակաթրաֆիքինգային ազգային կառույցում՝ Խորհրդում ու աշխատանքային խմբում, և/կամ Միջազգային աշխատանքային խմբում, ինչպես նաև թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներին նրանց ունեցած մասնակցությունը:

### **Ձեռնարկի առարկան**

Սույն ձեռնարկի առարկան թրաֆիքինգն է, նրա քրեաիրավական բնութագիրը, միջազգային և ազգային կարգավորումը, թրաֆիքինգի հետ կապված քննչական և օպերատիվ-հետախուզական գործունեությունը, զոհի (տուժողի) բնութագիրը և պաշտպանության հարցերը: Այսինքն, իրականացվել է համալիր մոտեցում թրաֆիքինգը ուսումնասիրելու համար և դրա արդյունքում առաջարկվում են պայքարի որոշակի միջոցներ:

### **Ինչպես օգտվել ձեռնարկից**

Սույն ձեռնարկը պարունակում է ինչպես տեսական նյութ, որն անհրաժեշտ է այս թեմայով հետաքրքրվող անձանց տեսական գիտելիքների ամրապնդման համար, այնպես էլ գործնական խնդիրներ, առկա պրակտիկայից բերված օրինակներ և քննարկումների համար նյութեր:

## **Թրաֆիքինգի դեմ պայքարի բնագավառում հիմնական տերմինների բառարան**

**1. Անօրինական մուտք՝** սահմանների հատում առանց ընդունող պետություն օրինական մուտքի համար անհրաժեշտ պահանջների պահպանման *(ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող Յամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներս բերելու դեմ 2000թ. թիվ 1 Արձանագրություն, հոդ.3, «բ» ենթակետ)*

**2. Անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ՝** միջազգայնորեն ճանաչված՝ անձը հաստատող ճամփորդական փաստաթուղթ, որը տրված է օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից և իրավունք է տալիս հատելու պետական սահմանը *(«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք, հոդ.3)*

**3. Երեխա՝** ցանկացած անձ, որի 18 տարին չի լրացել *(ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին 2000թ. թիվ 2 Արձանագրություն, հոդ.3, «ա» ենթակետ)*

**4. Լուրջ հանցագործություն՝** այն հանցագործությունը, որը պատժվում է չորս տարուց ոչ պակաս ազատազրկմամբ ժամկետով կամ ավելի խիստ պատժաչափով *(ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին 2000թ. կոնվենցիա, հոդ.2)*

**5. Կազմակերպված հանցավոր խումբ՝** երեք և ավելի անձանցից կազմված կառուցվածքայնորեն ձևավորված խումբ, որը գոյություն ունի որոշակի ժամանակահատվածում և համաձայնեցված գործում է մեկ կամ մի քանի լուրջ հանցագործություններ կամ այնպիսի հանցագործություններ կատարելու նպատակով, որոնք այդպիսին են ճանաչվել ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին 2000թ. կոնվենցիային համապատասխան՝ այն հաշվով, որ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստանա ֆինանսական կամ այլ նյութական շահ *(ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին 2000 թ. կոնվենցիա, հոդ.2)*

**6. Կանանց նկատմամբ բռնություն՝** նշանակում է՝

ա) ֆիզիկական, սեռական և հոգեբանական այն բռնությունը, որը կատարվում է ընտանիքում՝ ներառյալ ծնծը, սեռական հարկադրանքը աղջնակների նկատմամբ ընտանիքում, օժիտի հետ կապված բռնությունը, կնոջ բռնաբարությունը ամուսնու կողմից, կանացի սեռական օրգանների վնասումը և կանանց վնաս պատճառող պրակտիկայի այլ ավանդական ձևեր, արտամուսնական բռնությունը և շահագործման հետ կապված բռնությունը,

բ) ֆիզիկական, սեռական և հոգեբանական այն բռնությունը, որը կատարվում է հասարակության մեջ՝ ներառյալ բռնաբարությունը, սեռական հարկադրանքը, սեռական նկրտումներն ու անհաբեկումը աշխատանքի վայրում, ուսումնական հաստատություններում և այլ վայրերում, կանանց առք ու վաճառքը և հարկադրանքը պոռնկության,

գ) ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնությունը պետության կողմից կամ նրա թողտվությամբ, որտեղ էլ որ այն կատարվի (*Նշակագիր կանանց նկատմամբ բռնության արևատական վերացման մասին, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1993թ. դեկտեմբերի 20-ի Բանաձև, հոդ. 2*)

#### **7. Մարդկանց առևտուր կամ թրաֆիքինգ**

*«Մարդկանց առևտուր» և «մարդկանց թրաֆիքինգ» հասկացությունները վերաբերում են նույն՝ թրաֆիքինգ երևույթին: Դրանք սահմանվել են մի դեպքում՝ ՄԱԿ-ի, իսկ մյուս դեպքում՝ Եվրոպայի խորհրդի համապատասխան փաստաթղթերում հետևյալ բովանդակությամբ՝*

**Մարդկանց առևտուր՝** շահագործման նպատակով իրականացվող մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը ուժի սպառնալիքով կամ դրա կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունը ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով (*ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին 2000թ. թիվ 2 Արձանագրություն, հոդ.3, «ա» ենթակետ*)

**Թրաֆիքինգ՝** շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը՝ ուժի սպառնալիք կամ ուժ գործադրելու կամ հարկադրանքի որևէ այլ ձև կիրառելու, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու, կամ այլ անձնավորության նկատմամբ որոշակի վերահսկողություն իրականացնող որևէ անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով դրամական միջոցներ կամ այլ օգուտներ տրամադրելու կամ ստանալու եղանակով (*Եվրոպայի խորհրդի 2005թ. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին կոնվենցիա, հոդ.4, «ա» ենթակետ*):

**8. Մանկավաճառություն՝** ցանկացած գործողություն կամ գործարք, որի միջոցով երեխան որևէ անձի կամ անձանց խմբի կողմից փոխանցվում է այլ անձի կամ անձանց խմբի՝ վարձատրության կամ ցանկացած այլ հատուցման դիմաց (*Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին թիվ 2 կամրնտիր արձանագրություն, հոդ.2*)

**9. Մանկական մարմնավաճառություն՝** երեխայի օգտագործումը սեռական բնույթի գործունեության մեջ՝ վարձատրության կամ ցանկացած այլ տեսակի հատուցման դիմաց (*Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին թիվ 2 կամրնտիր արձանագրություն, հոդ.2, «բ» ենթակետ*)

**10. Մանկական պոռնոգրաֆիա՝** որևէ միջոցով երեխայի ցանկացած ցուցադրում, որը կատարում է իրական կամ մոդելավորված բացահայտ սեռական գործողություններ, կամ

երեխաների սեռական օրգանների ցանկացած ցուցադրում՝ գլխավորապես սեռական նպատակներով (*Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին թիվ 2 կամընտիր արձանագրություն, հոդ.2, «գ» ենթակետ*)

**11. Միգրանտների անօրինական ներմուծում՝** որևէ Մասնակից պետություն որևէ անձի, որը չի հանդիսանում նրա քաղաքացին կամ մշտապես չի բնակվում նրա տարածքում, անօրինական ներմուծման ապահովում՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն որևէ ֆինանսական կամ այլ նյութական շահ ստանալու նպատակով (*ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող Յամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներս բերելու դեմ 2000թ. թիվ 1 Արձանագրություն, հոդ.3, «ա» ենթակետ*)

**12. Մուտքի / ելքի կամ անձը հաստատող կեղծ փաստաթուղթ՝** մուտքի / ելքի կամ անձը հաստատող ցանկացած փաստաթուղթ, որը՝

ա) կեղծվել կամ որևէ նյութական ձևով փոփոխվել է ցանկացած անձի կամ հիմնարկի կողմից, բացի նրանցից, որոնք օրինական կարգով լիազորված են պետության անունից պատրաստել կամ տալ մուտքի/ելքի կամ անձը հաստատող փաստաթուղթ, կամ

բ) տրվել է ոչ պատշաճ ձևով կամ ստացվել է ոչ ճիշտ տվյալներ ներկայացնելու, կաշառակերության կամ հարկադրանքի օգնությամբ կամ որևէ այլ անօրինական ձևով, կամ

գ) օգտագործվում է ոչ թե օրինական տիրոջ, այլ ուրիշ անձի կողմից (*ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող Յամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներս բերելու դեմ 2000թ. թիվ 1 Արձանագրություն, հոդ.3, «գ» ենթակետ*)

**13. Հարկադիր կամ պարտադիր աշխատանք՝** որևէ պատժի սպառնալիքի տակ որևէ անձից պահանջվող ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որի համար այդ անձը կամավոր չի հայտնել իր համաձայնությունը, բացառությամբ հարկադիր կամ պարտադիր աշխատանքներին վերաբերող այն դրույթների, որոնք ամրագրված են ԱՄԿ-ի թիվ 29 կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասում, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ մասում ու Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 8-րդ հոդվածի 3-րդ մասում (*ՄԱԿ-ի Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին կոնվենցիա, հոդ.2, մաս 1*)

**14. Հյուսվածք՝** ընդհանուր գործառույթով, կազմվածքով և/կամ ծագմամբ միավորված բջիջների և ոչ բջջային կառուցվածքների համակարգ (*Մարդկանց, մարդկային օրգանների և հյուսվածքների առևտրի դեմ պայքարում ԱՊՀ Մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագիր, 2006թ., հոդ.1*)

**15. Տուժող՝** մարդկանց թրաֆիքինգի մեջ ներքաշված ցանկացած ֆիզիկական անձ (*Եվրոպայի խորհրդի 2005թ. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին կոնվենցիա, հոդ.4*)

**16. Օրգան**՝ օրգանիզմի մաս, որն իրենից ներկայացնում է հյուսվածքների էվոյուցիոն կազմավորված համալիր՝ միավորված ընդհանուր գործառնություն, կառուցվածքային կազմվածքով և զարգացմամբ (*Մարդկանց, մարդկային օրգանների և հյուսվածքների առևտրի դեմ պայքարում ԱՊՀ Մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագիր, 2006թ., հոդ.1*)

**17. Շահագործում**՝ նվազագույնը ներառում է այլ անձանց մարմնավաճառության շահագործումը կամ սերտուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը համանման սովորույթները, անազատ վիճակը կամ մարմնի մասերը կորզելը (*ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին 2000թ. թիվ 2 Արձանագրություն, հոդ.3, «ա» ենթակետ*)

**18. Ստրկություն**՝ անձի վիճակը կամ դրությունը, ում նկատմամբ իրականացվում են սեփականության իրավունքին բնորոշ բոլոր կամ որոշակի լիազորությունները (*ՄԱԿ-ի Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը հավասարազոր ավանդույթների վերացման մասին Լրացուցիչ կոնվենցիա, 1956թ., հոդ. 7, «ա» ենթակետ*)

**19. Ստրկությանը հավասարազոր վիճակը** ներառում է պարտքի դիմաց աշխատանքը, ճորտային աշխատանքը, պարտադրված կամ հարկադիր ամուսնությունը և ապագա շահագործման նպատակով երեխաների ծննդաբերումը (*ՄԱԿ-ի Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը հավասարազոր ավանդույթների վերացման մասին Լրացուցիչ կոնվենցիա, 1956թ., հոդ.1*)

## ԳԼՈՒԽ 1

### Թրաֆիքինգի դեմ պայքարի միջազգային իրավական հիմքերը

#### 1.1. Թրաֆիքինգը որպես մարդու հիմնարար իրավունքների խախտում

Օքսֆորդի բացատրական բառարանում «trafficking» տերմինը մեկնաբանվում է իբրև ինչ-որ բանի անօրինական առք ու վաճառք<sup>1</sup>, իսկ անգլերեն-ռուսերեն իրավաբանական բառարանում՝ արգելված ապրանքի առևտուր, բիզնես, մաքսանենգություն<sup>2</sup>: «Trafficking in Persons» կամ «Trafficking in Human Beings» տերմինը կապվում է մարդկանց առևտրի հետ և միջազգային իրավական փաստաթղթերում ու գրականության մեջ օգտագործվում է տարբեր կերպ՝ մարդկանց առևտուր, մարդկանց շահագործում, մարդկանց թրաֆիքինգ, ստրկացում և այլն: ՀՀ կառավարության 2004թ. հունվարի 15-ի թիվ 58-Ն, 2007թ.-ի դեկտեմբերի 6-ի թիվ 1598 և 2008թ. նոյեմբերի 20-ի թիվ 1385-Ա որոշումներում օգտագործվում է «մարդկանց շահագործում (թրաֆիքինգ)» արտահայտությունը, իսկ ՀՀ քր. օր-ում օգտագործվում են «շահագործում» և «ներկսայի առք ու վաճառք» հասկացությունները: Տերմինաբանական միասնությունն ապահովելու նպատակով սույն ձեռնարկում հիմնականում օգտագործվել է «թրաֆիքինգ» հասկացությունը, իսկ պաշտոնական փաստաթղթերի վկայակոչման դեպքում՝ նաև «մարդկանց առևտուր», կամ «մարդկանց թրաֆիքինգ», կամ «շահագործում» տերմինները:

Թրաֆիքինգի հիմնական դիրքն ունի պատմական խոր արմատներ: Իր զարգացման տարբեր փուլերում մարդկությունը տարբեր կերպ է վերաբերվել դրան: Ստրկատիրական հասարակարգում մարդկանց առևտրի նկատմամբ վերաբերմունքը բավականաչափ ազատական էր, մարդու առուծախը դիտվում էր որպես օրինական հարստացման միջոց: Աստիճանաբար մարդկությունը գիտակցեց հարստացման այդ ձևի անընդունելիությունը, քանի որ ստրկությունը ծայր աստիճան խտրականություն էր առաջացնում մարդու նկատմամբ, նվաստացնում նրա պատիվն ու արժանապատվությունը և զրկում բոլոր կարևոր կենսական իրավունքներից: Այդ ամոթալի նրկույթի դեմ բազմադարյան պայքարը, որը սկսվել է դրա ծագման հետ միաժամանակ, ոչ միայն չի նվազել, այլև ուժեղացել է:

Թրաֆիքինգի ժամանակակից ձևը մարդու իրավունքների խախտում է, որը հանցագործություն է և՛ անհատի, և՛ պետության դեմ: Այդ նրկույթն առաջացնում է օրենսդրական այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են արարքի քրեականացումը և միասնական քրեական քաղաքականության իրականացումը: Թրաֆիքինգը առաջացնում է տարբեր հետևանքներ դրա զոհը դարձած անձանց համար, այդ թվում՝ հոգեբանական և ֆիզիկական վնաս, լուրջ հետևանքներ առողջության համար, ներառյալ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով վարակվելը:

Թրաֆիքինգին նպաստում են գեներալային անհավասարությունը, աղքատությունը, կրթական ցածր մակարդակը, կոռուպցիան, դատական և իրավական համակարգերի թերությունները,

<sup>1</sup> Oxford Advanced Learner's Dictionary, 7-th edition, Oxford University 2007, p.1628

<sup>2</sup> С.Н. Андрианов, А.С. Берсон, А.С. Никифоров -Англо-русский юридический словарь, Москва, изд-во "Руссо"-2000г., стр.435.

քաղաքացիական անկայունությունը և ներպետական բազմաթիվ այլ գործոններ: Դա, սակայն, չի նշանակում, որ թրաֆիքինգն առկա է միայն թվարկված ռիսկային գործոններով համակարգերում: Թրաֆիքինգը պետական սահմաններ չի ճանաչում, տարբերություն չի դնում զարգացած և զարգացող պետությունների միջև: Այն հեշտությամբ հարմարվում է ինչպես աղքատությանը, այնպես էլ՝ շքեղությանը և արդիական է ինչպես խաղաղ պայմաններում ապրող, այնպես էլ ռազմական հակամարտությունների մեջ ներքաշված ժողովուրդների համար:

Թրաֆիքինգի՝ որպես սոցիալական և քրեաիրավական երևույթի ծավալները վերջին տարիներին ընդլայնվել են: Տարբեր աղբյուրների համաձայն, ամեն տարի թրաֆիքինգի զոհ է դառնում 2,5 միլիոնից մինչև 4 միլիոն մարդ<sup>3</sup>: Իսկ հետախուզական աղբյուրները նշում են, որ մարդկանց առևտուրը առավել արագ աճող բիզնես է աշխարհում: Այսպես, Եվրոպոլի կազմակերպված հանցավորության մասին 2004թ. զեկույցի համաձայն, աշխարհում մարդկանց առևտրի հետ կապված դրամական շրջանառությունը տարեկան կազմել է 8,5 - 12 մլրդ. եվրո<sup>4</sup>: ԱՄԿ-ի 2008թ. գնահատմամբ՝ աշխարհում թրաֆիքինգի զոհ դարձած կանանց, տղամարդկանց և երեխաների շահագործման արդյունքում եկամուտները տարեկան կազմում են շուրջ 32 մլրդ. դոլար<sup>5</sup>:

Չնայած այն հանգամանքին, որ թրաֆիքինգի զոհերն այդ կարգավիճակում հայտնվում են իրենց կամքին հակառակ, այնուամենայնիվ հասարակության մեջ դեռևս սխալ պատկերացումներ կան զոհերի վերաբերյալ, ինչն իր հերթին խոչընդոտում է թրաֆիքինգի դեմ արդյունավետ պայքարի իրականացմանը: Թրաֆիքինգի՝ որպես սոցիալական երևույթի և դրա զոհերի մասին ձևավորված սխալ կամ մոլորեցնող առավել տարածված պատկերացումները ներկայացվում են ստորև՝

ա) սնունդային շահագործման ենթարկվող կանայք անձամբ են մեղավոր իրենց հետ կատարվածի համար: Նրանք հիանալի գիտեն, թե ու՞ր և ինչի՞ համար են գնում: Դրա համար նրանք պետք է դատապարտվեն, քանի որ մարմնավաճառությունը հասարակական չարիք է,

բ) թրաֆիքինգի ենթարկվում են միայն երիտասարդ կանայք, ովքեր օգտագործվում են սնունդային շահագործման նպատակով: Տղամարդիկ, երեխաները, միջին կամ մեծ տարիքի կանայք թրաֆիքինգի զոհ չեն դառնում,

գ) թրաֆիքինգի զոհ են դառնում միայն քիչ կրթված և միամիտ մարդիկ,

դ) այն մարդիկ, ում տեղաշարժման ազատությունը սահմանափակված չէ, թրաֆիքինգի զոհեր չեն կարող լինել,

ե) թրաֆիքինգը չի կարող իրականացվել մեկ երկրի սահմաններում, այն միշտ կապված է արտերկիր մեկնելու հետ:

<sup>3</sup> Пособие по борьбе с торговлей людьми для правоохранительных органов, ООН /ПРООН/, 2006, стр.24. См.также МОТ, Глобальный альянс против принудительного труда, 2005, стр.46.

<sup>4</sup> ЕВРОПОЛ, Отчет об организованной преступности, 2004, стр.12.

<sup>5</sup> МОТ, Глобальный альянс против принудительного труда, 2005, стр.47.



Արդյունքում, թրաֆիքինգի՝ որպես երևույթի և թրաֆիքինգի գոհերի մասին նման թյուր պատկերացումներ ունեցող մարդիկ հենց իրենք կարող են հայտնվել խոցելի վիճակում և դառնալ թրաֆիքինգի գոհ այն պատճառով, որ իրենք իրենց խոցելի չեն համարում:

Քաղաքակիրթ աշխարհը սոցիալական արդարության տեսակետից գերակայություն է տալիս մարդու իրավունքներին և ազատություններին: Մարդու իրավունքների և մարդկային արժանապատվության հարգումը «ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքն է»<sup>6</sup>: *Մարդու իրավունքները՝*

- համընդհանուր են, քանի որ պատկանում են բոլոր մարդկանց,
- փոխկապակցված են և փոխլրացնող, քանի որ քաղաքական և քաղաքացիական իրավունքները օգնում են իրականացնել տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներն ու հակառակը,
- անօտարելի են, քանի որ դրանցով մարդն օժտված է ի ծնե, ուստի ոչ ոք չի կարող նրան զրկել այդ իրավունքներից:

*Մարդու իրավունքները բնորոշվում են մի շարք չափանիշներով՝*

- բոլոր մարդիկ, առանց որևէ խտրականության, ունեն հիմնական իրավունքներ ու ազատություններ,
  - մարդն օժտված է բնական իրավունքներով և ազատություններով, անկախ տարածքից, պետական և հասարակական կառուցվածքից, քաղաքական ռեժիմից,
  - մարդու իրավունքները պաշտպանվում են ազգային և միջազգային մակարդակով,
  - անընդունելի է առաջնություն տալ իրավունքների մի մասին և անտեսել մյուսները:
- Թիվ 1 աղյուսակում ներկայացվում են թրաֆիքինգի արդյունքում մարդու հիմնական իրավունքների հաճախ հանդիպող խախտումները:

---

<sup>6</sup> Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ներածություն:

**Թրաֆիքինգի արդյունքում  
մարդու իրավունքների հաճախ հանդիպող խախտումները**

Մարդու իրավունքներ	Միջազգային-իրավական գործիքներ
Արժանապատվության իրավունք	<ul style="list-style-type: none"> <li>• Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդ.1, 12</li> <li>• Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդ.10</li> <li>• Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդ.8</li> <li>• Եվրոպական սոցիալական խարտիա, հոդ.26</li> </ul>
Խտրականությունից զերծ մնալու իրավունք	<ul style="list-style-type: none"> <li>• Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդ. 1, 2, 7</li> <li>• Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա, հոդ. 3</li> <li>• Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդ.14</li> <li>• Եվրոպական սոցիալական խարտիա, հոդ.20</li> </ul>
Եյանքի, ազատության և սեփական անձի անձեռնմխելիության իրավունք	<ul style="list-style-type: none"> <li>• Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդ.3</li> <li>• Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդ.9</li> <li>• Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդ.1, 5</li> </ul>
Ստրկությունից, շահագործումից ազատ լինելը, հարկադիր աշխատանքի արգելումը	<ul style="list-style-type: none"> <li>• Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդ.4</li> <li>• Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդ.8</li> <li>• Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդ.10-3</li> <li>• ՄԱԿ-ի Ստրկության մասին կոնվենցիայի լրացուցիչ Արձանագրությունը Ստրկության, ստրկավաճառության, ստրկության ինստիտուտների և ստրկությանը նմանվող պրակտիկայի վերացման մասին</li> <li>• Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդ.4</li> <li>• Եվրոպական սոցիալական խարտիա, մաս 1, հոդ. 1, 2</li> </ul>
Խոշտանգումների և/կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունք	<ul style="list-style-type: none"> <li>• Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդ.5</li> <li>• Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդ.7</li> <li>• Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդ.3</li> <li>• Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի դեմ պայքարի մասին կոնվենցիա</li> </ul>
Արդարադատության մատչելիության և արդար դատաքննության իրավունք	<ul style="list-style-type: none"> <li>• Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդ.8,10</li> <li>• Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդ.14</li> <li>• Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդ.6, 13</li> <li>• Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա, հոդ. 16</li> </ul>
Կամայական կալանքից, ձերբակալումից կամ արտաքսումից զերծ մնալու իրավունք	<ul style="list-style-type: none"> <li>• Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդ.9</li> <li>• Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդ.5</li> </ul>

Տնդաշարժի  
ազատության և  
սնփական բնակության  
վայրն ազատորեն  
ընտրելու իրավունք  
Ապաստանի իրավունք

Ազատ արտահայտվելու  
և մասնակցելու (Երկրի  
կառավարմանը,  
միություններին և այլն)  
իրավունք

Առողջապահական և  
սոցիալական  
ծառայություններից  
օգտվելու իրավունք

Աշխատանքի ազատ  
ընտրության իրավունք

Կրթության և  
վերապատրաստման  
իրավունք

- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդ.13
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդ.12
- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդ.14
- Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա, հոդ. 31
- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդ.19, 20, 21
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդ.18, 19, 25
- Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդ.10, 11
- Եվրոպական սոցիալական խարտիա, հոդ.15
- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդ.22, 25-1
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդ.9, 12
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, հոդ.24,
- Եվրոպական սոցիալական խարտիա, հոդ. 3, 11, 12, 13, 14
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, հոդ.12
- Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա, հոդ. 24
- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդ.23
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդ.7
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդ.8-3
- Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդ.4
- Եվրոպական սոցիալական խարտիա, հոդ. 1, 2, 18
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, հոդ.11
- Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա, հոդ. 17, 18, 19
- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդ.26
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդ.13, 14
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, հոդ.28, 29
- Եվրոպական սոցիալական խարտիա, հոդ.9, 10
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, հոդ.10
- Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա, հոդ. 22

## 1.2. Միջազգային իրավական գործիքների արդյունավետությունը

Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ժամանակակից համակարգը դժվար է պատկերացնել առանց միջազգային իրավական գործիքների: Դրանք, մի կողմից, սահմանում են մարդու հիմնարար իրավունքները և ազատությունները, իսկ մյուս կողմից ընդունվում են այդ ոլորտում որոշ բացասական երևույթների դեմ պայքարի նպատակով:

Թրաֆիքինգը տարածաշրջանային և համաշխարհային երևույթ է, որի դեմ արդյունավետորեն պայքարել հնարավոր է ազգային և միջազգային մակարդակներում համապատասխան իրավական ակտեր ընդունելով և կիրառելով: Այդ փաստաթղթերը ստեղծում են իրավական հիմքեր ազգային օրենսդրությունը բարեփոխելու և թրաֆիքինգի դեմ պայքարում պետությունների արդյունավետ համագործակցություն իրականացնելու համար:

Մարդու իրավունքների պաշտպանությունն ինքնիշխան պետության կարևորագույն գործառնություններից մեկն է: Դրա պատասխանատվությունը հիմնականում կրում է յուրաքանչյուր պետություն: ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով սահմանված է, որ միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են ազգային օրենքներով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը: Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային իրավական փաստաթղթերը ինքնիշխան պետությունների կողմից ընդունելի են, քանի որ դրանց հիմքում ընկած են՝

ա) բնական իրավունքի հայեցակարգը<sup>7</sup>, ըստ որի բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար իրավունքներով և

բ) իրավունքի համամարդկային սկզբունքներն ու արժեքները՝ սոցիալական արդարությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, մարդասիրությունը, իրավահավասարությունը, իրավունքների և պարտականությունների միասնականությունը, օրինականությունը, խտրականության արգելքը, պատասխանատվության անխուսափելիությունը<sup>8</sup> և այլն:

Միջազգային իրավական գործիքները դիտարկվում են որպես կազմակերպված հանցավորության դեմ պայքարի միջավետական համագործակցությունը զարգացնելու անհրաժեշտ և բավարար իրավապայմանագրային հիմք: Թրաֆիքինգի հակազդման վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերի համատեքստում մասնակից պետությունները ձգտում են մշակել և զնահատել ազգային ծրագրերի արդյունավետությունը, բացահայտել և ներդնել պրակտիկայի և քաղաքականության այնպիսի լավագույն տեսակներ, որոնք ուղղված են անդրազգային կազմակերպված հանցավորության կանխարգելմանը: Բացի այդ, միջազգային իրավական գործիքները նպաստում են թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված հասարակական վերաբերմունքի ձևավորմանը: Այս տեսակետից կարևորվում է, թե որքանով են պետության օրենքները, այլ իրավական ակտերը և հրահանգները կանխում թրաֆիքինգ իրականացնողների գործունեությունը և պաշտպանում թրաֆիքինգի զոհերին, հանցագործների մոտ առաջացնում պատասխանատվության անխուսափելիության զգացում, համախմբում քաղաքացիական հասարակությունը տուժողներին աջակցություն և օժանդակություն ցուցաբերելու գործում:

<sup>7</sup> Այդ տեսությունը ձևավորվել է Հին Հունաստանում և Հին Հռոմում, իսկ հետագա զարգացումը գտել է Եվրոպայի լուսավորիչների աշխատություններում: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո բնական իրավունքի տեսությունը զերմանացի իրավագետ Գ.Ռայբրուխի և այլոց ջանքերով իր վերածնունդն ունեցավ:

<sup>8</sup> Իրավունքի սկզբունքներն արտահայտում են իրավունքի էությունը, համամարդկային և սոցիալական արժեքը:

### 1.3. Թրաֆիքինգի դեմ պայքարի բնագավառում միջազգային ակտերի բնութագիրը

#### 1.3.1. ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիա<sup>9</sup>

Թրաֆիքինգի դեմ պայքարը կարգավորող հիմնական միջազգային իրավական փաստաթղթերից է ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ 2000թ. կոնվենցիան և դրա երկու կամընտիր Արձանագրությունները՝ Յամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներս բերելու դեմ թիվ 1 Արձանագրությունը և Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին թիվ 2 Արձանագրությունը:

Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայի 37-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ կոնվենցիան լրացնող արձանագրությունը մեկնաբանվում է կոնվենցիայի հետ համատեղ՝ հաշվի առնելով այդ արձանագրության նպատակները: Ուստի կոնվենցիան գտնվում է համակարգային կապի մեջ թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված արձանագրությունների դրույթների հետ:

ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ 2000թ. կոնվենցիայի հիմնական նպատակն է նպաստել անդրազգային կազմակերպված հանցավորության առավել արդյունավետ կանխարգելմանը և աջակցել դրա դեմ պայքարի գործում համագործակցությանը (հոդ.1):

Մասնակից պետությունները պարտավոր են իրենց ազգային օրենսդրությունում քրեականացնել կոնվենցիայում նախատեսված հանցագործությունների տեսակները: Կոնվենցիան նախատեսվում է կիրառել այնպիսի հանցագործությունների կանխարգելման, քննության և հետապնդման նպատակով, ինչպիսիք են.

- կազմակերպված հանցագործությունները, դրանցում մասնակցությունը (հոդ.5),
- հանցագործություններից ստացվող եկամուտների լվացումը (հոդ.6),
- կաշառակերությունը, կոռուպցիան (հոդ.8),
- արդարադատության իրականացմանը խոչընդոտելը (հոդ.23),

• կազմակերպված հանցավոր խմբի մասնակցությամբ և անդրազգային բնույթ ունեցող հանցավոր արարքների հետ կապված այն հանցագործությունները, որոնց կատարման համար կոնվենցիայի 2-րդ հոդվածին համապատասխան, կողմերի ներպետական օրենսդրությամբ նախատեսված է չորս տարուց ոչ պակաս ժամանակով ազատազրկում կամ ավելի խիստ պատիժ:

Կոնվենցիայի 3-րդ հոդվածին համապատասխան, հանցագործությունն անդրազգային բնույթ է կրում, եթե՝

ա) այն կատարվել է մեկից ավելի պետություններում,

<sup>9</sup> Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիան վավերացրել է 2003թ. մարտի 25-ին: Այն Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2003թ. ապրիլի 19-ից:

բ) այն կատարվել է մի պետությունում, բայց դրա նախապատրաստման, պլանավորման, ղեկավարման կամ վերահսկողության էական մասը տեղի է ունեցել այլ պետությունում,

գ) այն կատարվել է մի պետությունում, բայց այնպիսի կազմակերպված հանցավոր խմբի մասնակցությամբ, որը հանցավոր գործունեություն է իրականացնում մեկից ավելի պետություններում,

դ) այն կատարվել է մի պետությունում, բայց դրա էական հետևանքները եղել են այլ պետությունում:

Կոնվենցիայում նշված են կազմակերպված և դիտավորությամբ կատարվող հանրորեն վտանգավոր այլ արարքների քրեականացման հիմնական սկզբունքներն ու դրանց դեմ իրականացվելիք պայքարի միջոցները՝ առանձնահատուկ կարևորելով նաև այդպիսի հանցագործությունների հետ առնչություն ունեցած իրավաբանական անձանց պատասխանատվության հարցը:

Կոնվենցիայի նպատակների իրականացման համար նախատեսված են մասնակից պետությունների միջև համագործակցության հետևյալ հիմնական ուղղությունները՝

- հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների լվացման դեմ պայքար,
- կազմակերպված հանցավոր խմբի կամ անձի հանձնում,
- դատապարտված անձանց փոխանցում,
- փոխադարձ իրավական օգնություն,
- համատեղ քննությունների անցկացում,
- քրեական վարույթի փոխանցում,
- դատվածության վերաբերյալ տեղեկատվության փոխանակում,
- իրավապահ մարմինների միջև համագործակցություն,
- կազմակերպված հանցավորության բնույթի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում,

- կադրերի պատրաստում և տեխնիկական օգնություն:

Կոնվենցիայի առանձին հոդվածներում ներկայացված են վերոհիշյալ ուղղություններով համագործակցության իրականացման կարգն ու սկզբունքները՝ հիմք ընդունելով նաև մասնակից պետությունների օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերը և այդ պետությունների կողմից ստանձնած միջազգային այլ պարտավորությունները: Կոնվենցիային համապատասխան, միջպետական համագործակցությունը նախատեսված է իրականացնել նաև մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանման սկզբունքով, մասնավորապես՝ առաջադրված մեղադրանքից պաշտպանվելու և անհրաժեշտ իրավաբանական օգնություն ստանալու, անձի նկատմամբ ռասայական, սեռային կամ այլ խտրականություն չդրսևորելու, անձի ազատության և անձեռնմխելիության ապահովման, ազատ տեղաշարժի, հաղորդումների գաղտնիության և այլ բնագավառներում, որոնք բխում են ՀՀ ստանձնած միջազգային այլ պարտավորություններից:

*1.3.2. ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին 2000 թ. թիվ 2 Արձանագրություն<sup>10</sup>*

Արձանագրությունը լրացնում է ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան և մեկնաբանվում է կոնվենցիայի հետ համատեղ: Այն բովանդակային առումով էական նորամուծություն էր ինչպես ոլորտը կարգավորող տերմինների միատեսակ ընկալման, այնպես էլ թրաֆիքինգի դեմ պայքարի կառուցակարգերի սահմանման առումով:

Արձանագրությունն ունի երեք հիմնական նպատակ՝

1. թրաֆիքինգի կանխարգելումը և դրա դեմ պայքարը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց և երեխաներին,
2. թրաֆիքինգի գոհերի պաշտպանությունը և նրանց ցուցաբերվող աջակցությունը՝ ամբողջովին հարգելով նրանց մարդու իրավունքները, և
3. այդ նպատակներին հասնելու գործում Մասնակից պետությունների համագործակցության խրախուսումը (հոդ.2):

Արձանագրությամբ՝

- թրաֆիքինգը համարվում է մարդկության դեմ ուղղված հանցագործություն<sup>11</sup>,
- տրվում է «մարդկանց առևտուր» հասկացության սահմանումը,
- ընդլայնվում են թրաֆիքինգի գործընթացի բաղադրիչները՝ մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը՝ ուժի սպառնալիքով կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառմամբ, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունն ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով, ինչպես նաև այդպիսի հանցագործությունների կատարման փորձը, հանցակցությունը և այդպիսի արարքների կատարման նպատակով անձանց կազմակերպելը կամ ղեկավարելը,

• թրաֆիքինգը չի սահմանափակվում սեռական շահագործմամբ. այն ներառում է հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը համանման երևույթները, անագատ վիճակը կամ մարմնի մասերը կորզելը,

• երեխաները նույնպես ճանաչվում են հանցագործության գոհ, ընդ որում, գոհ կարող է համարվել նաև այն անձը, ով միևնույն երկրի ներսում մի տարածքից փոխադրվել է մեկ այլ տարածք և շահագործվել է սահմանման մեջ նշված նպատակներով:

Արձանագրությունը նախատեսում է մարդկանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետ միջոցներ և ընդգրկուն

<sup>10</sup> Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին 2000թ. թիվ 2 Արձանագրությունը վավերացրել է 2003թ. մարտի 25-ին: Այն Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2003թ. ապրիլի 19-ից:

<sup>11</sup> Տե՛ս Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը, գլուխ 7՝ հանցագործություններ մարդկության դեմ:

միջազգային մոտեցում ելքի, տարանցման և մուտքի երկրներում, ներառյալ՝ այն միջոցները, որոնք ուղղված են այդպիսի առևտրի կանխարգելմանը, դրանով զբաղվող անձանց պատժելուն և թրաֆիքինգի գոհերի պաշտպանությանը:

Արձանագրությամբ միջպետական համագործակցությունը նախատեսված է իրականացնել մի շարք բնագավառներում: Դրանք են՝

- թրաֆիքինգի գոհերին աջակցությունը և նրանց պաշտպանությունը,
- թրաֆիքինգի կանխարգելումը,
- տեղեկատվության փոխանակումը և կադրերի պատրաստումը,
- սահմանային հսկողության միջոցների սահմանումը,
- կառավարական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը,

- փաստաթղթերի հավաստիության և օրինականության նկատմամբ վերահսկողությունը:

Արձանագրության կողմերը պարտավորվել են թրաֆիքինգը կանխարգելելու միջոցներ ձեռնարկել կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության բնագավառներում՝ ներպետական օրենսդրության կատարելագործմամբ, երկկողմ և բազմակողմ համագործակցության զարգացմամբ:

### ***1.3.3. ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներս բերելու դեմ 2000 թ. թիվ 1 Արձանագրություն<sup>12</sup>***

Արձանագրությունը լրացնում է ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան և մեկնաբանվում է կոնվենցիայի հետ համատեղ:

Արձանագրության նպատակը ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական սահմանանցման կանխարգելման ուղղությամբ արդյունավետ միջոցներ ձեռնարկելն ու դրա դեմ պայքարի համար անհրաժեշտ ընդգրկուն միջազգային մոտեցման դրսևորումն է:

Թրաֆիքինգի դեմ պայքարին վերաբերող միջազգային իրավունքի նորմերի համակարգային վերլուծության համար այս Արձանագրությունը նշանակալի է այն տեսանկյունից, որ անհրաժեշտ է սահմանազատել հետագա շահագործման նպատակով իրականացվող թրաֆիքինգը այդ նպատակների հետ չկապված միգրանտների անօրինական ներմուծումից: Այդ առումով կարևորվում են թիվ 1 Արձանագրությունում զետեղված՝

ա) «միգրանտների անօրինական ներմուծում» (*հոդ.3, «ա» ենթակետ*),

բ) «անօրինական մուտք» (*հոդ.3, «բ» ենթակետ*) և

գ) «մուտքի/ելքի կամ անձը հաստատող կեղծ փաստաթուղթ» (*հոդ.3, «գ» ենթակետ*)

հասկացություններ<sup>13</sup>:

<sup>12</sup> Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներս բերելու դեմ 2000թ. թիվ 1 Արձանագրությունը վավերացրել է 2003թ. մարտի 25-ին: Այն Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2003թ. ապրիլի 19-ից:



Արձանագրության 6-րդ հոդվածի համաձայն, պետությունները պարտավորվում են օրենսդրական միջոցներ ձեռնարկել քրեականացնելու անդրազգային բնույթ ունեցող և հանցավոր խմբի մասնակցությամբ կատարված այնպիսի դիտավորյալ հանցագործություններ, ինչպիսիք են՝

- միգրանտների անօրինական ներմուծումը,
- մուտքի (ելքի) կամ անձը հաստատող կեղծ փաստաթուղթ պատրաստելը, այդպիսի փաստաթուղթ ձեռք բերելը կամ տրամադրելը,
- որևէ անձի հետապնդելը, ով համապատասխան պետության քաղաքացի չէ կամ նրա տարածքում չի բնակվում,
- ինչպես նաև՝ վերոհիշյալ հանցագործությունների կատարմանը մասնակցությունը, այդպիսի հանցագործությունների կատարման նպատակով այլ անձանց կազմակերպելը կամ ղեկավարելը: Ընդ որում, հանցագործության կատարման ծանրացուցիչ հանգամանք է դիտվում միգրանտների կյանքը կամ անվտանգությունը վտանգի տակ դնելը կամ դրա հավանականությունը, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը, այդ թվում՝ շահագործելը:

Արձանագրության շրջանակներում միջպետական համագործակցությունը նախատեսվում է իրականացնել ինչպես միջազգային իրավական, այնպես էլ՝ կողմերի ներպետական օրենսդրության սկզբունքներով և Արձանագրությամբ նախատեսված արարքների քրեականացման, դրանց նկատմամբ համաձայնեցված քաղաքականության իրականացման շրջանակներում: Դա, ի թիվս համագործակցության այլ ուղղությունների, վերաբերում է կյանքի իրավունքին, խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի տեսակների չենթարկվելու և անհրաժեշտ օգնություն ստանալու իրավունքներին:

Արձանագրությամբ միգրանտների անօրինական ներս բերելու դեմ միջպետական համագործակցությունը նախատեսված է իրականացնել նաև՝

- ծովով միգրանտների անօրինական ներմուծման դեմ պայքարելու,
- տեղեկատվության փոխանակման,
- սահմանային հսկողության միջոցների սահմանման,
- մուտքի (ելքի) կամ անձը հաստատող փաստաթղթերի հուսալիության և դրանց նկատմամբ վերահսկողության հաստատման,
- փաստաթղթերի օրինականությունը և վավերականությունը ստուգելու,
- կադրերի պատրաստման և տեխնիկական համագործակցության,
- անօրինական ներմուծված միգրանտներին վերադարձնելու,
- կանխարգելիչ այլ միջոցներ իրականացնելու ոլորտներում (հոդ. 18):

<sup>13</sup> Տե՛ս սույն Ձեռնարկում «Թրաֆիքինգի դեմ պայքարի բնագավառում հիմնական տերմինների բառարանը»:

**1.3.4. Եվրոպայի խորհրդի 2005թ. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին կոնվենցիա<sup>14</sup>**

Եևս կոնվենցիան լրացնում է այս ոլորտին առնչվող հիմնական միջազգային պայմանագրերի շարքը, որոնք վավերացրել է Հայաստանը: Դրանք են՝ ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին 2000թ. կոնվենցիան և դրա երկու կամընտիր Արձանագրությունները, ինչպես նաև Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան և դրա երկու կամընտիր արձանագրությունները՝ Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին ու Ջինված հակամարտություններում երեխաների մասնակցության մասին:

Թրաֆիքինգի դեմ պայքարն իր վրա է սևեռել ամբողջ աշխարհի ուշադրությունը, քանի որ այն վտանգ է ներկայացնում մարդու իրավունքների և հասարակության հիմնարար արժեքների տեսանկյունից: Այդ երևույթը, որ վերաբերում է տղամարդկանց, կանանց և երեխաներին, հասել է աննախադեպ չափերի նաև Եվրոպայում: Այդ է պատճառը, որ Եվրոպայի խորհուրդը 2005թ. մայիսի 16-ին ընդունեց Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին կոնվենցիան: Կոնվենցիայի նպատակներն են՝

1. կանխարգելել թրաֆիքինգը ու պայքարել թրաֆիքինգի դեմ՝ երաշխավորելով գենդերային հավասարությունը,

2. պաշտպանել թրաֆիքինգի զոհերի մարդու իրավունքները, մշակել զոհերի ու վկաների պաշտպանության և օգնության համապարփակ մեխանիզմ, ինչպես նաև ապահովել արդյունավետ քննություն և քրեական հետապնդում,

3. նպաստել թրաֆիքինգի դեմ պայքարի բնագավառում միջազգային համագործակցության զարգացմանը:

Այլ միջազգային իրավական գործիքների համեմատությամբ Եևս կոնվենցիայի լրացուցիչ արժեքը մարդու իրավունքների և զոհի պաշտպանության հարցերի վրա կենտրոնացումն է: Այդ է պատճառը, որ կոնվենցիայի ներածությունում թրաֆիքինգը համարվում է մարդու իրավունքների խախտում և ոստնձգություն անձի արժանապատվության ու անձեռնմխելիության դեմ, և կարևորվում է զոհերի իրավունքների հարգումն ու պաշտպանությունը:

Կոնվենցիայի հիմնական առանձնահատկություններն են՝

- թրաֆիքինգի ճանաչումը որպես մարդու իրավունքների խախտում,
- զոհերին օգնություն ցույց տալուն և նրանց իրավունքների պաշտպանությանը հատուկ ուշադրություն դարձնելը,

<sup>14</sup> Հայաստանի Հանրապետությունը Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին կոնվենցիան վավերացրել է ՀՀ ԱԺ 2008թ. մարտի 20-ի Ն-067-4 որոշմամբ: Այն Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2008թ. ապրիլի 19-ից: Տե՛ս ՀՀՊՏ 09.04.08./22(612) Հոդ.305

- կիրառման ընդգրկումն ոլորտը, որը ներառում է մարդկանց առևտրի բոլոր ձևերը, ինչպես նաև ազգային կամ անդրազգային կազմակերպված հանցավորության հետ կապված լինելը կամ չլինելը,
- կիրառելիությունը յուրաքանչյուր զոհի նկատմամբ՝ տղամարդ, կին, երեխա,
- զոհերի և վկաների պաշտպանության ապահովման համար համալիր իրավաբանական շրջանակների սահմանումը, որը նախատեսում է պարտավորեցնող միջոցների կիրառում,
- վերահսկողության արդյունավետ և անկախ մեխանիզմի հիմնադրումը:

Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով Կոնվենցիան, ստանձնել է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

ա) համակարգել և/կամ ամրապնդել ներպետական մարմինների համագործակցությունը մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը) կանխարգելելու և դրա դեմ պայքարելու գործում, արդյունավետ միջոցների կիրառմամբ մշակել այնպիսի քաղաքականություն և ծրագրեր, որոնցում առաջնային կլինեն մարդու իրավունքները, ներառյալ երեխաների շահերի պաշտպանությունը և գենդերային հավասարությունը,

բ) ձեռնարկել կամ ամրապնդել օրենսդրական, վարչական, կրթական, սոցիալական, մշակութային և այլ միջոցներ, որոնք կնպաստեն մարդկանց, հատկապես կանանց և երեխաների շահագործման բոլոր ձևերի պահանջարկի վերացմանը,

գ) բոլոր, այդ թվում օրենսդրական միջոցներով ուժեղացնել սահմանների վերահսկողությունը՝ չխախտելով անձանց ազատ տեղաշարժի առնչությամբ ստանձնած պարտավորությունները,

դ) թրաֆիքինգը կանխարգելող և դրա դեմ պայքարող իրավասու մարմինները համալրել համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով՝ գործադրելով բոլոր հնարավոր միջոցները թրաֆիքինգի զոհերին հայտնաբերելու համար, անհրաժեշտության դեպքում համագործակցելով նաև կոնվենցիայի մասնակից այլ պետությունների և համապատասխան օժանդակող կազմակերպությունների հետ, իսկ զոհին հայտնաբերելու դեպքում՝ ըստ անհրաժեշտության վերջինիս տրամադրել կացության թույլտվություն,

ե) պաշտպանել զոհերի անձնական կյանքն ու ինքնությունը, վերջիններիս վերաբերող անձնական տվյալները պահպանել և օգտագործել «Անձնական բնույթի տվյալների ավտոմատացված մշակումից անձանց պաշտպանության մասին» կոնվենցիայի դրույթներին համապատասխան:

Կոնվենցիան բացառում է խտրականությունը: Այն դրույթները, որոնք վերաբերում են զոհերի իրավունքների պաշտպանությանն ու ապահովմանը, պետք է իրականացվեն առանց որևէ խտրականության՝ կապված սեռի, ռասայի, մաշկի գույնի, լեզվի, դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնությանը պատկանելության, ծննդի, գույքային կամ այլ դրության հետ:

Կոնվենցիան կիրառվում է թրաֆիքինգի բոլոր ձևերի նկատմամբ, անկախ դրանց ազգային կամ անդրազգային բնույթից, անկախ կազմակերպված հանցավորության հետ ունեցած կամ չունեցած կապից:

Յուրաքանչյուր կողմ իր ներպետական օրենսդրությամբ տուժող համարվող անձանց համար պետք է սահմանի առնվազն 30 օր տևողությամբ վերականգնման և խորհրդածության, կշռադատման ժամկետ, եթե ողջամիտ հիմքեր կան ենթացողին, որ տվյալ անձը տուժող է: Այդ ժամկետը պետք է բավարար լինի տվյալ անձի վերականգնման և թրաֆիքինգով զբաղվողների ազդեցությունից ազատվելու և/կամ իրավասու մարմինների հետ համագործակցության վերաբերյալ իրազեկված որոշում ընդունելու համար: Այս ժամանակահատվածի ընթացքում նրա նկատմամբ չի կարող կիրառվել վտարման մասին որևէ որոշում<sup>15</sup>: Այս դրույթը չպետք է խոչընդոտի իրավասու մարմինների գործունեությանը ազգային օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի որևէ փուլում և, մասնավորապես, հանցագործությունների քննության ընթացքում, որի ժամանակահատվածում կողմերը պետք է այդ անձանց թույլատրեն գտնվել իրենց տարածքում:

Կոնվենցիայի 28-րդ հոդվածը նախատեսում է նաև տուժողների, վկաների և քննությանը աջակցող անձանց պաշտպանությունը դատական մարմինների կողմից:

Կոնվենցիայում կարևորվում են նաև այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ զոհերի ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վերականգնմանը նպաստող օրենսդրական կամ այլ միջոցների կիրառումը, անվճար իրավաբանական խորհրդատվություն և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, զոհի վնասների փոխհատուցման երաշխավորումն ապահովող օրենսդրական և այլ միջոցների ձեռնարկումը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում մարդկանց շահագործման քրեականացմանը և դրա հետ կապված մի շարք հարցերի, ինչպիսիք են՝ իրավաբանական անձանց պատասխանատվությունը, պատժամիջոցների կիրառումը, ծանրացուցիչ հանգամանքների թվարկումը և այլն:

### ***1.3.5. Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին կոնվենցիա<sup>16</sup>*** ***(թիվ 81)***

ԱՄԿ-ի գլխավոր խորհրդածողովը կոնվենցիան ընդունել է արդյունաբերական և առևտրի ձեռնարկություններում աշխատանքի տեսչության համակարգ ներդնելու նպատակով: Ըստ այդ փաստաթղթի, կողմերը պարտավորվում են արդյունաբերական և առևտրի ձեռնարկություններում ստեղծել աշխատանքի տեսչության համակարգ, որը կոչված է ապահովելու աշխատանքի ընթացքում աշխատողների աշխատանքային պայմաններին և պաշտպանությանը վերաբերող իրավանորմների կիրառումը: Այս կոնվենցիայի պատշաճ կիրառումն էապես կարող է նպաստել թրաֆիքինգի փաստերի հայտնաբերմանը և

<sup>15</sup> Որոշ երկրներ, օրինակ, Իտալիան, Նորվեգիան, Կանադան տուժողներին տրամադրում են ժամանակավոր կացության թույլտվություն:

<sup>16</sup> ԱՄԿ թիվ 81 կոնվենցիա, ընդունվել է 1947 թ. հուլիսի 11-ին, ՀՀ-ն վավերացրել է 25.10.2004թ.:

բացահայտմանը: Դա այն գործուն մեխանիզմներից է, երբ տեսչական գործունեության ընթացքում պետք է ցուցաբերվի հատուկ մոտեցում՝ թրաֆիքինգի իմաստով շահագործման երևույթներ ի հայտ գալու դեպքում:

Կոնվենցիան սահմանում է տեսչության անձնակազմին, աշխատանքի տեսուչներին ներկայացվող հիմնական պահանջները, նրանց իրավունքներն ու պարտականությունները: Պայմանավորվող կողմերը պարտավորվում են աշխատանքի տեսուչներին տրամադրել Կոնվենցիայով նախատեսված իրավունքները: Տեսչական ստուգումները ձեռնարկություններում իրականացվում են այն հաճախականությամբ, որն անհրաժեշտ է համապատասխան իրավական դրույթների արդյունավետ կիրառումն ապահովելու համար:

Աշխատանքային տեսուչներն իրավասու են ձեռնարկել համապատասխան միջոցներ աշխատողների առողջությանը կամ անվտանգությանը սպառնացող թերությունները վերացնելու նպատակով: Պայմանավորվող կողմերի ներպետական օրենսդրությամբ պետք է նախատեսվեն և կիրառվեն արդյունավետ պատժամիջոցներ այն իրավական դրույթների խախտման համար, որոնց կատարումը հսկում են աշխատանքի տեսուչները:

ԱՄԿ-ի կանոնադրության 22-րդ հոդվածին համապատասխան ներկայացվող տարեկան զեկույցում կողմերը կրում են Կոնվենցիայի դրույթների կատարմանն ուղղված օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի մասին ամբողջական տեղեկություններ ներառելու պարտավորություն:

### ***1.3.6. Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին կոնվենցիա<sup>17</sup> (թիվ 29)***

Կոնվենցիան ընդունվել է հարկադիր կամ պարտադիր աշխատանքի վերացման հեռահար նպատակով: Այն սահմանում է «հարկադիր կամ պարտադիր աշխատանք» հասկացությունը՝ միաժամանակ մատնանշելով այն աշխատանքները, որոնք չեն ներառվում դրա մեջ:

Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն, հարկադիր կամ պարտադիր աշխատանք նշանակում է որևէ պատժի սպառնալիքի տակ որևէ անձից պահանջվող ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որի համար այդ անձը կամավոր չի հայտնել իր համաձայնությունը: Այնուամենայնիվ, հարկադիր կամ պարտադիր աշխատանքը չի ներառում՝

ա) պարտադիր զինվորական ծառայության մասին օրենքով պահանջվող և զուտ զինվորական բնույթի ցանկացած աշխատանքը կամ ծառայությունը,

բ) ինքնակառավարվող երկրի քաղաքացիների սովորական քաղաքացիական պարտականությունների մաս կազմող ցանկացած աշխատանքը կամ ծառայությունը,

<sup>17</sup> ԱՄԿ թիվ 29 կոնվենցիա, ընդունվել է 1930 թ. հունիսի 28-ին, ՀՀ-ն վավերացրել է 25.10.2004թ.:

գ) դատարանի կայացրած դատավճռով անձից պահանջվող ցանկացած աշխատանքը կամ ծառայությունը՝ այն պայմանով, որ այդ աշխատանքը կամ ծառայությունը կատարվի պետական մարմնի վերահսկողության կամ հսկողության ներքո, և որ նշված անձը չփոխանցվի կամ չհանձնվի մասնավոր անձանց, ընկերությունների կամ ընկերակցությունների տնօրինմանը,

դ) արտակարգ իրավիճակների պայմաններում պահանջվող ցանկացած աշխատանքը կամ ծառայությունը, այսինքն՝ պատերազմի, տարերային աղետի կամ դրա սպառնալիքի դեպքում, ինչպիսիք են հրդեհները, ջրհեղեղները, սովը, երկրաշարժը, սուր համաճարակները կամ տնային կենդանիների համաճարակները, կենդանիների, միջատների կամ մակաբույծների հարձակումները և ընդհանրապես այն իրավիճակները, որոնց դեպքում վտանգի են ենթարկվում կամ կարող են ենթարկվել ամբողջ բնակչության կամ նրա մի մասի կյանքը կամ նորմալ կենսապայմանները,

ե) համայնքային բնույթի փոքր ծավալի աշխատանքները, որոնք կատարվում են տվյալ համայնքի անդամների անմիջական օգուտի համար, և որոնք, հետևաբար, կարող են համարվել համայնքի անդամների սովորական քաղաքացիական պարտականություններ՝ պայմանով, որ համայնքի անդամները կամ նրանց անմիջական ներկայացուցիչները իրավունք ունենան այդ աշխատանքների նպատակահարմարության վերաբերյալ արտահայտել իրենց կարծիքը:

Համաձայն նույն Կոնվենցիայի 9-րդ հոդվածի, հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մեջ ներգրավելու իրավունք ունեցող իշխանության մարմինները (բացառությամբ այն դեպքերի, որոնց վերաբերյալ գործում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածը), պարտավոր են նախքան այդպիսի աշխատանքի իրականացումը հավաստիանալ, որ՝

- կատարվող աշխատանքը կամ ծառայությունը ուղղակի և էական հետաքրքրություն է ներկայացնում այն կատարող համայնքի համար,

- այդ աշխատանքի կամ ծառայության կատարման համար անհնարին էր ստանալ կամավոր աշխատուժ՝ թեև առաջարկվել էին տվյալ տարածքում համանման աշխատանքի կամ ծառայության համար ոչ պակաս նպաստավոր աշխատավարձ և աշխատանքի պայմաններ,

- այդ աշխատանքը կամ ծառայությունը ներկա կամ մոտակա անհրաժեշտություն է,

- այդ աշխատանքը կամ ծառայությունը շատ ծանր բեռ չի լինի բնակչության համար՝ հաշվի առնելով առկա աշխատուժը և տվյալ աշխատանքը կատարելու բնակչության ունակությունները:

ԱՄԿ թիվ 29 Կոնվենցիայի 2-րդ հոդվածն արգելում է հարկադիր կամ պարտադիր աշխատանքի կիրառումը, իսկ 4-րդ հոդվածը նշում է, որ «իշխանության իրավասու մարմինները պետք է արգելեն մասնավոր անձանց, ընկերություններին կամ միություններին՝ շահույթ ստանալ իրենց օգտին կատարվող հարկադիր կամ պարտադիր աշխատանքից»:

Հարկադիր աշխատանքներում հաճախ ներգրավվում են նաև երեխաներ, թեև երեխաների աշխատանքը արգելված է և՛ միջազգային, և՛ ազգային օրենսդրությամբ: Ավելին, երեխաները ներգրավվում են այնպիսի աշխատանքներում, որոնք բացասաբար են ազդում նրանց թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեբանական զարգացման վրա: Իսկ ԱՄԿ թիվ 182 Երեխայի աշխատանքի

վատթարագույն ձևերի արգելման և վերացնելու անհապաղ միջոցառումների մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածով հստակ նախատեսված է մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի ցանկը (այն աշխատանքները, որոնք, հավանական է, որ իրենց բնույթով կամ կատարման հանգամանքներով վնաս կհասցնեն երեխաների առողջությանը, անվտանգությանը կամ բարոյականությանը):

ԱՄԿ թիվ 29 կոնվենցիան ամրագրում է նաև պարտավորություններ, որոնք պետք է կատարվեն անցումային ժամանակաշրջանում՝ մինչև հարկադիր կամ պարտադիր աշխատանքի լրիվ վերացումը. մասնավորապես, Պայմանավորվող կողմերը պարտավորվում են այդ ժամանակաշրջանում հարկադիր կամ պարտադիր աշխատանքը կիրառել միայն հանրային նպատակներով և որպես բացառիկ պատժամիջոց՝ կոնվենցիայով նախատեսված պայմանների և երաշխիքների համաձայն:

### ***1.3.7. Հարկադիր աշխատանքի վերացման մասին կոնվենցիա<sup>18</sup> (թիվ 105)***

Կոնվենցիան ընդունվել է հարկադիր կամ պարտադիր աշխատանքն արգելելու նպատակով: Այն հիմնվում է հարկադիր կամ պարտադիր աշխատանքի վերացմանը նպատակաուղղված՝ ԱՄԿ-ի շրջանակներում կնքված մի շարք միջազգային իրավական փաստաթղթերի, մասնավորապես, Ստրկության մասին 1926թ. կոնվենցիայի, Աշխատավարձի պահպանման մասին 1949թ. կոնվենցիայի վրա:

Պայմանավորվող կողմերը կոնվենցիայով պարտավորվում են ձեռնարկել արդյունավետ միջոցներ՝ լրիվ եւ արագ վերացնելու համար հարկադիր կամ պարտադիր աշխատանքի բոլոր ձևերը, որոնք կարող են դրսևորվել՝

- որպես քաղաքական ներգործության կամ դաստիարակության միջոց կամ որպես պատժամիջոց քաղաքական հայացքների կամ դրանց արտահայտման համար կամ քաղաքական, սոցիալական կամ տնտեսական համակարգի գաղափարախոսությանն ընդդիմադիր հայացքների համար,
- որպես աշխատուժի հավաքագրման եւ օգտագործման մեթոդ՝ տնտեսական զարգացման նպատակներով,
- որպես աշխատանքային կարգապահության միջոց,
- որպես պատժամիջոց՝ գործադուլներին մասնակցելու համար,
- որպես ռասայական, սոցիալական, ազգային կամ կրոնական խտրականության դրսևորում:

<sup>18</sup> ԱՄԿ թիվ 105 կոնվենցիա, ընդունվել է 1957թ. հունիսի 25-ին, ՀՀ-ն վավերացրել է 25.10.2004թ.:

Աշխատանքի հարցերով միջազգային բյուրոյի Վարչական խորհուրդը, ըստ անհրաժեշտության, ԱՄԿ-ի գլխավոր խորհրդատուներին ներկայացնում է զեկույց՝ կոնվենցիայի կիրառման վերաբերյալ:

**1.3.8. Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման և վերացնելու անհապաղ միջոցառումների մասին կոնվենցիա<sup>19</sup> (թիվ 182):**

Թիվ 182 կոնվենցիան պահանջում է անհապաղ և արդյունավետ միջոցներ ձեռնարկել երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը վերացնելու և 18 տարեկանից ցածր տղաներին և աղջիկներին հարկադիր աշխատանքներում չներգրավելու համար:

Ըստ թիվ 182 կոնվենցիայի, երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը ներառում են.

- ստրկության բոլոր ձևերը՝ թրաֆիքինգը, պարտավորական կապալը, ճորտատիրական կախումը, զինված հակամարտություններում օգտագործելը, հարկադիր աշխատանքը,

- երեխաներին պոռնոգրաֆիայի և մարմնավաճառության մեջ ներգրավելը,

- երեխաներին թմրանյութերի առուծախում և թունավոր աշխատանքներում ներգրավելը,

- ցանկացած աշխատանք, որն իր բնույթով և պայմաններով կարող է վնաս հասցնել երեխայի առողջությանը, անվտանգությանը կամ բարոյականությանը:

Մասնակից պետությունները պարտավորվում են մշակել գործողությունների ծրագրեր այդ երևույթի դեմ պայքարելու համար: Դա ներառում է երեխաներին աշխատանքի վատթարագույն ձևերում ներգրավելու արգելքը, ինչպես նաև այն երեխաների վերականգնումը և սոցիալական վերաինտեգրումը, ովքեր արդեն ներգրավվել են այդպիսի աշխատանքներում:

---

<sup>19</sup> ԱՄԿ թիվ 182 կոնվենցիա, ընդունվել է 1999թ. հունիսի 17-ին:



## ԳԼՈՒԽ 2

### Թրաֆիքինգի գենդերային ասպեկտները և առանձնահատկությունները

#### 2.1. Թրաֆիքինգի գենդերային ասպեկտները

Լինելով մարդու իրավունքների հիմնախնդիր՝ թրաֆիքինգն ունի նաև գենդերային առանձնահատկություններ, որոնք արդյունք են համակարգային վերափոխումներից բխող գենդերային իրավիճակի փոփոխությունների, տնտեսական բարեփոխումների հետևանքների, աղքատության գենդերային բնույթի և ընդհանրապես, երկու սեռերի սոցիալական նոր դերերի: Սա վերաբերում է աղքատության և գենդերային անհավասարության նոր դրսևորումներ առաջ բերած և թրաֆիքինգին նպաստող հետևյալ երևույթներին՝

- սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները, որոնք դրդում են մարդկանց «դրսում» փնտրելու բարեկեցիկ կյանք, հաջող ամուսնություն, բարձր վարձատրվող աշխատանք և հայտնվում են թրաֆիքինգի գոհի կարգավիճակում,

- իրազեկության պակասը մարդու իրավունքների, գենդերային հիմնախնդիրների և թրաֆիքինգի վերաբերյալ,

- միգրացիոն ակտիվացած հոսքերը,

- անցումը շուկայական տնտեսությանը և զբաղվածության ու տնտեսական գործունեության ծավալման որոշակի պարտադրողական սխեմաների առաջացումը,

- ընտանիքին աջակցելու նախկին համակարգի փլուզման հետևանքով կանանց գործազրկության աճը,

- եկամուտների կտրուկ անկման պայմաններում ընտանեկան հարաբերությունների կազմակերպման խարխուլումը և տնային այն տնտեսությունների թվի աճը, որոնցում առաջատար դիրք է զբաղում կինը և այլն:

Թրաֆիքինգի վրա մեծապես ազդում են նաև հասարակության պատկերացումները կանանց և տղամարդկանց դերերի ու պարտականությունների, ինչպես նաև նրանց վարքի, արժեքային համակարգի և աշխատանքի գենդերային բաժանման վերաբերյալ: Այրի, ամուսնալուծված, միայնակ կանայք, ընտանիքում «կերակրող» տղամարդ չունեցող, ինչպես նաև կրթություն, հմտություններ և աշխատանք գտնելու համար անհրաժեշտ այլ միջոցներ չունեցող կանայք կարող են ընտանիքի ապահովման սահմանափակ հնարավորություններ ունենալ և խոցելի լինել թրաֆիքինգ իրագործողների համար, որոնք կարող են նրանց ներգրավել սեռական կամ այլ շահագործման մեջ: Կարևորություն են ներկայացնում նաև անչափահաս աղջիկների թրաֆիքինգի, անօրինական որդեգրման, գոհների շրջանում կանանց բարձր տոկոսի, իրավապահ մարմինների համակարգում կին աշխատակիցների ցածր տոկոսի առկայությունը և այլ հարցեր:

Տղամարդկանցից ակնկալվում է որոշակի գենդերային դերակատարում՝ «ապրուստ հայթայթել» ընտանիքի համար: Նրանք խաբվում են աշխատանքի առաջարկներով, հիմնականում՝ շինարարության բնագավառում: Կանանց և տղամարդկանց համար սեռական ծառայությունների, ստրկության, հարկադիր աշխատանքի ոլորտներում այլ մարդկանց հսկողության ներքո աշխատելու ամոթը չի համապատասխանում վարքի սոցիալապես ընդունված նորմերին: Նրանց վարքը հակասում է «բարոյական» կանանց և «առնական» տղամարդկանց ներկայացվող ակնկալիքներին: Հետևանքն այն է, որ նրանք տուն վերադառնալուց հետո չեն ներկայացնում իրենց հետ կատարվածը՝ նախընտրելով մնալ չբացահայտված:

## 2.2. Թրաֆիքինգի գենդերային առանձնահատկությունները

**Կանանց թրաֆիքինգ.** առավել հայտնի է սեռական շահագործման նպատակով կանանց և երեխաների թրաֆիքինգը: Որոշ կանայք և աղջիկներ թրաֆիքինգի են ենթարկվում վաղ ամուսնության, հարկադիր ամուսնության, պայմանավորվածությամբ ամուսնության, ժամանակավոր ամուսնության, կատալոգով ամուսնության (փոստով պատվիրվող հարսնացուներ), երեխայածնության նպատակով ամուսնության եղանակներով<sup>20</sup>: Ամուսնությունն օգտագործվում է որպես թրաֆիքինգը հեշտացնելու միջոց, օրինակ, ճամփորդական փաստաթղթեր ստանալու համար: Վերջին տարիներին կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ կանայք օգտագործվում են ոչ միայն սեքս-ծառայությունների, այլև գյուղատնտեսության, արդյունաբերության և հարկադիր աշխատանքի այլ ոլորտներում: ԱՄԿ-ի վերլուծությունները վկայում են, որ տարեկան 120.000 կին ու երեխա փոխադրվում են Արևելյան Եվրոպա: Պարզվել է, որ Հարավ-արևելյան Եվրոպայից վերադարձած և հարցազրույցի ենթարկված 300 զոհերից 23%-ը վաճառվել է հարկադիր մարմնավաճառության, 21%-ը՝ շինարարությունում, 13%-ը՝ գյուղատնտեսությունում աշխատելու համար<sup>21</sup>: Հոլանդիայում, Գերմանիայում, Իտալիայում մարմնավաճառությամբ զբաղվող կանանց 80-90%-ը արտասահմանցիներ են: Տարեկան շուրջ 200-ից մինչև 500 օտարերկրացի կին է բերվում Շվեդիա: Վերջին 10 տարվա ընթացքում մարմնավաճառության համար շուրջ 10.000 կին է ուղարկվել Իսրայել: Փոխադրումների նշանակալի աճ է նկատվում ԱՊՀ երկրներից և Բալկաններից: ՄԱԿ-ի հետազոտությունների համաձայն, զոհերը հիմնականում 15-ից 35 տարեկան կանայք և աղջիկներ են<sup>22</sup>:

**Երեխաների թրաֆիքինգ.** երեխաները վաճառվում են սեռական շահագործման, մուրացկանության, մանկական պոռնկագրության և մարմնավաճառության, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի անօրինական շրջանառությամբ զբաղվող հանցավոր խմբերում և զինված հակամարտություններում ներգրավելու, կեղծ ամուսնության պատրվակով անօրինական

<sup>20</sup> Ինչպես թրաֆիքինգի այլ ձևերի պարագայում, նախապես կարող է լինել զոհի համաձայնությունը, որը իմաստազրկվում է, եթե կիրառվել են Արժանագրության 3-րդ հոդվածով նախատեսված միջոցները:

<sup>21</sup> МОТ, Глобальный альянс по борьбе с принудительным трудом, стр.48.

<sup>22</sup> Վերլուծելով թրաֆիքինգի գենդերային ասպեկտները, Գ.Ա. Շահինյանը ներկայացրել է գրականությունում տեղ գտած վիճակագրական հետազոտությունների արդյունքները: Տե՛ս «Մարդկանց վաճառք, տեղեկատվական ձեռնարկ», Երևան 2004, էջ 7:

փոխադրումների, տանը աշխատելու և այլ նպատակներով<sup>23</sup>: ՄԱԿ-ի մարդու իրավունքների գծով գերագույն հանձնակատարի «Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի առաջարկվող սկզբունքները և ուղենիշերը» փաստաթղթի 8-րդ ուղենիշը վերաբերում է թրաֆիքինգից տուժած երեխաների պաշտպանության և օժանդակության հատուկ միջոցառումներին: Նրանում ասվում է, որ թրաֆիքինգի ենթարկված երեխաների կրած ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վնասի առանձնահատկությունների, ինչպես նաև շահագործման նկատմամբ նրանց՝ մեծահասակներից ավելի խոցելի լինելու պատճառով անհրաժեշտ է օրենքների, քաղաքականության, ծրագրերի և միջոցառումների շրջանակում նրանց տարբերակել թրաֆիքինգի ենթարկված մեծահասակներից: Առաջին հերթին պետք է հաշվի առնել երեխաների շահերը: Նրանք պետք է համապատասխան աջակցություն և պաշտպանություն ստանան, լիովին հաշվի առնելով նրանց իրավունքների և կարիքների առանձնահատկությունները:

Պետությունները պարտավոր են՝

- ապահովել, որպեսզի երեխաների թրաֆիքինգի՝ օրենքով և քաղաքականության մակարդակով նախատեսված սահմանումների մեջ արտացոլված լինեն նրանց անհրաժեշտ առանձնահատուկ երաշխիքները և խնամքը, այդ թվում՝ համապատասխան իրավական պաշտպանության մեխանիզմները,
- ապահովել թրաֆիքինգից տուժած երեխաների արագ նույնացման համար անհրաժեշտ ընթացակարգերի առկայությունը,
- ապահովել, որպեսզի թրաֆիքինգից տուժած երեխաները չենթարկվեն քրեական հետապնդման կամ պատիժների այնպիսի իրավախախտումների համար, որոնք նրանք կատարել են իրենց՝ թրաֆիքինգի ենթարկված լինելու անձի վիճակից ելնելով,
- այն դեպքում, երբ երեխաներին չեն ուղեկցում հարազատներ կամ խնամակալներ, քայլեր ձեռնարկել ընտանիքի անդամների ինքնությունը պարզելու և նրանց գտնելու ուղղությամբ: Ռ-իսկի գնահատումից և երեխայի հետ խորհրդակցելուց հետո անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել՝ հեշտագնելու թրաֆիքինգի ենթարկված երեխաների վերամիավորումն իրենց ընտանիքների հետ այն դեպքում, երբ դա բխում է երեխայի շահերից,
- այն իրավիճակներում, որոնցում երեխայի ապահով վերադարձն ընտանիք հնարավոր չէ կամ երբ վերադարձից կտուժեն երեխայի շահերը, ստեղծել երեխայի խնամքի համարժեք մեխանիզմներ, որոնց շրջանակում պաշտպանված կլինեն թրաֆիքինգի ենթարկված երեխայի իրավունքները և արժանապատվությունը,
- վերոնշյալ երկու պարբերություններում նշված իրավիճակներում ապահովել, որպեսզի սեփական կարծիքներ կազմելու ունակություն ունեցող երեխան իրավունք ունենա ազատորեն հայտնելու այդ կարծիքներն իրեն վերաբերող բոլոր հարցերում, հատկապես նրա՝ ընտանիք վերադառնալու հնարավորության մասին որոշումներ կայացնելու գործընթացում, ընդ

<sup>23</sup> Европейская сеть против торговли людьми. Доклад по вопросам торговли людьми. Болгария, Дания, Италия, Румыния, Испания, Великобритания, Спасем детей (Save the Children), Италия, 2004, стр.23.

որում՝ Երեւիտայի կարծիքներին վերագրվող կշիռը որոշվում է, ելնելով նրա տարիքից և հասունության աստիճանից,

- մասնագիտացված քաղաքականություն և ծրագրեր ներդնել՝ պաշտպանելու և օժանդակելու թրաֆիքինգից տուժած երեւիտաներին: Երեւիտաներին պետք է ցուցաբերել համապատասխան ֆիզիկական, սոցիալական, հոգեբանական, իրավաբանական, կրթական, բնակարանային ապահովման և առողջապահական աջակցություն,

- ձեռնարկել միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են՝ ենթադրյալ հանցագործների դեմ ընթացող քրեական վարույթի բոլոր փուլերում, ինչպես նաև փոխհատուցում ստանալու ընթացակարգերի ժամանակ պաշտպանելու թրաֆիքինգի ենթարկված երեւիտաների իրավունքները և շահերը,

- համապատասխան դնաքերում պաշտպանել թրաֆիքինգից տուժած երեւիտաների մասնավոր կյանքի գաղտնիությունը և ինքնությունը, ինչպես նաև միջոցառումներ ձեռնարկել՝ խուսափելու այնպիսի տեղեկությունների տարածումից, որոնք կարող են հանգեցնել նրանց բացահայտմանը,

- միջոցառումներ ձեռնարկել՝ ապահովելու համարժեք և համապատասխան վերապատրաստում, մասնավորապես՝ իրավաբանական և հոգեբանական աջակցություն թրաֆիքինգից տուժած երեւիտաների հետ աշխատող անձանց համար:

## ԳԼՈՒԽ 3

### Թրաֆիքինգի՝ որպես հանցատեսակի բնութագիրը

#### 3.1.Քրեականացման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում

Թրաֆիքինգի կամ, այլ կերպ ասած, մարդկանց շահագործման քրեականացման գործընթացը ՀՀ օրենսդրությունում կրել է ինտենսիվ զարգացման բնույթ:

Մինչև ՀՀ քր.օր-ի ընդունումը (2003թ.) Հայաստանի քրեական օրենսդրությունում սահմանված չի եղել որևէ նորմ, որով նախատեսված լիներ քրեական պատասխանատվություն մարդկանց առևտրի համար: 2003թ. ընդունված քր.օր-ում ներառված 132-րդ հոդվածի վերնագիրն էր «Մարդկանց առևտուրը»: Դա նորույթ էր ՀՀ քր.օր-ում:

ՀՀ քր.օր-ում ներառվել էր ևս մեկ հոդված՝ «Երեխայի առք ու վաճառք» վերնագրով և նույնաբովանդակ դիսպոզիցիայով (հոդված 168):

Հետագայում, 2004 և 2006 թվականներին Հայաստանի օրենսդրի կողմից ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածում երեք անգամ կատարվել են փոփոխություններ և լրացումներ: Դրանց հետ փոխկապակցված, հիմնովին փոփոխվել է նաև 168-րդ հոդվածի բովանդակությունը:

Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2006թ. հունիսի 21-ի ՀՀ օրենքով<sup>24</sup>,

- նոր խմբագրությամբ է շարադրվել ՀՀ քր.օր-ի 132 հոդվածը՝ այժմ այն վերնագրված է «Շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը»,

- ՀՀ քր.օր-ը լրացվել է նոր՝ 132<sup>1</sup> հոդվածով, որով նախատեսվում է քրեական պատասխանատվություն մարդուն պոռնկության կամ սեռական շահագործման այլ ձևերի մեջ, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների մեջ ներգրավելու կամ ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելու կամ պահելու համար,

- փոփոխվել է ՀՀ քր.օր-ի 261 և 262 հոդվածների բովանդակությունը, որոնցով նախատեսվում է քրեական պատասխանատվություն շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելու և պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու համար: Քրեական պատասխանատվության ենթարկվում են ոչ միայն այն անձինք, ովքեր պահում են որջեր և զբաղվում են կավատությամբ, այլև նրանք, ովքեր պոռնկությամբ զբաղվելու համար պարբերաբար տրամադրում են կացարաններ կամ այլ կերպ մասնակցում են այլ անձանց կողմից պոռնկությամբ զբաղվելու կազմակերպմանը: Այդ փոփոխությունների նպատակն էր ապահովել մի կողմից թրաֆիքինգին վերաբերող հոդվածի դիսպոզիցիաներում օգտագործվող հասկացությունների համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված հասկացությունների բովանդակությանը, իսկ մյուս կողմից՝ հոդվածում նախատեսված հանցագործությունների համար

<sup>24</sup> ՀՕ-103-Ն, 21.06.06, ՀՀՊՏ 36/ 491 /, 06.07.06

սանկցիաների հնարավոր ներդաշնակությունը այլ պետություններում նմանատիպ արարքների համար նախատեսված պատժի տեսակներին և դրանց չափերին: Նման մոտեցումը կոչված է ապահովելու թրաֆիքինգի դեմ պայքարում արդյունավետ միջազգային համագործակցություն: Նախ՝ դա նպաստում է թրաֆիքինգի դեմ պայքարում պետությունների ընդհանուր քրեական քաղաքականության իրականացմանը: Սա ընձեռում է նաև օգտակար ընդհանուր տեղեկատվության և փորձի փոխանակման ամրապնդման հնարավորություն: Նույնական հասկացությունների կիրառումը օգտակար է հետազոտություններ կատարելու համար: Դա կարող է նպաստել նաև տվյալների շտեմարանների ստեղծմանը և դրանց օգտագործմանը ազգային ու տարածաշրջանային մակարդակներում: Թեթևանում է համագործակցությունը փոխադարձ իրավական օգնության և հանձնման հարցերում:

Բացի այդ, «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2006թ. դեկտեմբերի 27-ին ընդունված ՀՀ օրենքով սահմանվել է, որ երեխայի առքն ու վաճառքը թրաֆիքինգից տարբերվող առանձին հանցակազմ է, եթե բացակայում են ՀՀ քր.օր-ի 132 և 132<sup>1</sup> հոդվածներով նախատեսված հանցակազմերի հատկանիշները<sup>25</sup>:

### **3.2. ՀՀ քր.օր-ի 132 հոդվածով նախատեսված հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը**

#### **3.2.1. Թրաֆիքինգի սահմանումը ՀՀ քր.օր-ում**

ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի վերնագիրն է «Շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը»<sup>26</sup>: Այդ հոդվածի 1-ին մասի համաձայն քրեորեն հետապնդելի է. «1. Շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով կամ դրա գործադրմամբ կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խարդախության, վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար՝ վճարումներ կամ բարիքներ տալու կամ ստանալու միջոցով»:

Այդ արարքը պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 2-րդ մասի դիսպոզիցիան ունի այլ կառուցվածք: Դիսպոզիցիայի առանձնահատկությունը վերաբերում է հանցակազմի օբյեկտիվ կողմին, որը կապված է տուժողի անձի հետ: Մասնավորապես, ի տարբերություն 1-ին մասում ձևակերպված դիսպոզիցիայի, 2-րդ մասի համաձայն, քրեորեն հետապնդելի է. «2. Շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը, որը կատարվել է՝

- 1) տասնույթ տարին չլրացած անձի նկատմամբ,

<sup>25</sup> ՀՕ-256-Ն, 27.12.06, ՀՀՊՏ 2/ 526 /, 10.01.07

<sup>26</sup> 132-րդ հոդվածը փոփ. 09.06.04 ՀՕ-97-Ն, 01.06.06 ՀՕ-103-Ն, \*01.06.06 ՀՕ-119-Ն օրենքներ:

2) հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի նկատմամբ»:

Այդ արարքը պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասը տարի ժամկետով:

ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ 132 հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

- 1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
- 2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 3) պաշտոնեական դիրքն օգտագործելով,
- 4) կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու

սպառնալիքով կամ դրա գործադրմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասը տարի ժամկետով:

ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ 132 հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

- 1) կազմակերպված խմբի կողմից,
- 2) անզուգույթությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով:

ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 5-րդ մասում տրվել է թրաֆիքինգի հանցակազմին վերաբերող շահագործման հասկացությունը, որի համաձայն, մարդու շահագործում են համարվում այլ անձի պոռնկության ներգրավելը կամ սեռական շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը նմանվող վիճակը, մարդու մարմնի մասերը կամ հյուսվածքները վերցնելը:

ՀՀ գործող քրեական օրենսդրությունում «թրաֆիքինգ», «մարդկանց թրաֆիքինգ» կամ «մարդկանց առևտուր» տերմինները որպես այդպիսին չեն օգտագործվում: Դրանց փոխարեն օգտագործվում են այն տերմինները և սահմանումները, որոնցով թրաֆիքինգը (մարդկանց առևտուրը) որպես երևույթ բնութագրվում է միջազգային իրավունքի գործիքներում:

ՀՀ քրեական օրենսդրությունում, մասնավորապես, օգտագործվել են ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայում<sup>27</sup> և այն լրացնող՝ թիվ 2 Արձանագրությունում<sup>28</sup> օգտագործվող տերմինները<sup>29</sup>, ինչպես նաև Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին 2005թ. ԵԽ կոնվենցիայում օգտագործվող տերմինները<sup>30</sup>:

ԵԽ 2005թ. կոնվենցիայում ձևակերպված «թրաֆիքինգ» հասկացությունը համապատասխանում է Պալերմոյի թիվ 2 Արձանագրության (2000թ.) 3-րդ հոդվածի «ա» կետում սահմանված հասկացությանը: ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 1-ին մասում ձևակերպված

<sup>27</sup> ՀՀ ԱԳՆ ՊՏ N 4/12/, էջ 294-323:

<sup>28</sup> ՀՀ ԱԳՆ ՊՏ N 4/12/, էջ 324-332:

<sup>29</sup> ՀՀ ԱԳՆ ՊՏ N 4/12/, էջ 333-345:

<sup>30</sup> Տե՛ս <http://conventions.coe.int/Treaty/EN/Treaties/Html/197.htm>

հանցագործության հասկացությունը համապատասխանում է միջազգային այդ գործիքներում տրված հասկացությունների բովանդակությանը:

**3.2.2. Թրաֆիքինգի տեսակներն ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի**

Ընդհանուր կանոնն այն է, որ ՀՀ քր.օր-ի 132 հոդվածով նախատեսված հանցագործությունների համար պետք է նախատեսված լինեն այնպիսի պատիժներ, որոնք «արդյունավետ են, համաչափ և զսպող», ու այդպես են հարաբերվում հանցագործության լրջության հետ:

Մեր իրավական համակարգին բնորոշ է պատժի վերին սահմանի սկզբունքը, որով և որոշվում է հանցագործության տեսակը: ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ 2000թ.կոնվենցիայի 2-րդ հոդվածի «բ» կետի համաձայն՝ «լուրջ հանցագործություն» է այն հանցագործությունը, որը պատժվում է չորս տարուց ոչ պակաս ազատազրկմամբ կամ ավելի խիստ պատժաչափով: Այդ տեսանկյունից ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայի 2-րդ հոդվածի «բ» կետի համատեքստում ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 1-ին մասում նախատեսված հանցագործությունը «լուրջ» հանցագործությունների շարքին չի դասվում, իսկ 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերում նախատեսված հանցագործությունները կոնվենցիոն այդ միջազգային ստանդարտների տեսանկյունից դիտվում են որպես լուրջ հանցագործություններ (ծանր կամ առանձնապես ծանր): Դա կարևորվում է նաև անդրազգային հանցավորության դեմ պայքարում հանցագործներին հանձնելու և պետությունների փոխադարձ իրավական օգնության տեսանկյունից: Մինչդեռ, «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն, հանձնման համար բավարար է, որ Հայցող և Հայցվող Կողմերի օրենսդրությամբ այդ հանցագործության համար նախատեսվող ազատազրկման՝ որպես պատժի տեսակի կամ կալանքի տակ գտնվելու ժամկետը գերազանցի մեկ տարին: Նշենք նաև, որ 132 հոդվածի բոլոր մասերում նախատեսված հանցագործությունների կատարման համար որպես պատժի տեսակ նախատեսված է ազատազրկումը, առաջին մասով՝ երեքից վեց տարի ժամկետով, երկրորդ և երրորդ մասերով՝ յոթից տասը տարի ժամկետով, չորրորդ մասով՝ տասից տասնհինգ տարի ժամկետով: Այսինքն՝ «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի կիրառման տեսանկյունից ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի սանկցիաները բավարար են ՀՀ Սահմանադրության 30<sup>1</sup> հոդվածի 3-րդ մասում և ՀՀ քր.օր-ով նախատեսված դեպքերում հանձնումն իրականացնելու համար:

ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի երկրորդ և երրորդ մասերում նախատեսված հանցագործությունների կատարման համար նույն սանկցիայի սահմանումը առաջին հայացքից անտրամաբանական է: Կարող է հարց ծագել, ինչու 132 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը չեն միացվել մեկ մասի շրջանակում, եթե պատժի տեսակը և պատժաչափը նույնն են: Իրականում նման մոտեցումը դիսպոզիցիաների ձևակերպման առումով տրամաբանական լուծում է: Մասնավորապես, 132 հոդվածի 2-րդ մասում նախատեսված հանցագործությունների



հանցակազմերի կառուցվածքն էապես տարբերվում է նույն հոդվածի 1-ին մասում նախատեսված հանցագործությունների հանցակազմերի կառուցվածքից: Դա վերաբերում է հանցագործությունը ավարտված համարելու պահին: Երկրորդ մասում նախատեսված հանցագործությունները ավարտված են համարվում շահագործման նպատակով գործողությունը կատարելու պահից, իսկ 1-ին մասում՝ գործողությունը և միջոցը կիրառելու պահից:

Այսպիսով, ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դիսպոզիցիաների հանցակազմերում ձևակերպված արարքները ծանր հանցագործություններ են, իսկ 132 հոդվածի 4-րդ մասի դիսպոզիցիայում ձևակերպված արարքներն առանձնապես ծանր հանցագործություններ են:


### ***3.2.3. Ավարտված թրաֆիքինգ***

ՀՀ քր.օր-ի 132 հոդվածում սահմանված թրաֆիքինգի (1-ին մաս) իրականացման սխեմաներն էապես չեն տարբերվում այլ պնտություններում նույն հանցագործության իրականացման սխեմաներից: Թրաֆիքինգը գործընթաց է, որը, որպես կանոն, բաղկացած է երեք փուլից՝ հավաքագրելուց, փոխադրելուց (տեղափոխելուց) և շահագործելուց: Ստորև ներկայացվում է թրաֆիքինգի գործընթացի օրինակի սխեման ըստ թիվ 2 Արձանագրության<sup>31</sup>: Այդ սխեման պատկերավոր ներկայացնում է ՀՀ-ում թրաֆիքինգի քրեականացման մեթոդաբանությունը:

---

<sup>31</sup> Այդ սխեմայի հիմքում ընկած է Մարտին Պլույմի մշակված սխեման: Տե՛ս. Մարտին Պլույմ, Торговля людьми, График. 2006.

ԹՐԱՖԻԲԻՆԳ



Վերլուծենք թրաֆիքինգի գործընթացի տարրերը հետևյալ օրինակի համատեքստում:

Ծանր տնտեսական իրավիճակի հետևանքով 19-ամյա միայնակ մայրը բնակվում էր իր հարբեցող հոր բնակարանում, ում հետ հերթական վիճաբանությունից հետո նա տեղափոխվել էր ոչ հեռու գտնվող արդյունաբերական կենտրոն, և սրճարանում աշխատում էր որպես մատուցողուհի: Սրճարանի տերը նրբևէ չի վճարել պայմանավորված աշխատավարձը, նրա հետ վարվել է կոպիտ և մշտապես կատարել սեքսուալ ոտնձգություններ: Այդ իրավիճակում նա վստահել է մեկ այլ մարդու (հետագայում պարզվել է, որ նա սրճարանի տիրոջ ընկերն է), որը նրան առաջարկել է 1000 եվրո աշխատավարձով աշխատանք սեքս-բիզնեսում՝ հարևան պետության հայտնի տուրիստական կենտրոններից մեկում: Կինը համաձայնվել է աշխատել 1000 եվրո աշխատավարձով: Այդ «վստահելի» անձը նրան կեղծ անձնագրով փոխադրել է հարևան պետություն, որտեղ անմիջապես փաստաթղթերը վերցվել են, իսկ հանցավոր կազմակերպության ղեկավարը նրան ստիպել է աշխատել փողոցում որպես մարմնավաճառ:

Երբ երիտասարդը կինը հրաժարվել էր զբաղվել այդ գործով, նրան երեք օր շարունակ

ծեծի են ենթարկել և բռնաբարել (ինչպես և դիմադրող այլ կանանց): Արդյունքում նա որոշել է դուրս գալ փողոց և փախչել առաջին իսկ հնարավորության դեպքում: Մեկ գիշերվա ընթացքում նա, սովորաբար, աշխատել է շուրջ 800 եվրո և այդ գումարը հանձնել իրեն վերահսկող հանցագործներին: Տասն օր անց այդ կինը հաջողացրել է փախչել է իր հերթական հաճախորդի հետ, հասել է սահման և կատարվածի մասին հաղորդել սահմանապահներին: Հանցագործությունը բացահայտվել է: Թեև զոհին ցուցաբերվել էր հատուկ օգնություն և խնամք, այնուամենայնիվ նա երկու անգամ ինքնասպանության փորձ էր կատարել: Միայն իր վիճակը կայունանալուց հետո, նա կարողացել է հանդես գալ ցուցմունքներով, իսկ հետագայում՝ անվտանգության ապահովման նպատակով տեղափոխվել է երրորդ երկիր:

Այս օրինակի վրա երևում է, որ շահագործման նպատակով կատարվել է՝

ա) **գործողություն**, այն է՝ հավաքագրում<sup>32</sup>, որն իրականացվել է՝

- խաբեության միջոցով և

- զոհի վիճակի խոցելիությունը չարաշահելու միջոցով<sup>33</sup>,

բ) **մեկ այլ գործողություն**, այն է՝ փոխադրում, որն ուղեկցվել է՝

- անձը հաստատող ակնհայտ կեղծ փաստաթղթի տրամադրմամբ և օգտագործմամբ ու

- միգրացիայի կանոնների խախտմամբ<sup>34</sup>,

գ) **ինչպես նաև այլ գործողություն՝ մեկ անձին մեկ այլ անձի իշխանությանը փոխանցում (հանձնում)**<sup>35</sup>՝ զոհի վիճակի խոցելիությունը չարաշահելու միջոցով, որն ուղեկցվել է անձը հաստատող ակնհայտ կեղծ փաստաթուղթը վերցնելով (անձը մնացել է առանց օրինական կամ անօրինական փաստաթղթի),

դ) **շահագործում**, այն է՝ մարմնավաճառությամբ զբաղվելու կամ սեքսուալ այլ ծառայություններ այլ անձանց մատուցելու հարկադրանք<sup>36</sup>, որն ուղեկցվել է բռնություններով, ներառյալ՝ բռնաբարությամբ<sup>37</sup>:

Նույն մեթոդաբանությունը կիրառելի է ՀՀ քր.օր-ի 132-րդ հոդվածի հատկանիշներով հանցագործությունը ավարտված համարելու համար. անհրաժեշտ է ցանկացած համակցությամբ երեք տարրերի առկայությունը միաժամանակ՝ գործողությունը, միջոցը և շահագործման նպատակը:

*Բերենք օրինակ հայաստանյան իրականությունից: Ոմն Ա, վերադառնալով Թաթարստանից հայաստան՝ իր գյուղ, և օգտվելով այն հանգամանքից, որ գյուղի բնակիչները աշխատանքով ապահովված չեն ու գտնվում են նյութական ծանր վիճակում, իր զարմիկին, նրա անչափահաս*

<sup>32</sup>«Այդ իրավիճակում նա վստահել է մեկ այլ մարդու (հետագայում պարզվել է, որ նա սրճարանի տիրոջ ընկերն է), որը նրան առաջարկել է 1000 եվրո աշխատավարձով աշխատանք սեքս-բիզնեսում՝ հարևան պետության հայտնի տուրիստական կենտրոններից մեկում»:

<sup>33</sup>«Սրճարանի տերը երբևէ չի վճարել պայմանավորված աշխատավարձը, նրա հետ վարվել է կոպիտ և մշտապես կատարել սեքսուալ ոտնձգություններ»: «Կինը համաձայնվել է աշխատել 1000 եվրո աշխատավարձով»:

<sup>34</sup>«Կեղծ անձնագրով նրան փոխադրել է հարևան պետություն»:

<sup>35</sup> «...անմիջապես փաստաթղթերը վերցվել են, իսկ հանցավոր կազմակերպության ղեկավարը նրան ստիպել է աշխատել փողոցում որպես մարմնավաճառ»:

<sup>36</sup> «Երբ երիտասարդը կինը հրաժարվել էր զբաղվել այդ գործով, նրան երեք օր շարունակ ծեծի էին ենթարկել»:

<sup>37</sup>«... և բռնաբարել (ինչպես և դիմադրող այլ կանանց): Արդյունքում նա որոշել է դուրս գալ փողոց»:

որդուն և ևս մեկ անձի (անապահով և գործազուրկ համազուրկացու) առաջարկել է մեկնել Թաթարստան՝ շինարարական աշխատանքների: Առաջինին խոստացել է վճարել յուրաքանճուր ամիս 400, իսկ մյուս երկուսին՝ 300-ական ԱՄՆ դոլարին համարժեք ռուսական ռուբլի: Նրանք համաձայնել և ճանապարհածախսի համար հայթհայթել են որոշ գումար (պարտք, գրավ): Այդ գումարներով Ա-ն նրանց Երևանից ավտոբուսով տեղափոխել է Արմավիր, այնուհետև՝ Սամարա, որտեղից՝ Թաթարստանի Ալմենտսկ քաղաք: Այնտեղ, ժամանակավորապես հաշվառելու պատրվակով վերցրել է բոլորի անձնագրերը, թույլ չի տվել հեռախոսակապ հաստատել հարազատների հետ, ներգրավել է հարկադիր շինարարական աշխատանքների մեջ, չի վճարել՝ հավաստիացնելով, իբր նրանց աշխատավարձն ուղարկել է իրենց ընտանիքներին: Երբ վերջիններս ըմբոստացել են՝ դաժանաբար ծեծի է ենթարկել նրանց: Բացի այդ, սպառնացել է սպանել իր գարմիկին կամ նրա անչափահաս որդու գլուխն ուղարկել Հայաստան: Սպառնալիքներից և դաժան վերաբերմունքից ահաբեկված թրաֆիքինգի զոհերը շուրջ մեկ տարի ենթարկվել են շահագործման ստրկական պայմաններում (աշխատելով մինչև կեսգիշեր, իսկ նրբեմն էլ՝ շուրջօրյա):

Այսպիսով, հանցագործը, շահագործման նպատակով (նպատակ), լաբեռությամբ ու վիճակի խոցելիությունը օգտագործելու միջոցով (միջոցներ) հավաքագրել է 3 անձ, որոնց փոխադրել է այլ վայր (գործողություններ), որտեղ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով կամ դրա գործադրմամբ (միջոցներ) ստրկությանը նմանվող վիճակում ներգրավել է հարկադիր աշխատանքների (փաստացի շահագործում)<sup>38</sup>:

ՀՀ քրեական օրենսդրությամբ թրաֆիքինգը ավարտված հանցագործություն համարվելու համար պարտադիր չէ, որ անձը ենթարկվի շահագործման (ձևական հանցակազմ): Դրա համար բավարար է, որ անձի նկատմամբ շահագործման նպատակով կատարվի 132 հոդվածի 1-ին մասում նշված գործողություններից մեկը՝ նույն մասում նշված եղանակներից որևէ մեկի կիրառմամբ:

Այսպիսով, թրաֆիքինգը համարվում է ավարտված հանցագործություն մինչև անձի փաստացի շահագործումը: Այսպես, մարդկանց «հավաքագրումը» (գործողություն) «խարդալության միջոցով» (միջոց) «աշխատանքային շահագործման նպատակով» (նպատակ) հանցավոր գործունեություն է, որը պետք է որակվի որպես ավարտված թրաֆիքինգ: Կամ, օրինակ, «շահագործման նպատակով» (նպատակ) «առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրմամբ» (միջոց) «մարդուն թաքցնելը» (գործողություն) նույնպես պետք է որակվի որպես ավարտված թրաֆիքինգ:

### ***Երևոյ առանձնահատկություններ ընդհանուր կանոնից***

<sup>38</sup> Այս դեպքը կատարվել է 2004թ. ապրիլին, փաստացի շահագործումը տևել է շուրջ մեկ տարի և հանցագործությունը բացահայտվել է տուժողներից մեկի կնոջ ակտիվ քայլերի և հետևողական դիմումների շնորհիվ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության իրավապահ մարմինների արդյունավետ համագործակցության արդյունքում:

ՀՀ քր.օր-ի 132 հոդվածին վերաբերող՝ հանցագործությունը ավարտված համարվելու ներկայացված ընդհանուր կանոնից ՀՀ քր.օր-ը նախատեսում է երեք առանձնահատկություն:

**Առաջին առանձնահատկություն.** 132 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն, տասնութ տարին չլրացած անձին շահագործման նպատակով հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը պետք է որակվի որպես ավարտված հանցագործություն՝ «թրաֆիքինգ», անգամ եթե չեն կիրառվել 132 հոդվածի 1-ին մասում նշված միջոցները:

Հիշենք, որ Եվրոպայի խորհրդի 2005թ. կոնվենցիայի 4-րդ հոդվածի «գ» և «դ» կետերով սահմանված է, որ.

«կոնվենցիայի նպատակների համար.

գ) շահագործման նպատակով երեխային հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը համարվում է «թրաֆիքինգ» նույնիսկ այն դեպքում, երբ դա կապված չէ սույն հոդվածի «ա» կետում նախատեսված եղանակներից որևէ մեկի կիրառման հետ.

դ) «երեխա» է համարվում տասնութ տարին չլրացած ցանկացած անձ:

**Երկրորդ առանձնահատկություն.** 132 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն, հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին շահագործման նպատակով հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը պետք է որակվի որպես ավարտված հանցագործություն՝ «թրաֆիքինգ», անգամ եթե չեն կիրառվել 132 հոդվածի 1-ին մասում նշված միջոցները:

ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում նկարագրված հանցագործությունների հանցակազմերը նույնպես ձևական են, ինչպես և 132 հոդվածի 1-ին մասում նկարագրված հանցագործության հանցակազմը: Առանձնահատկությունը հետևյալն է. վերը թվարկված երկու կատեգորիաների անձանց նկատմամբ կատարված ոտնձգությունը համարվում է ավարտված ավելի վաղ պահից, քան նախատեսված է ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 1-ին մասում սահմանված ընդհանուր կանոնով: ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում նկարագրված հանցագործությունները համարվում են ավարտված (հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը) գործողությունը կատարելու պահից, եթե այն կատարվել է շահագործման նպատակով: Այսպիսով, նշված երկու կատեգորիայի անձանց համար օրենսդիրը սահմանել է թրաֆիքինգից պաշտպանվածության ավելի բարձր աստիճան: Ընդ որում, եթե տասնութ տարին չլրացած անձի պարագայում նման մոտեցումը կոնվենցիոն պարտավորություն է, ապա հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի պարագայում նման մոտեցումը Հայաստանի Հանրապետության կողմից նախաձեռնված լրացուցիչ քայլ է: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ երկու կատեգորիաների անձանց վիճակն ինքնին առավել խոցելի է: Ավելացնենք, որ առանձնապես խոցելի է այն անչափահասների վիճակը, ովքեր միաժամանակ

հաշմանդամ են: Նրանց հաճախ օգտագործում են մուրացկանության նպատակներով: Թրաֆիքինգով զբաղվող անձանց իշխանության ներքո գտնվող երեխաները և հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձինք շատ դեպքերում անգամ չեն հասկանում, թե ինչպիսի պայմանների մեջ են հայտնվել և չունեն աջակցության կենտրոնների հետ հեշտությամբ կապվելու հնարավորություն:

**Երրորդ առանձնահատկություն.** 132 հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի դիսպոզիցիայի կառուցվածքի համաձայն, արարքը համարվում է ավարտված հանցագործություն, եթե նույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը (թրաֆիքինգ կամ անչափահասի թրաֆիքինգ կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգ) անգոյությունը առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ<sup>39</sup>:

### **3.2.4. Չավարտված թրաֆիքինգ**

ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայի և ԵՍԿ կոնվենցիայի պահանջների համաձայն, պետությունները պետք է ձեռնարկեն միջոցներ, որպեսզի քրեորեն հետապնդելի լինի հանցակցությունը և հանցափորձը:

ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված կանոնների համաձայն, չավարտված հանցագործություն են համարվում հանցափորձը և ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների նախապատրաստությունը: Հանցափորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամ քից անկախ հանգամանքներով: Իսկ հանցագործության նախապատրաստություն է համարվում ուղղակի դիտավորությամբ հանցանք կատարելու համար միջոցներ կամ գործիքներ ձեռք բերելը կամ հարմարեցնելը, ինչպես նաև դիտավորությամբ այլ պայմաններ ստեղծելը, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել այդ անձի կամ քից անկախ հանգամանքներով<sup>40</sup>: Քանի որ ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի բոլոր մասերի դիսպոզիցիաների հանցակազմերում ձևակերպված արարքները ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ են, ուստի ՀՀ տարածքում կատարված թրաֆիքինգի ինչպես հանցափորձը, այնպես էլ նախապատրաստությունը դիտվում են որպես պատժելի արարքներ:

<sup>39</sup> ՀՀ քր.օր-ի 32 հոդվածի համաձայն, «Եթե օրենքն ավելի խիստ պատասխանատվություն է նախատեսում անգոյությամբ ծանր հետևանքներ առաջացրած դիտավորյալ հանցագործության համար, ապա անձն այդ հետևանքների համար պատասխանատվություն է կրում միայն այն դեպքում, եթե նա նախատեսել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի՝ ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրանք կկանխվեն, կամ չի նախատեսել իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել դրանք: Այդպիսի հանցանքը համարվում է դիտավորությամբ կատարված»:

<sup>40</sup> Տե՛ս ՀՀ քր. օր-ի 33, 34 և 35 հոդվածները:

### 3.2.5. Հանցակցություն

ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված կանոնների համաձայն, քրեորեն հետապնդելի են նաև թրաֆիքինգի կազմակերպելը, դրդելը և օժանդակությունը:

Ոսն Ն (ազգությամբ հայ, Տաշքենդ քաղաքի բնակիչ), շահ ստանալու նպատակով, ԱՄԷ և Բահրեյն փոխադրելու ու այնտեղ մարմնավաճառությամբ զբաղվելու համար 2005թ. Տաշքենդում հավաքագրել է սոցիալապես ծանր վիճակում գտնվող նրկու կանանց (ազգությամբ ուզբեկ, ռուս) և անչափահաս մի աղջկա (ազգությամբ հայ, վերջինիս կույս լինելու հանքամանքն օգտագործվելու էր սևուկան շահագործումից իբր 15-ից մինչև 20 հազար ԱՄՆ դոլար ստանալու համար, որից 1.000 ԱՄՆ դոլարը նախատեսվում էր հանձնել այդ աղջկան): Նրանք պայմանավորվել էին, որ մինչև Դուբայ հասնելու ծախսերը հոգալու է հավաքագրողն իր ընկերների հետ միասին (համապատասխանաբար 10.000, 8.000 և 7.000 ԱՄՆ դոլար), իսկ հավաքագրվածները Դուբայում մարմնավաճառությամբ գումար վաստակելով պետք է վճարեն այդ պարտքը, այնուհետև աշխատեն կավատի հետ՝ կիսելով եկամուտը: Հավաքագրողը հավաքագրվածներին տարբեր ճանապարհներով տեղափոխել է Երևան: Այսպես, կանանցից մեկին տեղափոխել էր Տաշքենտ – Չիքմենդ – Ակտաու – Բաքու – Թբիլիսի – Երևան երթուղով: Դուբայ տեղափոխելը կազմակերպելու համար Ն-ն Դուբայից բանկային «Վեսթերն Յունիոն» փոխանցմամբ ստացել է գումարներ, նրանցից նրկուսի համար պատրաստել կեղծ անձնագրեր (այլ պետությունների և այլ անձանց տվյալներով), ձեռք է բերել ինքնաթիռի տոմսեր և այլ փաստաթղթեր, գուցումներ է սովել վարքագծի կանոնների մասին և կազմակերպել Երևանից Դուբայ օդանավով մեկնելը: Հանցակիցներից մեկը (ոսն Ն), հաստատապես իմանալով Ն-ի հանցավոր մտադրությունների մասին, Երևանում օժանդակել է նրան հանցավոր մտադրությունը կատարելու գործում՝ տուժողներին տարել է իր տուն, օգնել ավիագործակալության հետ կապված հարցերով, նրանց հասցրել օդանավակայան: Այնտեղ, իր ծանոթներից մեկի միջոցով, Ն-ի խնդրանքով ինքնաթիռի մոտ տուժողներից մեկին փոխանցել է վերջինիս լուսանկարով և կեղծ տվյալներով դազախական անձնագիր, կատարել է հանցագործության կատարմանը օժանդակող այլ գործողություններ: Դուբայի օդանավակայանի միգրացիոն ծառայությունը, սակայն, պարզել է, որ ուղևորությունը իրականացվում է կեղծ փաստաթղթերով, և նրանք վերադարձվել են Երևան: Երրորդ գոհը (անչափահասը) չի հասցրել մեկնել, քանի որ հանցագործությունը բացահայտվել է, և մեղավորները Երևանում ձերբակալվել են<sup>41</sup>:

Տվյալ դեպքում ուշագրավը նախ այն է, որ հավաքագրման նպատակը եղել է մարդկանց շահագործումը (այլ անձի պոռնկության ներգրավելը կամ սևուկան շահագործման այլ ձևերը): Այդ նպատակին հասնելու համար հանցագործը օգտվել է տուժողների խոցելի վիճակից (միջոց):

<sup>41</sup> Այս հանցագործության փաստի առթիվ հարուցված քրեական գործով 3 անձ դատապարտվել է Երևանի Մալաթյա-Սեբաստիա համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ սեպտեմբերի 25-ի դատավճռով: Քանի որ քրեական գործով կիրառված ՀՀ քր. օր-ի 132 և 325 հոդվածների բովանդակությունը դատավճիռը կայացնելուց հետո հիմնովին փոփոխվել է (ընդհուպ մինչև հանցագործության տեսակի փոփոխությունը), ուստի որակմանը չենք անդրադառնում: Միայն նշենք, որ կիրառվել են հանցագործությունների համակցության կանոնները (ՀՀ քր. օր-ի 20 հոդված), իսկ պատիժը սահմանելիս կիրառվել է պատիժները գումարելու սկզբունքը (ՀՀ քր. օր-ի 66 հոդված):

Ապա ուշագրավ է, որ այդ վիճակի օգտագործմամբ իրականացվել է հավաքագրում (գործողություն), տեղափոխում՝ (գործողություն). նրանք տեղափոխվել են մի շարք պետությունների տարածքներով: Երրորդը՝ փաստացի շահագործում չի իրականացվել հանցագործների կամքից անկախ հանգամանքներով: Այնուամենայնիվ հանցագործությունը համարվել է ավարտված, քանի որ արարքը պարունակել է հանցակազմի բոլոր հատկանիշները: Այսինքն կատարվածը չի կարող համարվել հանցափորձ: Եվ վերջինը՝ հանցակիցներից մեկի գործողություններում առկա են հանցագործությանն օժանդակելու հատկանիշներ, ինչի համար և նա դատապարտվել է:

### **3.3. Հանցակազմը**

#### **3.3.1. Հանցագործության օբյեկտը**

ՀՀ Սահմանադրությունը պարունակում է այնպիսի դրույթներ, որոնք նրաշխարհում են պետության պատասխանատվությունը մարդկանց հիմնարար իրավունքները և ազատությունը անօրինական սահմանափակելու, հանցավոր ոտնձգությունները, ներառյալ՝ թրաֆիքինգը կանխելու, կասնցնելու, բացահայտելու և տուժողների իրավական պաշտպանությունը ապահովելու հարցերում: Սահմանադրության 3-րդ հոդվածը հռչակում է, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են<sup>42</sup>: Սահմանադրությունը հռչակում է նաև, որ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան<sup>43</sup>: Այդ դրույթն ապահովում է անձի ազատությունը, պետության ու հասարակության ժողովրդավարությունը և կենսունակությունը: Մարդու արժանապատվության պաշտպանությունը անձի անձեռնմխելիության պետական ապահովման դրսևորումներից մեկն է: Այդ սահմանադրական նրաշխարհում է Սահմանադրության 14-րդ հոդվածում<sup>44</sup>: Սահմանադրությունը պաշտպանում է անձնական ազատությունը և անձեռնմխելիությունը<sup>45</sup>, այսինքն մարդու կարևորագույն այն իրավունքները, որոնք նա ստանում է ծնվելու պահից: Այդ հոդվածն ամրագրում է մարդու անձնական ազատությունը սահմանափակելու օրինական հիմքերը: Սահմանադրական այդ դրույթի ուժով արգելվում է մարդուն անձնական ազատությունից ցանկացած այլ հիմքով կամ օրենքով սահմանված կարգից տարբերվող այլ կարգով զրկելը:

Սահմանադրությամբ պաշտպանվում է մարդու անձնական ազատությունը այն դեպքերում, երբ վերջինս ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական

<sup>42</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Հոդ.3, մաս 1:

<sup>43</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Հոդ.3, մաս 2:

<sup>44</sup> ՀՀ Սահմանադրություն, Հոդ.14: Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անբաժանելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:

<sup>45</sup> ՀՀ Սահմանադրություն, Հոդ.16:



պարտավորությունները:<sup>46</sup> Սահմանադրության համաձայն «Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք»<sup>47</sup>:

Այս սահմանադրական հիմքերով ՀՀ քր.օր-ի 132 հոդվածով նախատեսված հանցագործության անմիջական օբյեկտը կազմում են այն հասարակական հարաբերությունները, որոնք ապահովում են տուժողի անձնական ազատությունը:

*Հայաստանում բնակվող ուն Գ, նախնական համաձայնության գալով Թուրքիայում բնակվող իր քրոջ՝ Գ.Ա-ի հետ, որոշել էր բարձր աշխատավարձ խոստանալով և ծեր կամ երեխա խնամելու պատրվակով խաբեությանը հավաքագրել և Թուրքիա ուղարկել նյութական ծանր վիճակում գտնվող իր հարևանուհուն ու այնտեղ ենթարկել սեռական շահագործման: Հանցավոր մտադրությունը իրականացվել է հավաքագրվածը տեղափոխվել է Թուրքիայի Բնեք քաղաք, որտեղ Գ.Ա-ն նրան առաջարկել է զբաղվել մարմնավաճառությամբ: Վերջինս հրաժարվել և պահանջել է վերադարձնել Հայաստան: Հնազանդեցնելու համար Գ.Ա-ն նրան ծեծի է ենթարկել, մի քանի օր չկերակրելով պահել է տան նկուղում, որից հետո թույլ է տվել, որ նրա հետ ունենան բռնի սեռական հարաբերություն, այնուհետև 6.000 ԱՄՆ դոլարով վաճառել է ազգությամբ թուրք ուն Մ-ի: Մահմեդականությունն ընդունելու պայմանով՝ Մ-ն տուժողին առաջարկել է ամուսնանալ իր հետ և Հայաստանում հաշվառումից դուրս գալու համար մեկնել Հայաստան: Օգտվելով այդ հնարավորությունից՝ նա վերադարձել և կատարվածի մասին հայտնել է ռատիկականությանը<sup>48</sup>:*

Վերլուծելով հանցագործության օբյեկտը այս օրինակի վրա, նշենք, որ տուժողը հայտնվել է անազատության մեջ:<sup>49</sup>

Թրաֆիքինգը առանձին դեպքերում բնութագրվում է նաև լրացուցիչ օբյեկտով. հանցագործությունը կարող է ուղղված լինել նաև այն հասարակական հարաբերությունների դեմ, որոնք կոչված են ապահովելու անձի կյանքի կամ առողջության անվտանգությունը:

Հանցագործությունը բնութագրվում է լրացուցիչ օբյեկտով այն դեպքերում, երբ բացի անձնական անազատությունից, տուժողի նկատմամբ գործադրվում է բռնություն կամ բռնություն գործադրելու սպառնալիք կամ հարկադրանքի այլ ձև:

ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում որպես թրաֆիքինգի իրականացման այլընտրանքային միջոց նախատեսված է այն մոդելը, երբ գործողությունը կատարվում է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով կամ դրա գործադրմամբ կամ հարկադրանքի այլ ձևերով:

<sup>46</sup> ՀՀ Սահմանադրություն, Հոդ. 16, մաս 5: «Մարդուն չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները»:

<sup>47</sup> ՀՀ Սահմանադրություն, Հոդ. 25, մաս 1:

<sup>48</sup> Այս հանցագործության փաստի առթիվ հարուցված քրեական գործով մեղավոր անձը դատապարտվել է Լոռու մարզի առաջին աստիճանի դատարանի 2006թ. օգոստոսի 9-ի դատավճռով ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործությունը կատարելու համար:

<sup>49</sup> «Հնազանդեցնելու համար Գ.Ա-ն նրան ծեծի է ենթարկել, մի քանի օր չկերակրելով պահել է տան նկուղում, որից հետո թույլ է տվել, որ նրա հետ ունենան բռնի սեռական հարաբերություն, այնուհետև 6.000 ԱՄՆ դոլարով վաճառել է ազգությամբ թուրք ուն Մ-ի»:

ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի դիսպոզիցիայում որպես թրաֆիքինգի իրականացման միջոց նախատեսված է հանցավոր վարքագծի այն մոդելը, երբ գործողությունը կատարվում է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով կամ դրա գործադրմամբ, իսկ նույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության լրացուցիչ օբյեկտը զոհի կյանքն է, երբ անգոյություն է առաջացել է տուժողի մահ: Իսկ այն դեպքերում, երբ անգոյությամբ առաջացել են այլ ծանր հետևանքներ, հանցագործության լրացուցիչ օբյեկտը կազմում են այն հասարակական հարաբերությունները, որոնք ապահովում են զոհի կամ այլ անձի առողջության անվտանգությունը: Այսպես, եթե թրաֆիքինգի արդյունքում զոհը կամ օրինակ, նրա հարազատը ձեռք են բերել հոգնական հիվանդություն, կամ զոհի հարազատը կատարել է, օրինակ, ինքնասպանություն, ապա նմանատիպ դեպքերում խոսքը գնում է այլ ծանր հետևանքների մասին:

Վերը նշված հիմքերով կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով կամ դրա գործադրմամբ կամ հարկադրանքի այլ ձևերով ուղեկցվող թրաֆիքինգը պետք է որակվի որպես ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն, եթե բացակայում են որակման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Իսկ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով կամ դրա գործադրմամբ ուղեկցվող թրաֆիքինգը պետք է որակվի որպես ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցագործություն, եթե բացակայում են որակման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ (օրինակ հանցագործությունների համակցության կանոնները):

ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետում նախատեսված հանցակազմում արարքը որակելու համար օրենսդիրը հաշվի է առել հանցագործության ծանր հետևանքները և մեղքի խառը ձևը, որոնք անմիջապես կապված են տուժողի կյանքի կամ առողջության անվտանգության հետ: Մասնավորապես, եթե ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված թրաֆիքինգը անգոյությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ, ապա արարքը պետք է որակվի որպես ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործություն:

### ***3.3.2. Հանցագործության օբյեկտիվ կողմը***

Թրաֆիքինգը բնութագրվում է որպես գործողություններով կատարվող հանցագործություն: Հանցագործության օբյեկտիվ կողմը կազմավորվում է այլընտրանքային գործողությունից (գործողություններից) և այդ գործողությանը (գործողություններին) ուղեկցող այլընտրանքային միջոցից (միջոցներից): «Միջոց» բառը տվյալ դեպքում օգտագործվում է որպես պայմանական հասկացություն: Միջոցները նույնպես գործողություններ են, սակայն դրանք ուղեկցում են հիմնական գործողությունները<sup>50</sup>:

<sup>50</sup> Թրաֆիքինգի օբյեկտիվ կողմի գործողությունները կարելի է վերլուծել սույն ձևերի «Հանցագործության օբյեկտը» ենթավերնագրով 3.3.1. կետում նկարագրված՝ զոհին շահագործման նպատակով Թուրքիա ուղարկելու օրինակի վրա:

**3.3.2.1. Այլընտրանքային գործողություններն են՝** մարդուն հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը: Նշված գործողությունների համակցությունը կազմում է մարդու շահագործմանը հանգեցնող գործողությունների ամբողջական շղթան:

**Հավաքագրելը** տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրող այլընտրանքային գործողություն է: Հավաքագրելը տուժողի կողմից աշխատանք կատարելու կամ ծառայություն մատուցելու կամավոր համաձայնությունը ստանալուն ուղղված գործողություն կամ գործունեություն է, որի նպատակն է տուժողի շահագործումը՝ ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 5-րդ մասում նշված շահագործման իմաստով<sup>51</sup>:

Հավաքագրումը կարող է կատարվել օրինական կամ անօրինական եղանակներով: Ապագա զոհին առաջարկվում է աշխատանք արտերկրում կամ երկրի սահմաններում: Հայտնի են մարդկանց օրինական և անօրինական հավաքագրման տարբեր մեթոդներ: Աշխատանքային տեղերը գովազդվում են զանգվածային լրատվության միջոցներով, աշխատանքի տեղավորման գործակալություններում, տուրիստական գործակալություններում, Ինտերնետի գլոբալ ցանցում, ընտանիքի անդամների, ընկերների, մտերիմների կամ ծանոթների միջոցով:

Մարդկանց հավաքագրման եղանակները կախված են հանցագործության կատարման եղանակից և թրաֆիքինգ իրականացնող անձանց կազմակերպվածության աստիճանից, ինչպես նաև այն խոցելի խմբից, որին ուղղված են գործողությունները (կանայք, աղջիկներ, երեխաներ, ծնողագուրկ երեխաներ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ կամ այլ խմբեր):

Օգտագործվող մեթոդները կարող են տարբեր լինել: Դրանք են, օրինակ, հարկադրանքը (մարդկանց, հատկապես՝ երեխաների առևանգում և վաճառք), կամ օրինական աշխատանքի տեղավորելու կամ ամուսնանալու խոստումները՝ խաբեությանը, բռնության գործադրմամբ: Հավաքագրումը կարող է իրականացվել զոհի ընտրությամբ կամ զոհին փնտրելով, անձանց գրանցմամբ և նրանց հետ հարցազրույցների անցկացմամբ և այլն: Մարդկանց կարող է դիտավորությամբ ներկայացվել աշխատանքի իրական պայմանների մի մասը (օրինակ, անօրինական պայմաններում աշխատելու հնարավորության մասին), միաժամանակ լռելով այն մասին, որ մարդը հարկադրված կլինի աշխատելու շահագործման պայմաններում, կամ որ նրա մարմնի օրգանները, հյուսվածքները հարկադրաբար կկորզվեն, անգամ չտեղեկացնելով նրան առողջությանը վտանգող հնարավոր հետևանքների մասին: Հնարավոր զոհին կարող են հավաքագրել միզրացիոն գործընթացի ցանկացած փուլում և վայրում:

Հավաքագրման սխեմաները զանազան են: Թրաֆիքինգ իրականացնողները մարդկանց, որպես կանոն, հավաքագրում են այն պետությունում, որոնց քաղաքացիներն են նրանք կամ որտեղ

<sup>51</sup> Արդի հայերենի բացատրական բառարանում «Հավաքագրել» բառը բացատրվում է որպես «1. շատերին վարձել՝ վարձով հավաքել մի բանի համար: 2. փխթ. կողմնակիցներ գտնել, գրավել, ներգրավել: 3. փխթ. համարել, կազմը ուժեղացնել:»: Տե՛ս Է.Բ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1977, հատոր 1, էջ 837: ՀՀ Քրեական օրենսգրքի 132 հոդվածի 5-րդ մասի համաձայն, «5. Սույն հոդվածում մարդու շահագործում են համարվում այլ անձի պոռնկության մեջ ներգրավելը կամ սեռական շահագործման այլ ձևերը, ... »: Նույն բառարանում «Ներգրավել» բառը բացատրվում է որպես «1. Իր շարքերի կազմի մեջ առնել, ներառել, ընդգրկել: 2. մասնակից դարձնել: 3. ներքաշել, ակամայից կամ հարկադրաբար մի բանի մեջ գրավել»: Տե՛ս Է.Բ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1977, հատոր 2, էջ 1063:

մշտապես բնակվում են, իսկ հետագայում վաճառում են մեկ կամ մի քանի երկրներում, որտեղ տուժողները ենթարկվում են շահագործման: Կամ մարդկանց հավաքագրում են վերջիններիս քաղաքացիության երկրի տարածքում և փոխադրում նույն երկրում այլ վայր՝ շահագործման նպատակով:

Հավաքագրման առավել տարածված մեթոդներն են՝

- որակավորում չպահանջող և աշխատողի կարծիքով պատշաճ վարձատրվող աշխատանքի առաջարկ (մատուցող, պարուհի, շինարար, դայակ),

- «ամուսնական գործակալությունների» միջոցով ապագան կերտելու հնարավորություն,

- այլ եղանակով անձին խաբելը, վստահությունը չարաշահելը, մոլորության մեջ գցելը և այլն:

Միգրանտները մեկնում են իրենց երկրից և մուտք են գործում այլ երկիր՝ ինչպես օրինական, այնպես էլ անօրինական ճանապարհով (եթե նրանք մուտք են գործում երկիր անօրինական, ապա հնարավոր է, որ վճարեն մուտք գործելուն օժանդակող անձին): Դրանից հետո թրաֆիքինգով զբաղվող անձինք նրանց վաճառում են նշանակետ երկրում կամ այլ երկրում:

**Փոխադրելը (տեղափոխելը)** - գործողություններ են, որոնք ենթադրում են տուժողին մեկ վայրից այլ վայր տեղափոխելը երկրի ներսում կամ երկրից դուրս և/կամ աջակցությունը սահմանը անօրինական հատելու հարցում, ինչպես նաև տարանցիկ կամ նշանակետ երկրում անօրինական կացության կազմակերպումը:

Տեղափոխման հեռավորությունը կամ սահմանները նշանակություն չունեն երևույթը որպես թրաֆիքինգ դիտելու համար: Զոհի փոխադրումը թրաֆիքինգի իրականացման ընթացքում ամենաբարդ գործողություններից է, որի ճշգրիտ կատարումից կախված է հանցագործության ամբողջ շղթայի հաջող իրագործումը:

Փոխադրամիջոցի ընտրությունը կախված է տեղափոխման ուղուց: Հասարակական տրանսպորտն ընտրվում է անանուն լինելու և իրավապահ մարմինների ուշադրությունից դուրս մնալու մտադրությամբ: Նման դեպքերում, երբ տեղափոխումն իրականացվում է պետությունից պետություն, նախատեսվում է առնչություն սահմանապահների և միգրացիոն ծառայությունների հետ: Ոստիկանության և սահմանապահ ծառայությունների աշխատակիցները կարող են կաշառվել, շահագործման գոհերը կարող են սահմանն անցնել ապօրինի կերպով, որպես ուսանող, զբոսաշրջիկ կամ աշխատանքային թույլտվությամբ: Այն դեպքերում, երբ սահմանի օրինական հատումն անհնարին է, շահագործողները դիմում են կեղծ անձնագրերի կամ այլ փաստաթղթերի օգտագործմանը կամ գոհին գաղտնի ճանապարհներով (կաձաններով) տեղափոխելուն: Այս դեպքում սահմանային կետերը ընդհանրապես շրջանցվում են և փաստաթղթեր չեն օգտագործվում:

Այն բանից հետո, երբ անձինք համաձայնվել են ընդունել աշխատանքի առաջարկությունը, թրաֆիքինգ իրականացնողները աջակցում են սահմանանցմանը կամ երկրի ներսում այլ վայրեր հասնելուն: Սովորաբար, փոխադրման կազմակերպման, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու համար (ինչպիսիք են հրավերը, վիզան, աշխատանքի թույլտվությունը

և այլն) գանձվում է բարձր վճար: Եթե թրաֆիքինգի գոհ դարձած անձը չունի կացության օրինական կարգավիճակ, ապա այդ հանգամանքն օգտագործվում է կախվածությունը ուժեղացնելու համար և տեղական իշխանություններից օգնություն ստանալու փորձի փոխարեն գոհի մոտ կալանավորվելու կամ արտաքսվելու վախ սերմանելու համար: Այն դեպքերում, երբ գոհները իրենց երկիրը լքում են օրինական հիմքերով, թրաֆիքինգ իրականացնողները կազմակերպում են փոխադրումը, միջոցների և բնակվելու համար պիտանի տարածքների հատկացումը՝ ստեղծելով պայմաններ պարտապանի ստրկացման համար:

**Հանձնելը** ենթադրում է ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 1-ին մասում նշված՝ թրաֆիքինգի գործողությունների կատարման ընթացքում միջնորդի՝ որպես հանցակցի գործողություններ, ինչպես նաև գոհի փոխանցումը այլ անձանց՝ նրան վաճառելուց կամ այլ եղանակով օտարելուց հետո (նվիրատվություն, պարտքի մարում, վնասի փոխհատուցում և այլն): Հանձնելը գոհին համապատասխան անձանց (ընդունողների) տրամադրության տակ թողնելն է: Զոհի հանձնումը համարվում է կայացած այն պահից, երբ նա հայտնվում է ընդունող անձի տրամադրության տակ և վերջինս կարող է նրան շահագործել ըստ իր նպատակների:

**Ստանալը** գործողություն է, որը ենթադրում է փոխանցման, նվիրատվության, փոխանակության, փոխառության կամ այլ գործարքի արդյունքում թրաֆիքինգի գոհի ձեռք բերում: Ստանալը կարող է լինել հատուցելի կամ անհատույց, որոշակի ժամկետով կամ անժամկետ, որոշակի պայմաններով կամ առանց դրանց:

Ստանալը գոհին այլ անձանցից (հիմնականում վաճառողներից կամ փոխադրողներից) ընդունելն ու սեփական տրամադրության տակ թողնելն է, որից հետո սկսվում է անձի շահագործումը:

**Թաքցնելը** գործողություն է, որն ուղղված է թրաֆիքինգի գոհին հանրությունից առանձնացված պահելուն: Այն կարող է արտահայտվել բնակելի տարածք, կացարան կամ այլ վայր հատկացնելով (օրինակ, գոհին պահեստային տարածքում պահելը):

**3.3.2.2. Այլընտրանքային միջոցներն են՝** կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքը կամ դրա գործադրումը կամ հարկադրանքի այլ ձևերը, առևանգումը, խարդախությունը, վիճակի խոցելիությունը օգտագործելը կամ նրան վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար՝ վճարումներ կամ բարիքներ տալը կամ ստանալը:

Օգտագործվող միջոցները զանազան են՝ կանանց առևանգումը սեռական կամ սեքսուալ բնույթի այլ շահագործման նպատակով, երեխաների գայթակհումը՝ նրանց արվամոլության կամ մարմնավաճառության նպատակով օգտագործելու համար, բռնություն կիրառելը՝ մարմնավաճառների նկատմամբ իշխանությունը պահպանելու նպատակով, անձի վիճակի խոցելիությունը օգտագործելը (օրինակ՝ չքավորությունը կամ ընտանիքի անդամի առողջական ծանր վիճակը) նրան աշխատանքային շահագործման ենթարկելու նպատակով կամ բազմաթիվ այլ միջոցներ:

**Խարդախությունը** այն միջոցներից է, որ թրաֆիքինգ իրականացնողները հաճախ օգտագործում են, երբ համոզում են զոհերին, թե նրանք կստանան շահավետ պայմանագիր, այն դեպքում, երբ արդեն նախատեսել են նրանց շահագործումը ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 5-րդ մասում սահմանված շահագործման իմաստով: Խարդախությունն արտահայտվում է խաբեությանը կամ վստահությունը չարաշահելով: Այդ մեթոդի առանձնահատկությունն այն է, որ անձը «կամավոր» համաձայնում է կատարել աշխատանք կամ մատուցել ծառայություններ, և շատ դեպքերում իր՝ ոչ շրջահայաց կամ անօրինական գործողություններով (չեն բացառվում նաև օրինական գործողությունները) նպաստում է հանցագործներին, որի արդյունքում և հայտնվում է թրաֆիքինգի զոհի կարգավիճակում: Քանի որ զոհը խաբվել կամ նրա վստահությունը չարաշահվել է, ուստի նա չի տվել իր համաձայնությունը կատարելու այն աշխատանքը կամ մատուցելու այն ծառայությունները, որոնցում իրականում նախատեսվել էր նրան ներգրավել կամ նա ներգրավվել է:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն խաբեության կամ վստահությունը չարաշահելու հասկացությունները: Պրակտիկայում խաբեություն ասելով հասկանում են ճշմարտությունը քողարկելը կամ թաքցնելը, ճշմարտության մասին լռելը կամ ակնհայտ սուտ տեղեկություններ հայտնելը՝ նպատակ հետապնդելով անձին ապակողմնորոշելու եղանակով հասնել վերջինիս շահագործմանը: Վստահությունը չարաշահելու դեպքում հանցագործը օգտվում է իր և զոհի միջև ձևավորված առանձնահատուկ վստահելիության հարաբերություններից (բարեկամական կամ հարազատական կապեր, անձնական մտերմություն և այլն):

*Հայաստանում բնակվող երկու քաղաքացիներ (կին և տղամարդ), նախնական համաձայնության գալով ԱՄԷ-ում բնակվող մի կնոջ հետ (ազգությամբ՝ հայ), որոշել էին բարձր աշխատավարձով հացթուխ աշխատելու կամ երեխա խնամելու պատրվակով խաբեությամբ հավաքագրել և Դուբայ ուղարկել նյութապես ծանր վիճակում գտնվող անձանց ու այնտեղ նրանց ենթարկել սեռական շահագործման: Այդ արարքի համար հավաքագրողները պետք է վարձատրվեին:*

*Հանցավոր մտադրությունն իրականացվել է. օգտվելով վստահության վրա հիմնված հարաբերություններից, նրանցից մեկը հավաքագրել և հանցակցի հետ կազմակերպել ու Դուբայ է տեղափոխել երկու կանանց: Այնտեղ նրանք տեղավորվել են վարձակալված բնակարանում, նրանց անձր հաստատող փաստաթղթերը վերցվել են և Դուբայում նրանց դիմավորող կինը ստիպել է զբաղվել մարմնավաճառությամբ: Հակառակ դեպքում պահանջել են անմիջապես վերադարձնել յուրաքանչյուրի փոխադրման համար ծախսված 20.000 ԱՄՆ դոլարը: Նրանք հասկացել են, որ խաբված են ու այլընտրանք չունենալով, շուրջ մեկ տարի ենթարկվել են սեռական շահագործման<sup>52</sup>: Այսպիսով, տվյալ դեպքում խարդախությունը դրսևորվել է ինչպես խաբեությամբ,*

<sup>52</sup> Այս հանցագործության փաստի առթիվ հարուցված քրեական գործով մեղավոր անձինք դատապարտվել են ՀՀ կոտայքի մարզի առաջին աստիճանի դատարանի 2006թ հունվարի 13-ի դատավճռով: Քանի որ քրեական գործով կիրառված ՀՀ քր. օր-ի 132 հոդվածի բովանդակությունը դատավճիռը կայացնելուց հետո հիմնովին փոփոխվել է /ընդհուպ մինչև հանցագործության տեսակի փոփոխությունը/, ուստի որակմանը չենք անդրադառնում:

*այնպես էլ վստահությունը չարաշահելով: Այդ միջոցների կիրառմամբ հանցագործները հասել են թրաֆիքինգի զոհերի շահագործման նպատակին:*

Խաբեությունը արտահայտվել է նրանում, որ թրաֆիքինգի զոհերին հավաքագրողը հայտնել է ակնհայտ սուտ տեղեկություններ նախատեսվող աշխատանքի իրական բնույթի մասին՝ նպատակ հետապնդելով ապակողմնորոշել, իսկ Դուբայում նրանք չենթարկվելու ալլընտրանք չեն ունեցել:

Վստահության չարաշահումն արտահայտվել է նրանում, որ հավաքագրողն ունեցել է մտերմիկ հարաբերություններ զոհերի հետ և, օգտագործելով այդ իրողությունը, առանց որևէ դժվարության կարողացել է վերջիններիս ապակողմնորոշել:

**Վիճակի խոցելիությունը օգտագործել** նշանակում է որևէ իրավիճակի չարաշահում, երբ անձը, բացի ենթարկվելուց, չունի իրական կամ ընդունելի ալլընտրանք: Խոսքը խոցելիության ցանկացած տիպի մասին է՝ ֆիզիկական, հոգեկան, հոգեբանական, հուզական, ընտանեկան, սոցիալական կամ տնտեսական: Սա վերաբերում է ճգնաժամային իրավիճակների բոլոր տիպերին, որոնք կարող են ստիպել մարդուն հաշտվել շահագործման հետ: Վիճակի խոցելիությունը չարաշահողները կատարում են ունեցածություն մարդու ազատության և արժանապատվության դեմ:

Մասնավորապես, խոցելի կարող է համարվել տուժողի ծանր սոցիալ-տնտեսական վիճակը, հանցագործից նրա նյութական կամ այլ կախվածությունը, անձի՝ հասարակությունից մեկուսացված կամ սահմանափակված լինելու փաստը և այլն: Օրինակ, համաձայն գործող քրեակատարողական օրենսդրության, դատապարտված անձինք կարող են ներգրավվել և վարձատրվող, և չվարձատրվող աշխատանքներում: Ընդ որում, չվարձատրվող աշխատանքները պետք է իրականացվեն միայն պատիժ իրականացնող հիմնարկի և նրա մերձակա տարածքի բարելավման նպատակով: Ժամկետային զինվորական ծառայողները իրենց ծառայության ընթացքում պետք է կատարեն զինվորական ծառայության հետ կապված և իրենց իրավասության մեջ գտնվող աշխատանքներ կամ ծառայություններ: Իրականում դատապարտյալներն ու զինծառայողները կարող են անօրինական ներգրավվել այլ աշխատանքներում կամ ծառայություններում, որ նրանց պարտականությունը չեն (օրինակ, կարող է իրականացվել հարկադիր աշխատանք, որը կապված է հրամանատարի տան վերանորոգման կամ կառուցման, նրան պատկանող դաշտերի և այգիների մշակման, բերքահավաքի հետ): Այս պարագայում մարդկանց նշված խմբերը դառնում են շահագործման համար առավել խոցելի վարչակազմի աշխատակիցների, պետերի կամ վերահաս հրամանատարների ու նրանց ընտանիքի անդամների համար:

Սույն ձեռնարկի 3.2.3. կետում նկարագրված՝ Թաթարստանում աշխատանքային թրաֆիքինգին վերաբերող օրինակում հանցագործության կատարման եղանակները (միջոցները) եղել են զանազան: Նախ օգտագործվել է վիճակի խոցելիությունը (հոգեբանական, ընտանեկան, սոցիալական, տնտեսական), քանի որ հավաքագրվողները աշխատանքով ապահովված չեն եղել,

որի հետևանքով հայտնվել են չքավորության վիճակում և չեն կարողացել կերակրել իրենց ընտանիքները, թեև ցանկացել են աշխատել: Այնուհետև կիրառվել է խարդախությունը, որն արտահայտվել է և՛ վստահության չարաշահմամբ (գոհերը հավաքագրողի զարմիկը և վերջինիս որդին էին, ինչպես նաև նրանց մտերիմը), և՛ խաբեությամբ (աշխատանքի բնույթը ներկայացվել է, սակայն իրական տաժանակիր և ստրկությանը նմանվող վիճակի մասին հավաքագրողը լռել է): Նետագայում կիրառվել էին և այլ հանցավոր միջոցներ:

Ընդ որում, հարկ է նշել, որ արաքը որպես թրաֆիքինգ որակելու համար ոչ մի նշանակություն չունի վիճակի խոցելիությունը ստեղծվել է հանցագործի կողմից, թե՛ ոչ:

**Կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքը կամ դրա գործադրումը կամ հարկադրանքի այլ ձևերը** կատարվում են ՀՀ քր.օր-ում նախատեսված հանցավոր այլ արարքների համար նույնատիպ բռնություն գործադրելու սպառնալիքի կամ դրա գործադրման կամ հարկադրանքի այլ ձևերին բնորոշ հատկանիշներով:

**Առևանգումը** կատարվում է ՀՀ քր.օր-ում նախատեսված առևանգմանը բնորոշ հատկանիշներով: Թրաֆիքինգի դեպքում այն զուգորդվում է ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 1-ին մասում թվարկված գործողություններով կամ դրանցից մեկով՝ շահագործման նպատակով:

### **3.4. Հանցագործության սուբյեկտիվ կողմը**

Թրաֆիքինգի բոլոր գործողությունների սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ և հատուկ նպատակով: Հանցանք կատարող անձը, մասնավորապես, գիտակցում է իր կողմից կատարվող այլընտրանքային գործողության (գործողությունների)՝ այսինքն մարդուն հավաքագրելու, փոխադրելու, հանձնելու, թաքցնելու կամ ստանալու (որոնք ուղեկցվում են կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով կամ դրա գործադրմամբ կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խարդախության, վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ գոհին վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար՝ վճարումներ կամ բարիքներ տալու կամ ստանալու միջոցով) հանրության համար վտանգավոր բնույթը և ցանկանում է կատարել այդ գործողությունը (գործողությունները):

Պետք է, սակայն, հաշվի առնել, որ 132 հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմի սուբյեկտիվ կողմը կառուցված է մեղքի երկու ձևերի կանոններով. դիտավորություն՝ գործողությունների նկատմամբ և անզուշություն՝ հետևանքների նկատմամբ: Այդ հանցակազմը ձևակերպված է հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝

2) անզուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ:»:

Պետք է հիշել նաև, որ թրաֆիքինգի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն է տուժողի (գոհի) շահագործման նպատակը: Պատասխանատվությունը վրա հասնելու համար



նշանակություն չունի՝ իրականացվել է շահագործման նպատակը, թե՛ ոչ: Ծարժառիթները որակման վրա չեն ազդում:

### **3.4.1. Ծահագործման հասկացությունը**

Թրաֆիքինգը չի սահմանափակվում գոհերի սեռական շահագործմամբ, թեև սա առավել հաճախ քննարկվող թեման է, որն էլ հիմնականում լուսաբանվում է զանգվածային լրատվության միջոցներում:

Երբ գոհերը հասնում են նպատակակետ երկիր և հանձնվում են շահագործողներին, նրանք հանցագործ-շահագործողների համար վերածվում են եկամուտ բերող աշխատող ակտիվների: Հանցագործների համար խիստ կարևոր է կարողանալ շարունակական ազդեցություն գործադրել իրենց գոհերի վրա մինչև այն պահը, երբ վերջիններս կարողանան եկամուտ բերել՝ կանխելով փախուստի դիմելու, ապստամբելու կամ օգնություն հայցելու նրանց բոլոր հնարավոր փորձերը: Փախուստը կանխելու համար օգտագործվող մեթոդները ներառում են ինչպես պարտքով պայմանավորված կախվածությունը, այնպես էլ ավելի բիրտ մեթոդներ, ինչպիսիք են, օրինակ՝

- բռնությունը կամ բռնության սպառնալիքը գոհի ընտանիքի նկատմամբ,
- ազատությունից ապօրինի զրկելը,
- գոհի անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթղթերը վերցնելը,
- թմրամոլությամբ զբաղվելուն հարկադրելը,
- կապեր հաստատելու, օգնություն գտնելու, անձնական իրավունքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու արգելքը (օրինակ՝ կացության կամ աշխատանքի թույլտվություն հայցելու իրավունքը և այլն),

• գտնվելու վայրի անընդհատ փոփոխությունը՝ գոհերի միջև անձնական կապերի ձևավորումը կանխելու նպատակով,

- սննդից կամ տարրական հարմարավետությունից զրկելը,
- քնից զրկելը:

Սովորաբար գոհերից պահանջում են հատուցել դեպի նպատակակետ նրանց տեղափոխելու և փոխադրելու համար կրած ենթադրյալ ծախսերը: Պարտքին նաև գումարվում են սննդի, կացարանի և հագուստի համար կրած ծախսերով պայմանավորված ուժնազրկված տոկոսագումարներ:

Թրաֆիքինգի ենթարկված անձինք հաճախ չեն գիտակցում, որ հանցագործների նման վարքագիծն ինքնին ապօրինի է, և որ պարտքով պայմանավորված կախվածության պայմանագիրը, որով որպես պարտքի երաշխիք հանդես է գալիս մարդը, նույնպես ապօրինի է և աշխատողի իրավունքների հարցում խաբեության արդյունք է<sup>53</sup>:

ՀՀ քր.օր-ում շահագործման հասկացությունը տրված է 132 հոդվածի 5-րդ մասում (տես սույն ձեռնարկի 3.2.1.կետը):

<sup>53</sup> Anti-Trafficking Training for Frontline Law Enforcement officers, Vienna, 2006, p.22

Մեկ անգամ ևս նշենք, որ թրաֆիքինգի կատարման համար շահագործման առկայությունը պարտադիր պայման չէ: Դրա համար բավարար է, եթե անձը դարձել է ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 1-ին մասում նշված այն գործողություններից մեկի օբյեկտը, որն իրականացվել է միջոցներից որևէ մեկի կիրառմամբ և շահագործման **նպատակով**: Այսինքն՝ թրաֆիքինգը նախորդում է զոհի շահագործմանը:

Շահագործման հասկացությունում նշված շահագործման ձևերը ներառում են՝ սեռական և այլ սեքսուալ շահագործումը, աշխատանքային շահագործումը ու մարմնի մասերը և հյուսվածքները կորզելը: Դա պայմանավորված է նրանով, որ թրաֆիքինգ իրականացնողները հակված են շահագործման նպատակով մարդկանց մատակարարել բոլոր այն ուղղություններով, որտեղ կա պահանջարկ:

### ***3.4.2. Չոհների՝ շահագործման ենթարկվելու համաձայնությունը***

Եև 2005թ. Կոնվենցիայի 4-րդ հոդվածի «բ» կետով սահմանված է, որ Կոնվենցիայի նպատակների համար 4-րդ հոդվածի «ա» կետում նշված շահագործման այս կամ այն ձևի կիրառման վերաբերյալ թրաֆիքինգից տուժած անձի համաձայնությունը որևէ նշանակություն չունի այն դեպքում, երբ կիրառվել է այդ կետում նախատեսված եղանակներից որևէ մեկը:

Եև 2005թ. Կոնվենցիայի 4-րդ հոդվածի «բ» կետը համապատասխանում է 2000թ. Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին Արձանագրության 3-րդ հոդվածի «բ» կետում սահմանված դրույթին:

Գործնականում, թրաֆիքինգի բազում դեպքերում, զոհերի և թրաֆիքինգ իրականացնողների միջև լինում է սկզբնական համաձայնություն կամ համագործակցություն, որին հետագայում հետևում է հարկադրանքը, չարաշահումը կամ շահագործումը: Այս պարագայում պետք է հաշվի առնել, որ վերը նշված Կոնվենցիայի և Արձանագրության համապատասխան հոդվածների «բ» կետերում պարզաբանվում է, որ համաձայնությունը դառնում է առաջին ջանկացած այն դեպքում, երբ օգտագործվել է թրաֆիքինգի «միջոցներից» որևէ մեկը: Այսինքն, զոհի համաձայնությունը կարող է, թերևս, վկայակոչվել պաշտպանության կողմից, սակայն երբ ապացուցվում է այնպիսի միջոցների կիրառումը, ինչպիսիք են սպառնալիքները, հարկադրանքը, ուժի գործադրումը կամ իշխանության չարաշահումը, շահագործման ենթարկվելու մասին համաձայնությունը դառնում է առաջին, ուստի դա չի կարող ընդունվել որպես պաշտպանության կողմի վկայակոչվող իրավաչափ կամ օրինական փաստարկ:

ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին 2000թ. թիվ 2 Արձանագրության և Եև 2005թ. Կոնվենցիայի դրույթների համատեքստում միայն տեսականորեն է հնարավոր շահագործման մասին համաձայնությունը գնահատել որպես իրավաչափ: Սակայն թրաֆիքինգի սահմանումը և դրանով զբաղվողների գործելաճան այս սցենարը դարձնում են գրեթե անհավանական: Թրաֆիքինգ տեղի չի ունենում միայն այն դեպքում, երբ անձը լիովին տեղյակ է և համաձայն իր նկատմամբ այնպիսի վարվելակերպին, որն այլ

պարագաներում Արձանագրության և ԵՆ Կոնվենցիայի դրույթներով կարող է գնահատվել որպես շահագործում և թրաֆիքինգ: Սակայն, թրաֆիքինգը համարվում է կատարված, եթե գործընթացի ցանկացած փուլում թրաֆիքինգով զբաղվողների կողմից ոչ պատշաճ միջոցների կիրառման արդյունքում զոհը հրաժարվում է նախկին համաձայնություններից: Այսպիսով, զոհի համաձայնությունը թրաֆիքինգի գործընթացի որևէ մեկ փուլում չի կարելի դիտարկել որպես համաձայնություն գործընթացի բոլոր փուլերի համար, իսկ առանց յուրաքանչյուր փուլի համար համաձայնության համարվում է, որ կատարվել է թրաֆիքինգ՝ այսինքն հանցագործություն:

*Վերլուծենք հետևյալ օրինակը: Ս-ն 16 տարեկանից զբաղվում էր մարմնավաճառությամբ: Նա փորձել էր նաև այլ աշխատանք գտնել, սակայն միշտ վերադարձել էր մարմնավաճառության: Երբ նա 18 տարեկան էր, տաքսու մի վարորդ նրան հրավիրել է Եվրոպա՝ հավատացնելով, որ նա մի ամբողջ կարողություն կվաստակի, եթե այնտեղ աշխատի, և որ նա իր արտաքինով գուցե կկարողանա որպես մանեկենուհի աշխատել, իսկ ինքը կհոգա բոլոր կազմակերպչական հարցերը: Որոշ ժամանակ անց Ս-ն ընդունեց առաջարկը: Եվրոպայում մեկ այլ վարորդ, վերցնելով նրա անձնագիրը, խնդրել է իրեն վստահել, քանի որ քաղաքը շատ վտանգավոր է: Աղջիկը ստիպված ամեն օր առավոտյան ժամը 6-ից մինչև երեկոյան ժամը 6-ը աշխատել է որպես մարմնավաճառ: Նրան ասել էին, որ չեն վերադարձնելու անձնագիրը մինչև չհատուցի հասարակաց տան տնօրենի կրած ճանապարհաժախսը: Ս-ն ակնկալում էր, որ զբաղվելու է մարմնավաճառությամբ, սակայն նրբեք չէր պատկերացնում, որ սպառնալիքների ներքո օր ու գիշեր գերի է լինելու:*

Այս օրինակում փաստն այն է, որ զոհը կանխավ գիտեր, որ պատրաստվում է մարմնավաճառությամբ զբաղվել և տվել էր իր համաձայնությունը, սակայն դա հանցագործին չի ազատում քրեական պատասխանատվությունից, քանի որ օգտագործվել են թրաֆիքինգին բնորոշ միջոցներ: Արարքի լրջությունը չի նվազում այն բանից, որ զոհը տեղյակ է եղել աշխատանքի բնույթի մասին, քանի որ նա տեղյակ չի եղել աշխատանքային պայմանների մասին և չի տվել իր համաձայնությունը այդ պայմաններում աշխատելու համար:

***Տասնութ տարին չլրացած անձի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի՝ շահագործման ենթարկվելու համաձայնությունը.***

Նարց է ծագում. արդյո՞ք թրաֆիքինգի ցանկացած զոհ ունի համաձայնություն տալու հնարավորություն՝ հավաքագրման փուլում կամ հետագա փուլերում:

ԵՆ 2005թ. Կոնվենցիայի 4-րդ հոդվածի «գ» և «դ» կետերով և Պալերմոյի թիվ 2 Արձանագրության 3-րդ հոդվածի «գ» և «դ» կետերով սահմանված է, որ շահագործման նպատակով երեխային հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը համարվում է «թրաֆիքինգ» նույնիսկ այն դեպքում, երբ դա կապված չէ նույն հոդվածի «ա» կետում նախատեսված եղանակներից որևէ մեկի կիրառման հետ:

Բերենք մեկ օրինակ:

*Մի երկրում գտնվող ստրուկների ճամբարից ոստիկանությունը փրկել էր արական սեռի 116 երեխա ու պատանի: Նրանք հարևան երկրի քաղաքացիներ էին: Նրանց ստիպում էին քնել բաց երկնքի տակ, հողի վրա և նրանց աշխատանքն օգտագործվում էր ճամբարի մոտակայքի քարհանքերում: Երեխաների ծնողներն իրենք էին հանձնել երեխաներին աշխատանքային թրաֆիքինգով զբաղվողներին՝ իրենց երեխաների համար ավելի լավ ապագայի ակնկալիքներով:*

Տվյալ օրինակում կարևոր է նշել, որ երեխայի (մինչև 18 տարին լրանալը) շահագործվելու համար տրված համաձայնությունն առաջինը է նույնիսկ այն դեպքում, եթե թրաֆիքինգին բնորոշ միջոցներից ոչ մեկը չի օգտագործվել: ՀՀ քրեական օրենսդրության համաձայն, նույն չափանիշը վերաբերում է հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի նկատմամբ կատարված արարքը որակելու համար: Այլ կերպ ասած՝ նույնիսկ եթե երեխան կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձը չի ենթարկվել սպառնալիքների, նրա նկատմամբ որևէ ուժ չի գործադրվել, նրան չեն հարկադրել, առևանգել կամ խաբել, միևնույն է՝ թրաֆիքինգի իմաստով նշված երկու կատեգորիայի անձանց շահագործման ենթարկվելու համաձայնությունն անօրինական է: Ավելին, ծնողը կամ օրինական ներկայացուցիչը նույնպես չի կարող թրաֆիքինգի իմաստով շահագործման նպատակով թրաֆիքինգի համաձայնություն տալ:

Ահա թե ինչու քարհանքերից փրկված տղաները թրաֆիքինգի գոհեր կհամարվեին նույնիսկ այն դեպքում, եթե նրանք իրենց համաձայնությունն էին տվել քարհանքում աշխատելու համար և չէին խաբվել աշխատանքային պայմանների առումով: Երեխաները հավաքագրվել և փոխադրվել էին (թրաֆիքինգին բնորոշ գործողություն) գրանիտի քարհանքեր, որտեղ նրանց աշխատացրել են շահագործման նպատակով (ինչն էլ թրաֆիքինգի նպատակն է): Եթե անգամ բնորոշ միջոցներից ոչ մեկը չկիրառվեր, միևնույն է, երեխաները թրաֆիքինգի գոհ են միայն իրենց տարիքի պատճառով:

### ***3.4.3. Շահագործման ձևերը***

ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 5-րդ մասում տրված «Շահագործում» հասկացությունում օգտագործվել են մի շարք ինքնուրույն տերմիններ, որոնք պետք է կիրառվեն արարքը որպես թրաֆիքինգ որակելու դեպքում: Այդ տերմիններն են՝ պոռնկությունը, սևաական շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը, ստրկությանը նմանվող վիճակը, մարմնի մասերը կամ հյուսվածքները կորզելը:

Թվարկված տերմինների հասկացությունները, սակայն, ՀՀ քր. օր-ում կամ այլ օրենքներում չեն սահմանվում կամ բացատրվում: Դրանց մի մասը չեն սահմանվել կամ բացատրվել նաև թրաֆիքինգի հակազդմանը վերաբերող միջազգային փաստաթղթերում: Պատճառն այն է, որ պետությունները իրենց իրավական համակարգերին համապատասխան պետք է որոշեն այդ հասկացությունների բովանդակությունը: Մինչդեռ ակնհայտ է, որ դրանց բովանդակությունը

որոշելն անհրաժեշտ է: Այդ նպատակով կարող են օգտագործվել մի շարք այլ միջազգային գործիքներ, որոնք կիրառելի են տվյալ ոլորտում:

**Պռոնկոյությունը (մարմնավաճառությունը)** սեքսուալ ծառայությունների մատուցումն է վճար կամ այլ նյութական բարիք ստանալու նպատակով, այսինքն՝ առևտրային սեքսը, որի շրջանակում անձը, անհատականությունը, մարմինը վերածվում են առուվաճառքի, առևտրի առարկայի (կանանց մարմնավաճառություն, անչափահաս կանանց և աղջիկների մարմնավաճառություն, տղա երեխաների մարմնավաճառություն, հասուն տղամարդկանց մարմնավաճառություն, ոչ ավանդական սեքսուալ կողմնորոշմամբ անձանց մարմնավաճառություն և մարմնավաճառության այլ ձևեր):

Մարդկանց առևտրի և այլ անձանց մարմնավաճառության շահագործման դեմ ՄԱԿ-ի 1949թ. դեկտեմբերի 2-ի կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ «մարմնավաճառություն է մեկ անձի կողմից այլ անձի սեռական կրքերը վճարման դիմաց բավարարելը»<sup>54</sup>:

Մարմնավաճառության հասկացությունը չի կարելի ենթարկել առավել տարածական մեկնաբանման: Այսպես, մարմնավաճառություն չեն մշտական կամ ժամանակավոր համատեղ բնակվելը, ամուսնությունը նյութական ապահովվածության դրդապատճառներով և բազմաթիվ այլ դեպքերը: Մարմնավաճառությանը բնորոշ է սեքսուալ բնույթի տարբեր ծառայությունների հանրային առաջարկը (օֆերտան): Նույնը վերաբերում է այն դեպքերին, երբ անձը զբաղվում է մարմնավաճառությամբ, օրինակ, որոշակի անձանց (նեղ) շրջանում:

Իրավակիրառ պրակտիկայում ծագող վիճելի հարցերից մեկն այն է, թե անհրաժեշտ են, արդյոք, մարմնավաճառության համար սեքսուալ բնույթի ուղղակի շփումները, թե բավարար է սեքսուալ ծառայությունների միջնորդավորված մատուցումը (սեքս հեռախոսով, մերկապար, մասնակցությունը ֆիլմերի ստեղծմանը որպես դերակատար, մերկ մարմնի ցուցադրումը կամ ուղղակի շփումը բացառող այլ սեքսուալ ծառայություններ): Նման սեքսուալ ծառայությունների միջնորդավորված մատուցումը չի կարող գնահատվել որպես մարմնավաճառություն, քանի որ բացակայում է մարմնավաճառությանը բնորոշ անհրաժեշտ հատկանիշը՝ մարմնի առևտուրը (վաճառքը): Մարմնավաճառության համար անհրաժեշտ է, որ կատարվեն ուղղակի շփումներ մարմնավաճառությամբ զբաղվող անձի մարմնի և սեքսուալ ծառայությունները գնող անձի մարմնի միջև: Երևույթի՝ որպես մարմնավաճառություն գնահատելու հարցում էական չէ մարմնավաճառի և սեքսուալ ծառայությունները գնողի տարասեռության կամ համասեռության հատկանիշը կամ նրանց միջև իրականացվող անմիջական ակտի եղանակը (սեռական հարաբերություն տղամարդու և կնոջ միջև, օրալ, մանուալ և այլն) կամ դերակատարումը (ակտիվ կամ պասիվ) կամ մասնակիցների քանակը (առնվազն երկու անձ, որոնցից մեկը մարմնավաճառն է): Այսպիսով, մարմնավաճառությունն իրականացվում է վճարի դիմաց անձի (անձանց) կողմից այլ անձի (անձանց) հետ անմիջական և ուղղակի շփման միջոցով:

***Այլ անձի պռոնկոյության (մարմնավաճառության) ներգրավելը***

<sup>54</sup> Այն ուժի մեջ է մտել 1951թ. հուլիսի 25-ին: Հայաստանի Հանրապետությունը այդ կոնվենցիային դեռևս չի միացել:

Ներգրավել նշանակում է հակել որևէ բանի, դարձնել որևէ բանի մասնակից: Այլ անձի մարմնավաճառության ներգրավել նշանակում է մարմնավաճառության նպատակով այլ անձի կավատությունը կամ հակելը կամ գայթակղելը:

**Թրաֆիքինգի հետ կապված այլ անձի պոռնկության (մարմնավաճառության) ներգրավելը** շահագործման նպատակով անձի (անձանց) կավատությունը կամ հակելը կամ գայթակղելն է՝ այլ անձի (անձանց) սեքսուալ ծառայություններ մատուցելու, որն իրականացվել է թրաֆիքինգին բնորոշ գործողության (գործողությունների) կատարմամբ՝ բռնության, դրա սպառնալիքի, առևանգման, խարդախության, վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ զոհին վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար վճարումներ կամ բարիքներ տալու կամ ստանալու միջոցով: **Մարմնավաճառության շահագործումը** նշանակում է, որ մարմնավաճառին սեռական հարաբերություններ ունենալուն հարկադրելով կամ պարտադրելով՝ երրորդ անձինք որոշակի շահ են ստանում: Ընդ որում, շահը կարող է լինել նաև ոչ նյութական: Օրինակ, երբ մարմնավաճառին մատուցում են որպես նվեր կամ նա տրամադրվում է անհատույց ժամանակավոր օգտագործման: Ծահագործումը առկա է նաև այն դեպքում, երբ կնոջ մատուցած սեռական հարաբերության համար գումարը չեն վճարում կամ վճարում են գումարի մի մասը:

Հաճախ սեռական շահագործումը զուգորդվում է բռնաբարությանը, սեքսուալ բնույթի բռնի գործողություններով, սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելով, 16 տարին չլրացած անձի հետ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելով, անառակաբարո գործողություններով, առողջությանը վնաս պատճառելով, գույքը դիտավորությամբ ոչնչացնելով կամ վնասելով, պոռնկությամբ զբաղվելուն նպաստելով, պոռնկագրական նյութեր կամ առարկաներ ապօրինի տարածելով և այլ հանցագործություններով: Այս հանցագործությունները միշտ պահանջում են արարքի լրացուցիչ որակում:

### **Սեռական շահագործման այլ ձևեր**

Նշենք, որ ՀՀ քր.օր-ի 132 հոդվածում ձևակերպված «Ծահագործում» հասկացությունը ներառում է նաև սեռական շահագործման այլ ձևերը: Դա նշանակում է, որ շահ ստանալու նպատակով տուժողին ստիպում են սեռական բնույթ կրող, բայց մարմնավաճառություն չհանդիսացող այլ գործողություններ կատարել: Այդպիսի շահագործման թվին կարող են դասվել, օրինակ, մարդկանց (ներառյալ՝ երեխաների) օգտագործումը պոռնկագրական ֆիլմերում կամ նյութերում և այլն:

Պետք է նշել, որ ՀՀ քր.օր-ի «Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները» վերնագրով 18-րդ գլխում ներառված 139, 140, 141 և 142 հոդվածներում օգտագործվել են «սեռական հարաբերություն», «սեքսուալ բնույթի գործողություններ», «անառակաբարո գործողություններ» տերմինները: Այդ տերմինների տարբերությունը իմաստային է, այլ ոչ թե ձևական, իսկ դատական պրակտիկայում ձևավորվել է դրանց կիրառման փորձը:

**Հարկադիր աշխատանք կամ ծառայություններ.** այս հասկացությունները պարզաբանելու համար անհրաժեշտ է հղում կատարել միջազգային այն գործիքներին, որոնք տալիս են այդ հասկացությունների սահմանումները:

**Հարկադիր կամ պարտադիր աշխատանք** - որևէ պատժի սպառնալիքի տակ անձից պահանջվող որևէ աշխատանք կամ ծառայություն, որի համար այդ անձը կամավոր չի առաջարկել իր ծառայությունները<sup>55</sup>, բացառությամբ հարկադիր կամ պարտադիր աշխատանքներին վերաբերող այն դրույթների, որոնք ամրագրված են՝

- ԱՄԿ-ի թիվ 29 Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասում<sup>56</sup>,
- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ մասում,<sup>57</sup>
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային Դաշնագրի 8-րդ հոդվածի 3-րդ մասում<sup>58</sup>:

ԱՄԿ-ի թիվ 29 Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունը մանրամասն շարադրված է սույն Ձեռնարկի «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին կոնվենցիա (թիվ 29)» վերտառությամբ 1.3.6. հատվածում:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի առաջին պարբերության, յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն, իսկ հինգերորդ պարբերությունում նշվում է, որ հարկադիր աշխատանքն արգելվում է: ՀՀ Աշխատանքային օրենսգրքում ամրագրված աշխատանքային օրենսդրության սկզբունքներից են՝ աշխատանքի ազատությունը<sup>59</sup> և ցանկացած ձևի հարկադիր աշխատանքի և աշխատողների նկատմամբ բռնությունների արգելումը: Դա նշանակում է, որ աշխատանքը պետք է լինի միայն կամովի, և աշխատողները ազատ են աշխատանքի ընտրության մեջ: Բացառություն են կազմում դատարանի կողմից նշանակված հանրային աշխատանքները (ինչպես նաև այլ դեպքեր), որոնք հարկադիր և պարտադիր են, բայց այստեղ կոնկրետ աշխատանքի տեսակը ընտրելիս հաշվի են առնվում անձի հնարավորությունները, սեռը, տարիքը, մասնագիտական ունակությունները և այլ պայմաններ:

Հարկադիր աշխատանքներն ու ծառայությունները կարող են իրականացվել թրաֆիքինգի հետ կապված և չկապված, այսինքն՝ հարկադրված աշխատելը կամ ծառայություն մատուցելը դեռ թրաֆիքինգ չէ, եթե բացակայում են թրաֆիքինգի այլ հատկանիշներ: Թրաֆիքինգից տուժողների մեծ մասն ի վերջո հայտնվում է հարկադիր աշխատանքի իրավիճակում, սակայն հարկադիր աշխատանքից տուժած ոչ բոլոր անձինք են այդ իրավիճակում հայտնվում թրաֆիքինգի հետևանքով: Տնտեսության որոշ ոլորտներում թրաֆիքինգի ռիսկն ավելի մեծ է, օրինակ՝ այն

<sup>55</sup> Տե՛ս «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» Աշխատանքի Միջազգային Կազմակերպության 1930թ. հունիսի 29-ի թիվ 29 կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասը:

<sup>56</sup> Նույնը, 2-րդ հոդվածի 2-րդ մասը:

<sup>57</sup> Տե՛ս ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու: ՀՀ ԱԳՆ պ/տ 5/13/, 20.12.2004, էջ 25-39: Կոնվենցիան ՀՀ համար ուժի մեջ է մտել 2002թ. ապրիլի 1-ից:

<sup>58</sup> Տե՛ս ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու: ՀՀ ԱԳՆ պ/տ 4/12/, 20.12.2004, էջ 64-78: Դաշնագիրը ՀՀ համար ուժի մեջ է մտել 1993թ. սեպտեմբերի 23-ից:

<sup>59</sup> Այստեղ առկա է որոշակի տերմինաբանական անհամապատասխանություն ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի և ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի միջև:

ուղորտներում, որոնք հենվում են էժան կամ սեզոնային աշխատանքի վրա կամ ներառում են դժվար կամ վտանգավոր աշխատանքներ:

Ինչ վերաբերում է «հարկադիր ծառայություններ» տերմինին, ապա «Վան դեռ Մյուսելին ընդդեմ Բելգիայի» գործով (1983թ. նոյեմբերի 23-ի Որոշում, Սերիա Ա, թիվ 70, կետ 33) Մարդու իրավունքների Եվրոպական Դատարանը նշել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 4-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված «հարկադիր աշխատանք» տերմինը պետք է ներառի նաև «հարկադիր ծառայությունները»: Թրաֆիքինգի հետ կապված հարկադիր աշխատանքներն ու ծառայությունները իրականացվում են շահագործման նպատակով՝ թրաֆիքինգին բնորոշ միջոցի (միջոցների) կատարմամբ՝ բռնության, դրա սպառնալիքի, առևանգման, խարդախության, վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ գոհին վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար վճարումներ կամ բարիքներ տալու կամ ստանալու միջոցով:

**Ստրկությունը կամ ստրկությանը նմանվող վիճակը.** Այս տերմինների հասկացությունները ՀՀ օրենսդրությունում բացակայում են: Միջազգային գործիքներում, սակայն, տրվել են ստրկության և այդ երևույթի հետ առնչվող հասկացությունները, որոնք կարող են օգտագործվել մարդկանց թրաֆիքինգի արդյունքում ստրկությունը կամ ստրկությանը նմանվող վիճակը բացահայտելու համար:

Ստրկության վերաբերյալ 1926թ. սեպտեմբերի 25-ի ՄԱԿ-ի կոնվենցիայի (1953թ. դեկտեմբերի 7-ի Արձանագրությամբ կատարված փոփոխություններով) 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն, «ստրկությունը» մարդու վիճակն է կամ դրությունը, երբ նրա նկատմամբ իրականացվում են սեփականության իրավունքին բնորոշ բոլոր կամ որոշակի լիազորությունները<sup>60</sup>:

«Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը հավասարազոր ավանդույթների վերացման մասին» ՄԱԿ-ի 1956թ. լրացուցիչ կոնվենցիայի 7-րդ հոդվածի «ա» կետի համաձայն, «ստրուկն» այն անձն է, ով գտնվում է ստրկության վիճակում: Իսկ ստրկությանը նմանվող վիճակի իրավաբանական բնութագիրը տրված է նույն լրացուցիչ կոնվենցիայի 7-րդ հոդվածի «բ» կետում: Այդ վիճակները պայմանականորեն բաժանվել են 4 խմբի՝

1. *Պարտապանի ստրկացում*՝ այնպիսի վիճակ կամ դրություն, երբ պարտապանը, որպես պարտքի ապահովման միջոց գրավ է դնում կամ իր աշխատանքը, կամ իրենից կախյալ վիճակում գտնվող անձի աշխատանքը, եթե կատարվող աշխատանքի արժեքը չի հաշվակցվում տվյալ պարտքի մարմանը, կամ եթե այդ աշխատանքի տևողությունը չի սահմանափակվում և դրա բնույթը չի կոնկրետացվում:

2. *Ճորտական վիճակ*՝ հողի այնպիսի օգտագործումը, որի դեպքում օրենքով, ավանդույթի ուժով կամ փոխադարձ համաձայնության հիման վրա օգտագործողը պարտավոր է ապրել և աշխատել ուրիշին պատկանող հողատարածքի վրա և վարձատրությամբ կամ առանց դրա

<sup>60</sup> Ընդունվել է 1956թ. սեպտեմբերի 7-ին և ուժի մեջ է մտել 1957թ. ապրիլի 30-ին:



որոշակի աշխատանք կատարել այդ սեփականատիրոջ օգտին ու չի կարող փոփոխել իր նման վիճակը:

*3. Կնոջ ազատ ամուսնանալու իրավունքը ոտնահարող, կնոջը այլ անձի վարձակալությամբ կամ այլ պայմանով կամ ժառանգությամբ փոխանցելու ցանկացած ինստիտուտ կամ ավանդույթ, երբ՝*

ա) կնոջ ծնողները, խնամակալը, ընտանիքը կամ յուրաքանչյուր այլ անձ կամ անձանց խումբ դրամով կամ բնեղենով վարձատրելու դիմաց խոստանում են ամուսնացնել կամ ամուսնացնում են այդ կնոջը, առանց նրան մերժելու իրավունք վերապահելու,

բ) կնոջ ամուսինը, վերջինիս ընտանիքը կամ տոհմը իրավունք ունեն վարձատրությամբ կամ այլ պայմանով փոխանցելու տվյալ կնոջն այլ անձի,

գ) ամուսնու մահից հետո կինը ժառանգաբար փոխանցվում է մեկ այլ անձի:

*4. Երեխային շահագործման նպատակով այլ անձի փոխանցելու ցանկացած ինստիտուտ կամ ավանդույթ, այսինքն, երբ երեխան (մինչև 18 տարեկան անձը) ծնողների կամ նրանցից մեկի կամ խնամակալի կողմից վարձատրությամբ կամ առանց դրա փոխանցվում է մեկ այլ անձի՝ այդ երեխայի կամ նրա աշխատանքի շահագործման նպատակով:*

Հարկադիր աշխատանքի հատուկ դրսևորում է տնային ստրկությունը:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ստրկությանը նմանվող վիճակի տարբերությունը ստրկությունից կայանում է նրանում, որ ստրկությանը նմանվող վիճակը թեև ենթադրում է «ազատությունը մերժելու առանձնապես ծանր ձև», երբ մարդը հնարավորություն չունի փոփոխելու իր վիճակը, այն այնուամենայնիվ չունի սեփականության իրավունքին բնորոշ հատկանիշներ, որոնց առկայությունը բնութագրում է ստրկությունը: Այդ եզրահանգմանն են եկել Մարդու իրավունքների Եվրոպական Հանձնաժողովի Կոնվենցիոն մարմինները վան Դրուգենբրոկի գործում (1982թ. հունիսի 24-ի Որոշում, Սերիա Ա, թիվ 50, էջ 32, կետ 58) :

#### ***Մարդու մարմնի մասերը կամ հյուսվածքները կորզելը***

Մարդու մարմնի մասերը կամ հյուսվածքները փոխապատվաստելու զարգացման և տարածման պայմաններում շահագործման այդ հանցավոր ձևը նույնպես տարածում է ստանում:

«Մարդու օրգանների և (կամ) հյուսվածքների փոխապատվաստման մասին» ՀՀ օրենքով սահմանված են այն դեպքերը և պայմանները, երբ կարող է կատարվել փոխապատվաստումը, սահմանված է նաև փոխապատվաստում իրականացնելու կարգը: Որոշված են փոխապատվաստման թուլատրելի սահմանները և սահմանափակումների շրջանակը: Փոխապատվաստումը կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ մյուս բժշկական միջոցառումները չեն կարող երաշխավորել հիվանդի կյանքի փրկությունը և (կամ) առողջության վերականգնումը: Կենդանի դոնորից փոխապատվաստման նպատակով կարող են վերցվել միայն զույգ օրգաններից մեկը, կենտ օրգանի մի մասը կամ հյուսվածքը, որոնց բացակայությունը չի կարող առաջացնել դոնորի կյանքի համար վտանգ ներկայացնող փոփոխություններ: Սահմանափակումները վերաբերում են և այն անձանց

շրջանակին, ովքեր կարող են լինել դոնոր: Փոխապատվաստման նպատակով օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ վերցնելը անձից (կենդանի դոնորից) չի թույլատրվում, եթե՝

- ա) չի լրացել նրա 18 տարին (բացառությամբ ոսկրածուծի փոխապատվաստման դեպքի),
- բ) նա սահմանված կարգով ճանաչված է հաշմանդամ,
- գ) հղի է,
- դ) քաղաքացին պատիժ է կրում ազատագրկման վայրում,
- ե) պատանդ է,
- զ) լրացել է անձի 65 տարին:

Օրգաններ վերցնելը չի թույլատրվում, եթե պարզվել է, որ դրանք պատկանում են անձի, որը տառապում է ռեցիպիենտի կյանքին եւ առողջությանը վտանգ ներկայացնող հիվանդությամբ:

Նարկ է նշել, որ օրգանների և հյուսվածքների կորզմամբ շահագործումը չի սահմանափակվում միայն փոխապատվաստմամբ, դրանք կարող են օգտագործվել նաև բժշկական փորձերի, հանիքալիզմի, կրոնական ծիսակատարությունների համար և այլ նպատակներով:

Թրաֆիքինգի նպատակով մարմնի մասերը կամ հյուսվածքները կորզելը շահագործման նդանակներից է: Բավարար է պարզել նպատակը, անգամ եթե հանցագործներին չի հաջողվել իրականացնել իրենց հանցավոր մտադրությունը՝ կորզել թրաֆիքինգի գոհի մարմնի մասերը կամ հյուսվածքները: Մարմնի մասերը կամ հյուսվածքները կորզելու (վերցնելու) փաստը ենթակա է լրացուցիչ որակման ՀՀ քր.օր-ի համապատասխան հոդվածներով՝ ելնելով առողջությանը պատճառված վնասի աստիճանից:

Փորձագետները նշում են, որ յուրաքանչյուր տարի առնվազն մի քանի հազար երիկամ ապօրինի փոխապատվաստվում է արյունակցական կապ չունեցող դոնորներից: Այս թվի մի մասը (թեպետև ոչ ամբողջը), թրաֆիքինգի արդյունք է: Օրգանների աճող առևտրի խնդիրը լուծելու համար 2003թ. Եվրախորհրդարանն ընդունեց Մարդկանց օրգանների և հյուսվածքների ապօրինի վաճառքի կանխարգելման վերաբերյալ Բանաձև, ըստ որի մարդկանց օրգանների առևտուրն ամբողջ Եվրոպայում դարձավ ապօրինի: Այս առաջարկով երրորդ երկրների քաղաքացիներից օրգաններ գնելու փորձ կատարող անձիք, ընդ որում նաև ԵՄ տարածքից դուրս, նույնպես հանցագործություն են կատարում ԵՄ օրենսդրության ներքո<sup>61</sup>:

### **3.5. Նանցագործության հանցակազմի սուբյեկտը**

#### **3.5.1. Ընդհանուր սուբյեկտը.**

ՀՀ քր.օր-ի 132 հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի սուբյեկտ է հանդիսանում մեղսունակ ֆիզիկական անձը, ում 16 տարին լրացել է մինչև հանցանք կատարելը:<sup>62</sup>

<sup>61</sup> Anti-Trafficking Training for Frontline Law Enforcement officers, Vienna, 2006, p.26

<sup>62</sup> ՀՀ քր. օր-ի 23 և 24 հոդվածները:

### **3.5.2. Նատուկ սուբյեկտը.**

ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը նախատեսում է քրեական պատասխանատվություն հանցանքը հատուկ սուբյեկտի կողմից կատարելու համար, երբ հանցանքը կատարել է անձը՝ օգտագործելով պաշտոնեական դիրքը: Տվյալ դեպքում պաշտոնեական դիրքը չի սահմանափակվում միայն պաշտոնատար անձի դիրքով, այլ նշանակում է ցանկացած ծառայողական կարգավիճակ պետական կամ ոչ պետական կազմակերպությունում կամ հիմնարկում, եթե տվյալ անձի՝ այդ կարգավիճակից բխող իրավունքները և հնարավորությունները օգտագործվել են թրաֆիքինգ իրականացնելու համար: Այդ հատուկ սուբյեկտն այն պաշտոնատար անձն է, ով, օգտագործելով ծառայողական կարգավիճակը, կատարում է ՀՀ քր.օր-ի 132 հոդվածում նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը կամ օժանդակում է դրա կատարմանը, կամ չի խոչընդոտում և չի հակազդում դրա կատարմանը, թեև պարտավոր է դա անել իր պաշտոնեական պարտականությունների բերումով:

### **3.6. ՀՀ քր.օր-ի 132 հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի որակյալ հատկանիշները**

**3.6.1. ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 2-րդ մասում թվարկված են հետևյալ որակյալ հատկանիշները.** «2.Շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը, որը կատարվել է՝

- 1) տասնութ տարին չլրացած անձի նկատմամբ,
- 2) հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի նկատմամբ»<sup>63</sup>

Այս հանցագործությունը անհրաժեշտ է սահմանազատել ՀՀ քր.օր-ի «Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը» վերնագրով 261 հոդվածի 3-րդ մասով սահմանված հետևյալ արարքից, այն է՝

Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 132 կամ 132<sup>1</sup> հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները, որը կատարվել է՝

- 1) տասնութ տարին չլրացած անձի նկատմամբ,
- 2) հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի նկատմամբ,
- 3) կազմակերպված խմբի կողմից:

Այդ հանցագործությունները միմյանցից տարանջատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ տասնութ տարին չլրացած անձին պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը՝ նրան

<sup>63</sup>Մանրամասն՝ սույն Ձեռնարկում թեմա 3.2.3.Ավարտված թրաֆիքինգ: Ենթաթեմա՝ «Երեք առանձնահատկություններ ընդհանուր կանոնից»:

շահագործելու նպատակի առկայության դեպքում կազմում է հավաքագրելու ձևով անչափահասի թրաֆիքինգի հանցակազմը: Նույնը վերաբերում է հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձանց դեպքերին:

**3.6.2. ՀՀ քր. օր-ի 132 հոդվածի 3-րդ մասում թվարկված են հետևյալ որակյալ հատկանիշները.** Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

*1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ*

Այս հատկանիշով որակելու համար կարևորվում է, թե՛ երբ է ծագել դիտավորությունը տուժողներից յուրաքանչյուրի նկատմամբ՝ միաժամանակ, թե՛ տարբեր ժամանակներում: Եթե դիտավորությունը երկու կամ ավելի անձանց նկատմամբ ծագել է միաժամանակ, ապա արարքը պետք է որակել ՀՀ քր. օր-ի 132 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով: Իսկ եթե դիտավորությունը երկու կամ ավելի անձանց նկատմամբ ծագել է տարբեր ժամանակներում, այսինքն երբ բացակայում է միասնական հանցավոր մտադրությունը, ապա յուրաքանչյուր արարքը պետք է որակել ՀՀ քր. օր-ի 132 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

*2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ*

Հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես՝ մինչև հանցագործությունն սկսելը, պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին:

*3) պաշտոնեական դիրքն օգտագործելով*

Այս կետը նախատեսում է հատուկ սուբյեկտի պատասխանատվություն: Այդպիսի անձ է համարվում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական և ոչ պետական կազմակերպություններում, հասարակական կամ կրոնական միավորումներում, առևտրային կազմակերպություններում ծառայողական լիազորությունները չարաշահող կամ վերազանցող անձը:

*4) կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով կամ դրա գործադրմամբ.*

**3.6.3. ՀՀ քր. օր-ի 132 հոդվածի 4-րդ մասում թվարկված են հետևյալ որակյալ հատկանիշները.** Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

*1) կազմակերպված խմբի կողմից*

Հանցանքը համարվում է կազմակերպված խմբի կողմից կատարված, եթե դա կատարվել է այնպիսի անձանց կայուն խմբի կողմից, ովքեր նախապես միավորվել են մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար:

*2) անզուշուրությամբ առաջադրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ<sup>64</sup>*

<sup>64</sup> Տե՛ս Թե՛մա 3.4. Հանցագործության սուբյեկտիվ կողմը:

### 3.7. Թրաֆիքինգի հետ կապված այլ հանցագործություններ

#### 3.7.1. Ընդհանուր ակնարկ

Հաճախ թրաֆիքինգը գոհի դեմ ուղղված մի քանի հանցագործություններից միայն մեկն է: Այլ հանցագործությունները կարող են կատարվել գոհերի համաձայնությանը հասնելու, վերահսկողությունը պահպանելու, թրաֆիքինգի գործարքները պաշտպանելու կամ առավելագույն շահույթ ստանալու համար: Զոհերին կարող են սպառնալ, նրանք կարող են ենթարկվել ֆիզիկական և սեքսուալ բռնության կամ այլ բնույթի դաժան վերաբերմունքի: Նրանցից կարող են վերցվել անձնագրերը և անձը հաստատող այլ փաստաթղթերը: Նրանց կարող են հարկադրել աշխատել առանց վճարելու, հաճախ կատարելով տհաճ, դժվար, վտանգավոր կամ անօրինական աշխատանք, ինչպիսիք են մարմնավաճառությամբ զբաղվելը, պոռնկագրական նյութեր ստեղծելը և անօրինական ապրանքների (օրինակ, թմրամիջոցների) շրջանառությունը: Բացի գոհերի նկատմամբ կատարվող հանցագործություններից, իշխանություններին աջակցող նախկին գոհերին կարող են սպառնալ բռնությամբ կամ նրանք իրականում կարող են ենթարկվել բռնությունների, իսկ պետական ծառայողների նկատմամբ կարող են կիրառվել կաշառքը, սսպառնալիքները կամ երկուսը միասին: Այդ արարքները պետությունների գերակշռող մասում համարվում են հանցագործություններ և կարող են օգտագործվել հատկապես այն դեպքերում, երբ թրաֆիքինգի մեղադրանքը հիմնավորելու համար եղած ապացույցները բավարար չեն, սակայն դրանք կարող են լինել բավարար թրաֆիքինգի հետ կապված այլ հանցագործություններով քրեական հետապնդում իրականացնելու համար:

Թրաֆիքինգի հետ կապված հանցագործություններից են ապօրինի աբորտ կատարելը, խոշտանգումը կամ դաժան կամ անմարդկային և անձի արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը, բռնաբարությունը կամ սեքսուալ բնույթի բռնի գործողությունները, տարբեր աստիճանի մարմնական վնասվածքները, սպանությունը, առևանգումը, ազատությունից ապօրինի զրկելը, անձը հաստատող փաստաթղթերը անօրինական վերցնելը, կոռուպցիոն դրսևորումները և այլ հանցագործություններ:

Այսպիսով, թրաֆիքինգին, որպես կանոն, հետևում է շահագործումը, որի ընթացքում գոհին բռնությամբ պահում են ազատությունից զրկված վիճակում սեռական կամ աշխատանքային ստրկության մեջ կամ ենթարկում են շահագործման այլ ձևերի:

### 3.7.2. Կապված հանցագործություններ

Թրաֆիքինգին և փաստացի շահագործմանը կարող է հետևել փուլ, որը վերաբերում է ոչ թե՛ գոհին, այլ հանցագործին: Կախված թրաֆիքինգի ծավալներից և բնույթից, հանցագործը (հանցագործների խումբը, կազմակերպված խումբը, հանցավոր համագործակցությունը<sup>65</sup>) կարող են նպատակահարմար գտնել զբաղվել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելով (փողի լվացում): Այդ ընթացքում հանցագործները, որպես կանոն, կատարում են այլ հանցագործություններ՝ զենքի, զինամթերքի, պայթուցիկ նյութերի և սարքերի կամ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի անօրինական առևտուր և այլն: Փողի լվացումը և հարկեր վճարելուց խուսափելը ածանցյալ են հիմնական հանցագործություններին, սակայն անհրաժեշտ են մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցավոր գործունեությունից ստացված հանցավոր եկամուտները պահպանելու համար:

Թրաֆիքինգի հետ կապված հանցավոր գործունեության շղթան կարող է իրականացվել զանազան սխեմաներով: Ստորև որպես օրինակ ներկայացվում է տարածված սխեմաներից մեկը, որի օգնությամբ կարելի պատկերացում կազմել թրաֆիքինգի հետ կապված հանցավոր գործունեության շղթայի մասին<sup>66</sup>:

Աղյուսակ 2

<b>Թրաֆիքինգը և դրա հետ կապված այլ հանցագործությունները</b>			
<b>Հավաքագրումը</b>	<b>Փոխադրումը, այլ պետություն մուտք գործելը</b>	<b>Շահագործումը</b>	<b>Այլ հանցագործությունները</b>
Անձը հաստատող կամ այլ փաստաթղթերի կեղծելը	Անձը հաստատող կամ այլ փաստաթղթերի կեղծելը	<i>Անօրինական հարկադրանք</i>	Փողի լվացում
<i>Խարդախ խոստումները</i>	Միգրացիոն օրենքների խախտումներ	<i>Սպառնալիք</i>	Հարկեր վճարելուց խուսափելը
<i>Առևանգումը</i>	Պաշտոնատար անձանց կաշառելը	<i>Շորթում</i>	Պաշտոնատար անձանց կաշառելը
Երևիսայի ծնողի կամ նրա այլ օրինական ներկայացուցչի կեղծված համաձայնությունը	Գույքին վնաս հասցնելը	<i>Ազատությունից ապօրինի զրկելը</i>	Պաշտոնատար անձանց ահաբեկելը, այլ եղանակներով վախեցնելը, նրանց վնաս պատճառելը
Այնպիսի հավաքագրումը, որին գոհը իրավասու չէ տալ համաձայնություն	<i>Չոհին փաստաթղթերից անօրինական զրկելը</i>	<i>Առևանգում</i>	

<sup>65</sup> Տե՛ս ՀՀ քր. օր-ի 41 հոդվածը:


<sup>66</sup> Շեղատառերով նշված են այն հանցագործությունները, որոնք ուղղված են ֆիզիկական անձի դեմ:

		<i>Կավատություն</i>	
		<i>Փաստաթղթերի գործություն</i>	
		<i>Մեռական և սերտուալ բնույթի այլ ուղեգրություններ</i>	
		<i>Բռնություն՝ արարքի վտանգավորության աստիճանը ծանրացնող հանգամանքներում</i>	
		<i>Մահ պատճառելը</i>	
		<i>Խոշտանգում</i>	
		<i>Հարկադրական աբորտ</i>	

Սխեմայում նկարագրված հանցավոր գործունեության կարևոր մասը թրաֆիքինգն է: Հենց այդ արարքն է այն հանցավոր շարժիչ ուժը, որը պատճառ է բազմաթիվ այլ հանցագործություններ կատարելու համար: Պատկերավոր դա կարող է ներկայացվել հետևյալ կերպ<sup>67</sup>:

<sup>67</sup> Այս նմուշ-սխեմայի հիմքում ընկած է ՆԱՏՕ-ի մարդկանց առևտրի դեմ պայքարի մասին ուսումնական նյութը: HATO, Угроза стабильности, модуль для военных командиров и гражданских лидеров, Модуль 26, 2005 год, стр. 11.

**Թրաֆիքինգի հետ կապված հանցագործություններ**



*3.7.3. Ծահագործումը որպես կապված հանցագործություն կամ ՀՀ քր.օր-ի 132<sup>1</sup> հոդվածով նախատեսված հանցագործությունների ( թրաֆիքինգի զոհի շահագործման) քրեաիրավական բնութագիրը*

Եթե ՀՀ քր.օր-ի 132 հոդվածով նախատեսված հանցագործությունը վերաբերում է թրաֆիքինգի զոհերին շահագործման նպատակով հավաքագրելուն, փոխադրելուն, հանձնելուն, թաքցնելուն կամ ստանալուն, ապա 132<sup>1</sup> հոդվածով նախատեսված հանցագործությունը վերաբերում է թրաֆիքինգի զոհերի բուն շահագործմանը: Այդ արարքը ՀՀ-ում քրեականացվել է 2006 թվականին:



ՀՀ քր.օր-ի 132<sup>1</sup> հոդվածի վերնագիրն է «Մարդուն պոռնկության կամ սեռական շահագործման այլ ձևերի մեջ, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների ներգրավելը կամ ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը կամ պահելը»: Այդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Մարդուն պոռնկության կամ սեռական շահագործման այլ ձևերի մեջ, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների ներգրավելը կամ ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով կամ դրա գործադրմամբ կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խարդախության, վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար՝ վճարումներ կամ բարիքներ տալու կամ ստանալու միջոցով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով»:

**Հանցագործության օբյեկտը** կազմում են այն հասարակական հարաբերությունները, որոնք ապահովում են անձի ազատությունը: Հանցագործները շահագործման նպատակով անձին զրկում են անձնական ազատությունից, աշխատանքի ընտրության ազատությունից: Լրացուցիչ օբյեկտը կարող է լինել տուժողի կյանքի և առողջության անվտանգությունը, եթե որպես միջոց կիրառվել է բռնությունը:

**Օբյեկտիվ կողմը** կազմում է այն գործողությունը (գործողությունները), որի (որոնց) միջոցով անձը ենթարկվում է բուն շահագործման, դրվում կամ պահվում է այդպիսի վիճակի մեջ: Դրանք են «ներգրավելը» կամ «վիճակի մեջ դնելը կամ պահելը»: Միջոցները չեն տարբերվում 132 հոդվածում նկարագրված միջոցներից: Այս հանցագործության դիսպոզիցիայի սկզբնամասը համապատասխանում է ՀՀ քր. օր-ի 132 հոդվածի 5-րդ մասում տրված շահագործման հասկացությանը (բացառությամբ մարդու մարմնի մասեր կամ հյուսվածքներ կորզելուց): Տարբերությունն այն է, որ այդ հասկացությանը տրվում է հանցակազմի բովանդակություն և այդ արարքը կատարելու համար սահմանվում է քրեական պատասխանատվություն: Դա հնարավորություն է տալիս սահմանազատելու թրաֆիքինգը բուն շահագործումից:

ՀՀ քր. օր-ի 132<sup>1</sup> հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նախատեսված են հանցագործության որակյալ հատկանիշները: Դրանք ձևակերպված են ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերում նախատեսված որակյալ հատկանիշների անալոգիայով:

**Սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Հանցանք կատարող անձը, մասնավորապես, գիտակցում է կյանքի կամ առողջության համար բռնություն գործադրելու սպառնալիքով կամ դրա գործադրմամբ կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խարդախության, վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար՝ վճարումներ կամ բարիքներ տալու կամ ստանալու միջոցով իր կողմից մարդուն պոռնկության կամ սեռական շահագործման այլ ձևերի մեջ, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների ներգրավելու կամ ստրկության կամ

ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելու կամ պահելու հանրության համար վտանգավոր բնույթը և ցանկանում է կատարել այդ գործողությունը (գործողությունները):

Բացառություն է կազմում 132<sup>1</sup> հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմի սուբյեկտիվ կողմը, որը կառուցված է մեղքի երկու ձևերի կանոններով. դիտավորություն՝ գործողությունների նկատմամբ և անզգուշություն՝ հետևանքների նկատմամբ: Այդ հանցակազմը ձևակերպված է հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝

2) անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ:»:

**Ընդհանուր սուբյեկտը.** ՀՀ քր. օր-ի 132<sup>1</sup> հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի սուբյեկտ է հանդիսանում մեղսունակ ֆիզիկական անձը, ում 16 տարին լրացել է մինչև հանցանք կատարելը:<sup>68</sup>

**Հատուկ սուբյեկտը.** 132<sup>1</sup> հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը նախատեսում է քրեական պատասխանատվություն հանցանքը **հատուկ սուբյեկտի** կողմից կատարելու համար՝ երբ հանցանքը կատարել է անձը՝ օգտագործելով պաշտոնեական դիրքը: Այն իր բնութագրերով համապատասխանում է ՀՀ քր. օր-ի 132 հոդվածում նախատեսված հանցագործության հատուկ սուբյեկտի հատկանիշներին:

### **3.7.4. Պատասխանատվությունը փողի լվացման համար**

#### **3.7.4.1. Ընդհանուր ակնարկ**

Թրաֆիքինգին առնչվող հանցագործությունների շարքում առանձնացնենք այն հանցագործությունները, որոնք կազմում են այդ հանցավոր գործունեության նպատակը:

Թրաֆիքինգի նպատակը մարդկանց անօրինական շահագործումն է: Ինչպես թրաֆիքինգի, այնպես էլ անօրինական շահագործման նպատակը հանցավոր եկամուտներ ստանալն է:

Թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում միջազգային-իրավական փաստաթղթերում և ՀՀ օրենսդրությունում օգտագործվող հիմնական հասկացությունները՝ շահագործում, ստրուկ, ստրկավաճառություն, ստրկություն, ստրկությանը նմանվող ինստիտուտներ և սովորույթներ, մանկական աշխատանքի վատթարագույն ձևեր, մանկական պոռնկություն և մանկական պոռնկագրություն, հարկադրական կամ պարտադիր աշխատանք և այլ հասկացություններն ինքնին վկայում են, որ հանցագործների գլխավոր նպատակներից է մարդկանց հանցավոր շահագործմամբ հանցավոր եկամուտներ ստանալը: Տարբեր գնահատականներով կազմակերպված հանցավորությունը մարդկանց առևտրից ստանում է 7-ից մինչև 12 միլիարդ դոլարի մաքուր եկամուտ<sup>69</sup>: Վ.Կորշունովան և Ա.Սիմոնովը, հղում կատարելով ՄԱԿ-ի

<sup>68</sup> ՀՀ քր. օր-ի 23 և 24 հոդվածները:

<sup>69</sup> Мизулина Е. Правовой аспект противодействия торговле людьми/ Е. Мизулина, беседовали В. Коршунова, А. Симонов// Юридический мир. – 2005. - № 6. – С. 36-40

գնահատումներին նշում են, որ մարդկանց առևտրից տարեկան եկամուտը կազմում է շուրջ 7 միլիարդ ԱՄՆ դոլար<sup>70</sup>:

Բնական է, որ հանցագործները փնտրում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օգտագործելու կամ այդ եկամուտներից լրացուցիչ օգուտներ ստանալու եղանակներ ու միջոցներ: Այդ նպատակին հասնելու համար, որպես կանոն, օգտագործվում է փողի լվացման մեթոդը: Դա այնպիսի գործընթաց է, որը դժվար է թաքցնել պատշաճ ներպետական հսկողության և միջազգային համագործակցության պայամաններում: Չէ՞ որ թրաֆիքինգից, անօրինական միգրացիայից, հանցավոր թմրաբիզնեսից, զենքի, զինամթերքի, պայթուցիկ նյութերի և սարքերի ապօրինի առևտրից, սեքս-պոռնո բիզնեսից, տնտեսական և ֆինանսական համակարգերի դեմ ուղղված հանցագործություններից, շահադիտական նպատակներով մարդու կյանքի, առողջության և ազատության դեմ ուղղված ու այլ բռնի և ոչ բռնի եղանակներով կատարվող հանրորեն վտանգավոր՝ քրեորեն հետապնդելի արարքներից ստացվող հսկայական եկամուտները մշտապես շրջանառվում են, ուստի կարող են լինել վերահսկելի:

Փողերի լվացումն անդրազգային և այլ հանցավոր կազմակերպությունների «աքիլլեսյան գարշապարն է»: Ծատ դեպքերում հանցավոր գործունեության արդյունքում ստացված եկամուտները և դրանց օրինականացման գործընթացը հանցագործության գլխավոր ապացույցն են: Ֆինանսական և այլ համակարգերի շրջանակում հանցավոր միջոցների փոխանցումը կամ փոխակերպումը հնարավոր է տարբերակել և նույնականացնել՝ հսկողության պատշաճ կառուցակարգերի առկայության դեպքում:

#### **3.7.4.2. Քրեականացման գործընթացը (մոտեցումների ձևավորումը)**

1990թ. նոյեմբերի 8-ին Ստրասբուրգում ստորագրման համար բացվել և 1993թ. սեպտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել համապարփակ եվրոպական փաստաթուղթ՝ Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին Կոնվենցիան: ԵՆ-ն 1990 թ. վերը նշված Կոնվենցիայով պատերազմ հայտարարեց հանցավոր եկամուտների օրինականացմանը՝ անկախ դրանց գոյացման հանցագործության կատեգորիայից:

Նստազայում, ուղիղ 10 տարի անց, 2000թ. նոյեմբերի 15-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան Պալերմոյում ընդունեց Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին Կոնվենցիան և այն լրացնող երկու արձանագրությունները<sup>71</sup>, իսկ 2003թ. դեկտեմբերի 11-ին՝ Մեքսիկայի Մերիդա քաղաքում ստորագրելու համար բացվեց Կոռուպցիայի դեմ պայքարի մասին Կոնվենցիան:

Այնուհետև, ԵՆ Նախարարների կոմիտեն, հիմք ընդունելով 1990թ. Կոնվենցիայի ուժի ներքո հանցավոր եկամուտների օրինականացման դեմ պայքար մղելու արդյունավետությունը,

<sup>70</sup> Коршунова В., Симонов А. Рабы XXI века/ В. Коршунова, А. Симонов// Юридический мир. – 2005. - № 6. – С. 36-40

<sup>71</sup> Իրականում Արձանագրությունները երեքն են, սակայն թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղակի վերաբերում են երկուսը՝ 2000 թվականի «Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներս բերելու դեմ» ու «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» Արձանագրությունները: Երրորդը՝ 2001թ. «Հրազեն, դրան համարող մասեր և դեմտվեր, ինչպես նաև դրա զինամթերքն ապօրինի պատրաստելու և շրջանառության դեմ» Արձանագրությունն է:

2005թ. մայիսի 3-ին ընդունել է երեք միջազգային իրավական փաստաթուղթ, ներառյալ՝ Հանցավոր գործունեությունից ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման ու ահաբեկչության ֆինանսավորման մասին և Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին Կոնվենցիաները:

Տիշյալ փաստաթղթերն իրենց նպատակներով, խնդիրներով, մեթոդներով, տերմինաբանությամբ, ազգային օրենսդրական և ինստիտուցիոնալ միջոցներ ձեռնարկելու պարտավորություններով, քրեական միասնական քաղաքականություն վարելու ուղղվածությամբ, միջազգային համագործակցության եղանակներով ամբողջությամբ համապատասխանում են փողի լվացման դեմ պայքարի մասին Եվրոպական Կոնվենցիայում ամրագրված դրույթներին:

«Հանցավոր եկամուտ» հասկացությունը նշանակում է ցանկացած տնտեսական օգուտ, որը ստացվել է հանցանք կատարելու արդյունքում: Դրանք են ցանկացած տեսակի նյութական արժեքները՝ գույքային և ոչ գույքային, շարժական և անշարժ, ինչպես նաև գույքի նկատմամբ իրավունք վերապահող իրավաբանական ակտերը կամ փաստաթղթերը: Այսինքն, եթե կատարվել է հանցանք, որի արդյունքում հանցագործները ստացել են տնտեսական օգուտ, ապա այդ հանցանքը դիտվում է որպես հիմնական, իսկ ստացված օգուտները՝ որպես հանցավոր եկամուտներ: Սակայն հանցավոր եղանակով ստացված եկամուտն ինքնին փողի լվացման հանցագործության օբյեկտ կամ առարկա չի հանդիսանում: Այն վերածվում է Կոնվենցիայի իմաստով հանցագործության առարկայի, երբ իրականացվում է դրա փոխակերպումը, որը նպատակ է հետապնդում թաքցնել կամ խնդալարել այդ նյութական արժեքների կամ դրանց առնչվող իրավունքների բնույթը, ծագման աղբյուրները, գտնվելու վայրը, տեղաբաշխումը, շարժը կամ իրական պատկանելիությունը:

#### **3.7.4.3. ՀՀ քր.օր-ի 190 հոդված ( փողի լվացում )**

Այս հատվածում անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՀ քրեական օրենսդրության հիմնադրույթները, որոնք վերաբերում են փողի լվացման քրեականացմանը և «կեղտոտ փողի» առգրավման ինստիտուտներին: Կարևորն այն է, որ 2006թ. ՀՀ քր.օր-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու արդյունքում<sup>72</sup> օրենսգրքում փողի լվացմանը վերաբերող ինստիտուտներն, այդ թվում բռնագրավման ինստիտուտը հիմնականում համապատասխանեցվել են ՀՀ միջազգային պարտավորություններին<sup>73</sup>:

<sup>72</sup> 28.11.06 ՀՕ-206-Ն ՀՀ օրենքը:

<sup>73</sup> Բավական է նշել, օրինակ, որ թրաֆիքինգի արդյունքում ձեռք բերված հանցավոր եկամուտները պարտադիր բռնագրավման ենթակա չէին: Դրան նպաստում էր այն, որ ՀՀ քր.օր-ի 50 հոդվածի 3-րդ մասի համաձայն, գույքի բռնագրավումը կիրառվում էր միայն որպես լրացուցիչ պատժամիջոց, իսկ 55 հոդվածի 3-րդ մասի համաձայն այն կարող էր նշանակվել բացառապես շահադիտական դրդումներով կատարված ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար՝ քր.օր-ի հատուկ մասով նախատեսված դեպքերում: Սրանից հետևում էր, որ ՀՀ-ում հանցավոր եկամուտների (միջոցների) բռնագրավմանը վերաբերող իրավական ռեժիմը սահմանափակ էր: Տե՛ս Արա Երեմյանի մեկնաբանությամբ Եվրախորհրդի 1990 թ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին» Կոնվենցիան: Բոշնադյան Ա., Երեմյան Ա. «Հանցավոր եկամուտների օրինակացմանը և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու վերաբերյալ հիմնարար միջազգային փաստաթղթեր. /տնտեսական մեկնաբանություններով/», Ժողովածու.- Եր.: Աստղիկ, 2005, էջ 108, 112:

ՀՀ քր.օր-ի 190 հոդվածով<sup>74</sup> նախատեսված է քրեական պատասխանատվություն հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու (փողի լվացման) համար, որն իր բնութագրերով միջազգային ստանդարտներին հիմնականում համապատասխանում է:<sup>75</sup>

Օրենսգրքի 190 հոդվածի 5-րդ կետով սահմանված է, որ.

«5. Սույն հոդվածի իմաստով հանցավոր ճանապարհով ստացված գույք է հանդիսանում ցանկացած գույքը, ներառյալ՝ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում՝ քաղաքացիական իրավունքների այլ օբյեկտներ, որոնք ուղղակի կամ անուղղակի առաջացել կամ ստացվել են սույն օրենսգրքի 104-րդ, 112-113-րդ, 117-րդ, 122-րդ, 131-134-րդ, 166-րդ, 168-րդ, 175-224-րդ, 233-235-րդ, 238-րդ, 261-262-րդ, 266-270-րդ, 281-րդ, 284-րդ, 286-289-րդ, 291-292-րդ, 295-րդ, 297-298-րդ, 308-313-րդ, 329-րդ, 352-րդ, 375-րդ, 383-րդ, 388-րդ և 389-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների կատարման արդյունքում» :

Նշենք, որ 190-րդ հոդվածի 5-րդ մասում թվարկված են այնպիսի հանցագործություններ, որոնց կատարման հետ կապված փողի լվացումը (1-ին մասի իմաստով) դիտվում է որպես առանձին կատարված հանցագործություն: Այդ հիմքով, ՀՀ քր.օր-ի 132 հոդվածով նախատեսված հանցագործությունները («Շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը») այն հանցագործություններից են, որոնք հիմնական են և որոնց կատարման արդյունքում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելը (փողի լվացումը) դիտվում է որպես հանցագործություն:

Եթե թրաֆիքինգի արդյունքում ստացված հանցավոր եկամուտների օրինականացումը կատարվել է խոշոր չափերով կամ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, ապա արարքը պետք է որակվի 190 հոդվածի 2-րդ մասի հանցակազմի հատկանիշներով: Այն դեպքում, երբ թրաֆիքինգի արդյունքում ստացված հանցավոր եկամուտների օրինականացումը կատարվել է առանձնապես խոշոր չափերով կամ կազմակերպված խմբի կողմից կամ պաշտոնական դիրքն օգտագործելով, ապա արարքը պետք է որակվի 190 հոդվածի 3-րդ մասի հանցակազմի հատկանիշներով:

Թրաֆիքինգի գործերով պարտադիր քննության առարկա պետք է լինի հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (փողի լվացման) հարցը և այդպիսին բացահայտվելու դեպքում պետք է կիրառվի ՀՀ քր.օր-ի 190 հոդվածը՝ նույն օրենսգրքի 55 հոդվածի կանոններով գույքի բռնագրավմամբ:

<sup>74</sup> ՀՀ քր.օր-ի 190-րդ հոդվածը փոփ. 14.12.04 ՀՕ-16-Ն, 01.06.06 ՀՕ-119-Ն, 28.11.06 ՀՕ-206-Ն օրենքներով:

<sup>75</sup> Այդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելիությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում)՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ սույն օրենսգրքի 55-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված գույքի բռնագրավմամբ:»

## ԳԼՈՒԽ 4

### Օպերատիվ-հետախուզական տվյալների հավաքագրում

#### 4.1. Օպերատիվ-հետախուզական տվյալների նշանակությունը

##### 4.1.1. Հանցագործությունը քողարկելու և ուղղված գործողություններ

Թրաֆիքինգը, որպես կանոն, իրականացվում է հանցակցության տարբեր սխեմաներով: Հանցագործները մանրակրկիտ պլանավորում են իրենց հանցավոր գործողությունները և, միաժամանակ, ձեռնարկում են միջոցներ սեփական անվտանգությունն ապահովելու համար: Բացահայտման սպառնալիքը թելադրում է, որ թրաֆիքինգ իրականացնող անձինք հնարավորինս քողարկեն իրենց հանցավոր գործունեությունը և դրա առանձին դրվագները: Այդ պատճառով նրանք, որպես կանոն, բաշխում են հանցակիցների դերերը, ապահովում են ներքին ենթակայություն և կարգապահություն, օգտագործում են սեփականության իրավունքով իրենց չպատկանող տարածքներ (շենքեր, շինություններ, բնակարաններ), կապի և տրանսպորտային ու այլ տեխնիկական միջոցներ: Նրանք հաճախ փոխում են օգտագործվող միջոցները (տարածքները, տրանսպորտային միջոցները, կապուղիները, նրթուղիները), սեփական արտաքինը, պահում կամ կրում են անօրինական զենք: Թրաֆիքինգի զոհերին նրանք մեկուսացնում են հասարակությունից և ընտանիքից, ազգային և կրոնական համայնքներից, դրդում են կատարելու իրավախախտումներ և հանցագործություններ (լսալստել միզրացիայի ռեժիմի կանոնները, ձեռք բերել և օգտագործել անձի ինքնությունը հաստատող կեղծ փաստաթղթեր, զբաղվել մարմնավաճառությամբ, իրացնել թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր, կատարել գողություններ և հանրորեն վտանգավոր այլ արարքներ): Թրաֆիքինգ իրականացնող անձինք թրաֆիքինգի զոհին սպառնում են բացահայտել նրա գործունեության հանգամանքները, վարկաբեկել նրանց (օրինակ, որպես ապացույց օգտագործելով տեսաձայնային և այլ ժապավեններ): Այդ և բազմաթիվ այլ եղանակներով հանցագործները նվազեցնում են թրաֆիքինգի զոհերի հնարավոր անհնազանդության աստիճանը: Կիրառելով բռնություն կամ բռնության սպառնալիք թրաֆիքինգի զոհերի կամ նրանց մտերիմների նկատմամբ, հանցագործները փորձում են չեզոքացնել թրաֆիքինգի զոհերի՝ ապագայում կամ փաստացի շահագործման ենթարկվելու դիմադրությունը: Թվարկված և բազմաթիվ այլ մեթոդների կիրառմամբ թրաֆիքինգ իրականացնող անձինք թրաֆիքինգի արդյունքում տուժող անձանց (զոհերին) ստիպում են չդիմել որևէ մեկի օգնությանը, չհամագործակցել իշխանությունների հետ, չդիմել ոստիկանություն, չտալ հանցագործությունը բացահայտող ցուցմունքներ<sup>76</sup>:

Մի կին, որին վաճառել էր իր սիրելիանը, պատմել է, որ ինքը վախենում էր ծեծից և խոշտանգումից, որ ցավն ահավոր էր, և որ դաժան վերաբերմունքի արդյունքում մի քանի անգամ կորցրել է գիտակցությունը: Այսպես կոչված «տները» նրան բռնաբարելուց հետո սպառնում էր վնաս

<sup>76</sup> Մարդկանց առևտրի օբյեկտ դարձած և մարդկանց առևտրի արդյունքում տուժող անձ տերմինը ու զոհ տերմինը ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Կոնվենցիան լրացնող՝ 2000թ. թիվ 2 Արձանագրության 3-րդ հոդվածի համատեքստում նշանակում են «մարդկանց առևտրի (թրաֆիքինգի) զոհ»:

պատճառով և ասում, որ «եթե իր մասին հայտնի ոստիկանությանը, ապա դա կիրականացնի մեկ ուրիշը»:

Շատ դեպքերում թրաֆիքինգ իրականացնող անձինք զոհին ասում են, իբր համագործակցում են ոստիկանության հետ, և եթե զոհը փորձի փախչել, ապա ոստիկանությունը նրան կվերադարձնի «տներին» կամ կձերբակալի և կարտաքսի: Չնայած դրան, հաճախ հաղթահարելով վախը, հնարավորության դեպքում զոհերը դիմում են ոստիկանություն և ստանում անհրաժեշտ օգնություն:

Առանձին դեպքերում, սակայն, նրանց վախը եղել է հիմնավորված: Ռեբեկկա Սուրտիսը, վերլուծելով Հարավ-Արևելյան Եվրոպայում զոհերին նույնացնելու, նրանց վերադարձնելու և օգնություն տրամադրելու փորձը, նշում է, որ ոստիկանների և որպես թրաֆիքինգի զոհեր նույնացված կանանց հետ հաղարդակցվելու սեփական փորձից հայտնի էր դառնում, որ ոստիկանության առանձին աշխատակիցներ հենց իրենք են եղել օտարերկրյա մարմնավաճառների հաճախորդներ, շահագործել են նրանց, օգտվել նրանց ծառայություններից, իսկ հետագայում նայնացրել այդ մարմնավաճառներին որպես անօրինական իմմիգրանտների: Այսպես, զոհերից մեկը պատմել է. «Ես վախենում եմ ոստիկանությունից: Քանի որ ես աշխատում էի փողոցում, ոստիկանները հաճախ մոտենում էին ինձ, որ ես նրանց սպասարկեմ: Չեմ վստահում նրանց...: Վախենում եմ, որ նրանք նորից կստիպեն ինձ աշխատել փողոցում»: Կամ հետևյալը. «Ես նրանցից վախենում էի: Վախենում էի, որովհետև շատ լավ գիտեի նրանց. նրանցից ոմանք եղել են իմ հաճախորդները»<sup>77</sup>:

Թրաֆիքինգի հանցակցության առավել վտանգավոր ձևերն են հանցանքը կազմակերպված խմբի կամ հանցավոր համագործակցության կողմից կատարելը: Եթե թրաֆիքինգը կատարվում է այնպիսի անձանց կայուն խմբի կողմից, ովքեր նախապես միավորվել են թրաֆիքինգի մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար (կազմակերպված խումբ), առավել ևս, եթե թրաֆիքինգը կատարվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ կատարելու համար ստեղծված, համախմբված, կազմակերպված խմբի կողմից կամ նույն նպատակներով ստեղծված կազմակերպված խմբերի միավորմամբ կամ այդպիսի համագործակցության անդամի (անդամների) կողմից ի կատարումն դրա հանցավոր նպատակների կամ հանցավոր համագործակցության առաջադրանքով դրա անդամ չհամարվող անձի կողմից (հանցավոր համագործակցություն)<sup>78</sup>, ապա հանցագործության քողարկման աստիճանը, որպես կանոն, լինում է շատ ավելի բարձր, հանցագործությունը կատարելու եղանակները բնութագրվում են առանձնակի նենգությամբ ու դաժանությամբ, զոհերի կյանքն ու առողջությունը գտնվում են առավել լուրջ սպառնալիքների տակ: Այդպիսի խմբերի կազմում կատարված հանցավոր արարքների հանրության համար վտանգավորության աստիճանն ինքնին բարձր է և տրամաբանական է, որ թրաֆիքինգը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված

<sup>77</sup> Rebecca Surtees. "Listening to Victims. Experiences of identification, return and assistance in South-Eastern Europe". ICMPD, 2007, p. 60.

<sup>78</sup> ՀՀ քր.օր-ի 41 հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը:

խմբի կողմից կատարելը որակվում են որպես որակյալ հատկանիշներով իրականացված թրաֆիքինգ (ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ և 4-րդ մասի 1-ին կետ), իսկ հանցավոր համագործակցության կազմում թրաֆիքինգ կատարելու դեպքում կիրառվում է ՀՀ քր.օր-ի 20-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների համակցության կանոնը և այդ դեպքում անձը պատասխանատվություն է կրում յուրաքանչյուր արարքի համար, այսինքն և թրաֆիքինգի համար և հանցավոր համագործակցությանը մասնակցելու համար<sup>79</sup>:

Այս ամենը հուշում է, որ թրաֆիքինգի փաստերով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելիս պետք է հաշվի առնել այն իրական կամ հնարավոր սպառնալիքները, որոնց առկայությունը թելադրում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների ճիշտ ընտրության, մանրակրկիտ նախապատրաստման, արդյունավետ իրականացման, արդյունքների օրենքով սահմանված կարգով ամրագրման և քննություն իրականացնող անձին փոխանցման, տվյալների բացահայտման և փոխանակման թույլատրելիության աստիճանի որոշման, անհրաժեշտության դեպքում տուժողների, վկաների և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանց պետական պաշտպանության ապահովման ու բազմաթիվ այլ խնդիրների լուծումը: Օպերատիվ-հետախուզական միջոցառումներից յուրաքանչյուրը և դրանք միասին՝ իրականացման ամբողջ ընթացքում պետք է ծառայեն «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի<sup>80</sup> 4-րդ հոդվածում ամրագրված օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակների իրականացմանը, պահպանելով նույն օրենքի 5-րդ հոդվածում ամրագրված օպերատիվ-հետախուզական գործունեության սկզբունքները:

#### ***4.1.2. Եվրոպական մոտեցումը քրեական վարույթ սկսելու վերաբերյալ***

Տարբեր պետություններում թրաֆիքինգի փաստերով քրեական գործերի քննության ընթացքում կուտակված հարուստ փորձը վկայում է այն մասին, որ նման գործերի քննության ընթացքում ինչպես մինչդատական վարույթի, այնպես էլ դատական քննության ընթացքում հաճախ ծագում են անկանխատեսելի բարդություններ: Դա առաջին հերթին վերաբերում է ապացուցողական այն բազային, որը կապված է տուժողի ցուցմունքների հետ կամ առնչվում է տուժողի կողմից ներկայացվող այլ ապացույցների հետ: Քննության համար ծագում են էական բացասական հետևանքներ, երբ թրաֆիքինգի զոհերը տարբեր շարժառիթներով հրաժարվում են թրաֆիքինգի ենթարկված լինելու մասին որևէ ապացույց ներկայացնելուց և քննության հետ համագործակցելուց, կամ էլ, երբ նրանք սկզբնական շրջանում հանդես են գալիս կամ համաձայնում են հանդես գալ թրաֆիքինգի ենթարկված լինելու մասին հայտարարությամբ, իսկ հետագայում հրաժարվում են իրենց ցուցմունքներից կամ փոխում դրանք՝ հրաժարվելով համագործակցել իշխանությունների հետ:

<sup>79</sup> Հիշենք, որ ՀՀ քր.օր-ի 223 հոդվածում նախատեսված՝ հանցավոր համագործակցություն ստեղծելը կամ հանցավոր համագործակցություն ղեկավարելը դասվում է առանձնապես ծանր, իսկ հանցավոր համագործակցությանը մասնակցելը՝ ծանր հանցագործությունների շարքին /նաև ՀՀ քր. օր-ի 223 հոդվածի սանկցիաները, համադրելով դրանք նույն օրենսգրքի 19-րդ հոդվածում ամրագրված դրույթների հետ/:

<sup>80</sup> «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 22.10.2007թ., այն ուժի մեջ է մտել 08.12.2007թ.: Տե՛ս ՀՀՊՏ, 28.11.07./59(583), Հոդված 1197, ՀՕ-223-Ն:



Հաշվի առնելով այդ իրողությունը, ինչպես նաև այն, որ առանձին պետությունների իրավական համակարգերում թրաֆիքինգը կարող է դասվել մասնավոր մեղադրանքի գործերի շարքին, Եվրոպայի խորհուրդը ձևավորել է կոնվենցիոն բնույթի մոտեցումներ, որոնք կոչված են ապահովելու նույնանման պահանջներ թրաֆիքինգի փաստերով քրեական վարույթ սկսելու համար: ԵՍ 2005թ. Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթը պարտավորեցնում է պետություններին ապահովել, որ կոնվենցիայում նախատեսված հանցավոր արարքների վերաբերյալ քննություն կամ դատական հետապնդում իրականացնելու հարցը կախված չլինի միայն տուժողի ցուցմունքներից կամ նրա հարուցած մեղադրանքներից, համեմայն դեպք, երբ հանցավոր արարքն ամբողջովին կամ մասամբ կատարվել է իր տարածքում: Կոնվենցիոն այդ դրույթի խնդիրն է իմաստագրել թրաֆիքինգի գոհերի նկատմամբ ճշում կամ սպառնալիք գործադրելը այն նպատակով, որ գոհերը հրաժարվեն իշխանություններին հանցագործության մասին հայտարարություն ներկայացնելուց կամ իշխանությունների հետ համագործակցելուց:

#### **4.1.3. Թրաֆիքինգի գործով վարույթ սկսելու առիթները**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն, թրաֆիքինգը դասվում է հանրային մեղադրանքի գործերի շարքին<sup>81</sup>: Անկախ այն հանգամանքից, դիմե՞լ է գոհը իշխանություններին, թե ոչ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված առիթների (հոդված 176) և հիմքերի առկայության դեպքում թրաֆիքինգի գործերով քրեական վարույթ իրականացնելը պարտադիր է: Ընդ որում, այդ գործերով կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ տուժողի հաշտվելը գործով վարույթը կարճելու հիմք չէ: Այդ առումով Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի գործերով քննություն կամ դատական հետապնդում իրականացնելու հարցը կախված չէ միայն տուժողի ցուցմունքներից կամ նրա հարուցած մեղադրանքներից: Ինչպես քննությունը, այնպես էլ դատական հետապնդումը պետք է իրականացվեն նաև այն դեպքերում, երբ թրաֆիքինգի գոհերը տարբեր շարժառիթներով հրաժարվում են հանցագործության մասին ներկայացնել հայտարարություն կամ համագործակցել իշխանությունների հետ: Բահրեյնի օդանավակայանից Հայաստան վերադարձրած թրաֆիքինգի երկու գոհերը, օրինակ, դատաքննության ընթացքում դժգոհություն են հայտնել այն բանի համար, որ ձայնագրվել է իրենց մեկնումը: Դ-ա, սակայն, չի խոչընդոտել դատարանին ծանրակշիռ ապացույցների առկայության պայմաններում դատապարտել ամբաստանյալներին թրաֆիքինգ կատարելու համար<sup>82</sup>:

Այսպիսով, բացի թրաֆիքինգի մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև լրատվության միջոցների հաղորդումներից, թրաֆիքինգի գործերով քրեական գործ

<sup>81</sup> ՀՀ քր.օր-ի 132 և 132.1 հոդվածներով նախատեսված հանցագործությունները ներառված չեն ՀՀ քր.դատ.օր-ի՝ «Տուժողի բողոքի հիման վրա հարուցվող քրեական գործերը» վերնագրով 183 հոդվածում թվարկված հանցագործությունների շարքում, որոնց վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա, և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման:

<sup>82</sup> Քրեական գործով դատավճիռը կայացվել է Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից 2005թ /գործ թիվ 1-113 /:

հարուցելու առիթ է նաև իրենց լիազորություններն իրականացնելիս քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից թրաֆիքինգի մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը: Այդպիսի տվյալները, հանցագործության նյութական հետքերը և հետևանքները կարող են հայտնաբերվել և օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում:

#### **4.1.4. Օպերատիվ-հետախուզական գործունեությանը նպաստող հանգամանքներ**

Հանցագործները թրաֆիքինգի իրականացման բոլոր փուլերում ակամայից ստեղծում են հանցագործությունը բացահայտող կամ բացահայտմանը նպաստող ապացույցներ: Չէ՞ որ, որքան էլ նրանք փորձեն քողարկել հանցագործությունը, հարկադրված են թրաֆիքինգի զոհերի հավաքագրման կամ շահագործման հանձնելու համար տեղադրել գովազդներ կամ օգտագործելով անձնական կապերը, անձամբ կամ միջնորդավորված զբաղվել գովազդով (օրինակ, նշանակետ երկրի, աշխատատեղերի, աշխատանքի պայմանների, ներառյալ՝ վարձատրության չափի մասին, թրաֆիքինգի զոհերին և նրանց ծառայություններից օգտվելու ցանկություն ունեցող անձանց հրապուրող այլ տեղեկատվություն): Այսպես, զոհին վաճառելու նպատակով հանցագործները հարկադրված են տարածել տեղեկատվություն զոհի վերաբերյալ (սեռը, ազգությունը, տարիքը, կազմվածքը, արտաքինը բնութագրող այլ հատկություններ, մասնագիտությունը, այլ տվյալներ, որոնք կարող են հետաքրքրել հնարավոր զոհի կամ ենթադրվող զոհի կամ զոհի շահագործողներին): Այդ հարցում գործում են առաջարկի և պահանջարկի տնտեսական օրենքները: Հանցագործները հարկադրված են նաև ուղղակի կամ անուղղակի կապ հաստատել ինչպես թրաֆիքինգի զոհերի կամ ապագա զոհերի հետ, այնպես էլ զոհերին ապագայում շահագործողների հետ: Կապը պետք է լինի նաև հանցակիցների միջև (օրինակ, հեռախոսով, ֆաքսիմիլային ապարատով, Ինտերնետ գլոբալ տեղեկատվական ցանցի միջոցով, ֆիզիկական անձանց հետ անմիջականորեն հաղորդակցվելու կամ ցանկացած հնարավոր այլ եղանակով): Թրաֆիքինգ իրականացնող անձինք հետքեր են թողնում նաև տարածքներ վարձակալելիս, որոնք օգտագործվում են որպես այսպես կոչված «հուսալի» հանդիպավայրեր, ընդհատակյա արհեստանոցներ, հասարակաց տներ և հանցագործության կատարման համար անհրաժեշտ այլ տարածքներ: Փոխադրման ընթացքում օգտագործվում են տրանսպորտային միջոցներ, անձը հաստատող փաստաթղթեր և երթևեկության փաստաթղթեր (հատկապես՝ սահմանը հատնելիս): Վճարման նպատակով, ինչպես նաև թրաֆիքինգի կատարման ամբողջ ընթացքում հնարավոր չէ զերծ մնալ բանկային գործառնություններից, քանի որ օգտագործվում են պլաստիկ վճարային քարտեր և անկանխիկ վճարման այլ եղանակներ (օրինակ, ավիագործակալություններում, խանութներում, բենզալիցքավորման կայաններում, հյուրանոցներում և այլուր):

Ինչպես տեսնում ենք, թրաֆիքինգ իրականացնող անձինք հարկադրված են գործել առևտրային գործունեությանը բնորոշ մեթոդներով՝ թողնելով հանցագործության տարբեր բնույթի բազմաթիվ հետքեր, որոնք կարող են նպաստել հանցագործության հայտնաբերմանը,

բացահայտմանը, կանխմանը և խափանմանը: Քննություն իրականացնող մարմինները պետք է գտնեն նշված և այլ ապացուցողական տվյալները ամբողջ ծավալով օգտագործելու հնարավորություն:

Օպերատիվ-հետախուզական տվյալները պետք է արդյունավետ օգտագործվեն նաև հանցագործության զոհերին փրկելու համար:

#### **4.1.5. Օպերատիվ-հետախուզական տվյալների նշանակությունը**

Օպերատիվ-հետախուզական տվյալները ձեռք են բերվում օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման արդյունքում՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի նպատակներով, շրջանակում և կարգով ու այդ օրենքի հետ փոխկապակցված այլ օրենքներով սահմանված շրջանակում և կարգով<sup>83</sup>: ՀՀ-ում օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակները սպառիչ թվարկված են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում: Դրանց մի մասը կրում է ընդհանուր բնույթ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող բոլոր մարմինների համար (օրինակ, հանցագործությունների հայտնաբերումը, բացահայտումը, կանխումը և խափանումը կամ, օրինակ, հանցագործությունը նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերումը), իսկ մյուս մասը կարևորվում է հատուկ խնդիրների լուծման համար, և կրում է կետային-նպատակային բնույթ (օրինակ, անհայտ կորած անձանց հետախուզումը կամ, օրինակ, վկաների, դիակի, հանցագործության հետքերի, առարկաների, իրեղեն ապացույցների և այլ իրերի ու փաստաթղթերի հայտնաբերումը և նշված օրենքի 4-րդ հոդվածում թվարկված այլ նպատակներ):

Թրաֆիքինգի գործերով օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ձեռք բերված տվյալները կարող են էապես նպաստել՝

- թրաֆիքինգի դեպքերի հայտնաբերմանը, բացահայտմանը, կանխմանը և խափանմանը,
- շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերմանը,
- քրեական պատասխանատվությունից խուսափող՝ թրաֆիքինգ իրականացրած անձանց հայտնաբերմանը,
- թրաֆիքինգից տուժողների հայտնաբերմանը,
- թրաֆիքինգի գործերով հանցագործության հետքերի, առարկաների, իրեղեն ապացույցների և այլ իրերի ու փաստաթղթերի հայտնաբերմանը,
- թրաֆիքինգի գործերով վկաների հայտնաբերմանը,
- թրաֆիքինգի և դրան ուղեկցող գործերով դիակների հայտնաբերմանը,

<sup>83</sup> Դրանք են ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, Մաքսային օրենսգիրքը, «Դատախազության մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին», «Ոստիկանության մասին», «Քրեակատարողական ծառայության մասին», «Նարկային ծառայության մասին» ՀՀ օրենքները, այլ իրավական ակտերը, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերը:

- «կնդտոտ փողի» հոսքերի, դրանց փոխակերպման փաստերի հայտնաբերմանը և բացահայտմանը, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների առգրավմանը և բռնագրավմանը, կասկածելի գործարքների և գործառությունների սառեցմանը,

- այլ հանցագործությունների հայտնաբերմանը, բացահայտմանը, կանխմանը և խափանմանը:

Բացի այդ, օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ձեռք բերված տվյալները անհրաժեշտ են՝

- թրաֆիքինգի գործերով արդյունավետ ներքին վերահսկողություն իրականացնելու համար՝ հնարավոր կոռուպցիոն ռիսկերը, ինչպես նաև օրենքով գաղտնիք համարվող տեղեկատվության հնարավոր անօրինական արտահոսքը հայտնաբերելու, բացահայտելու, կանխելու և խափանելու նպատակով,

- թրաֆիքինգի գործերով օպերատիվ-հետախուզական գործունեությանը մասնակցելու կամ դրա իրականացման հետևանքով ստացված նյութերին ծանոթանալու թույլտվության մասին որոշում ընդունելու նպատակով տեղեկություններ հավաքելու համար,

- այդ բնույթի գործերով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի (մարմինների) աշխատակիցների, ինչպես նաև այդ մարմնի (մարմինների) հետ համագործակցող կամ համագործակցած անձանց (և նրանց ընտանիքի անդամների) անվտանգությունն ապահովելու նպատակով տեղեկություններ հավաքելու համար:

#### **4.2. Թրաֆիքինգի վերաբերյալ օպերատիվ-հետախուզական տվյալների դասակարգումը**

Թրաֆիքինգի վերաբերյալ օպերատիվ-հետախուզական տվյալները կարելի է պայմանականորեն բաժանել երկու տեսակի՝

- ռազմավարական նշանակության օպերատիվ-հետախուզական տվյալներ,
- մարտավարական նշանակության օպերատիվ-հետախուզական տվյալներ:

Ռազմավարական նշանակության օպերատիվ-հետախուզական տվյալներ հավաքելու նպատակն է վեր հանել և գնահատել ազգային, տարածաշրջանային ու միջազգային մակարդակներում թրաֆիքինգի հիմքում ընկած գործոնները և մշակել ու իրականացնել թրաֆիքինգի հակազդման ռազմավարական նշանակության ծրագրեր:

Մարտավարական նշանակության օպերատիվ-հետախուզական տվյալներ հավաքելու նպատակն է ապահովել անհապաղ կամ կարճաժամկետ նպատակային գործողություններ:

#### ***Ռազմավարական նշանակության օպերատիվ-հետախուզական տվյալներ***

Ռազմավարական նշանակության օպերատիվ-հետախուզական տվյալներ հավաքելու հիմնական աղբյուրներն են թեմատիկ և մարտավարական նշանակության օպերատիվ-հետախուզական տվյալները: Կարևորվում են հետևյալ թեմատիկ տվյալները՝

- սոցիալ-տնտեսական տվյալներ (օրինակ, գործազրկության և աղքատության մակարդակն ու կառուցվածքը, էժան աշխատուժի օգտագործման արատավոր պրակտիկան, առողջապահական համակարգի մատչելիությունը և ցանկացած այլ կիրառելի տեղեկատվություն):

- պատմական, մշակութային և լեզվական գործոնները, որոնք օգտագործվում են, օրինակ, թրաֆիքինգի զոհին փոխադրելու երթուղիներն ընտրելիս կամ, օրինակ, հանցագործության կատարման մեխանիզմներն ընտրելիս, երբ ազգային, մշակութային, կրոնական կամ ձևավորված այլ գործոնները կարող են նպաստել թրաֆիքինգի իրականացմանը կամ ապահովել զոհի ենթարկվելը հանցագործներին՝ նվազեցնելով հանցագործների խոցելիության աստիճանը:

- գործարար և այլ կապերը (օրինակ, առանց մուտքի կամ ելքի արտոնագրի սահմանը հատելու հնարավորությունը):

Ռազմավարական նշանակության օպերատիվ-հետախուզական տվյալների թեմաները չեն սպառվում թվարկվածով: Դրանց կարևորությունը որոշվում է տարածաշրջանային և ներպետական առանձնահատկություններով, որոնց արդյունքում ձևավորվում են ծրագիրը, իրականացման և արդյունքների գնահատման կառուցակարգերը:

### ***Մարտավարական նշանակության օպերատիվ-հետախուզական տվյալներ***

Թվարկենք թրաֆիքինգին վերաբերող մարտավարական նշանակության օպերատիվ-հետախուզական տվյալները հավաքելու հիմնական (սակայն ոչ բոլոր) ոլորտների առավել տարածված բնութագրիչները:

Թրաֆիքինգի հավաքագրման մեթոդներից են խարդախությունը (խաբեությունը, վստահության չարաշահումը) և առևանգումը<sup>84</sup>: Այդ նպատակով օգտագործվում են գովազդի բանավոր (օրինակ, անձնական հաղորդակցությունը), գրավոր (օրինակ, զանգվածային լրատվության միջոցներով) և էլեկտրոնային հաղորդակցության միջոցները (օրինակ, Ինտերնետ գլոբալ տեղեկատվական ցանցով, ռադիոհեռահաղորդակցության եղանակով): Նախապատրաստվում և ձեռք են բերվում անձի ինքնությունը հաստատող կեղծ փաստաթղթեր, ինչպես նաև մուտքի կեղծ արտոնագրեր: Ձեռք են բերվում երթևեկության փաստաթղթեր, որոնց միջոցով հնարավոր է պարզել վճարման աղբյուրները, վճարման մեթոդները և համապատասխան գործակալությունների գտնվելու վայրը:

Նախապատրաստվում և օգտագործվում են այսպես կոչված «ապահով» տարածքներ, ինչպես նաև շահագործման այլ նյութական միջոցներ՝ հասարակաց տներ, ընդհատակյա արհեստանոցներ և շահագործման համար հարմարեցված այլ տարածքներ: Դրանց գտնվելու վայրի, իրական պատկանելիության, օգտագործողների և տիրապետողների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է էապես օգնել հանցագործության բացահայտմանը: Սեփականության իրավունքի և վարձակալության պայմանագրերի մասին օպերատիվ-հետախուզական տվյալները կարող են ներառել տեղեկատվություն սեփականության ձեռք բերման կամ վարձակալության մասին, կոմունալ կամ համայնքային հաշիվների վճարման ու այդ վճարումները կատարողների մասին, տրանսպորտային միջոցների ու դրանց տիրապետման կամ վարձակալության մասին: Այդպիսի հետախուզական տվյալներ հավաքելը պետք է ներառի հաշիվներով վճարման վերաբերյալ տվյալները, ժամանակաթվերը և եղանակները:

Հանցավոր նպատակներն իրագործելու համար թրաֆիքինգ իրականացնողներն օգտագործում են էլեկտրոնային փոստ, հեռախոսներ, ռադիոընդունիչներ, ֆաքսիմիլային ապարատներ և էլեկտրոնային կապի այլ միջոցներ: Աբոնենտների և օգտագործողների մասին անհատական տվյալների և հասցեների վերաբերյալ օպերատիվ-հետախուզական տվյալները կարող են ներառել կապի բոլոր միջոցները (հեռախոս, Ինտերնետ-կայքեր, էլեկտրոնային փոստի հասցեներ և այլն), գովազդները, արբանյակային հեռուստատեսությունը: Այդպիսի հետախուզական տվյալներ հավաքելը պետք է ներառի բոլոր հաշիվների և վճարների վերաբերյալ մանրամասն տվյալները, ներառյալ՝ ժամանակաթվերը (տարին, ամիսը, ամսաթիվը), ժամանակը, վճարման եղանակները և հնարավոր այլ տվյալներ:

<sup>84</sup>Մանրամասն տես՝ Торговля людьми в целях принудительного труда. Как осуществлять мониторинг вербовки рабочих-мигрантов, ուսումնական ձեռնարկ, 2006թ., Ժնև, հրատարակված ԱՄԿ կողմից:

Հյուպատոսական ծառայություններում կուտակվում են փաստաթղթերին առնչվող տվյալներ, իսկ ավիագործակալություններում, փոխադրում իրականացնող այլ կազմակերպություններում և տուրիստական գործակալություններում՝ փոխադրմանը առնչվող տվյալներ:

Ֆինանսական հետախուզական տվյալները կարող են վերաբերել թրաֆիքինգի գոհին հավաքագրելու մեթոդներին, զովագրի միջոցներին, անձը հաստատող կեղծ փաստաթղթերին, մուտքի կեղծ արտոնագրին, երթևեկության փաստաթղթերին, երթուղիներին և տրանսպորտային միջոցներին, «ապահով» տարածքներին, շահագործման նյութական միջոցներին, կապի միջոցներին, փոխադրմանը և թրաֆիքինգի իրականացման վերաբերյալ կուտակված ցանկացած այլ տվյալներին առնչվող ֆինանսական գործառնություններին:

#### **4.3. Թրաֆիքինգի վերաբերյալ օպերատիվ-հետախուզական տվյալների աղբյուրները**

Օպերատիվ-հետախուզական տվյալներ հավաքելու հարցում անհրաժեշտ է հաշվի առնել ներք կարևոր գործոն՝

ա) թրաֆիքինգի գործով զբաղվող քննիչի համար կարևոր են թրաֆիքինգի իրականացման մեթոդաբանության և հանցավոր խմբերի կառուցվածքի վերաբերյալ բոլոր հետախուզական տվյալները, անկախ այն հանգամանքից, թե որտեղ է իրականացվում գործով վարույթը՝ առաքման, տարանցիկ, թե՞ նշանակետ երկրում,

բ) ճիշտ չէ այն տեսակետը, որի համաձայն թրաֆիքինգի վերաբերյալ օպերատիվ-հետախուզական տվյալների աղբյուրները բաժանված են ներք աշխարհագրական գոտիների՝ առաքման, տարանցիկ և նշանակետ տարածքների: Այսպես, օրինակ, տրամաբանական կլիներ ենթադրել, որ հավաքագրման վերաբերյալ հետախուզական տվյալներն առավելապես կարող են ներկայացվել թրաֆիքինգի գոհի առաքման երկրից (տարածքից): Իրականում հնարավոր է, որ որ հավաքագրման վերաբերյալ ճշգրիտ և բարձր որակի տեղեկատվություն ստացվի նշանակետ երկրում թրաֆիքինգի գոհից կամ նրան այդ երկրում նույնացնող անձից,

գ) թրաֆիքինգի վերաբերյալ հետախուզական տվյալների աղբյուրները կարող են ի հայտ գալ և այլ հանցագործությունների հայտնաբերման, բացահայտման ընթացքում կամ արդյունքում:

Թրաֆիքինգի վերաբերյալ օպերատիվ-հետախուզական տվյալներն ըստ իրենց բովանդակության կարելի է պայմանականորեն բաժանել տվյալների երկու խմբի՝

1. սկզբնական օպերատիվ-հետախուզական տվյալներ և
2. խորացված օպերատիվ-հետախուզական տվյալներ:

Խորացված օպերատիվ-հետախուզական տվյալներ հավաքելու անհրաժեշտությունը ծագում է այն դեպքերում, երբ սկզբնական օպերատիվ-հետախուզական տվյալները վկայում են, որ հետագա աշխատանքը կարող է լինել արդյունավետ:

Հայաստանում օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու մասին որոշում կայացնելու հիմք են դատախազի գրավոր ցուցումները, քննիչի, հետաքննության մարմնի և դատարանի որոշումները՝ իրենց վարույթում գտնվող քրեական գործերով օպերատիվ-

հետախուզական միջոցառումներ անցկացնելու վերաբերյալ, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ օպերատիվ-ստորաբաժանման աշխատակցի պատճառաբանված միջնորդությունը<sup>85</sup>: Այդ միջնորդության մեջ պետք է նշվեն օպերատիվ-հետախուզական այն միջոցառումը (միջոցառումները), որը (որոնք) նախատեսվում է (են) անցկացնել, դրանց անցկացման հիմքերը, յուրաքանչյուր տեսակի միջոցառումն անցկացնելու անհրաժեշտությունը, տեղը, սկիզբը և ավարտը, ակնկալվող արդյունքները: Օպերատիվ-հետախուզական միջոցառումների առանձին տեսակների անցկացումը պահանջում է թույլատրելիության հատուկ ընթացակարգ, այսինքն՝ որքան բարձր է մասնավոր կյանքի ոլորտ ներխուժելու աստիճանը, այնքան բարձր է այդպիսի ներխուժումը թույլատրող և այդպիսի ներխուժման նկատմամբ հսկողության մակարդակը:

#### ***4.3.1. Սկզբնական օպերատիվ-հետախուզական տվյալների աղբյուրները***

Օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրականացվում է օրենսդրությանը համապատասխան: Այսպես, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում սահմանված է, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններն իրենց խնդիրներն իրականացնելիս իրավունք ունեն բացահայտ կամ գաղտնի մեթոդներով իրականացնել նույն օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները<sup>86</sup>: Սկզբնական օպերատիվ-հետախուզական տվյալների աղբյուրները ներկայացվում են ստորև՝ սխեմայի օգնությամբ:

<sup>85</sup> «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք, Հոդված 36, մաս 2-րդ:

<sup>86</sup> «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք, Հոդված 10, մաս 1-ին, կետ 1:



Սկզբնական օպերատիվ-հետախուզական տվյալների աղբյուրները



Սկզբնական հետախուզական տվյալների հետագա մշակման վերաբերյալ որոշումը կայացվում է յուրաքանչյուր դեպքի համար:

Կուտակված փորձը վկայում է, որ թրաֆիքինգի վերաբերյալ սկզբնական օպերատիվ-հետախուզական տվյալների աղբյուրները կարող են լինել բացահայտ, խորհրդապահական և գաղտնի:

***Սկզբնական հետախուզական տվյալների հիմնական բացահայտ աղբյուրներն են*** համապատասխան միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունները (հասարակական կազմակերպություններ, հիմնադրամներ), հավաքագրման երկրում և նշանակետ երկրում գովազդները և դրանց մոնիթորինգի արդյունքում հավաքված հետախուզական տվյալները, զանգվածային լրատվության միջոցները:

***Սկզբնական հետախուզական տվյալների հիմնական խորհրդապահական աղբյուրներն են՝***

ա) ոստիկանության տվյալների շտեմարանները,

բ) միջազգային իրավապահ և այլ մարմինների տվյալների շտեմարանները (օրինակ, Ինտերպոլի, Եվրապոլի, ՄԱՆԻՎԱԼԻ, Հարավ-Արևելյան Եվրոպայի համագործակցության կենտրոնի և այլ կառույցների),

գ) ներպետական այլ մարմինների կողմից վարվող համապատասխան տվյալների շտեմարանները:

Օրինակ, որպես անցանկալի համարվող օտարերկրացիների տվյալներ ՀՀ ազգային անվտանգության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի կողմից վարվող տվյալների բանկում պահպանվում են այն օտարերկրացիների մասին անհատական տվյալները, ում մուտքի վիզայի տրամադրումը (ժամկետի երկարաձգումը) մերժվում է կամ տրամադրված մուտքի վիզան ուժը կորցրած է ճանաչվում կամ մուտքը ՀՀ տարածք արգելվում է: Այդ բանկը վարելու համար տեղեկություններ են ներկայացնում ՀՀ նախագահի աշխատակազմը, ՀՀ ազգային անվտանգության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը, ՀՀ ոստիկանությունը, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը: Տվյալների բանկից օգտվելու իրավունք ունեն վերը նշված պետական կառավարման մարմինները, ինչպես նաև սահմանային հսկողություն իրականացնող լիազոր մարմինը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև ՀՀ դատարանները և քրեական հետապնդում իրականացնող մարմինները<sup>87</sup>:

Թրաֆիքինգին վերաբերող կամ առնչվող կամ կիրառելի տվյալների շտեմարաններ առկա են և այլ մարմիններում (օրինակ, առողջապահության կամ զբաղվածության ու աշխատանքի և սոցիալական հարցերով զբաղվող նախարարություններում),

դ) Ֆինանսական հետախուզության կենտրոնների<sup>88</sup>, ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատությունների, կամ անձանց, կամ ներքին դիտարկումների մարմինների կողմից «Փողերի

<sup>87</sup> «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը:

<sup>88</sup> Հայաստանում ֆինանսական դիտարկումների կենտրոնն է, որը գործում է ՀՀ կենտրոնական բանկի համակարգում:

լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով ու այդ օրենքի հետ փոխկապակցված ՀՀ այլ օրենքներով և նորմատիվ-իրավական ակտերով սահմանված դեպքերում, կարգով և շրջանակում ներկայացվող տեղեկատվությունը<sup>89</sup>:

Նշենք, որ հաշվետվություն տրամադրելու պարտականություն ունեցող անձանց շրջանակը բավականին ընդգրկուն է և այդ աղբյուրների տվյալների օգտագործումը կարող է նպաստել հանցագործությունների, ներառյալ՝ մարդկանց թրաֆիքինգի բացահայտմանը<sup>90</sup>: Հաշվետվություն տրամադրող անձինք լիազոր մարմնին տրամադրում են հաշվետվություն ինչպես օրենքով սահմանված օբյեկտիվ չափանիշներով կասկածելի համարվող գործարքների վերաբերյալ<sup>91</sup>, այնպես էլ որոշակի մեթոդաբանությամբ կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ՝ անկախ գումարի չափից: Բացի այդ, քրեական հետապնդման մարմինների հարցման հիման վրա լիազոր մարմինը օրենքով սահմանված ժամկետներում տրամադրում է իր տրամադրության տակ առկա, այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք հանդիսացող տեղեկություններ, եթե հարցումը պարունակում է բավարար հիմնավորում փողի լվացման հիմնավոր կասկածի կամ դեպքի վերաբերյալ<sup>92</sup>:

<sup>89</sup> «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՕ-80 ՀՀ օրենքն ընդունվել է 2008թ. մայիսի 26-ին, ՀՀ Նախագահի կողմից այն ստորագրվել է 2008 հունիսի 21-ին և ուժի մեջ է մտել 2008թ. օգոստոսի 31-ից:

<sup>90</sup> Այդ աղբյուրներն են՝ բանկերը, վարկային կազմակերպությունները, արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի, արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձինք, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող լիցենզավորված անձինք, ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, կարգավորվող շուկայի արժեթղթերի կենտրոնացված պահառու, սպահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերությունները և սպահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձինք, գրավատները, ռելիտորական գործունեություն իրականացնող անձինք, նոտարները, փաստաբանները, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատեր հաշվապահները և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատեր աուդիտորները և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք, թանկարժեք մետաղների դիլերները, թանկարժեք քարերի դիլերները, արվեստի գործերի դիլերները, սակարկությունների կազմակերպիչները, շահումով խաղ եւ վիճակախաղ կազմակերպող անձինք և խաղատները, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձինք, հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձինք, վարկային բյուրոները, անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող լիազորված մարմինը, իրավաբանական անձանց գրանցող պետական մարմինը (պետական ռեգիստրը):

<sup>91</sup> Այն գործարքների վերաբերյալ, որոնց արժեքը գերազանցում է 20 միլիոն դրամը և անշարժ գույքի հետ կապված այն գործարքների վերաբերյալ, որոնց արժեքը գերազանցում է 50 միլիոն դրամը:

<sup>92</sup> Տե՛ս «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասը:

***Սկզբնական հետախուզական տվյալների հիմնական գաղտնի աղբյուրներն են՝***

• թրաֆիքինգի գոհերը կամ նրանց ընտանիքի անդամները՝ երբ նրանք տարբեր շարժառիթներով չեն ցանկանում հանդես գալ որպես վկաներ կամ մասնակցել քրեական գործի քննությանը,

- ոստիկանության հետ համագործակցող անձինք,
- գաղտնի գործակալները:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումների նախապատրաստմանն ու անցկացմանը ներգրավված անձանց հետ համագործակցության գաղտնիությունը պահպանելու երկու կողմերի պարտականությունը: Սահմանվել է նաև, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները պարտավոր են գաղտնի պահել իրենց մոտ գաղտնի հիմունքներով համագործակցող և համագործակցած անձանց անհատական տվյալները:

***4.3.2. Խորացված օպերատիվ-հետախուզական տվյալներ***

Երբ սկզբնական օպերատիվ-հետախուզական տվյալները վկայում են, որ հետագա աշխատանքը կարող է լինել արդյունավետ, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինը ձեռնամուխ է լինում հավաքելու խորացված օպերատիվ-հետախուզական տվյալներ:

Այս փուլում օպերատիվ-հետախուզական գործունեության մեջ կարևորվում է գործունեության առանձին ոլորտների, կազմակերպությունների և ծառայությունների մատուցողների գործունեության դիտարկումը և մոնիթորինգը: Դրանք են աշխատանքի տեղավորման, ամուսնական, տուրիստական և նմանատիպ մասնավոր գործակալությունները, դեսպանությունները և հյուպատոսական բաժինները, շինարարական հրապարակները, ընդհատակյա արտադրությունները, սեզոնային աշխատուժի կարիք ունեցող գյուղատնտեսական տարածքները, մեկնելու և ժամանման վայրերը, հասարակաց տները, բարերը, գիշերային ակումբները, սթրիպտիկ-ակումբները, թրաֆիքինգ իրականացնելու համար հարմար կամ հարմարեցված այլ տարածքներ:

Թրաֆիքինգին առնչվող գործերով դիտարկումը և մոնիթորինգը, որպես կանոն, արդյունավետ են, երբ իրականացվում են օպերատիվ-հետախուզական այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են օպերատիվ հարցումը, օպերատիվ տեղեկությունների ձեռքբերումը, արտաքին դիտումը, ներքին դիտումը, շենքերի, կառույցների, տեղանքի, շինությունների և տրանսպորտային միջոցների հետազոտումը, օպերատիվ ներդրումը և այլն:

Կարևոր է գիտակցել, որ օրենքով հստակ սահմանված են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու իրավասությանը օժտված մարմինների ցանկը, այդ

միջոցառումների յուրաքանչյուր տեսակը կիրառելու իրավասությանը օժտված մարմինների ցանկը, դրանց կիրառման առանձնահատկությունները<sup>93</sup>:

*Օպերատիվ հարցման* եղանակով հնարավոր է հավաքել տեղեկություններ ավարտված կամ չավարտված թրաֆիքինգի վերաբերյալ՝ հանցակիցների, հավաքագրման եղանակների, հավաքագրված անձանց, փոխադրման ուղիների և միջոցների, փաստաթղթերի ձևաք բերման, կացարանների, զոհերի գնորդների և շահագործողների, շահագործման ոլորտների և այլնի մասին: Կարևորն այն է, որ ճիշտ ընտրվի տեղեկատվության աղբյուրը՝ իրականում կամ հավանաբար այդպիսի տեղեկատվության տիրապետող իրավաբանական կամ ֆիզիկական անձը:

*Օպերատիվ տեղեկությունների ձևաքբերումն* անհրաժեշտ է, օրինակ, թրաֆիքինգ իրականացնող անձանց հասարակությունից մեկուսացնելու, զոհերին փրկելու, ապացույցներ հավաքելու և ամրագրելու ու օպերատիվ-հետախուզական գործունեության այլ խնդիրներ իրականացնելու նպատակով առավել անվտանգ մեխանիզմներ մշակելու, պլանավորելու, նախապատրաստելու ու արդյունավետ կիրառելու համար (օրինակ, թրաֆիքինգի զոհերի գտնվելու վայրի հատակագիծը, հանցագործների կապերը, հանցավոր մտադրություններն իրականացնելու եղանակները և այլ տվյալներ):

*Արտաքին գնումներ*, օրինակ, շենքերի, կառույցների, տեղանքի, շինությունների և տրանսպորտային միջոցների հետազոտումը կարող է նպաստել այնպիսի տեղեկությունների բացահայտմանը, ինչպիսիք են պահեստային կամ թաքնված մուտքերը, զոհերի կամ հանցագործների փախչելու կամ թաքնվելու հնարավոր ուղիները, դիմադրության դեպքում դիմադրողներին վնասազերծելու հնարավոր և արդյունավետ եղանակները, այլ հետախուզական գործողություններ կատարելու հնարավորությունները, քննչական գործողություններ կատարելուն նպաստելը: Օպերատիվ-հետախուզական միջոցառման այս տեսակի իրականացման ընթացքում արդյունավետ է հատուկ և այլ տեխնիկական միջոցների օգտագործումը, արդյունքների ամրագրումը էլեկտրոնային և այլ կրիչների վրա:

*Արտաքին և ներքին դիտման* արդյունքում հնարավոր է հավաքել և ամրագրել արժեքավոր տեղեկատվություն, օրինակ, թրաֆիքինգին առնչվող անձանց մասին (հանցագործների կամ հանցակիցների, հանցագործների հետ առնչվող անձանց, զոհերի, վկաների, զոհերի ծառայություններից օգտվող և այլ անձանց վերաբերյալ), ինչպես նաև դեպքերի մասին (հավաքագրում, փոխադրում, վաճառք, հանձնում, շահագործում) կամ հանցագործությանը առնչվող այլ տեղեկատվություն:

Կարևոր է նաև իրականացնել *կասկածյալների կամ զոհերի անձի նույնացում*, *նրանց կարճաժամկետ դիտում*, իրականացնել *զոհի վերահսկելի գնում*, որոնց արդյունքում հնարավոր է ձևաք բերել տեղեկություններ կամ ապացույցներ այն մասին, թե ում վերահսկողության ներքո է գտնվում թրաֆիքինգի հնարավոր կամ ենթադրյալ կամ փաստացի զոհը: Ջոհին, օրինակ,

<sup>93</sup> Օպերատիվ-հետախուզական գործունեության սահմանադրաիրավական և քրեադատավարական ասպեկտների մանրամասն լուսաբանումը դուրս է սույն հետազոտության առարկայից և կազմում է առանձին՝ խորը վերլուծության առարկա:

հնարավոր է պարզել մի շարք հատկանիշներով. նա, որպես կանոն, չի կարող ազատ տեղաշարժվել կամ, օրինակ, ազատվել աշխատանքից կամ լքել աշխատավայրը, չի վերահսկում սեփական աշխատավարձը, աշխատաժամանակի տևողությունը և այլ պայմանները չեն համապատասխանում նվազագույն ստանդարտներին կամ էապես դրանցից տարբերվում են, բնակվում է աշխատավայրում կամ վերահսկող անձի կողմից տրամադրված տարածքում, սովորաբար առկա են ֆիզիկական բռնության հետքեր, դժվարությամբ է հաղորդակցվում, նկատվում են վախի, ընկճվածության ու դեպրեսիայի հատկանիշներ, բացակայում են անձը հաստատող փաստաթղթերը կամ առկա են կեղծ փաստաթղթեր:

Անգնահատելի է *օպերատիվ ներդրման* արդյունքում թրաֆիքինգի վերաբերյալ ստացված տեղեկատվության արդյունավետությունը, որի աղբյուրներն են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցները, ինչպես նաև այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձինք:

Արդյունավետ է զուգահեռ իրականացվող *ֆինանսական հոսքերի դիտարկումը*, ինչը կնպաստի սկզբնական հետախուզական գործունեության ընթացքում բացահայտված կասկածելի գործարքների ամրագրմանը, ստուգմանը և քննությանը:

Թրաֆիքինգի վերաբերյալ տվյալների մշակման ժամանակ իրականացվող խորացված օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում անհրաժեշտ է կիրառել բոլոր հնարավոր միջոցները՝ տնսաձայնագրման սարքեր, հեռահաղորդակցության միջոցներ, ավտոմեքենաների պետհամարանիշները ամրագրող ավտոմատ համակարգեր և այլ միջոցներ:

Խորացված օպերատիվ-հետախուզական տվյալներ հավաքելու ընթացքում առաջնահերթ դիտարկման վայրերը ներկայացվում են ստորև՝ սխեմայի օգնությամբ:

**Առաջնահերթ դիտարկման վայրեր**  
(Թրաֆիքինգի վերաբերյալ խորացված  
օպերատիվ-հետախուզական տվյալներ հավաքելու ընթացքում)



#### 4.4. Սկզբնական և խորացված օպերատիվ-հետախուզական տվյալների մշակում

Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին հայտնի է, որ առանձին դեպքերում տեղեկատվությունը ստացվում է փորձառու աղբյուրից և լինում է բարձրակարգ: Սակայն քիչ չեն նաև այն դեպքերը, երբ տեղեկատվությունը հավաքվում է այլ աղբյուրներից և դրա հավաստիությունը կասկած է ներշնչում: Տեղեկատվությունը կարող է ստացվել նաև անանուն աղբյուրներից: Այդ իրողությունը թելադրում է, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները մշակեն օպերատիվ տեղեկատվության գնահատման համակարգ: Գործնականում դա օգնում է օպերատիվ-հետախուզության աշխատակցին և քրեական վարույթ իրականացնող քննիչին՝ կայացնել իրավիճակից թելադրվող ճիշտ որոշումներ: Հայտնի են օպերատիվ տեղեկատվության դասակարգման և գնահատման տարբեր մեթոդներ: Անկախ այն հանգամանքից, թե օպերատիվ տեղեկատվության դասակարգման և գնահատման որ մեթոդն է կիրառվում օպերատիվ-հետախուզական կառույցի կողմից, օպերատիվ տեղեկատվությունը պետք է գնահատվի առնվազն երեք չափանիշներով՝

- օպերատիվ տեղեկատվության աղբյուրի հուսալիության աստիճանը,
- օպերատիվ տեղեկատվության հավաստիության աստիճանը,
- օպերատիվ տեղեկատվության տարածման հնարավոր աստիճանը:

Մեծ Բրիտանիայում, օրինակ, կիրառվում է օպերատիվ-հետախուզական տեղեկատվության գնահատման 5\*5\*5 համակարգը: Այդ ցուցանիշներից մեկը վերաբերում է տեղեկատվության աղբյուրի հուսալիությանը, մյուսը՝ հավաստիությանը և երրորդը՝ օգտագործմանը: Նշված ցուցանիշներից յուրաքանչյուրն, իր հերթին, գնահատվում է հինգ մակարդակներում:

Օպերատիվ-հետախուզական տեղեկատվության գնահատման 5\*5\*5 համակարգը արդեն ներդրվել և կիրառվում է Մակեդոնիայում, Բուլղարիայում, Ռումինիայում և այլ պետություններում: Կոսովոյում այն կիրառվում է ՄԱԿ-ի առաքելության կողմից:

Ստորև ներկայացված է օպերատիվ-հետախուզական տեղեկատվության գնահատման 5\*5\*5 համակարգը:



**Օպերատիվ-հետախուզական  
տնդենկատվության գնահատման 5\*5\*5 համակարգ**

	<b>Տնդենկատվության աղբյուրի հուսալիությունը</b>	<b>Տնդենկատվության հավաստիության գնահատում</b>	<b>Տնդենկատվության օգտագործման կանոնները</b>
1.	միշտ հուսալի է	հայտնի է, որ տնդենկատվությունը ճիշտ է առանց վերապահումների	կարող է փոխանցվել Եվրոպայի միության անդամ չհանդիսացող պետությունների իրավապահ մարմիններին ( որտեղ դեռևս չեն ձևավորվել նման տնդենկատվության հետ վարվելու համապատասխան կանոններ)
2.	հիմնականում հուսալի է	տնդենկատվությունը հայտնի է աղբյուրին, այլ ոչ թե՛ հետախուզության աշխատակցին	կարող է փոխանցվել ծագման երկրի կազմակերպություններին, որոնք չեն զբաղվում քրեական հետապնդմամբ
3.	ներքին հուսալի է	տնդենկատվությունը աղբյուրին հայտնի չէ, սակայն ստացվել է համագործակցության արդյունքում	կարող է փոխանցվել այլ իրավապահ և քրեական հետապնդում իրականացնող մարմիններին, ներառյալ՝ ԵՄ անդամ պետությունների իրավապահ և քրեական հետապնդում իրականացնող մարմիններին
4.	հուսալի չէ	հնարավոր չէ գնահատել	կարող է տարածվել բացառապես այն մարմնի/խմբի շրջանում, որտեղ կուտակվել է այդ տնդենկատվությունը,
5.	չստուգված աղբյուր	առկա է կասկած, որ տնդենկատվությունը կեղծ է	տնդենկատվությունը տարածման ենթակա չէ

Որոշ պետություններում կիրառվում է օպերատիվ-հետախուզական տնդենկատվության գնահատման 4\*4 համակարգը, որը ժամանակին ներդրվել և օգտագործվում էր Բելգիայի ոստիկանության կողմից: Այդ համակարգը 5\*5\*5 համակարգի համեմատությամբ ավելի պարզ է: Այն ներառում է երկու ցուցանիշ, որոնք վերաբերում են օպերատիվ-հետախուզական տնդենկատվության աղբյուրի հուսալիությունը և այդ տնդենկատվության հավաստիության գնահատման կառուցակարգերին:

Ստորև ներկայացված է օպերատիվ-հետախուզական տնդենկատվության գնահատման 4\*4 համակարգը:

**Օպերատիվ-հետախուզական  
տեղեկատվության գնահատման 4\*4 համակարգ**

	<b>Տեղեկատվության աղբյուրի հուսալիությունը</b>	<b>Տեղեկատվության հավաստիության գնահատում</b>
1.	միշտ հուսալի է	հայտնի է, որ տեղեկատվությունը ճիշտ է առանց վերապահումների
2.	հիմնականում հուսալի է	տեղեկատվությունը հայտնի է աղբյուրին, այլ ոչ թե՛ հետախուզության աշխատակցին
3.	երբեմն հուսալի է	տեղեկատվությունը աղբյուրին հայտնի չէ, սակայն ստացվել է համագործակցության արդյունքում
4.	հուսալի չէ	հնարավոր չէ գնահատել

## ԳԼՈՒԽ 5

### Թրաֆիքինգի քննության առանձնահատկությունները

#### 5.1. Գործի քննության սկզբունքները

Թրաֆիքինգի գործերի քննությունն իրականացվում է միջազգային չափորոշիչների և ազգային օրենսդրությամբ սահմանված սկզբունքների հիման վրա: Ելակետային են թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջազգային իրավական փաստաթղթերը, որոնք նաև ուղենիշ են քննության հատուկ մեթոդների արդյունավետ կիրառման ու միջազգային համագործակցության համար: Այդ փաստաթղթերի համատեքստում կարևորվում են այն սկզբունքներն ու ուղենիշները, որոնցով թրաֆիքինգի դեմ պայքարում առաջարկել է առաջնորդվել ՄԱԿ-ի մարդու իրավունքների գծով գերագույն հանձնակատարը<sup>94</sup>: Այս փաստաթղթով այլ ուղենիշների հետ մեկտեղ առաջարկվում է ապահովել իրավապահ մարմինների համարժեք արձագանքը (ուղենիշ թիվ 5), որը ենթադրում է նման դեպքերը քննելու, քրեական հետապնդման և պատժելու ուղղությամբ արդյունավետ միջոցների ձեռնարկում («փրկարարական» գործողությունների շրջանակներում հարգանքը թրաֆիքինգի ենթարկված անձանց իրավունքների և արժանապատվության նկատմամբ, թրաֆիքինգի ենթարկված անձանց ապահովությունը և ուղղակի պաշտպանվածությունը, ներառյալ՝ ինքնության պաշտպանությունը և աջակցությունը, ակտիվ հետաքննության ընթացակարգերի ներդրումը, մասնագիտացված ստորաբաժանումների ստեղծումը):

Թրաֆիքինգի վերաբերյալ գործերի քննության ընթացքում կարևորվում են նաև թրաֆիքինգի զոհերի հետ վարվելու իրավապաշտպան սկզբունքները, որոնք ներառում են խտրականության արգելքը, զոհի անվտանգության ապահովումը, արդարադատության մատչելիությունը, մասնավոր հայցերի և փոխհատուցման մատչելիությունը, կացության կարգավիճակ տրամադրելու հնարավորությունը, առողջապահական և սոցիալական ապահովման անհրաժեշտ ծառայությունները, կամավոր հայրենադարձությանը և վերաինտեգրմանը աջակցելը, պետությունների համագործակցությունը<sup>95</sup>:

#### 5.2. Գործի քննության տարբերակները

Գործի քննության այլընտրանքային տարբերակներն են այսպես կոչված հակազդող քննությունը, կանխարգելիչ քննությունը և խզող (ընդհատող) քննությունը: Այս դասակարգումը կրում է պայմանական բնույթ: Իրականում դրանք, որպես կանոն, զուգորդվում են գործի քննության ընթացքում, և դա ապահովում է քննության ու արդարադատության արդյունավետությունը: Հակառակ դեպքում քննության տարբեր փուլերում, որպես կանոն, ծագում են տարաբնույթ, իսկ առանձին դեպքերում՝ անհաղթահարելի բարդություններ և խոչընդոտներ ապացույցների հավաքման, ամրագրման, գնահատման և այլ հարցերում:

*Հակազդող քննությունը* հիմնվում է զոհի դիմումի և վկաների ցուցմունքների վրա: Նախ անհրաժեշտ է անհապաղ արձագանքել թրաֆիքինգի զոհի կամ նրորդ անձի հայտարարությանը: Զոհին պետք է վերաբերվել որպես ծանր հանցագործության արդյունքում տուժողի: Նրան անհրաժեշտ է տրամադրել մտորելու բավարար ժամանակ նույնիսկ այն դեպքում, երբ նա

<sup>94</sup>ՄԱԿ, Տնտեսական և սոցիալական խորհուրդ, Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի առաջարկվող սկզբունքներ և ուղենիշեր, 20 մայիսի, 2002թ.

<sup>95</sup> Իրավապաշտպանների միջազգային լիգա, <http://europ.eu.int/comm/employment-social/egu-opp/index.en.htm>

պատրաստակամություն է հայտնում անհապաղ համագործակցելու: Ձոհերի հետ պետք է լինել բաց և ազնիվ, որպեսզի նրանք լիովին հասկանան խնդրի էությունը, իրենց որոշումների հետ կապված հնարավոր հետևանքները, պատասխանատվությունը և ռիսկերը: Իրավապահ մարմինների աշխատողների հետ համագործակցությունը միշտ կապված է զոհերի և նրանց ընտանիքների համար ռիսկի գործոնի հետ: Դրա հետ մեկտեղ քննության բոլոր փուլերում և դատավարության ընթացքում անհրաժեշտ է մշտապես գնահատել զոհի և նրա ընտանիքի անդամների անվտանգության և բարօրության ռիսկը: Թրաֆիքինգից զոհ-տուժողը պետք է տեղեկացվի ոչ միայն իր իրավունքների մասին, այլև պաշտպանության և աջակցության այն միջոցների մասին, որոնք կօգնեն նրանց հաղթահարելու փորձությունը և սկզբնական կոնտակտներ հաստատելու համապատասխան ծառայությունների հետ:

*Կանխարգելող քննությունը* հիմնված է օպերատիվ-հետախուզական տեղեկատվության վրա: Այդ մեթոդի կիրառումն արդյունավետ է այն հիմնավորմամբ, որ հաճախ թրաֆիքինգի զոհերը չեն ցանկանում ցուցմունք տալ իրենց շահագործողների դեմ, վախենալով հատուցումից իրենց կամ իրենց մերձավորների նկատմամբ: Թեև կանխարգելող քննություն իրականացնելու համար անհրաժեշտ է ներգրավել շատ աղբյուրներ, դրանց անցկացման համար պահանջվում է շատ ժամանակ և ծախսեր, սակայն հաշվի առնելով զոհերի վրա ազդեցության լրջությունը և այն ռիսկերը, որոնք ծագում են թրաֆիքինգի կապակցությամբ, ռեսուրսների ծախսատարությունը արդարացված է և անհրաժեշտ:

*Խզող (ընդհատող) քննությունն* իրականացվում է, երբ հակազդող և (կամ) կանխարգելող քննությունը կարող է սպառնալիք լինել զոհի անվտանգության համար կամ երբ ապացույցները բավարար չեն հակազդող կամ կանխարգելող քննություն իրականացնելու համար:

Ամեն դեպքում կարևորվում է քննության պլանավորումը: Գործի քննության պլանը կազմվում է օրինակականության, կոնկրետության, անընդհատության, դինամիկության, հետևողականության, խնայողության, օպտիմալության սկզբունքների հիման վրա: Հարցի կարևորությունը նաև նրանում է, որ հենց քննության պլանով են հստակեցվում և ամփոփվում հնարավոր վարկածների առաջ քաշման, դրանց ստուգման հետ կապված քննության մեթոդիկայի մշակման, ինչպես նաև առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկայի ընտրության հետ կապված հարցերը:

Թրաֆիքինգի գործերի քննությունը պլանավորելիս անհրաժեշտ է ուսումնասիրել եղած փաստական հանգամանքները, առաջ քաշել քննչական վարկածներ, որոշել քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարման հաջորդականությունը, ժամկետները, կատարողներին և այլն: Քննության պլանի մեկ միասնական ձև գոյություն չունի: Յուրաքանչյուր դեպքում այն կազմվում է, ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից և քննիչի պրակտիկ փորձից:

### ***5.3 Հարցաքննության առանձնահատկությունները***

Թրաֆիքինգի գործերի քննության ընթացքում առանձնակի տեղ է զբաղեցնում հարցաքննությունը: Մինչ հարցաքննությունը անհրաժեշտ է ճշտել անձը բնութագրող բոլոր տվյալները, այդ թվում՝ տարիքը, սեռը, կրթությունը, սոցիալ-տնտեսական դրությունը, ընտանեկան դրությունը, զբաղմունքի տեսակը, աշխատանքով ապահովված լինելը, բնակության վայրը, նախկինում դատվածությունը՝ նաև նմանատիպ հանցագործությունների համար, հանցավոր խմբի հետ առնչությունը և այլն: Կարևոր նշանակություն ունի նաև թրաֆիքինգի մեջ ընդգրկվելուն

նպաստող պայմանների, ինչպես նաև հանցագործության կատարման օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքների մանրամասն վերլուծությունը:

Հարցաքննության ճիշտ տակտիկա ընտրելու համար կարևոր է սահմանել բոլոր հարցաքննվողների հերթականությունը, որպեսզի գործի ելքով շահագրգռված անձինք իրար հետ չառնչվեն: Տակտիկական տեսակետից անհրաժեշտ է, որ ցուցմունքները գրառվեն անձամբ հարցաքննվողների կողմից, քանի որ, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, թրաֆիքինգի գործերով հարցաքննվածների մեծ մասը դատաքննության ժամանակ հրաժարվում են նախաքննության ժամանակ տված ցուցմունքներից, պատճառաբանելով, որ իրենց նկատմամբ կիրառվել են ռեպրեսիվ միջոցներ: Տակտիկական տեսակետից կարևոր նշանակություն ունի նաև միասնական հարցաշարի միջոցով իրականացվող հարցաքննությունը՝ քննության միասնականությունն ապահովելու նպատակով:

*Թրաֆիքինգից տուժողի հարցաքննության* պլանավորման փուլում քննիչը զոհին պետք է ընձեռի բժշկական, հոգևբանական, սոցիալական ու իրավաբանական աջակցություն ստանալու հնարավորություն, իսկ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով պետք է ապահովի համապատասխան անձանց անվտանգությունը: Եթե զոհերը ստանան բավարար պաշտպանություն և աջակցություն, ապա ավելի հավանական է, որ նրանք կհաղթահարեն իրենց կրած դժվարությունները, վստահություն ձեռք կբերեն գործը քննող անձանց նկատմամբ և կհամագործակցեն իրավապահ մարմինների հետ: Հարցաքննությունը պլանավորելիս կարևոր է հաշվի առնել հարցազրույցի անցկացման վայրը, անհրաժեշտ սարքավորումների առկայությունը, հարցազրույցի տևողությունը, թարգմանիչ ունենալու անհրաժեշտությունը, սենյակի հարմարավետությունը և այլն: Արդյունավետ է հարցաքննությունը, երբ այն իրականացնում են հատուկ վերապատրաստում անցած իրավապահ մարմինների աշխատակիցները, քանի որ նրանք տեղյակ են նման անձանց հետ տարվող աշխատանքի նրբություններին: Քննիչի սեռը և հարցաքննության տևողությունը նույնպես պետք է հաշվի առնել: ՀՀ քր. դատ. օր-ի 205.1 հոդվածի համաձայն, հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից ավել, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի հարցաքննությունը՝ երկու ժամից ավել: Հարցաքննությունը թույլատրվում է շարունակել հարցաքննվող անձին հանգստի և սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո:

Պլանավորելուց հետո իրականացվում է հարցաքննությունը: Տակտիկական տեսանկյունից հարցաքննությունը կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ փուլերի՝

- *նախապատրաստական փուլ*. երբ պարզվում է հարցաքննվողի անձը, լրացվում են անկետային տվյալները, որոշվում է նրա դատավարական կարգավիճակը, պարզաբանվում են իրավունքներն ու պարտականությունները, որոշվում է հարցաքննության լեզուն և այլն: Հարցաքննվողի անձը պարզելու համար հարկավոր է նրա հետ զրուցել տարբեր հարցերի շուրջ, որի ընթացքում պարզվում է, թե նա ինչպիսի՞ հոգեկան խառնվածքի տեր է և ինչպիսի՞ տակտիկա պետք է ընտրել նրանից ճշմարտացի ցուցմունք ստանալու համար: Հարցաքննությունը սկսելիս քննիչը պետք է կարողանա տուժողի հետ ստեղծել ճիշտ փոխհարաբերություններ, քանի որ դրանից է կախված հարցաքննության արդյունքը: Նա պետք է հոգեբանական կապի մեջ մտնի նրա հետ, շահի նրա վստահությունը, որպեսզի տուժողը պատմի իր հետ տեղի ունեցածը: Արդյունավետ է հարցաքննությունը վարել դանդաղ տեմպով, ընդմիջումներով,

- *ազատ խոսակցություն*. երբ հարցաքննվողը ազատորեն խոսում է գործի հանգամանքների մասին: Չոհր կարող է ենթադրել, որ քննությունը վարողը գիտի, թե ինչ է տեղի ունեցել և չխոսել

մանրամասների մասին: Քննիչը ուշադիր լսում և աշխատում է չընդհատել: Այն ժամանակ, երբ հարցաքննվողը ակնհայտորեն շեղվում է գործի էությունից, քննիչը նրա ուշադրությունը կենտրոնացնում է հարցաքննվող առարկայի վրա: Տակտիկական առումով քննիչը նշում է, որ ինքը ոչինչ չգիտի գոհի հետ կատարվածի մասին և հնարավորություն է ստեղծվել պատմելու գործի բոլոր հանգամանքները: Չոհր պետք է զգա, որ ինքն է վերահսկում իրադրությունը: Դա օգնում է նրան՝ դնաքերը լիարժեքորեն ներկայացնելու: Կարևոր է, որ քննիչը լինի համբերատար և հասկանա այն դժվարությունները, որոնք զոհը կրել է, քանի որ նրա համար դժվար է նորից հիշել այն ամենը, ինչ տեղի է ունեցել իր հետ: Այդ է պատճառը, որ նա հաճախ պատասխանում է «չգիտեմ» կամ «չեմ հիշում»: Եթե զոհը առաջին հարցազրույցի ընթացքում չի տրամադրում գործի քննության համար կարևոր տեղեկություններ, հարկ է մտածել հարցաքննությունը շարունակելու նպատակահարմարության մասին: Այս փուլում կարևոր է ռիսկի գնահատումը և այլ փաստերի մասին տեղեկություններ ստանալը,

- *քննիչի հարցերին պատասխանելը*. հարցերը կարող են լինել հիմնական, լրացուցիչ, ճշտող, հիշեցնող և հսկողական: Հիմնական հարցերը ընդգրկում են հարցաքննության առարկան ամբողջությամբ կամ դրա մի մասը: Լրացուցիչ հարցերը տրվում են պարզաբանելու և ճշտելու այն հանգամանքները, որոնց անբավարար են անդրադարձել ազատ զրույցի ժամանակ: Հիշեցնող հարցերը պետք է օգնեն հարցաքննվողին՝ հիշելու մոռացված հարցերը: Հսկողական հարցերի միջոցով քննիչը ստուգում է հարցաքննվողի հայտնած տեղեկությունները և դրանց ստացման աղբյուրները: Հարցերը ձևակերպելիս քննիչը պետք է շատ զգույշ լինի: Նա իրավունք չունի սպառնալիքով և վիրավորանքներ հասցնելով ցուցմունք կորզել հարցաքննվողից:

*Գնահատում*. հարցաքննությունից հետո հարկավոր է գնահատել՝ իրագործվել<sup>1</sup> են, արդյոք, հարցաքննության խնդիրներն ու նպատակները և ինչպե՞ս ստացված տեղեկությունները կազմեն գործի քննության վրա: Քննության պլանով առաջնորդվելը կնպաստի հարցաքննության գնահատմանը: Գնահատումը հնարավորություն է տալիս ապագայում կատարելագործելու հարցաքննության տակտիկան և մշակելու հարցաքննության նոր մեթոդներ: Այս փուլում պետք է գնահատել նաև ռիսկերի մակարդակը:

#### **5.4. Չուգահեռ ֆինանսական քննություն**

Թրաֆիքինգի հետ կապված հանցագործությունների գլխավոր դրդապատճառը նյութական շահագրգռվածությունն է: Բացի ենթակառուցվածքներ ստեղծելու համար նախնական ներդրումներից և շահագործման համար անձանց տեղ հասցնելուց, թրաֆիքինգ իրականացնողների գործունեության մաս է կազմում շահագործումից ստացված եկամուտների մշտական կառավարումը, փողի լվացումը և ֆինանսական միջոցների շարժը:

Գործի քննության ընթացքում նմատակահարմար է անցկացնել կանխարգելող ֆինանսական քննություն, ինչը կարող է նպաստել հիմնական հանցագործության՝ թրաֆիքինգի կատարման մասին ապացույցներ ձեռք բերելուն: Դրանք կարող են վերաբերել՝

- ճանապարհորդությունների համար կատարված ծախսերին, վիզայի համար վճարումներին, հյուրանոցներում ապրելու, տրանսպորտային միջոցներ, ոսկյա կամ այլ թանկարժեք առարկաներ ձեռք բերելու համար կատարված վճարումներին, գովազդի համար կատարված մոծումներին և այլն,
- վերը թվարկված ծախսերի կապակցությամբ առկա անդորրագրերին, ներառյալ՝ վառելիքի, մեքենաների կայանման, ինտերնետ–սրճարանների, հեռախոսային քարտերի և այլն,

- ցանկացած փաստական գրառումների, որոնք կապ ունեն գոհերի կատարած վճարումների հետ. դրանք կարող են լինել պարզապես ձեռքով գրված ամենօրյա ամփոփիչ գրառումներ կամ անդորրագրեր դրամական միջոցների փոխանցման վերաբերյալ և այլն,
- դրամական միջոցները ստացողների անհատական տվյալներին. երբեմն ստացողը կեղծ փաստաթղթերով կրում է գոհի ազգանունը, իսկ հաշիվները վերահսկվում են հանցագործների կողմից,
- փողի լվացման ուղիներին և մեթոդներին կամ երկրից փողերը փոխանցելու հետ կապված ցանկացած փաստաթղթերին, որոնք կարող են ներառել բանկային փոխանցումներ, միջբանկային փոխանցումներ, մի քանի երկրների միջանկյալ բանկային հաշիվներ, մեկ վարկային քարտից մեկ ուրիշին կատարված փոխանցումներ և այլն:

Կարևոր է նաև հիշել, որ փողի լվացման մեթոդը միշտ չէ, որ համընկնում է համակարգչային միջազգային բանկային գործառնությունների հետ: Թրաֆիքինգ իրականացնողներն օգտագործում են մի շարք մեթոդներ իրենց շահույթը լվանալու համար: Դրանք կարող են ներառել դրամական միջոցների, եկամուտների այլ ձևերի փոխարկումներ, օրինակ, տրանսպորտային միջոցների կամ հագուստի զանգվածային ձեռք բերում:

#### ***5.4.1. Տեխնոլոգիաները որպես խնդրի մաս***

Ներկայումս կազմակերպված հանցավոր խմբերը թրաֆիքինգի մեջ իրենց հանցավոր գործունեությունը հեշտացրել են երկու բնագավառում՝ հաղորդակցության և դրամական փոխանցումների: Հաղորդակցության համար նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը լայնորեն ուսումնասիրված չէ: Սակայն հայտնի է, որ հանցագործները նոր տեխնոլոգիաներն օգտագործում են իրենց հաղորդակցումը (աշխատանքի համակարգում, գոհերի հավաքագրում, մարդկանց փոխադրման և դիմավորման հետ կապված հարցերի լուծում և այլն) ուստիկանությունից գաղտնի պահելու համար: Հայտնի չէ, թե արդյո՞ք տեխնոլոգիաների կիրառումը ավելացրել է մարդկանց շահագործման ծավալը, սակայն տիրում է այն կարծիքը, որ տեխնոլոգիաների կիրառման ընդլայնումը դյուրացնում է մարդկանց շահագործման իրականացումը: Օրինակ, կին կամ երեխա գնել ցանկացողները կարող են «գնումը» կատարել ինտերնետի միջոցով: Եղել են նաև դեպքեր, երբ ինտերնետն օգտագործվել է մարդկանց ներքին օրգանների վաճառքի գովազդի համար: Հանցագործների համար տեղեկատվական տեխնոլոգիաների հսկայական առավելություններից մեկը դրանց անանունությունն ու քողարկման հնարավորությունն է: Օրինակ, հեռախոսազանգը կարելի է կատարել ինտերնետ ծառայությունների կամ գողացված քարտերի, իսկ էլեկտրոնային հաղորդագրությունները՝ «միջնորդ ուղարկողի» միջոցով: Կարծիք կա, որ «փոստով պատվիրված հարսնացուների» կայքէջերում մարդկանց առքն ու վաճառքն իրականացվում է վարկային քարտերի միջոցով<sup>96</sup>:

Տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս հանցագործներին՝ պատենշ դնելու իրենց և իրենց կատարած հանցագործության միջև և նվազեցնում են այն բացահայտելու հնարավորությունը: Նույն տեխնոլոգիաները կիրառվում են մարդկանց շահագործման հետաքննության համար: ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին Կոնվենցիայի 27-րդ հոդվածը կոչ է անում պետություններին՝ խթանել իրավապահ մարմինների համագործակցությունը ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով կատարված անդրազգային հանցագործության դեմ պայքարելու համար: Գոյություն ունեն նման համագործակցության որոշ դրական օրինակներ:

<sup>96</sup> Մարդկանց շահագործում. ինտերնետային հավաքագրում, Եվրոպայի խորհուրդ, 2007,

Մասնավորապես Ինտերպոլի գործունեությունը ցույց է տալիս, թե՛ ինչպես կարող է տեխնոլոգիաների ներուժը կիրառվել մարդկանց շահագործման դեմ պայքարում<sup>97</sup>: Նույն խնդրին է առնչվում նաև Եվրոպայի խորհրդի Համակարգչային հանցագործությունների մասին կոնվենցիան: Թե՛ն այն ուղղակիորեն չի վերաբերում թրաֆիքինգին, սակայն տալիս է հետաքննության միջոցներ՝ ինտերնետում կամ դրա միջոցով կատարվող բոլոր տեսակի հանցագործությունների դեմ պայքարելու համար: Մեծ ութնյակի պետությունները (Կանադա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Ռուսաստան, ԱՄՆ, Ճապոնիա, Մեծ Բրիտանիա) ստեղծել են բարձր տեխնոլոգիաների դեմ պայքարի ենթակումբ, որը նպատակ ունի կանխարգելել և հետաքննել համակարգիչների, ցանցային հաղորդակցման միջոցների և այլ նոր տեխնոլոգիաների միջոցով կատարված հանցանքները:

Գլոբալացման ընդլայնումը հանցագործներին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ փոխանցել դրամական միջոցները, ավելացնում է մարդկանց և ապրանքների տեղաշարժի հնարավորությունները, արդյունքում ակտիվները, նրկրից-նրկիր փոխանցվելով, օրինական տեսք են ստանում, անցնում են հանցավոր կազմակերպությունների տրամադրության տակ և օգտագործվում են հանցավոր նպատակներով<sup>98</sup>: Ինտերնետի միջոցով դրամը կարելի է արագ փոխանցել աշխարհի մի ծայրից մյուսը կամ կատարել անանուն վճարում, որը դժվարացնում է իրավապահ մարմինների կողմից հսկողության իրականացումը:

Լուրջ խնդիր է նաև փաստաթղթերի կեղծումը: Համակարգչային տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն է տալիս կեղծել ցանկացած փաստաթուղթ: Պալմիրոյի՝ մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին Արձանագրության 12 և 13-րդ հոդվածները վերաբերում են փաստաթղթերի հավաստիությանը, օրինականությանը և վերահսկողությանը<sup>99</sup>: Դրանում ասված է, որ յուրաքանչյուր Մասնակից պետություն առկա հնարավորությունների սահմաններում ձեռնարկում է այնպիսի միջոցներ, ինչպիսիք կարող են պահանջվել հետևյալի համար.

ա) իր կողմից տրվող մուտքի/ելքի կամ անձը հաստատող փաստաթղթերի այնպիսի որակ ապահովելու, որը առավելագույն չափով կդժվարացնի դրանց անիրավաչափ օգտագործելը և կեղծելը կամ անօրինական փոփոխելը, վերարտադրելը կամ տրամադրելը, և

բ) այդ Մասնակից պետության կողմից կամ նրա անունից տրված մուտքի/ելքի կամ անձը հաստատող փաստաթղթերի պաշտպանվածությունը և հավաստիությունն ապահովելը, ինչպես նաև դրանց անօրինական պատրաստումը, հանձնումը և օգտագործումը կանխելը:

#### **5.4.2. Լրացուցիչ առավելություններ**

Թրաֆիքինգի գործերով զուգահեռ ֆինանսական քննությունը կարող է տալ լրացուցիչ առավելություններ՝

- քննիչների համար կրկնակի արժեքավոր են այդ ապացույցները, քանի որ վկայում են մեծ չափերի հասնող գումարների մասին, որոնք բազմակի գերազանցում են օրինական շահույթը,
- հանցանշանները ներկայացվում են ֆինանսական գործարքների կապակցությամբ փաստաթղթերի ձևով, որոնց հերքումը հանցագործների և նրանց պաշտպանների կողմից անհնար է,

<sup>97</sup> Մարդկանց շահագործման դեմ պայքարի Վիեննայի ֆորում, 2008թ. փետրվարի 13-15, Սեմինար 017. Տեղեկատվական տեխնոլոգիաները և մարդկանց շահագործումը, էջ 1- 4:

<sup>98</sup> Անդրագային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի և դրա արձանագրությունների կատարման իրավական ուղեցույց, հոկտեմբեր, 2004, UNODC:

<sup>99</sup> Նույն հարցին է վերաբերում նաև Եվրոպայի խորհրդի 2005 թ. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին կոնվենցիայի 20-րդ հոդվածը:



- այդ ֆինանսական հանցանշանները հիմք են ձևավորում հետագայում ակտիվները բռնագրավելու և գույքի վրա կալանք դնելու համար,
- իրավապահ մարմինների ունակությունը՝ քննել, նույնացնել, բռնագրավել թրաֆիքինգից ստացված ակտիվները, ուժեղ և խորհրդանշական ուղերձ են հանցագործներին:

## ԳԼՈՒԽ 6

### Թրաֆիքինգի գոհի (տուժողի) պաշտպանությունը

#### 6.1. Թրաֆիքինգի գոհը (տուժողը)՝ որպես պաշտպանության միջոցների սուբյեկտ

Թրաֆիքինգի փաստերով քրեական գործերի արդյունավետ քննության նախադրյալներից մեկն այն է, որ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կարող են նպաստել գոհի համագործակցությանը քննության հետ: Այդ նպատակով պետք է նվազագույնի հասցվեն այն հնարավոր ռիսկերը, որոնք ուղեկցում են թրաֆիքինգի գոհին, սկսած վերջինիս՝ որպես գոհի նույնացման գործընթացից: Նրանք պետք է իրենց զգան ապահով, որպեսզի քրեական դատավարության համապատասխան փուլերում ներկայացնեն հանցանքը բացահայտող և հանցագործության կատարման մեջ հանցագործներին մերկացնող ապացույցներ:

Հանցագործության գոհերը, տուժողները, վկաները, մեղադրյալները (հատկապես հանցակցությամբ կատարված հանցագործությունների դեպքում) հաճախ խուսափում են ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի կանչով, հրաժարվում են հաղորդում ներկայացնել հանցագործության մասին, տալ ճշմարիտ ցուցմունքներ, փոխում են տրված ցուցմունքները: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատել այդ ընթացքում հնարավոր ռիսկերը և անհրաժեշտ դեպքերում ու այն չափով, որքանով դա հնարավոր է, ապահովել թրաֆիքինգի գոհերի կյանքի ու անձնական տվյալների պաշտպանությունը: Այդ պաշտպանության միջոցներից է նաև թրաֆիքինգին վերաբերող դատավարության ընթացքում քրեադատավարական հատուկ ընթացակարգերի կիրառումը, որոնք առավելապես ուղղված են տուժողի (վկայի<sup>100</sup>) անվտանգության ապահովմանը: ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ 2000թ. կոնվենցիայի 24-րդ հոդվածը սահմանում է քրեական դատավարությունում վկաների պաշտպանության սկզբունքները, հիմքերը, ուրվագծում է սուբյեկտային կազմը, պաշտպանության հնարավոր միջոցները և այլ հիմնարար դրույթներ: Այդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն իր հնարավորությունների սահմաններում ձեռնարկում է պատշաճ միջոցներ, որոնք ուղղված են քրեական վարույթին մասնակցող վկաներին և, հարիր դեպքերում, նրանց հարազատներին և մերձավոր այլ անձանց հավանական վրեժից կամ սպառնալիքներից արդյունավետ պաշտպանության ապահովմանը, երբ նրանք ցուցմունք են տալիս կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ:

<sup>100</sup> Պետք է նշել, որ Ձեռնարկի սույն գլխում «վկա» հասկացությունն օգտագործվում է այն իմաստով, որն արտահայտվել և ամրագրվել է 2006թ. հրապարակված «Արդարադատության համակարգում վկաների պաշտպանության հարցերով» եզրափակիչ զեկույցում և որպես վկաների պաշտպանության միջոցների սուբյեկտներ ներառում է վկաներին, գոհերին /տուժողներին/ և այլ անձանց, որքեր վտանգվում են դատավարության ընթացքում ցուցմունք տալու պատճառով, բացառությամբ այն անձանց, ովքեր ներգրավվել են իրենց մասնագիտական բերումով, ինչպես, օրինակ, դատախազները, օրենքը կիրառողները և այլն: «Ձոհ» կամ «տուժող» տերմինների օգտագործումը նպատակ ունի ուշադրության կենտրոնում պահել թրաֆիքինգից տուժած անձին, որի իրավունքների վտանգավոր խախտման փաստի առթիվ է իրականացվում կոնկրետ դատավարությունը: «վկա», «գոհ» կամ «տուժող» տերմինների օգտագործումը սույն գլխում ներառում է նաև հարիր դեպքում պաշտպանության ենթակա նրանց ընտանիքի անդամներին, մերձավոր ազգականներին և ցանկացած այլ անձի, ով հանգամանքների բերումով պաշտպանություն հայցող անձի մտերիմն է:

Այդ Կոնվենցիան լրացնող թիվ 2 Արձանագրության 6-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ յուրաքանչյուր մասնակից պետությունն ձգտում է ապահովել թրաֆիքինգի զոհերի ֆիզիկական անվտանգությունն իր տարածքում՝ այդ զոհերի այնտեղ գտնվելու ժամանակահատվածում: Այս դրույթը կարևորվում է հատկապես նրանով, որ սահմանում է թրաֆիքինգի ենթարկված բոլոր անձանց ֆիզիկական անվտանգության ապահովման անհրաժեշտությունը, անկախ այն հանգամանքից, հանդես է գալիս, արդյոք, զոհը (տուժողը) որպես վկա, թե՛ ոչ: Դա նշանակում է նաև, որ եթե, օրինակ, թրաֆիքինգի զոհի հայրենադարձությունը վտանգավոր է վերջինիս համար, ապա անհրաժեշտ է մշակել նրա տեղաշարժվելու և անհատական տվյալները փոփոխելու ծրագիր: Պետք է նկատի ունենալ, որ Կոնվենցիայի (2000թ.) 24-րդ հոդվածի 1-ին մասը վերաբերում է ոչ միայն զոհ-վկային, այլև քրեական դատավարությանը մասնակցող բոլոր վկաներին:

ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի կոմիտեի իրավաբանական խորհրդատվական բաժնի փորձագետների աշխատանքային խմբի 2006թ. հրապարակած «Արդարադատության համակարգում վկաների պաշտպանության հարցերը» ոչ պաշտոնական եզրափակիչ զեկույցի ներածական մասում հստակ նշված է, որ Խումբը համաձայնության է եկել որպես վկաների պաշտպանության միջոցների սուբյեկտներ ներառել վկաներին, զոհերին (տուժողներին) և այլ անձանց, ովքեր վտանգվում են դատավարության ընթացքում ցուցմունք տալու պատճառով, բացառությամբ այն անձանց, ովքեր ներգրավվել են իրենց մասնագիտական բերումով, ինչպես, օրինակ, դատախազները, օրենքը կիրառողները և այլն:<sup>101</sup>:

Հիշենք, որ ԵԽ-ի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին 2005թ. Կոնվենցիայի 4-րդ հոդվածում տրված սահմանման համաձայն, «զոհ» հասկացությունը նշանակում է մարդկանց առևտրի ենթարկվող ցանկացած ֆիզիկական անձ (այն բովանդակությամբ, ինչպես թրաֆիքինգը սահմանված է նույն հոդվածի 1-ին կետում):

Անդրադառնալով ՀՀ օրենսդրությանը նախ նշենք, որ ՀՀ քր.դատ.օր-ի 58 հոդվածի համաձայն, տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, ինչպես նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:

Թրաֆիքինգի համատեքստում այն անձը, ով շահագործման նպատակով հավաքագրվել, փոխադրվել, հանձնվել, թաքցվել կամ ստացվել է՝ կյանքի կամ առողջության համար բռնություն գործադրելու սպառնալիքով կամ դրա գործադրմամբ կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խարդախության, վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար՝ վճարումներ կամ բարիքներ տալու կամ ստանալու միջոցով, հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի որոշմամբ տուժող է ճանաչվում:

---

<sup>101</sup> Legal Advisory Section, Expert Working Group Final Report on Witness Protection in the Justice System, United Nations Office on Drugs and Crime, Vienna, 22-24 September 2005, publ. 2006.

Որպես առանձնահատկություն նշենք, որ անչափահասի և հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա դեկլարելու հնարավորությունից զրկված անձինք տուժող են ճանաչվում, երբ շահագործման նպատակով հավաքագրվել, փոխադրվել, հանձնվել, թաքցվել կամ ստացվել են:

Ընդ որում, այն անձը, ում նկատմամբ կատարվել է ՀՀ քր.օր-ի 132 հոդվածով նախատեսված հանցանքը, հետաքննության մարմնի, քննիչի կամ դատարանի որոշմամբ ճանաչվում է տուժող անկախ այն հանգամանքից, հասցվե՞լ է հանցագործությունը ավարտի, թե՛ ոչ:

Թրաֆիքինգի համատեքստում Ձեռնարկի սույն գլխում «վկա» հասկացությունը վերաբերում է մարդկանց առևտրի ոլորտի հանցագործությունների վերաբերյալ քրեական դատավարության համար էական նշանակություն ունեցող տեղեկատվություն կրող անձանց (այսինքն՝ բացահայտողներին և գործակալներին):

## **6.2. Թրաֆիքինգից տուժողի՝ քրեական դատավարությանը մասնակցելու պարտականությունը**

### ***6.2.1. Կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում***

Թրաֆիքինգի գոհը, որը ստացել է քրեադատավարական կարգավիճակ, անվանվում է տուժող՝ ստանձնելով օրենսգրքով սահմանված տուժողի իրավունքները և պարտականությունները: Դրանից հետևում է, որ թրաֆիքինգի գործով վարույթի ընթացքում տուժող ճանաչված անձը պարտավոր է ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով, այդ մարմնի պահանջով տալ ցուցմունքներ, ներկայացնել իր մոտ եղած ապացուցողական նշանակություն ունեցող առարկաները, փաստաթղթերը, ենթարկվել քննման և փորձաքննության, կատարել ՀՀ քր.դատ.օր-ով նախատեսված այլ պարտականություններ: Տուժողն, ըստ էության, վկա է, սակայն իր կարգավիճակից բխող առանձնահատկություններով:

Քրեադատավարական կարգավիճակ ունեցող տուժողի կամ վկայի կողմից առանձին քրեադատավարական պարտականությունների չկատարելը հանցագործություն է: ՀՀ քր.օր-ի 339 հոդվածի ուժով, օրինակ, թրաֆիքինգի ակնատեսը (տուժողը, վկան) քրեական պատասխանատվության ենթարկվելու սպառնալիքի ներքո պարտավոր է ցուցմունքներ տալ: Իսկ թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործով տուժողի կամ վկայի կողմից սուտ ցուցմունք տալը ՀՀ քր.օր-ի 338 հոդվածի 2-րդ մասի համաձայն հանգեցնում է քրեական պատասխանատվության, և այդ արարքը պատժվում է ազատազրկմամբ առավելագույնը հինգ տարի ժամկետով<sup>102</sup>: Կամ, օրինակ, տուժողի կամ վկայի դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելը ՀՀ քր.օր-ի 343 հոդվածի 1-ին մասի համաձայն որակվում է որպես դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք: Ստացվում է, որ թվարկված արարքները ենթակա են որակման որպես տուժողի

<sup>102</sup> Հղումը կատարվել է ՀՀ քր. օր-ի 338 հոդվածի 2-րդ մասին, քանի որ ՀՀ քր. օր-ի 132 հոդվածում նախատեսված արարքները դասվում են ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների շարքին:

կամ վկայի կողմից կատարված հանցագործություններ նույնիսկ այն դեպքում, երբ դա կարող է վտանգավոր լինել տուժողի, ականատեսի և/կամ նրա մերձավորների համար:

Այդպիսի մոտեցումը, սակայն, չի կարող արդար համարվել մարդու հիմնարար իրավունքների ապահովման տեսանկյունից և չի կարող ընդունելի համարվել արդարադատության արդյունավետության տեսանկյունից, եթե պետությունն իր հերթին չի ստանձնում այն անձի անվտանգության ապահովման պարտականությունը, ով կատարել է կամ համաձայնվել է կատարել թրաֆիքինգից տուժողի կամ թրաֆիքինգի գործով վկայի դատավարական պարտականությունները:

### **6.2.2. Միջազգային իրավական մոտեցումը**

Միջազգային իրավունքի տեսանկյունից պետությունը պարտավոր է պաշտպանել իր տարածքում գտնվող մարդու կյանքը, ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ, որպեսզի մարդու կյանքը և առողջությունը չվտանգվեն: Եթե ոստիկանությունը, տեղեկացված լինելով կոնկրետ անձի կյանքի նկատմամբ ոտնձգության հավանականության մասին, չի ձեռնարկել նրա անվտանգության ապահովման արդյունավետ միջոցներ, որի հետևանքով տվյալ անձը սպանվել է, ապա կարելի է վիճարկել պետության կողմից Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի (կյանքի իրավունք) կատարումը: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը *Օսմանն ընդդեմ Մեծ Բրիտանիայի* գործով նշել է, որ անձի կամ անձանց պաշտպանությանն ուղղված նախականխիչ միջոցառումներ ձեռնարկելու պետության պոզիտիվ պարտականությունը ծագում է այն դեպքում, երբ իշխանությունները գիտեին կամ պարտավոր էին իմանալ մարդու կյանքի իրական և անմիջական ռիսկի գոյության մասին, որը կապված է երրորդ անձանց հանցավոր գործողությունների հետ: Նման հանգամանքներում, եթե իշխանությունն իր իրավասության շրջանակում չի ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք կարող էին օգնել խուսափել ռիսկից, ապա դա կդիտվի կյանքի իրավունքի խախտում: Դատարանը նշել է, որ այս դեպքում դիմողը պետք է միայն ապացուցի, որ պետությունը չի ձեռնարկել ողջամտորեն ակնկալվող այն միջոցառումները, որոնք նպատակ ունեին խուսափել իրական և անմիջական ռիսկից<sup>103</sup>:

Հայաստանի այդ պարտականության սահմանադրաիրավական հիմքերն են ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասում և 14-րդ հոդվածում ամրագրված դրույթները<sup>104</sup>:

Այսպիսով, անհրաժեշտ է գիտակցել, որ թրաֆիքինգի գոհի՝ որպես տուժողի մասնակցությունը քրեական դատավարությանը չպետք է հանգեցնի նրա անվտանգության նվազեցմանը: Վ.Գոնչարովն ու Վ.Կոժնիկովը քրեական դատավարության մասնակիցների

<sup>103</sup> Стандарты Европейского суда по правам человека и российская правоприменительная практика. Сб. аналитических статей/ Под ред. М.Р. Воскобитовой. - М.: 'Анахарсис', 2005, С. 71., Бессарабов В.Г., Быкова Е.В., Курочкина Л.А. Европейские стандарты обеспечения прав и свобод человека и гражданина в российском уголовном процессе. - М.: Изд. Юрлитинформ. 2005. С. 54-55.

<sup>104</sup> «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են» և «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից»:

անվտանգության հիմնախնդիրների վերլուծության արդյունքում հանգում են հետևյալ եզրակացության. «Եթե պետությունը չի կարող ապահովել դատավարությանը մասնակցող անձանց անվտանգությունը, ապա վարույթն իրականացնող մարմնի պահանջը՝ կատարել քրեադատավարական պարտականությունները (օրինակ՝ ցուցմունք տալ) համարվում է ոչ իրավաչափ<sup>105</sup>»:

Վկայի (նաև տուժողի)՝ քրեական դատավարությանը մասնակցելու պարտականության, ինչպես նաև դրան համարժեք՝ պետության ակնկալվող պարտականության վերաբերյալ այս մոտեցումներն անհրաժեշտ է հաշվի առնել թրաֆիքինգի վերաբերյալ գործերով իրավակիրառման գործընթացում:

---

<sup>105</sup> Гончаров В.Б., Кожевников В.В. Проблемы безопасности участников уголовного процесса. Государство и право, 2000. № 2. С. 54-55.

### **6.3. Թրաֆիքինգի գոհի պաշտպանության հնարավոր սխեմաները**

Թրաֆիքինգի փաստերով գործերի քննության ընթացքում կարող են կիրառվել տուժողների և վկաների պաշտպանության տարբեր սխեմաներ՝

1. վկաների պաշտպանություն, որը վերահսկվում է պետության կողմից,

2. գոհերին ցուցաբերվող աջակցություն և/կամ օգնություն, որն իրականացվում է իրավապահ մարմինների, առանձին պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների և տեղական ոչ կառավարական կազմակերպությունների սերտ համագործակցությամբ,

3. գոհերին ցուցաբերվող աջակցություն և/կամ օգնություն, ինչպես նաև քրեադատավարական պաշտպանության հատուկ միջոցների ձեռնարկում և իրականացում:

Հայաստանում թրաֆիքինգի գոհերի նույնացման դեպքերում (ինչպես գործերի քննության ընթացքում, այնպես էլ դրանից անկախ), որպես կանոն, կիրառվում են թրաֆիքինգի գոհերին աջակցության կամ օգնության պարզ կամ բարդ սխեմաներ, որոնք իրականացվում են իրավապահ մարմինների, միջազգային կազմակերպությունների և տեղական ոչ կառավարական կազմակերպությունների սերտ համագործակցությամբ:

### **6.4. Թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ ՀՀ օրենսդրության ակնարկ**

Պրակտիկան վկայում է, որ թրաֆիքինգից տուժողները պետք է հնարավորություն ունենան իրագնելվելու քննության ընթացակարգերի վերաբերյալ: Թրաֆիքինգի ենթարկված անձանց կարևորագույն, առաջնահերթ և նվազագույն պահանջներն են իրենց համար հասկանալի լեզվով իրենց իրավունքների վերաբերյալ տեղեկություններ ստանալը, բնակվելու համար ապահով կացարան ունենալը, բժշկական, հոգեբանական և նյութական օգնություն ստանալը, աշխատանքի տեղավորման, կրթության և մասնագիտական պատրաստման բնագավառներում հնարավորություններով ապահովված լինելը (ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ 2000թ. կոնվենցիայի թիվ 2 Արձանագրության 6-րդ հոդվածի 3-րդ մաս): Թվարկված նվազագույն պահանջներն անհրաժեշտ են թրաֆիքինգի գոհերի ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վերականգնման համար: Այս խնդիրների լուծման հարցում հսկայական է ոչ կառավարական և այլ համապատասխան կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության այլ օղակների դերն ու նշանակությունը, որոնք գոհերին մատուցում են մասնագիտական ծառայություններ հատուկ պատրաստված մասնագետների միջոցով: ՄԱԿ-ի կոնվենցիայի (2000թ.) 25-րդ հոդվածի 1-ին մասը<sup>106</sup> կարող է օգտագործվել թիվ 2 Արձանագրության 6-րդ հոդվածի 3-րդ մասի հետ մեկտեղ: Պետք է նաև գիտակցել, որ նշանակետեր կրկում թրաֆիքինգի գոհերին հատուկ կացարաններով չապահովելը և անմիջապես արտաքսելը

<sup>106</sup> Հոդված 25. Տուժողներին օգնելը և նրանց պաշտպանությունը

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն իր հնարավորությունների սահմաններում պատշաճ միջոցներ է ձեռնարկում սույն կոնվենցիայով ընդգրկվող հանցագործություններից տուժողներին օգնություն և պաշտպանություն տրամադրելու համար. հատկապես վրեժի սպառնալիքի կամ վախեցնելու դեպքերում:

միայն խոչընդոտում է վերջիններիս համագործակցությանը իշխանությունների հետ և նպաստում է թրաֆիքինգ իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունից խուսափելուն:

Թրաֆիքինգի գոհերի հետ աշխատանքում պետք է հաշվի առնել նրանց տարիքը, սեռը և հատուկ կարիքները, մասնավորապես, երեխաների հատուկ կարիքները, այդ թվում՝ ապահով տանիքի, կրթության և խնամքի վերաբերյալ:

Անհրաժեշտ է նպաստել նաև, որ թրաֆիքինգի գոհերը հնարավորություն ունենան ստանալու փոխհատուցում պատճառված վնասի դիմաց (թիվ 2 Արձանագրության 6-րդ հոդվածի 6-րդ մաս և ՄԱԿ-ի Կոնվենցիայի (2000թ.) 25-րդ հոդվածի 2-րդ մաս): Պետք է հաշվի առնել, որ այդ դրույթներում խոսքը վերաբերում է ոչ թե իրավունքին, այլ հնարավորությանը: Սա նշանակում է, որ եթե փոխհատուցումը կատարում է պետությունը իր փոխհատուցման հիմնադրամից (կամ բյուջեից կամ որևէ այլ նմանատիպ աղբյուրից), ապա փոխհատուցման գումարը կարող է լինել ֆիքսված:

Անդրադառնալով ՀՀ օրենսդրությանը, նշենք, որ Հայաստանը չի ընդունել մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին այնպիսի օրենք, որը ամբողջապես կարգավորեր այդ ոլորտում կազմակերպարարական և վարչակառավարչական իրավահարաբերությունները, այդ թվում այն հարաբերությունները, որոնք ծագում են թրաֆիքինգի կանխարգելման, գոհերի իրավունքների պաշտպանության և ապահովման, իրականացվող աջակցության, մասնագիտացված մարմինների և համակարգող կառույցների գործունեության, միջազգային համագործակցության ու մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի այլ կառուցակարգերի առնչությամբ: Պրակտիկայում, սակայն, պետական մարմինների, տեղական և միջազգային հասարակական և այլ կազմակերպությունների համագործակցության շնորհիվ ՀՀ-ում իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնք ուղղված են վերը նշված խնդիրների լուծմանը<sup>107</sup>:

ՀՀ օրենսդրությամբ որոշ չափով կարգավորված են քրեական դատավարությանը մասնակցող պետական ծառայողների սոցիալական պաշտպանության միջոցները, սակայն նույնը չի կարելի ասել, օրինակ, քրեական արդարադատությանը աջակցող վկաների, տուժողների, մեղադրյալների սոցիալական պաշտպանության մասին: Այս ոլորտի իրավական կարգավորման բացակայության պայմաններում, եթե վկայի կյանքին, առողջությանը և գույքին վնաս է

<sup>107</sup> Թրաֆիքինգի դեմ պայքարին վերաբերող ՀՀ օրենսդրության զարգացման, ներառյալ համապատասխան ծրագրերի և դրանց իրականացման կառուցակարգերի մասին մանրամասն տե՛ս ”Հայաստանում թրաֆիքինգի գոհերին ցուցաբերված աջակցությունը”, գեղույցում. Երևան, 2007թ., էջ 13-18:

ՀՀ կառավարության կողմից հաստատվել են «Հայաստանի Հանրապետությունում 2007-2009 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային Ծրագիրը» և «Հայաստանի Հանրապետությունում 2007-2009 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային Ծրագրի իրականացման ժամանակացույցը»: Ծրագրով, մասնավորապես, որոշվել է բազմառարկայական հիմքով որդեգրել Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) գոհերի պաշտպանության և աջակցության քաղաքականություն, թրաֆիքինգի գոհերին տրամադրել առաջնային աջակցություն և կազմակերպել նրանց վերականգնողական աշխատանքները /բժշկական, սոցիալական, հոգեբանական օգնություն և խորհրդատվություն/: Իրավաբանական խորհրդատվությունը ենթադրում է նաև աջակցություն նրանց փաստաթղթային կամ այլ իրավաբանական հարցերի լուծմանը: Նախատեսվում է կատարելագործել թրաֆիքինգի գոհերի անվտանգության, անձնական տվյալների գաղտնիության և օրենքով նախատեսված մյուս պաշտպանական միջոցների ապահովման մեխանիզմները: Ըստ Ծրագրի պետք է իրականացվեն նաև թրաֆիքինգի գոհերի և նրանց ընտանիքի անդամների՝ հասարակության մեջ վերաինտեգրվելուն, մասնագիտացմանն ու վերամասնագիտացմանը, հետագա աշխատանքի տեղավորմանն աջակցությանը ուղղված ծրագրեր և բազմաթիվ այլ քայլեր: Իսկ ՀՀ կառավարության 2008թ. նոյեմբերի 20-ին թիվ 1385-Ս որոշմամբ հաստատվել է «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը»:



պատճառովում իր դատավարական պարտականության, օրինակ՝ ցուցմունք տալու կապացույթամբ, ապա պետությունն ըստ էության պարտավորված չէ հատուցելու այդ վնասը: Մինչդեռ, եթե պետությունն անձի վրա պարտավորություն է դնում մասնակցելու քրեական դատավարությանը և չի կարողանում ապահովել նրա անվտանգությունը, ապա ճիշտ կլինի, եթե պետությունը հատուցի դատավարությանը մասնակցող անձին պատճառված վնասները, աջակցի նրա սոցիալական պաշտպանությանը: Ենթադրվում է, որ սոցիալական աջակցության միջոցներ իրականացնելու հիմքեր են քրեական դատավարությանը մասնակցելու կապակցությամբ պաշտպանվող անձին մարմնական վնասվածք կամ նրա առողջությանը այլ վնաս հասցնելը, նրա զոհվելը (մահը):

### **6.5. Վկաների պաշտպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրության ակնարկ<sup>108</sup>**

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ քր.դատ.օր-ի 12 գլխում ամրագրված իրավանորմերով<sup>109</sup>: Այդ իրավական կարգավորումը, սակայն, բնութագրվում է բացերով և հակասություններով: Այսպես, Հայաստանը դեռևս չի ընդունել վկայի պաշտպանության մասին այնպիսի օրենք, որով հստակ կսահմանվեին պետական պաշտպանության սկզբունքները, պետական պաշտպանության մասին օրենսդրությունը, անձանց իրավական պաշտպանության և սոցիալական աջակցության երաշխիքները, հիմքերը և միջոցները, վկային պաշտպանության ծրագրում ներառելու սկզբունքներն ու կանոնները, ֆինանսական և նյութատեխնիկական ապահովման խնդիրները, անհատական, երկկողմ և բազմակողմ պատասխանատվությունը, անձի մահվան, առողջությանը վնաս պատճառելու և հաշմության դեպքում ծագող, փոփոխվող և դադարող քաղաքացիաիրավական հարաբերությունները, պաշտպանությունն ապահովող մարմինների տարանջատման հիմքերը պաշտպանություն իրականացնող մարմիններից, այդ մարմինների՝ դատավարական իրավունքներից և պարտականություններից տարբերվող իրավունքները և պարտականությունները, այլ իրավական ակտերով պաշտպանությանն առնչվող խնդիրները լուծելու տարբերակներն ու բազմաթիվ այլ հարցեր<sup>110</sup>:

Բացի այդ, ՀՀ քր.օր-ը չի պարունակում այնպիսի հատուկ հոդվածներ, որոնցով նախատեսված կլինեն քրեական պատասխանատվություն՝

- քրեական դատավարությանը մասնակցող անձի կամ նրա ընտանիքի անդամի կամ մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ ձեռնարկված պետական պաշտպանության միջոցը չիրականացնելու կամ իրականացնելուց խուսափելու համար, եթե այդ արարքը կատարվել

108 Երևմյան Ա.Վ., Ղամբարյան Ա.Ս. «Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանությունը»: Եր.: 2006, 304 էջ: Այս աշխատությունում ներկայացվում են քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանության միջոցների ձեռնարկման նպատակները, խնդիրները, արգելքները, սահմանափակումները, պարտավորությունների շրջանակը, պաշտպանության միջոցների ներպետական և միջազգային իրավական հիմքերը և այլ հարցեր:

109 ՀՀ քր. դատ. օր-ի 12 գլուխը խմբագրվել է ՀՕ-91-Ն, 20.06.06 ՀՀ օրենքով, ՀՀՊՏ 33/488/28.06.06:

<sup>110</sup> Մանրամասն տես՝ Երևմյան Ա. Արդարադատության հետ համագործակցող անձանց պաշտպանության մասին (հարցի միջազգային-իրավական ասպեկտը): Ազգային Ժողով, 2005, սեպտեմբեր 7, էջեր 26-29:

է այն անձի կողմից, ում վրա է դրվել ձեռնարկված պետական պաշտպանության միջոցն իրականացնելու պարտականությունը,

- քրեական դատավարությանը մասնակցող անձի կամ նրա կամ նրա ընտանիքի անդամի կամ մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ իրականացվող պաշտպանության միջոցների մասին տեղեկությունները ապօրինի հրապարակելու համար, եթե այդ արարքը կատարվել է այն անձի կողմից, ում դրանք վստահվել են չհրապարակելու պայմանով կամ հայտնի են դարձել՝ կապված իրենց ծառայողական պարտականությունները կատարելու հետ,

- վերը նշված արարքների համար, որոնք հանգեցրել են կյանքի կամ առողջության համար վտանգավոր բնության սպառնալիքի առաջացմանը կամ ծանր հետևանքների առաջացմանը<sup>111</sup>:

Չնայած օրենսդրական այդ առանցքային նշանակության բացերին, այնուամենայնիվ, ՀՀ քր. դատ. օր-ը կարող է դիտվել որպես քրեադատավարական հարաբերություններում ներգրավված անձանց անվտանգությունն ապահովելու գործիք:

## **6.6. Վկայի (գոհի) պաշտպանության կարգավորումը**

### **6.6.1. Պաշտպանության ենթակա անձինք**

*ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն յուրաքանչյուր Մասնակից պետություն իր հնարավորությունների սահմաններում պատշաճ միջոցներ է ձեռնարկում՝ ուղղված քրեական վարույթին մասնակցող այն վկաների վերաբերյալ հավանական վրեժից կամ վախեցնելուց արդյունավետ պաշտպանության ապահովմանը, որոնք ցուցմունք են տալիս նույն կոնվենցիայով ընդգրկվող հանցագործությունների կապակցությամբ և, պատշաճ դեպքերում, նրանց հարազատների և նրանց մերձավոր այլ անձանց վերաբերյալ:*

Իրավաբանական գրականությունում պաշտպանության ենթակա անձանց ընդունված է պայմանականորեն դասակարգել երեք խմբի՝

- ա) քրեական դատավարությանը աջակցող անձինք,
- բ) քրեական դատավարության մասնակիցների ազգականներ և մտերիմներ,
- գ) քրեական դատավարություն իրականացնող պաշտոնատար անձինք<sup>112</sup>:

ՀՀ քր. դատ. օր-ի 98 հոդվածի 1-ին մասի համաձայն, քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն


<sup>111</sup> Ճիշտ է, ՀՀ քր. օր-ի 342 հոդվածով քրեական պատասխանատվություն է նախատեսված առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելու համար, սակայն այդ դիսպոզիցիան էապես տարբերվում է քրեական դատավարությանը մասնակցող անձի կամ նրա մերձավոր ազգականի, մերձավորի նկատմամբ իրականացվող պաշտպանության միջոցների մասին տեղեկությունները ապօրինի հրապարակելուց, հատկապես եթե այդ արարքը հանգեցրել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բնության սպառնալիքի կամ ծանր հետևանքների առաջացմանը:

<sup>112</sup> Зайцев О. А. Государственная защита участников уголовного процесса. - М.: Экзамен. 2001. С.44-45.

հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին<sup>113</sup> հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող է վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք:

*Պաշտպանության ենթակա սուբյեկտների դասակարգումը ներկայացված է ստորև:*


## Սխեմա 5



<sup>113</sup> Թեև դա ուղղակի սահմանված չէ, սակայն դրույթը պետք է տարածվի ոչ միայն կատարողի, այլև օժանդակողի, կազմակերպչի և դրոշի վրա:

**6.6.2. Քրեական դատավարությանը աջակցող անձինք**, իրենց հերթին, պայմանականորեն բաժանվում են 4 խմբի: Այդ դասակարգումը ներկայացված է ստորև:

Մխմա 6



Ձեռնարկի սույն գլխի համատեքստում կարևորվում են վերը նշված առաջին, երկրորդ և չորրորդ խմբերը, որոնց կազմերում կարող է հանդես գալ թրաֆիքինգի գոհ-վկան կամ թրաֆիքինգի գործով այլ վկա:

*Առաջին խումբ. սուբյեկտներ, որոնք աջակցում են քրեական դատավարությանը հանցագործության մասին հաղորդումներ ներկայացնելու, բացատրություններ կամ ցուցմունքներ տալու միջոցով*

Առաջին խմբի կազմի մեջ են մտնում հանցագործության մասին հաղորդում ներկայացրած անձր, բացատրություն տվող անձր, տուժողը, վկան, մեղադրյալը, այսինքն քրեադատավարական գործունեության այն սուբյեկտները, ովքեր աջակցում են քրեական դատավարությանը հանցագործության մասին հաղորդումներ ներկայացնելու, ցուցմունքներ կամ բացատրություններ տալու միջոցով: Այսպես, թրաֆիքինգի գոհը այդ դատավարական սուբյեկտների կազմում կարող է

հանդես գալ սկզբում որպես հաղորդում ներկայացրած անձ, այնուհետև՝ որպես բացատրություն տվող անձ, որին հաջորդում է նրան՝ որպես թրաֆիքինգից տուժող ճանաչելի: Հնարավոր է, որ նա կատարի բացահայտումներ այլ անձանց շահագործման նպատակով վաճառելու փաստերով կամ այլ հանցագործությունների կատարման մասին: Այդ դեպքում նա կստանձնի նաև վկայի կարգավիճակ: Այս խմբի կազմում են նաև այն անձինք, ովքեր մեղադրվել կամ դատապարտվել են և համաձայնվել են համագործակցել քրեական արդարադատության մարմինների հետ, օրինակ, մարդկանց առևտրի ոլորտում իրենց մասնակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու միջոցով:


*Երկրորդ խումբ. սուբյեկտներ, որոնք աջակցում են քրեական դատավարությանը քրեադատավարական գործառույթներ իրականացնելու միջոցով*

Այս խումբը կազմում են քաղաքացիական հայցվորը և քաղաքացիական պատասխանողը, պաշտպանը, տուժողի, քաղաքացիական հայցվորի և քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչները, այսինքն քրեադատավարական գործունեության այն սուբյեկտները, ովքեր աջակցում են քրեական դատավարությանը՝ քրեադատավարական գործառույթներ իրականացնելու միջոցով:

*Երրորդ խումբը* կազմում են թարգմանիչը, մասնագետը, փորձագետը, դատական նիստերի քարտուղարը, այսինքն քրեադատավարական գործունեության այն սուբյեկտները, ովքեր աջակցում են քրեական դատավարությանը օժանդակող գործառույթներ իրականացնելու միջոցով:

*Եվ չորրորդ խումբը* կազմում են այն անձինք, ովքեր թեև օժտված չեն համապատասխան քրեադատավարական կարգավիճակով, սակայն ունեն ասպցուցողական բնույթի տեղեկություն: Այս խմբի կազմում կարող է հայտնվել, օրինակ, իր մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով հավաքագրված և, այնուհետև, վճարի դիմաց երրորդ անձի վերահսկողությանը հանձնված այն անձը, ով հրաժարվել է համագործակցել իշխանությունների հետ որպես քրեադատավարական հարաբերությունների սուբյեկտ՝ իրական սպառնալիքը չվերանալու կամ անվտանգությունը չապահովելու պատճառով, սակայն համաձայնվել է հայտնել հանցագործներին բացահայտող տեղեկություններ:

**6.6.3. Քրեական դատավարության մասնակիցների ազգականները և մտերիմները** իրենց հերթին պայմանականորեն բաժանվում են 3 խմբի: Այդ դասկարգումը ներկայացված է ստորև: Այն տարածվում է նաև թրաֆիքինգի վերաբերյալ գործերով որպես տուժող ճանաչված զոհերի կամ վկաների ազգականների և մտերիմների վրա:



*Քրեական դատավարության մասնակցի մերձավոր ազգականներն են* ծնողները, զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ և ոչ հարազատ (համահայր և համամայր) եղբայրները և քույրերը, պապը, տատը, թոռները, ինչպես նաև ամուսինը և ամուսնու ծնողները, վերջիններիս համար՝ փեսան և հարսը (ՀՀ քր. դատ.օր-ի 6 հոդվածի 40-րդ կետ) :

*Քրեական դատավարության մասնակցի մերձավոր ազգականներն են* ազգակցական կապի մեջ գտնվող և մինչև նախապապը կամ նախատատն ընդհանուր նախնիներ ունեցող անձինք (ՀՀ քր. դատ.օր-ի 6 հոդվածի 39-րդ կետ) :

*Քրեական դատավարության մասնակցի մերձավոր է* ցանկացած անձ, ում պաշտպանությունը հայցում է պաշտպանվող անձը: ՀՀ քր.դատ. օր-ի 98 հոդվածի 1-ին մասում տրված «մերձավոր» բառի հասկացությունը կիրառելի է ՀՀ քր.դատ.օր-ի՝ «Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը» վերնագրով 12-րդ գլխով կարգավորվող իրավահարաբերությունների համար: Այլ կերպ ասած, որպես մերձավոր պետք է դիտվի ցանկացած անձ, ով հանգամանքների բերումով պաշտպանություն հայցող անձի մտերիմն է:

Մերձավոր կարող է լինել յուրաքանչյուր ոք, ով քրեական դատավարությունում մասնակցող անձի հետ մտերիմ կապի մեջ է (օրինակ, պաշտպանվող անձի, ընկերը, նրա հետ չգրանցված ամուսնական կամ այլ հարաբերություններում գտնվող անձը և այլն):

Այսպիսով, տուժող ճանաչված թրաֆիքինգի զոհը կարող է հայցել վերը նշված դասակարգմամբ ցանկացած անձի կյանքի, առողջության, գույքի, իրավունքների ու օրինական շահերի պաշտպանություն, որը ՀՀ քր.դատ. օր-ի 98 հոդվածի 3-րդ մասի համաձայն ձեռնարկվում է,

եթե քրեական վարույթն իրականացնող անձը պարզում է, որ այդ անձը պաշտպանության կարիք ունի:

### **6.7. Վկաների պաշտպանության ծրագիր**

Քննարկման ենթակա առաջին հարցն այն է, թե՞ որքանով է զոհը համապատասխանում պետական պաշտպանության Ծրագրում ներառվելու չափանիշներին<sup>114</sup>:

Վկաների պաշտպանության ծրագիրն անհրաժեշտ է կիրառել այն դեպքերում, երբ վկային, օրինակ, թրաֆիքինգից տուժող ճանաչված զոհ-վկային կամ նրա մերձավորներին չպաշտպանելու դեպքում՝ բռնության կամ այլ ծանր հետևանքների իրական կամ հավանական սպառնալիքների ներգործության կամ այլ հարակից պատճառներով, նրանք կարող են խուսափել արդարադատության հետ համագորցակցելուց:

Թրաֆիքինգի զոհերը, որպես կանոն, չեն համապատասխանում վկաների պաշտպանության Ծրագրում ներառվելու չափանիշներին, քանի որ նրանք, սովորաբար, առանց պաշտպանության հատուկ միջոցների կիրառման ի վիճակի են լիարժեք իրականացնել քրեական դատավարության մասնակցի՝ տուժողի դերակատարումը, բացահայտել հիմնական հանցագործներին:

**6.7.1. Իրական կամ հավանական սպառնալիք.** Այն դեպքերում, երբ քրեական վարույթն իրականացնող մարմինը պարզում է, որ անձը պաշտպանության կարիք ունի, այսինքն, երբ պարզվում է, որ քրեական դատավարությանը թրաֆիքինգի զոհի կամ թրաֆիքինգի գործով վկայի մասնակցելու կապակցությամբ կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, պետք է քննարկվի պաշտպանության միջոց ձեռնարկելու հարցը և կայացվի որոշում պաշտպանության միջոց ձեռնարկելու կամ մերժելու մասին (ՀՀ քր.դատ.օր-ի 98 հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասեր): «Պաշտպանության կարիք ունի» արտահայտությունը նշանակում է, որ առկա են նրա կյանքի, առողջության, գույքի, իրավունքների և օրինական շահերի իրական կամ հավանական սպառնալիքներ: Հավանական սպառնալիքի իրագործման հավանականության աստիճանը առանձին դեպքերում կարող է լինել բարձր (օրինակ, երբ թրաֆիքինգից տուժողը պատրաստվում է բացահայտել հանցավոր համագործակցության անդամներին կամ կոռումպացված տարրերին կամ, օրինակ, եթե դատավարությունը իրականացվում է նշանակետ երկրում, որտեղ զոհը միայնակ է և չունի հանցագործներից պատշաճ պատսպարվելու հնարավորություն ու բազմաթիվ այլ դեպքերում):

**6.7.2. Ձեռնարկման ենթակա միջոցների վերաբերյալ համաձայնություն.** Թեև ՀՀ քր. դատ.օր-ի 98 հոդվածի 3-րդ մասում նախատեսված է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին որոշումը կայացվում է պաշտպանության կարիք ունեցող անձի գրավոր դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ, այնուամենայնիվ խորհուրդ է տրվում պաշտպանության ցանկացած միջոց ձեռնակելու համար ստանալ

<sup>114</sup> Անհրաժեշտ է տարանջատել է պաշտպանության ընդհանուր «միջոցները» երկարատև պաշտպանության «ծրագրերից»:

պաշտպանության ենթակա անձի համաձայնությունը և այդ գործելակերպն ընդունել որպես ընդհանուր սկզբունք: Այս դիտարկումը վերաբերում է նաև պաշտպանության լրացուցիչ միջոցների ձեռնարկմանը, կամ մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոփոխելուն: Դրանից հետևում է, որ ընտրված անվտանգության միջոցի (միջոցների) փոփոխությունը կամ լրացումը նպատակահարմար է կատարել պետական պաշտպանության միջոցներ ձեռնարկելու համար սահմանված կարգով: Այդ մոտեցումը պայմանավորված է մի կողմից անվտանգության միջոցների կիրառմամբ անձի անձնական ազատության հնարավոր սահմանափակումների շրջանակը որոշելու անհրաժեշտությամբ, որը պետք է համարժեք լինի սպառնալիքի բնույթին, իսկ մյուս կողմից՝ պետք է համաձայնեցված լինի պաշտպանության ենթակա անձի որոշմամբ և չի կարող կիրառվել առանց այդ անձի կամքի արտահայտման (օրինակ, որոշված պաշտպանվող տարածքը չլքելը, բնակության և աշխատանքի վայրը փոխելը, արտաքինը կամ անհատական տվյալները փոփոխելը և այլն): Պաշտպանվող անձը պետք է ենթարկվի որոշված կանոններին և ռեժիմին, պետք է ստանձնի դրանք չխախտելու պարտավորություններ և պատասխանատու լինի դրանք չկատարելու պատճառով առաջացած հետևանքների համար: Միայն բացառիկ դեպքերում, օրինակ, եթե պաշտպանության ենթակա անձը գտնվում է անգիտակից վիճակում, անվտանգության ապահովման միջոցները կարող են ձեռնարկվել անգամ առանց այդ անձի համաձայնության:

**6.7.3. Պաշտպանության կառուցակարգերը կիրառելու անհրաժեշտության և նպատակահարմարության հարցերը.** Վերը նկարագրված հիմքերով և իմաստով ծագած իրական կամ հավանական սպառնալիքի և պաշտպանության ենթակա անձի համաձայնության առկայության դեպքում քննարկվում են պետական պաշտպանության կառուցակարգերը կիրառելու անհրաժեշտության և նպատակահարմարության հարցերը:

Թրաֆիքինգի վերաբերյալ գործերով պետական պաշտպանության ծրագրում հանցագործության վկային, զոհին ներառելու հարցը քննարկելիս, ինչպես նաև միջոցը (միջոցները) ձեռնարկելիս և իրականացնելիս խորհուրդ է տրվում հաշվի առնել՝

- ա) այն արարքի բնույթը և ծանրության աստիճանը, որին վերաբերում է պաշտպանվող անձի ցուցմունքը կամ ապացուցողական նշանակություն ունեցող այլ նյութը,
- բ) ցուցմունքի կամ ապացուցողական նշանակություն ունեցող այլ նյութի բնույթը և կարևորությունը,
- գ) պաշտպանվող անձի նկատմամբ իրական կամ հավանական սպառնալիքի բնույթը,
- դ) պաշտպանության ծրագրում ներառելու համար դիտարկվող մեկ այլ անձի հետ տվյալ պաշտպանվող անձի հարաբերությունների բնույթը,
- ե) պաշտպանվող անձի հոգեբանական, հոգեբուժական կամ այլ գնահատման կամ գննության արդյունքները, որն անցկացվել են պաշտպանության ծրագրում նրա պիտանիությունը որոշելու և նրան այդ ծրագրում ներառելու համար,
- զ) պաշտպանվող անձին ՀՀ օրենքներով նախատեսված՝ պաշտպանության այլ հիմնական նպատակներով պաշտպանելու ոչ բավարար լինելու հանգամանքը,



է) պաշտպանվող անձին պաշտպանության ծրագրում ներառելու հանրային վտանգավորության աստիճանը՝ կապված նրա դատվածության հետ, հատկապես՝ բռնությամբ կամ բռնության սպառնալիքով կատարված հանցագործությունների պարագայում,

ը) այլ հանգամանքներ, որոնք կարող են էապես անդրադառնալ ձեռնարկվող և իրականացվող պետական պաշտպանության արդյունավետության վրա:

Ինչպես նրևում է առաջարկվող չափանիշներից, ուշադրություն պետք է դարձվի ոչ միայն վկայի (օրինակ՝ թրաֆիքինգի զոհի) անվտանգության ապահովմանը, այլև ծրագրում նրա մասնակցության հնարավոր արդյունավետությանը և ազդեցությանը:

Պետք է հաշվի առնել, որ անազատությունից ազատվելուց հետո թրաֆիքինգի զոհը չի ցանկանա կրկին հայտնվել ազատությունը սահմանափակող իրավիճակում, և որ նրա անվտանգության ապահովման միջոցները, որպես կանոն, կրում են սահմանապակող բնույթ: Այդ սահմանափակումները, սովորաբար, վերաբերում են ազատ տեղաշարժվելուն և ազատորեն որոշումներ կայացնելուն: Դա կարող է բացասաբար ազդել զոհի՝ իշխանությունների հետ համագործակցելու գործընթացի վրա:

#### *Ռ-իսկի գնահատումը*

Երբ թրաֆիքինգի զոհը ձեռք է բերում վկայի/տուժողի կարգավիճակ, ռիսկայնության գործոնը մեծանում է: Այն պետք է անհապաղ գնահատվի, քանի որ անհրաժեշտ է կենտրոնանալ ոչ միայն զոհի անվտանգության, այլև ապաստանում բնակվող այլ զոհերի և ապաստանում աշխատող անձնակազմի անվտանգության հարցերի վրա: Գնահատումը պետք է հաշվի առնի առնվազն հետևյալ գործոնները՝

- թրաֆիքինգի համատեքստում երկրում ձևավորված տիպային ռիսկը,
- տվյալ զոհի առնչությամբ կոնկրետ ռիսկը (խոցելիությունը, տարիքը, անվտանգության կանոնները պահպանելու ունակությունը և այլն),
- կասկածյալների, մեղադրյալների հետ կապված կոնկրետ ռիսկը (կազմակերպված խումբ, հանցավոր համագործակցություն, օպերատիվ տվյալներ սպասվող կամ հնարավոր ոտնձգության և դրա բնույթի մասին),
- ապաստանի, դրա տարածքների, ինչպես նաև ապաստանի աշխատակիցների համար ռիսկի աստիճանը, անվտանգության ընթացիկ միջոցները:

Ռ-իսկի աստիճանը գնահատելուց հետո անհրաժեշտ է գնահատել ռիսկի աստիճանը կառավարելու պաշտպանական միջոցները:

Եթե պարզվում է, որ թրաֆիքինգի զոհը համապատասխանում է Ծրագրի չափանիշներին, պետք է կայացվեն պաշտպանության միջոց(ներ) ձեռնարկելու և իրականացնելու մասին որոշումներ: Անվտանգության միջոցները կարող են ներառել ֆիզիկական անվտանգությունը, այլ բնակավայր տեղափոխելը, անձի տվյալները փոփոխելը, աջակցությունը աշխատանքի տեղավորվելու հարցում: Կիրառման ենթակա միջոցները յուրաքանչյուր դեպքում կարող են տատանվել, օրինակ, թիկնապահների միջոցով հատուկ պաշտպանվող շինությունում շուրջօրյա

պաշտպանությունից մինչև անկանխատեսելի հանգամանքների դեպքում հաստատուն հեռախոսակապ տրամադրելը:

ՀՀ քր. դատ. օր-ի 98<sup>1</sup> հոդվածի 3-րդ մասի համաձայն «Պաշտպանության միջոցների իրականացման կարգն ու պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ»<sup>115</sup>:

**6.7.4. Պաշտպանության իրականացման ժամանակահատվածը.** ՀՀ քր. դատ. օր-ի 99<sup>1</sup> հոդվածի 1-ին մասը սահմանում է պաշտպանության միջոցների դադարեցման հիմքերը, որի համաձայն պաշտպանության միջոցների իրականացումը կարող է դադարեցվել, եթե պաշտպանվող անձը՝

- 1) այդ մասին ներկայացրել է գրավոր դիմում,
- 2) տվել է կեղծ ցուցմունք, որը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով,
- 3) չի կատարել նույն օրենսգրքի 99-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պարտականությունները,
- 4) այլևս պաշտպանության կարիք չունի՝ իր կյանքին կամ անվտանգությանը սպառնացող իրական վտանգը վերանալու պատճառով,
- 5) մահացել է:

Այս դրույթից հետևում է, որ պետական պաշտպանության հատուկ միջոցների կիրառման ժամանակային սահմանները կարող են և չհամընկնել քրեական դատավարության ժամանակային սահմանների հետ: Ժամանակահատվածը, որի ընթացքում պաշտպանող միջոցները պետք է իրականացվեն, պայմանավորված է կոնկրետ անձանց նկատմամբ իրական կամ հավանական սպառնալիքով: Պաշտպանության հատուկ միջոցների կիրառման հարցը չպետք է կախված լինի քրեադատավարական գործունեության ավարտման հանգամանքից: Պետք է հաշվի առնել, որ պաշտպանության անհրաժեշտությունը կարող է ծագել, շարունակվել կամ վերանալ գործի քննության մինչդաստական, դատական կամ հետդատական փուլերում: Օրինակ, պետական պաշտպանության մի շարք միջոցներ, որոնք կիրառվել են մինչև դատավճռի կայացումը, օբյեկտիվորեն շարունակում են կամ կարող են շարունակել գործել նաև քրեական դատավարության ավարտից հետո, իսկ առանձին դեպքերում դրանք գործում են անժամկետ, օրինակ՝ բնակության վայրը կամ արտաքինը փոխելը<sup>116</sup>: Թրաֆիքինգի զոհի ինքնությունը հաստատող փաստաթղթերի փոխարինումը, օրինակ, գործում է այնքան ժամանակ, քանի դեռ օրենքով սահմանված հիմքերով և կարգով պաշտպանության այդ միջոցը չի վերացվել, անգամ եթե հանցագործները դատապարտվել և արդեն կրել են պատիժը:

<sup>115</sup> Ենթադրվում է, որ այդ օրենսդրությամբ պետք է մանրամասնվեն ինչպես պաշտպանության Ծրագրում ընդգրկվելուն վերաբերող, այնպես էլ պաշտպանության առանձին միջոցների իրականացմանն առնչվող կարգն ու պայմանները:

<sup>116</sup> Брусницын Л.В. Правовое обеспечение безопасности лиц, содействующих уголовному правосудию. - М.: Спарк, 1999. С. 28.

## **6.8. Չոհերի նկատմամբ վերաբերմունքի սկզբունքները**

Այն պնտություններում, որտեղ վկայի պաշտպանության ինստիտուտը արդյունավետ կիրառվում է, պնտական մարմինները և ոչ պնտական կազմակերպությունները ձեռք են բերել հարուստ փորձ, քաղել են դասեր, մշակել համապատասխան սկզբունքներ, որոնք նպաստում են ինչպես պաշտպանվող անձի անվտանգության աստիճանի բարձրացմանը, այնպես էլ նրանց՝ իշխանությունների հետ համագործակցության արդյունավետության գործակցի բարձրացմանը և հանցագործությունների բացահայտման հնարավորությունների ավելացմանն ու քրեական գործերով արդարադատության իրականացմանը: Ստորև ներկայացված սկզբունքների կիրառումը, որպես կանոն, նպաստում է քրեական արդարադատության իրականացմանը:

*Չոհի անվտանգությունը* վերջինիս՝ իշխանությունների հետ համագործակցության նախադրյալներից է: Այս հարցում կարևորվում է ռիսկերի գնահատումը: Նկատենք, որ հնարավոր չէ նրաշխարհել վկայի (օրինակ, թրաֆիքինգի զոհի) հարյուր տոկոսանոց անվտանգություն, սակայն պնտ է հասնել անվտանգության ապահովման առավել բարձր աստիճանի: Անհրաժեշտ է, օրինակ, հնարավորինս վերացնել թրաֆիքինգ իրականացնող անձանց և վկայի հաղորդակցվելու հնարավորությունը կամ, օրինակ, բացառել վկայի գտնվելու վայրի մասին հանցագործների տեղեկացվածությունը: Անհրաժեշտ է պաշտպանվող անձի հետ կառուցել ազնիվ հարաբերություններ և տեղեկացնել նրան բոլոր հնարավոր վտանգների ու դրանցից պաշտպանվելու եղանակների մասին:

*Գրավոր համաձայնությունը* կարող է ծառայել մի կողմից վստահության մթնոլորտի ձևավորմանը, իսկ մյուս կողմից պաշտպանել վարույթն իրականացնող անձին և պաշտպանության միջոցներն իրականացնողներին անհատական տվյալների պաշտպանության և դրանց գաղտնիության պահպանման հարցերում:

*Քննիչի անփոփոխությունը* կարևորվում է այն իմաստով, որ նա քրեական արդարադատության համակարգի և զոհի կապող օղակն է, հատկապես այն դեպքերում, երբ չեն ներգրավվել զոհին աջակցություն տրամադրող մեխանիզմները (օրինակ, հասարակական կազմակերպություններ):

*Նախորդակցվելու արձանագրությունները* այն գրառումներն են, որոնք ամրագրում են զոհի հետ քննիչի և այլ անձանց ու կառույցների ցանկացած շփումները, ներառյալ տեսակցությունները, հեռախոսային խոսակցությունները, էլեկտրոնային միջոցներով կամ երրորդ անձանց միջոցով հաղորդակցումը: Ոչ կառավարական կազմակերպությունները և սոցիալական աջակցության այլ կառույցները, որպես կանոն, վարում են նման արձանագրություններ: Խորհուրդ է տրվում արձանագրել թրաֆիքինգի զոհին հասցեագրված բոլոր ցուցումները անվտանգության միջոցների մասին, ապացույցները այլ անձանց հետ քննարկելու սահմանափակման մասին, զոհի հետ կապված ծախսերի մասին տվյալները և այլն: Նման գրառումները օգտակար են այն դեպքերում, երբ պնտական պաշտպանության միջոցների օրինականությունը կամ համաչափությունը հետագայում վիճարկվում են դատաքննության ընթացքում:

Համագործակցությունը այլ կառույցների հետ նպաստում է թրաֆիքինգի գոհի անձնական անվտանգության ապահովմանը և նրանց առողջական ու սոցիալական վերականգնմանը: Դա գոհի հայրենադարձության կամ հասարակությունում վերաինտեգրման նախադրյալներից մեկն է:

Այսպես, «Հայաստանում թրաֆիքինգի զոհերին ցուցաբերված աջակցությունը» վերնագրված գրքույկում ներկայացված են Հայաստանում գործող տուժողների աջակցության կենտրոն / ապաստաններից ստացված տվյալները: Ըստ վերլուծության, թրաֆիքինգի զոհերի շուրջ 50 տոկոսը օգտվել է տուժողների աջակցության կենտրոնի, իսկ մնացածը՝ ապաստանների ծառայություններից<sup>117</sup>: Այդ կառույցներում զոհերի գերակշռող մասը համաձայնվել և ստացել է հոգեբանական և սոցիալական խորհրդատվություն և աջակցություն, իրավաբանական և բժշկական օգնություն: Իրավաբանական օգնությունը ներառել է դատավարական օգնությունը, հաշմանդամության կամ սոցիալական նպաստի համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը, աջակցությունը նոր անձնագիր ստանալու և զինվորական հաշվառման կանգնելու հարցերում: Բժշկական հետազոտություններով պարզվել է, որ թրաֆիքինգի զոհերի շրջանում ախտորոշված հիվանդությունների գերակշռող մասը կազմում են սեռական ճանապարհով փոխանցվող և զինվորագրական հիվանդությունները: Նման աջակցության և օգնության արդյունքում թրաֆիքինգի զոհերը ֆիզիկապես և հոգեպես ամրապնդվում են և նախապատրաստվում են մասնակցելու դատավարությանը<sup>118</sup>: Այլ երկրների պրակտիկայում կուտակված փորձը, սակայն, վկայում է, որ տաժանակիր պայմաններում սեռական կամ աշխատանքային շահագործման ենթարկված անձանց ցուցաբերված հոգեբանական և նյութական աջակցությունը կարող է վերածվել շահարկման առարկայի, երբ պաշտպանության կողմը փորձում է կասկածի տակ դնել գոհի (տուժողի) ցուցմունքների հավաստիությունը և ապացուցել, որ այդ ցուցմունքները հոգեբանական և նյութական աջակցության ակնկալիքի արդյունք են: Այդ պատճառով թրաֆիքինգի գոհի հոգեբանին, օրինակ, պետք է կողմնորոշել, թե ինչ բնույթի կարող է լինել աջակցությունը, և որ այն չպետք է պայմանավորված լինի գոհի ներկայացրած ապացույցներով: Ցանկալի է, որ նյութական աջակցություն ցուցաբերող կառույցը իրականացնի այդ աջակցության հաշվառում:

*Պաշտպանվող անձի անձնական «պատասխանատվությունը»* կառուցվում է այն պարտավորությունների շրջանակում, որոնք ստանձնում է պաշտպանվող անձը, օրինակ, թրաֆիքինգի զոհը, ով քրեական դատավարությունում հանդես է գալիս որպես տուժող և կարող է հաղորդել կամ համաձայնվել է հաղորդել կամ հաղորդել է կատարված կամ նախապատրաստվող թրաֆիքինգի կամ այլ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին տվյալներ, որոնք նշանակություն ունեն այդ հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու գործում: ՀՀ քր. դատ. օր-ի 99 հոդվածի 2-

<sup>117</sup> Մանրամասն՝ «Հայաստանում թրաֆիքինգի զոհերին ցուցաբերված աջակցությունը», Երևան, 2007թ., էջ 29:

<sup>118</sup> Նույնը, էջ 31-37:

րդ մասը սահմանում է պաշտպանվող անձի պարտականությունների շրջանակը, որի համաձայն պաշտպանության ներքո գտնվող անձը պարտավոր է՝

1) կատարել քրեական վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձի օրինական պահանջները,

2) քրեական վարույթն իրականացնող մարմնին անհապաղ տեղյակ պահել իրեն սպառնացող վտանգի կամ հակաիրավական գործողության յուրաքանչյուր դեպքի, իր անձնական կյանքում և գործունեության մեջ տեղի ունեցած ցանկացած փոփոխության մասին,

3) խուսափել որևէ գործունեությունից, որը կարող է խոչընդոտել պաշտպանության միջոցի արդյունավետ կիրառմանը,

4) պահպանել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից ժամանակավոր օգտագործման համար իրեն հանձնված գույքը և փաստաթղթերը:

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությանը վերաբերող ՀՀ քր. դատ. օր-ի կամ որևէ այլ օրենքի դրույթները հստակ չեն տարանջատում պաշտպանությունն իրականացնող մարմինները գործի քննության ու քրեական հետապնդման համար պատասխանատու մարմիններից, որոնց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության հիմքերը պետք է էապես տարբերվեն: Նման տարանջատման դեպքում պաշտպանության ներքո գտնվող անձը ՀՀ քր. դատ. օր-ի 99 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերում նշված պարտականությունները կատարելիս պարտավոր կլինեն համագործակցել ոչ միայն «քրեական վարույթն իրականացնող» մարմնի, այլև «պետական պաշտպանությունն ապահովող» մարմնի հետ: Իրականում պաշտպանության միջոցներ ձեռնակելու մասին որոշում ընդունող և անվտանգությունը փաստացի ապահովող (իրականացնող) մարմինները տարբեր են: Պրակտիկայում կարևորվում է, որ թրաֆիքինգի գոհը՝

- պահպանի պաշտպանության Ծրագրի կամ պաշտպանության միջոցի կիրառման համար նախատեսված բոլոր կանոնները,

- եթե գտնվում է ապաստանում, ապա պահպանի այդ կառույցի ներքին կանոնները,

- լինի զգուշավոր մարդկանց հետ շփումներում,


- լինի զգուշավոր ընտանիքի անդամների, ազգականների կամ մտերիմների հետ հարաբերություններում, եթե նման շփումները կարող են բացահայտել իր գտնվելու վայրը,

- չբացահայտի իր գտնվելու վայրի կամ հաղորդակցման միջոցների մասին տեղեկությունները,

- խուսափի այն վայրերը այցելելուց, որտեղ կարող են գտնվել հանցագործներ/կասկածյալներ կամ նրանց ընկերները կամ հանցագործների մտերիմները,

- խուսափի այնպիսի արարքներ կատարելուց կամ այնպիսի իրավիճակներում հայտնվելուց, որոնց արդյունքում, թեկուզ օրինական հիմքերով և կարգով, կարող է բացահայտվել կամ պարզվել իր ինքնությունը (օրինակ, իրավախախտման համար ոստիկանությունում հայտնվելը):

Ստորև բերված սխեման ներկայացնում է թրաֆիքինգի գոհի վարքագծի տարրական կանոնները:



**6.9. Պաշտպանության հատուկ միջոցներ**

**6.9.1. Վկայի և պաշտպանության կողմի շահերի հավասարակշռությունը.** Եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն, բոլոր ապացույցները պետք է ներկայացվեն հրապարակային դատական լսման ընթացքում, մեղադրյալի ներկայությամբ՝ մրցակցությունն ապահովելու նպատակով: Արդարացի դատաքննության սկզբունքները պահանջում են նաև, որպեսզի հարիր դեպքերում պաշտպանության կողմի շահերը համադրվեն այն վկաների կամ գոհների շահերի հետ, որոնք դատարան են կանչվել ցուցմունք տալու համար: Այս սկզբունքից բացառությունները որևէ կերպ չպետք է վնասեն պաշտպանության իրավունքը:

*Դոուրսենն ընդդեմ Նիդեռլանդների* գործում Եվրոպական Դատարանը եկել է հետևյալ եզրակացության. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածն (արդար դատաքննության իրավունք) իրականում ուղղակիորեն չի պահանջում, որ հաշվի առնվեն ցուցմունքներ տալու համար

կոչված վկաների շահերն ընդհանրապես և զոհերի շահերը՝ մասնավորապես: Այնուամենայնիվ, կարող են սպառնալիքների ենթարկվել անձի կյանքը, ազատությունը և անվտանգությունը որպես նրա շահեր, ինչն ամբողջությամբ ներառվում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածում<sup>119</sup>: Վկաների և զոհերի այդպիսի շահերն իրենց հիմքում պաշտպանվում են սույն Կոնվենցիայի իրավունքի այլ նյութական նորմերով, որոնք ենթադրում են, որ մասնակից-պետությունները պարտավոր են այնպես կազմակերպել իրենց քրեական դատավարությունը, որպեսզի այդ շահերը չենթարկվեն անարդարացի ռիսկի: Այդ առումով արդար դատավարության սկզբունքները նաև պահանջում են, որպեսզի համապատասխան դեպքերում պաշտպանության կողմի շահերը հավասարակշռվեն ցուցմունքներ տալուն կոչված վկաների կամ զոհերի շահերի հետ»:

Այդ հավասարակշռությանը կարելի է հասնել պաշտպանության հատուկ միջոցների կիրառմամբ, որոնք կարող են գուգորդվել քրեադատավարական այլ գործիքների կիրառմամբ, ինչպիսիք են դռնփակ դատական քննություն անցկացնելը, տեսալսողական տեխնոլոգիաների կիրառումը և քրեադատավարական այլ ինստիտուտները:

Սույն ձեռնարկի նպատակային ուղղվածությունից ելնելով, ստորև համառոտ կներկայացվի քրեական դատավարությանը մասնակցելու կապակցությամբ ծագած սպառնալիքներից վկաների, զոհերի և այլ մասնակիցների պաշտպանության՝ Հայաստանում ձևավորված համակարգը: Մանրամասն կներկայացվեն միայն այն ինստիտուտները, որոնց կիրառումը թրաֆիքինգի վերաբերյալ գործերով դատավարական պրակտիկայում թեև արդյունավետ է, սակայն գուգորդվում է բազմաթիվ բարդությունների հետ<sup>120</sup>:


Ստորև բերված սխեմայի օգնությամբ ներկայացվում է քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանության միջոցների համակարգը (ըստ իրավական կարգավորման առանձնահատկությունների և պաշտպանության միջոցների բնույթի):

---


<sup>119</sup> Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածն (մասնավոր և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) արգելում է հանրային իշխանությունների միջամտությունը այդ իրավունքի իրականացմանը, սահմանելով այդ սկզբունքից հնարավոր և թույլատրելի բացառությունների հիմքերը, պայմանները, նպատակները և ձևը:

<sup>120</sup> Վկաների, տուժողների և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանց պետական պաշտպանության միջոցների դասակարգմանը, հատուկ միջոցների ձեռնարկման և իրականացման հիմնախնդիրներին, քրեաիրավական և քրեադատավարական միջոցների կիրառման կարգին և արդյունավետությանը կարելի է ծանոթանալ «Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանությունը» վերտառությամբ աշխատությունում:

6.9.2. ՀՀ Պետական պաշտպանության միջոցների համակարգը



ՀՀ քր.դատ.օր-ի 12-րդ գլխում նախատեսված պաշտպանության հատուկ միջոցները պայմանականորեն դասակարգվում են 3 խմբի





**6.9.3. Անանուն վկայությունների ինստիտուտը կամ, այլ կերպ ասած, պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունն** իրենից ներկայացնում է այնպիսի մի միջոց, որի կիրառմամբ մի կողմից պետք է ապահովվի քրեական դատավարությանը մասնակցելու կապակցությամբ ծագած սպառնալիքից պաշտպանվող անձի (վկայի, տուժողի) անվտանգությունը, իսկ մյուս կողմից՝ դա չպետք է վնասի պաշտպանության կողմի արդար դատաքննության իրավունքի իրականացմանը:

Պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանության դեպքում էականորեն սահմանափակվում է մեղադրյալի պաշտպանության իրավունքը ոչ միայն այն պատճառով, որ չեն բացահայտվում պաշտպանվող անձի մասին տվյալները, այլև այն պատճառով, որ կարող է գաղտնի պահվել պաշտպանվող անձի կողմից ներկայացված ապացույցների բովանդակությունը: Ուստի պաշտպանության այս միջոցի ընտրությունը պետք է կիրառվի բացառիկ դեպքերում, երբ պաշտպանվող անձի կյանքին, առողջությանը սպառնում է իրական վտանգ: Անթույլատրելի է, օրինակ, պաշտպանության այս միջոցը ձեռնարկել տակտիկական նկատառումներով:

*Վիսսերն ընդդեմ Նիդեռլանդների գործով* (14.02.2002թ.) Եվրոպական դատարանը արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետի խախտում, նշելով հետևյալը. «Վերաքննիչ դատարանը չի ստուգել այն պատճառների լրջությունը և բավարար հիմնավորվածությունը, որոնց հիման վրա վկայի անձը չի բացահատվել: Բացի այդ, դիմումատուի մեղավորությունը առավելապես ապացուցվել է անանուն վկայի կողմից ներկայացրած ապացույցների հիման վրա»<sup>121</sup>: Ըստ այս նախադեպային որոշման, եթե գործի հանգամանքներից երևում է, որ պաշտպանվող անձի ներկայացրած ցուցմունքները կամ այլ ապացույցները մեղադրյալի մեղավորության մասին վկայող միակ ապացույցն են, կամ մեղադրանքը առավելապես հիմնված է այդ ապացույցների վրա, ապա վարույթն իրականացնող մարմինը պետք է թույլատրի մեղադրյալին՝ ծանոթանալու առանձնացված նյութերին:

ՀՀ քր.դատ.օր-ի 98<sup>3</sup> հոդվածի համաձայն, պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունն իրականացվում է՝

1) քրեական գործի նյութերում և այլ փաստաթղթերում կամ տեղեկություններ պարունակող կրիչներում, ինչպես նաև քննչական գործողությունների կամ դատական նիստերի արձանագրություններում<sup>122</sup> անձի մասին տեղեկությունների սահմանափակումով՝ վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ քրեական գործում առկա արձանագրային տվյալներում պաշտպանվող անձի ազգանունը, անունը, հայրանունը կեղծանուններով փոխարինելու միջոցով:

2) պաշտպանվող անձի մասին տեղեկություններ հանձնելու վրա ժամանակավոր արգելք դնելով:

<sup>121</sup> Путеводитель о прецедентной практике Европейского суда по правам человека за 2002 года./ Науч. ред. – сост. Берестнев Ю.Ю., Виноградов М.В. пер. с англ. Власихин В.А. М.: 2004. С. 84.

<sup>122</sup> Նշենք, որ պրակտիկայում կարող է հարց ծագել, թե որոնք են «քրեական գործի նյութերը», «քննչական և դատական գործողության արձանագրությունները», «այլ փաստաթղթերը»: Այդ հարցերի պատասխանները պետք է փնտրել ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 3-րդ կետում, 121-րդ և 122-րդ հոդվածներում:

«Պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները» անհատական տվյալներ են: Անհատական տվյալը նյութական կրիչի վրա գրավոր կամ այլ կերպ ամրագրված՝ ֆիզիկական անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին ցանկացած տվյալ է այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնացնել անհատի ինքնությունը<sup>123</sup>: Դա, ըստ էության, անանուն վկայությունների ինստիտուտ է, երբ օրենքով սահմանված կարգով գաղտնի են պահվում, օրինակ, թրաֆիքինգի գոհի ինքնությունը հաստատող տվյալները (ազգանունը, անունը, հայրանունը), իսկ գործի համար նշանակություն ունեցող տվյալները նրանից ստացվում են այնպես, որ բացառվի անձի ինքնության ճանաչումը: Այդ կանոնը վերաբերում է նաև դատական փուլում գործի քննությանը, երբ առանց պաշտպանվող անձի ինքնությունը հրապարակելու (ՀՀ քր. դատ. օր-ի 98<sup>13</sup> հոդված) կատարվում է հարցաքննություն:

Թեև ՀՀ քր. դատ. օր-ի 98<sup>3</sup> հոդվածում նշվում է միայն պաշտպանվող անձի ազգանունը, անունը և հայրանունը կեղծանուններով փոխարինելու մասին, սակայն անձի ինքնությունը հաստատող տեղեկություններ կարող են լինել նաև բնակության, աշխատանքի և կրթության վայրի մասին տվյալներում կամ, օրինակ, այնպիսի այլ տվյալներում, որոնք կարող են նպաստել անձի նույնացմանը:

Թրաֆիքինգի գործով վկան կամ գոհը հարցաքննության ընթացքում հաճախ հաղորդում է այնպիսի տեղեկություններ, որոնց մասին կարող է իմանալ միայն մեկ անձ: Նշված տեղեկությունները քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրության մեջ նշելը հնարավորություն է ընձեռում նույնականացնել վկա կամ գոհ պաշտպանվող անձին: Դրանից խուսափելու նպատակով թրաֆիքինգի գործով պաշտպանության տակ վերցված վկայից կամ գոհից յուրաքանչյուր դեպքում պետք է պարզել, թե՞ հաղորդած որ տեղեկություններն են հայտնի միայն իրեն: Արդյունքում հնարավոր կլինի որոշել այդ տեղեկությունների նշանակությունը գործի համար և դրանք արձանագրության մեջ ամրագրելու անհրաժեշտությունը: Այդ դեպքերում անձի ինքնությունը հաստատող նման տեղեկություններ պարունակող քրեական գործի նյութերը և այլ փաստաթղթերը կամ տեղեկություններ պարունակող կրիչները, ինչպես նաև քննչական գործողությունների կամ դատական նիստերի արձանագրություններն անհրաժեշտ է առանձնացնել քրեական գործի մյուս նյութերից և պահել վարույթն իրականացնող մարմնի մոտ: Նախաքննության ավարտին դատավարությանը մասնակցող անձինք չեն կարող ծանոթանալ առանձնացված նյութերին:

ՀՀ քր. դատ. օր-ի 98<sup>3</sup> հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, օրինակ, մեղադրական եզրակացությունում պաշտպանվող անձի անունը, ազգանունը և հայրանունը փոխարինվում են կեղծանվամբ: Բացի այդ, պաշտպանվող անձի հարցաքննությունը կարող է կատարվել դատական նիստերի դահլիճից ամբաստանյալի և պաշտպանության կողմի ներկայացուցիչներին հեռացնելուց հետո: Անհրաժեշտության դեպքում պաշտպանվող անձի հարցաքննությունը կարող է կատարվել այնպիսի պայմաններում, որ բացառվի անձի

<sup>123</sup>«Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված: Տե՛ս ՀՀՊՏ, 2002/49 (224), 14.11.02:

ինքնության ճանաչումը: Այդ նպատակով կարող են օգտագործվել դիմակ, շպար, պաշտպանվող անձի ձայնը փոփոխող սարք և օրենքին չհակասող պաշտպանության այլ միջոցներ: Պաշտպանվող անձի հարցաքննությունը, առանց դատավարության մյուս մասնակիցների ակներև տեսանելիության, կարող է կատարվել տեսաձայնային և տեխնիկական այլ միջոցների (շղարշ, պաշտպանիչ էկրան, թաղանթ) օգնությամբ՝ դատավարության սահմանափակ շրջանակով մասնակիցների մասնակցությամբ՝ գաղտնիության պահպանման մասին նախազգուշացնելով: Բացառիկ դեպքերում դատարանը կարող է պաշտպանվող անձին ազատել դատական նիստին մասնակցելու պարտականությունից՝ նրա կողմից նախկինում տրված ցուցմունքների գրավոր հաստատման առկայության դեպքում:

*Առերևույթ և պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունը.* Պետք է հաշվի առնել, որ երբ սահմանափակվում են ինչպես պաշտպանվող անձի տվյալները, այնպես էլ քննչական գործողության արձանագրությունների բովանդակությունը, ապա դա էականորեն սահմանափակում է մեղադրյալի պաշտպանության իրավունքը, ուստի նման դեպքում բարձրանում է մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման նպատակով պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների բացահայտման անհրաժեշտության հավանականությունը: Պաշտպանության կողմն այդ առումով կարող է ձեռնարկել տարբեր միջոցներ, որոնց նպատակն է բացահայտել վկայի ինքնությունը:

ՀՀ քր.դատ.օր-ի 216 հոդվածի 1-ին մասի համաձայն, քննիչը պարտավոր է կատարել առերևույթ, եթե էական հակասություններ կան մեղադրյալի և մեկ այլ անձի ցուցմունքներում: Այդ դեպքում առերևույթ սկզբում ճշտվում է, թե արդյոք անձինք, որոնց միջև կատարվում է առերևույթ, ճանաչում են իրար և ինչպիսի հարաբերությունների մեջ են միմյանց հետ: Փաստորեն, մեղադրյալի և քրեական դատավարության այլ մասնակցի ցուցմունքների միջև էական հակասություն առաջանալու դեպքում քննիչը պարտավոր է անցկացնել առերևույթ: Այդ կարգը հակասում է պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանության կանոններին: Հետևություն. անհրաժեշտ է մանրակրկիտ քննությամբ հնարավորինս բացառել հնարավոր այն էական հակասությունները, որոնք կարող են ծագել մեղադրյալի և թրաֆիքինգի գործով այն վկայի (գոհի) ցուցմունքների միջև, որի նկատմամբ որպես պաշտպանության միջոց ձեռնարկվել է նրա ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունը: Եթե, այնուամենայնիվ, անհրաժեշտ է կատարել, ապա այդ դեպքում նպատակահարմար է կատարել հեռահարցաքննություն: Այս դեպքում պաշտպանվող անձը ֆիզիկապես ներկա չի լինում առերևույթ, չի բացահայտվում այն վայրը, որտեղից նա ցուցմունք է տալիս, սակայն մեղադրյալը հնարավորություն է ունենում տեսնել նրան, տալ հարցեր և անմիջականորեն լսել նրա պատասխանները:

*6.9.4. Պաշտպանվող անձի անվտանգության ապահովման միջոցներն են նաև* ՀՀ քր.դատ.օր-ի 98<sup>1</sup> հոդվածով նախատեսված պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը կամ գույքը պահպանելը, պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը, պաշտպանվող անձի աշխատանքային, ծառայության կամ ուսման վայրը փոխելը, ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը: Միջոցի կամ միջոցների ընտրությունը, ձեռնարկումը և իրականացումը յուրաքանչյուր դեպքում լուծվում է պաշտպանվող անձի անվտանգության ապահովման և արդար դատավարության ապահովման նպատակներով, այն պետք է լինի համաչափ սպառնալիքին և ապահովի պաշտպանության կողմի իրավունքների իրականացումը:

## ԳԼՈՒԽ 7

### Թրաֆիքինգ իրականացրած անձանց պատասխանատվության և պատժի հիմնահարցերը

#### 7.1. Թրաֆիքինգ իրականացրած անձանց բնութագիրը

Այս հանցագործությունը կատարողների շրջանակը լայն է և տարբեր: Որոշ դեպքերում նրանք միջազգային կազմակերպված հանցավոր այնպիսի խմբերի մաս են կազմում, որոնք կարող են մասնագիտացած լինել նաև զենքի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ: Այլ դեպքերում դրանք փոքր խմբեր են: Չոհերից ոմանք որոշակի պահի կարող են իրենք զբաղվել թրաֆիքինգով՝ չտեսնելով կյանքում այլ հնարավորություն:<sup>124</sup>

Թրաֆիքինգի կազմակերպման գործընթացին մասնակցում են իրենց կառուցվածքով ու խնդիրներով տարբեր հանցավոր խմբեր: Ոմանք իրենք են կազմավորում այդ շղթայի մեկ օղակը, այլոք առավել կազմակերպված խմբեր են, որոնք կարգավորել են իրենց հանցավոր կապերն ու մասնագիտանում են որևէ կոնկրետ երկրից մյուսը մարդկանց տեղափոխման գործում, և առկա են միջազգային քրեական խոշոր ցանցեր, որոնք տիրապետում են խիստ կարգավորված համակարգերի և կարող են ինքնուրույն ապահովել ամբողջ գործընթացի իրականացումը՝ ներառյալ տուժողների անօրինական փաստաթղթերի ապահովումը, սահմանի անցումը, տարանցիկ կետերում և ժամանման երկրներում տեղավորումը և այլն:

Գրականության մեջ տրված են թրաֆիքինգով զբաղվող հանցավոր խմբերի դասակարգման տարբեր հիմքեր: Ըստ կազմակերպվածության աստիճանի կազմակերպված հանցավորությամբ զբաղվող խմբերի կառուցվածքը պայմանականորեն կարելի է բաժանել երեք մակարդակի՝ բարձր, միջին և ցածր:

*Բարձր մակարդակ.* այս խմբերը սովորաբար վերահսկում են բարդ միջազգային թրաֆիքինգը: Նրանք առևտրային հարաբերություններ են հաստատում այլ բարձր մակարդակի խմբերի հետ (նույն երկրում կամ այլ երկրներում), և համագործակցում են թրաֆիքինգի ենթարկված անձանց փոխանակման գործում: Այս խմբերը կապվում են միջին մակարդակի խմբերի, օրինակ՝ ապօրինի ծառայություններ մատակարարողների հետ, և ամրագրում են իրենց հարաբերությունները հստակ պայմանագրային հիմունքներով: Բարձր մակարդակի խմբերի ղեկավարները կարող են բնակվել արտասահմանում, գրեթե երբեք չեն առնչվում իրենց զոհերի հետ, իսկ թրաֆիքինգից ստացված եկամուտը ներդնում են այլ ապօրինի շուկաներում, ինչպիսիք են թմրամիջոցների կամ զենքի ապօրինի վաճառքը, կամ էլ տեղաբաշխում են օրինական հատվածում, օրինակ՝ անշարժ գույքի շուկայում և այլն: Հաշվի առնելով նրանց ձեռնարկատիրական գործունեության խայտաբղետությունը և դրամական մեծ միջոցների առկայությունը, բարձր մակարդակի խմբերը կարող են հարաբերություններ հաստատել

<sup>124</sup> Anti-Trafficking Training for Frontline Law Enforcement Officers. Background reader, p.63

քաղաքական, դիվանագիտական, վարչական և ֆինանսական շրջանակներում գտնվող անձանց հետ՝ անհրաժեշտության դեպքում ներքաշվելով կոռուպցիայի մեջ:

*Միջին մակարդակ.* այս կատեգորիան ընդգրկում է խմբեր, որոնք գործում են ռազմավարական նշանակության աշխարհագրական շրջաններում, ինչպիսիք են՝ ազգային սահմաններին հարակից գոտիները, ինչպես նաև ծագման, տարանցիկ կամ նպատակակետ նրկրների սահմանները: Միջին մակարդակի խմբերին սովորաբար վստահում են բարձր մակարդակի խմբերի կողմից օպերատիվ փուլում հանձնարարված այնպիսի առաջադրանքներ, որոնք կապված են զոհի ճամփորդության հետ:

*Յածր մակարդակ.* այս կատեգորիան ընդգրկում է փոքր նշանակության հանցավոր խմբեր: Նրանք գործում են միջին մակարդակի խմբերի կողմից տրված լիազորությունների շրջանակում, կամ որոշ դեպքերում առանձին մարդավաճառների պատվերով: Այս մակարդակի խմբերը սովորաբար ավելի մեծ թիվ են կազմում, քան միջին կամ բարձր մակարդակի խմբերը: Նրանց հիմնական գործունեությունը թրաֆիքինգի ենթարկվող անձանց ընդունելն է, սահմանի հատման կազմակերպչական աշխատանքներն ապահովելը, հանցավոր գործունեության շղթայում զոհերի հավաքակետներում այլ գործողությունները:

*Թրաֆիքինգով զբաղվող առանձին անձինք.* որոշ դեպքերում թրաֆիքինգն իրականացվում է ոչ թե՛ հանցավոր խմբերի կողմից, այլ առանձին անհատների կողմից: Կան դեպքեր, երբ ընկերները կամ ընտանիքի անդամները տանում են մարդկանց արտասահման և վաճառում նրանց թրաֆիքինգով զբաղվողներին: Սրա տարածված օրինակներն են տնային ստրկությունը և հարկադիր ամուսնությունը, սակայն կան նաև հարկադիր աշխատանքի (օրինակ՝ էթնիկ փակ համայնքի ներսում) և հարկադրված մարմնավաճառության դեպքեր:

Թրաֆիքինգով զբաղվող խմբերը պատկանում են անդրազգային կազմակերպված հանցավորության կառույցներին և զբաղվում են ապօրինի գործունեության այլ տեսակներով: Նրանց բնութագիրը տրված է ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի հարցերով գրասենյակի<sup>125</sup> իրականացրած վերլուծության մեջ, որն անդրադառնում է աշխարհի 16 նրկրներում 40-ից ավելի կազմակերպված հանցավոր խմբերի: Ուսումնասիրության մեջ առանձնագվել են անդրազգային հանցավորության որոշ հիմնական հատկանիշներ:

Այսպես, խմբերի ավելի քան 80%-ը որպես կանոն դիմում են բռնության, որպես թրաֆիքինգի իրականացման միջոց:

Բացի այդ, կազմակերպված հանցավոր խմբերի 75%-ը ներթափանցում են օրինական տնտեսության ոլորտ: Ապացույցներ կան, որ ապօրինի գործունեությունից (օրինակ՝ թրաֆիքինգից) ստացված եկամուտը խմբերը ներդնում են օրինական տնտեսական գործունեության մեջ:

Անտարակույս, կազմակերպված հանցավոր խմբերը (մոտ 60%-ը) միտված են համագործակցելու այլ հանցավոր խմբերի հետ՝ իրենց շուկան ընդարձակելու համար: Խմբերի գրեթե 60% ունի որոշակի քաղաքական ազդեցություն իր գործունեության հիմնական նրկրում: Սա

<sup>125</sup> UNODC, Globale Programme against Transnational Organised Crime, September, 2002

հաճախ սերտորեն կապված է կոռուպցիայի հիմնախնդրի և օրինական տնտեսություն<sup>126</sup> ներթափանցելու հնարավորության հետ: Ճիշտ է, թրաֆիքինգը միշտ չէ, որ իրականացվում է խմբի կողմից, բայց խմբի կողմից կատարված թրաֆիքինգի դեպքերը կազմում են մեծամասնություն (մոտ 80%):

Հաճախ շահագործողներն անմիջականորեն մասնակցում են ինչպես մարդկանց առք ու վաճառքին, այնպես էլ նրանց շահագործմանը: Ծահագործում իրականացնող անձանց, նրանց կողմից ստեղծված խմբերի, այլ հանցավոր խմբերի ու զոհերի հետ կապը, նրանց գործելակերպի ըմբռնումը կարող են օգնել հասկանալ շահագործողներին, գտնել հնարավոր շահագործումը կանխարգելելու միջոցներ<sup>127</sup>:

Ծահագործողների և նրանց գործելակերպի մասին անբավարար գիտելիքները թույլ չեն տալիս բացահայտել շահագործողների և նրանց օժանդակողների ինքնությունը: Քննիչները հաճախ ստիպված են լինում հիմնվել զոհի ցուցմունքների վրա, այն էլ միայն այն դեպքում, երբ զոհն ինքնուրույն կամ աջակցության միջոցով ազատվում է շահագործումից, և զոհի անձը դառնում է հայտնի, և դատապարտումը հնարավոր է դառնում բացառապես ելնելով զոհի՝ ցուցմունք տալու ցանկությունից և կարողությունից: Նման իրավիճակը հսկայական բեր է զոհի համար, և դատական համակարգի նրբեմն անբավարար լինելու հետ մեկտեղ ոչ միշտ է հանգեցնում հանցագործի դատապարտմանը: Նրանց անպատիժ մնալու հանգամանքն ընդլայնում է շահագործման ցանցը, քանի որ նրանք մնում են այն համոզման, որ խոցելի զոհերի շահագործումը կապված է բացահայտման և դատապարտման համեմատաբար ցածր վտանգի հետ:

Հանցագործների բնութագիրը կազմվում է նրա վարքագիծը վերլուծելով՝ հաշվի առնելով հանցագործության կատարման մեթոդները, հանցագործի բնութագիրը և վարքը: Այս բնութագիրը և գնահատումը կարող են օգնել իրավապահ մարմիններին՝ բացահայտել կասկածյալին, բազմակողմանիորեն հետաքննել գործը և անհրաժեշտ օպերատիվ գործողություններ անցկացնել<sup>128</sup>:

Հայաստանի իրավապահ մարմինները բացահայտել են նաև թրաֆիքինգի այնպիսի դեպքեր, երբ թրաֆիքինգի իրականացմանը օժանդակել են մի դեպքում՝ ոստիկանության ծառայողը<sup>129</sup>, իսկ մյուս դեպքում՝ “Զվարթնոց” օդանավակայանի<sup>130</sup> աշխատողը:

Թրաֆիքինգ իրականացնողները կարող են լինել և կանայք<sup>131</sup>, և տղամարդիկ: Թրաֆիքինգով զբաղվող հանցավոր խմբերում կանանց դերը տարբեր է լինում: Որոշ խմբերում կանայք շահագործման գործընթացի կարևոր մաս են: Օրինակ, Նիգերիայից դեպի Իտալիա կանանց

<sup>126</sup> Anti-Trafficking Training for Frontline Law Enforcement Officers. Background reader, p.63-65

<sup>127</sup> Մարդկանց շահագործման դեմ պայքարի Վիեննայի ֆորում 2008թ.-ի փետրվարի 13-15, Ավստրիա կենտրոն, Վիեննա. Ընդհանուր տեղեկանք. Սեմինար 016. մարդկանց շահագործողների նկարագիրը. - էջ 3

<sup>128</sup> Crime Reduction Toolkits (UK)// [www.crimereduction.homeoffice.gov.uk/toolkits/tp0601.htm](http://www.crimereduction.homeoffice.gov.uk/toolkits/tp0601.htm)

<sup>129</sup> Ե. Մաթևոսյան. Թրաֆիքինգի դասական օրինակ// “Հայոց աշխարհ”, 2005թ.-ի օգոստոսի 26; А. Чилингарян. Место назначения – Дубай// “Голос Армении”, 17 сентября 2005.

<sup>130</sup> Թիվ 58202505 քրեական գործն ըստ մեղադրանքի Ն.Ս-ի ՀՀ քր. օր-ի 132 հոդ. 2-րդ մասի 1, 3, 4, 6 կետերով և 325 հոդ. 1-ին մասով, Ն.Զ-ի՝ ՀՀ քր. օր-ի 38-132 հոդ. 2-րդ մասի 3, 4, 6 կետերով և 38-325 հոդ. 1-ին մասով և Հ.Ա-ի՝ ՀՀ քր. օր-ի 38-325 հոդ. 1-ին մասով:

<sup>131</sup> 2009 թվականի դրությամբ ՀՀ-ում թրաֆիքինգի գործերով կանայք կազմում են շահագործողների մեծամասնությունը:

ապօրինի տեղափոխումը հիմնականում իրականացրել են կանայք, իսկ տղամարդիկ երկրորդական դերակատարներ են եղել<sup>132</sup>: Դրան հակառակ, կան դեպքեր, երբ կանանց դերը կայանում է տղամարդկանց օգնելում<sup>133</sup>: Այս կանայք հիմնականում իրականացնում են օժանդակողի ֆունկցիան: ՀՀ-ում, ըստ բացահայտված դեպքերի, կանայք հիմնականում իրականացնում են սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգ, իսկ տղամարդիկ՝ աշխատանքային: Ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակների շահագործմամբ և օրգանների կամ հյուսվածքների կորզմամբ թրաֆիքինգի հետ կապված դեպքերի մասին պաշտոնական տվյալները ՀՀ-ում բացակայում են, այդ պատճառով այդպիսի թրաֆիքինգ իրականացնող անձանց չենք անդրադառնա:

Հավաքագրողները թրաֆիքինգի զոհերին հաճախ ընտրում են, ելնելով զոհերին վստահություն ներշնչելու կարողության աստիճանից: ՄԱԿ-ի թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի հարցերով գրասենյակի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կին հավաքագրողները զոհերի կողմից հաճախ դիտվում են որպես ավելի վստահություն ներշնչող, քան տղամարդիկ<sup>134</sup>:

Որոշ շահագործողներ նախկին զոհեր են: Օրինակ, կան նպատակակետ երկրներ, որտեղ «կազմակերպիչը» վերահսկում և կազմակերպում է կանանց և աղջիկների սեռական շահագործումը, համակարգում նրանց գործունեությունը և ստանում նրանց եկամուտները: Այդ «կազմակերպիչներից» շատերը նախկինում եղել են շահագործման զոհ և իրենց «կազմակերպիչ» պարտքը վճարելուց հետո սկսել են նույն միջոցով գումար վաստակել<sup>135</sup>:

Երբեմն զոհերը դառնում են շահագործող՝ բռնության կամ բռնության սպառնալիքի ներքո, կամ ընդունելով դա որպես շահագործումից ազատվելու միջոց: Առաջին իրավիճակի հետ կապված հայտնի է, որ ոմանք սկսում են զբաղվել շահագործմամբ իրենց շահագործողի պարտադրմամբ և նրանից կախված լինելու պատճառով: Սա լավ պատկերացնելու համար պետք է նշել «ստոկհոլմյան համախտանիշը» և այլ հոգեբանական երևույթներ, երբ զոհը սկսում է որդեգրել շահագործողի աշխարհայացքը և համակրել շահագործողին: Երկրորդ իրավիճակում զոհից շահագործողի վերածվելը կարող է ապահովել ավելի լավ պայմաններ և կարող է դիտվել որպես «առաջխաղացում»: Օրինակ, որոշ զոհեր շահագործման առաջնային զոհից վերածվում են մյուսներին վերահսկողի կամ անմիջապես շահագործողի<sup>136,137</sup>: Նման դեպքում այդ անձինք պետք է ենթարկվեն քրեական պատասխանատվության, բայց պատիժ նշանակելիս նրանց նախկինում զոհ լինելու հանգամանքը պետք է հաշվի առնվի:

Շահագործողները կարող են լինել և տրիտասարդ, և տարեց անձինք: Բազմաթիվ դեպքեր վկայում են այն մասին, որ շահագործողները զոհերից տարիքով մեծ են: Սա պայմանավորված է

<sup>132</sup> Մարդկանց շահագործման դեմ պայքարի վիեննայի ֆորում 2008թ.-ի փետրվարի 13-15, Ավստրիա կենտրոն, վիեննա. Ընդհանուր տեղեկանք. Սեմինար 016. մարդկանց շահագործողների նկարագիրը. - էջ 9:

<sup>133</sup> Levenkorn, Nomi., Another delivery from Tashkent: Profile of the Israeli Trafficker, 2007, էջ 40-41:

<sup>134</sup> Trafficking in human beings in Brazil, www.undoc.org/pdf/brazil/folder\_tsh\_port.pdf

<sup>135</sup> UNODC, Trafficking in human beings: Global patterns report, 2006, էջ 74:

<sup>136</sup> Levenkorn, Nomi., Another delivery from Tashkent: Profile of the Israeli Trafficker, 2007, էջ 52

<sup>137</sup> Nair, PM A report on trafficking in women and children in India 2002-2003, էջ 141



նրանով, որ տարիքով ավելի մեծ անձը կարող է ավելի հմտորեն խաբել և հավաքագրել նրիտասարդներին: Միջազգային պրակտիկայում նաև առկա են դեպքեր, երբ անձինք բռնի կերպով հավաքագրվում են իրենց ծնողների կամ երեխաների կողմից (ՀՀ-ում դեռ այդպիսի դեպք չի գրանցվել):

Թրաֆիքինգ իրականացնողների զգալի մասն ունի հանցավոր անցյալ: Օրինակ, Չեխիայում թրաֆիքինգի համար դատապարտված 31 անձանցից հանցավոր անցյալ ունեցել են 12-ը, իսկ Իսրայելում դատապարտված 325-անձանցից նախկինում դատապարտված է եղել 47.3%-ը<sup>138,139</sup>:

ՀՀ-ում թրաֆիքինգ իրականացրած տղամարդկանց մեծ մասը (մոտ 60%) կրկնահանցագործներ են, այսինքն նախկինում դատապարտվել են դիտավորյալ հանցագործությունների համար (որոշ դեպքերում՝ համանման), իսկ կանանց միայն 30% են նախկինում դատապարտվել, բայց բոլորն էլ համանման հանցագործությունների համար:

Ելնելով վերոգրյալից, կարելի է անդել, որ տղամարդիկ հաճախ թրաֆիքինգ իրականացնում են այլ հանցագործություններին զուգահեռ և համատեղ, իսկ կանայք նպատակաուղղված «մասնագիտանում են» այս հանցագործությունների կատարման մեջ:

Դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ մի կին, որը թրաֆիքինգի գործով դատարանի դատավճռով նշանակված պատիժն ամբողջությամբ կրելու հիմքով ազատվել էր պատիժը կրելուց, ազատվելուց առաջ ասել էր, որ չի կարող չզբաղվել այդ գործով, որովհետև դա իր եկամուտի միակ աղբյուրն է, բայց նա կաշխատի այլևս չբռնվել:

Շահագործմամբ զբաղվող որոշ անձինք կամ նրանց օժանդակողներն ունեն նաև այլ զբաղվածություն կամ մասնագիտություն: Նրանք բժիշկ են, քաղաքական գործիչ, վարորդ, մարզիկ, խոհարար, վարպետ և այլն<sup>140</sup>: Այնուամենայնիվ, նրանցից շատերը գործազուրկ են և (կամ) գտնվում են ծայրահեղ աղքատության մեջ, իսկ շահագործումը դիտում են եկամտի աղբյուր:

ՀՀ-ում թրաֆիքինգ իրականացրած անձանց 85% գործազուրկ է և չունի եկամուտի կայուն աղբյուր:

Միջազգային պրակտիկայում շահագործողներին պայմանականորեն բաժանում են հետևյալ խմբերի՝

- շահագործման «վարպետ» - գտնվում է հանցավոր համակարգի վերևում: Համակարգի անդամների մեծամասնության համար նա մնում է անանուն, ղեկավարում է և կայացնում որոշումներ, ստանում է եկամուտի հիմնական մասը,
- հիմնական շահագործող - որոշում է պահանջարկի և առաջարկի աղբյուրները, իրականացնում մարդկանց առք ու վաճառք,
- նրկորդական շահագործող - թրաֆիքինգի գոհին հիմնական շահագործողներին հանձնող անձ: Հաճախ գոհի ազգականն է կամ ծանոթը:
- տնդում տնդնկություններ փնտրող - տարբեր վայրերում (շուկաներում, կայարաններում և

<sup>138</sup> Trafficking in women: the Czech republic Perspective, Prague, 2004 (UNDOC and UNICRI)

<sup>139</sup> Levenkorn, Nomi., Another delivery from Tashkent: Profile of the Israeli Trafficker, 2007, էջ 40-41

<sup>140</sup> Nair, PM A report on trafficking in women and children in India 2002-2003, էջ 143

այլն) խոցելի գոհին փնտրող:

## 7.2. Թրաֆիքինգով զբաղվող անձանց պատասխանատվությունը և պատիժը

**Հայաստանյան դատական պրակտիկան.** Համաձայն ՀՀ քր.օր-ի 3-րդ հոդվածի, քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քր.օր-ով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները, իսկ 7-րդ հոդվածի համաձայն, հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է ՀՀ քր.օր-ով նախատեսված պատժի կամ քրեաիրավական այլ ներգործության:

Քրեական օրենսդրության մեջ առկա պատժի համակարգն այն լծակներից է, որը հնարավորություն է ընձևեռում իրականացնել արդյունավետ քրեական քաղաքականություն: ՀՀ-ում ազատազրկումը ամենատարածված պատժատեսակն է, ներառյալ՝ թրաֆիքինգի համար: Մինչ դատապարտվելը թրաֆիքինգ կատարած անձանց նկատմամբ որպես խափանման միջոց սովորաբար ընտրվում է կալանավորումը, որը հնարավոր չափով նվազեցնում է տուժողի և հանցագործի հետագա շփումը (հետագայում նրանք հանդիպում են առերեսման դեպքում կամ դատարանի դահլիճում)<sup>141</sup>:

ՀՀ քր.օր-ի 132-րդ հոդվածի մասերի սանկցիաները նախատեսում են 3-ից 15 տարի ժամկետով ազատազրկում, 132<sup>1</sup>-րդ հոդվածի սանկցիաները՝ 5-ից 15 տարի, 261-րդ հոդվածի սանկցիաները՝ տուգանք (նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով) կամ 1-ից 8 տարի ազատազրկում, իսկ 262-րդ հոդվածի սանկցիաները՝ տուգանք (նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով) կամ 1-ից 10 տարի ազատազրկում: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ այս հոդվածներով ազատազրկման առավելագույն ժամկետ երբևէ չի նշանակվել: ՀՀ քր.օր-ի 132-րդ հոդվածով դատապարտված անձանց նշանակված ազատազրկման միջին ժամկետը եղել է 5 տարի, 132<sup>1</sup>-րդ հոդվածով՝ 4 տարի, 261-րդ հոդվածով՝ 3 տարի, իսկ 262-րդ հոդվածով՝ 2 տարի:

2008թ. հուլիս ամսվա դրությամբ, համաձայն ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության տվյալների, ՀՀ-ում ազատազրկման ձևով պատիժ են կրում՝ ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածով – 16 տղամարդ և 6 կին, 132<sup>1</sup>-րդ հոդվածով – 4 տղամարդ և 1 կին, 262-րդ հոդվածով – 4 տղամարդ և 4 կին: Այս թվերը չեն բացահայտում իրականում վերը նշված հանցագործությունների համար դատապարտված անձանց քանակը, քանի որ դատապարտված անձանց 30-35% պատիժը կրում են պայմանական կամ նրանց նկատմամբ նշանակվում են ազատազրկման հետ չկապված պատիժներ (դա վերաբերում է 261-րդ և 262-րդ հոդվածներով դատապարտված անձանց, իսկ 262-րդ հոդվածով նաև նշանակվում է տուգանք):

Վերը նշված հոդվածներով անչափահաս դատապարտյալներ Հայաստանում չկան և չեն եղել:

<sup>141</sup> Բայց դատական պրակտիկայում եղել են դեպքեր, երբ կալանավորումը փոխարինվել է գրավով: Տե՛ս, օրինակ, Ա. Գաբրիելյան. Դատարանի զարմանալի բարեհաճությունը թրաֆիքինգի հոդվածով մեղադրվողի հանդեպ// “Հայոց աշխարհ”, 9 օգոստոսի 2007թ.: Ներկա դրությամբ (2008-2009թ.-ին) այդպիսի պրակտիկա չի կիրառվել:

ՀՀ Կառավարության 2007թ. դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետությունում 2007-2009թթ. ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» որոշման ներածության համաձայն, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) և կավատության վերաբերյալ 2004թ. 16 քրեական գործից միայն մեկով է դատարանն առաջնորդվել ՀՀ քր.օր-ի 132-րդ հոդվածի պահանջներով, 2005թ.՝ թրաֆիքինգի և կավատության 31 բացահայտված դեպքերից նույն հոդվածով հարուցվել է 11 քրեական գործ, և քրեական հետապնդում է իրականացվել 15 անձի նկատմամբ, 2006թ. հարուցվել է 39 քրեական գործ՝ 46 անձի նկատմամբ: Բացի այդ համաձայն 2005թ. ինն ամիսների ընթացքում ՀՀ քր.օր-ի 132-րդ, 261-րդ, 262-րդ հոդվածներով քննված գործերի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչության տեղեկանքի, վերը նշված հոդվածներով դատապարտված անձանց 57,5% դատապարտվել են ազատազրկման, իսկ 43,5%՝ ազատազրկման հետ չկապված պատիժների:

Ներկայումս ազատազրկումը ավելի հաճախ է կիրառվում այս հանցագործությունների համար: Դա առավելապես պայմանավորված է այն փաստով, որ նախկինում ՀՀ քր.օր-ի 132-րդ հոդվածի սանկցիան նախատեսում էր ավելի մեղմ պատիժներ (ներառյալ տուգանք և ուղղիչ աշխատանքներ), քան այժմ, երբ ՀՀ քր.օր-ի 132-րդ հոդվածով նախատեսված արարքը պատժվում է միայն ազատազրկմամբ և բացի այդ, ՀՀ քր.օր-ը լրացվել է նոր 132<sup>1</sup>-րդ հոդվածով՝ մարդուն պոռնկության կամ սեռական շահագործման այլ ձևերի մեջ, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների ներգրավելը կամ ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը կամ պահելը, որը նույնպես պատժվում է միայն ազատազրկմամբ:

Թրաֆիքինգի համար դատապարտված անձինք պատիժը կրում են ընդհանուր հիմունքներով և նրանց նկատմամբ ոչ մի բացառություն կամ առանձնահատկություն նախատեսված չէ: Նրանք հիմնականում պատիժը կրում են կիսափակ և փակ ուղղիչ հիմնարկի պայմաններում:

Լինում են դեպքեր, երբ օտարերկրյա քաղաքացին դատապարտվում է Հայաստանում և պատիժը կրում է ՀՀ քրեակատարողական հիմնարկներից մեկում, սակայն, ելնելով միջպետական պայմանավորվածություններից, հնարավոր է իրականացնել այդ դատապարտյալի փոխանցում: Համաձայն ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին կոնվենցիայի 17-րդ հոդվածի, մասնակից պետությունները կարող են քննել այդ կոնվենցիայում ընդգրկված հանցագործությունների համար բանտային ռեժիմի կամ ազատազրկման այլ ձևերի դատապարտված անձանց փոխանցման մասին երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի և պայմանավորվածությունների կնքման հնարավորությունը, որպեսզի նրանք կարողանան պատիժը կրել իրենց երկրի տարածքում: Դատապարտյալը տեղափոխվում է այն երկիր, որի քաղաքացին է, և այնտեղ շարունակում է կրել պատիժը, բայց լինում են դեպքեր, երբ տեղափոխվելուց հետո հնարավոր չի լինում պարզել, այդ անձը իրոք շարունակում է պատիժը կրել, թե՛ ոչ:

1983թ. մարտի 21-ի Դատապարտյալների փոխանցման մասին կոնվենցիայի հիման վրա Հայաստանը կնքել է միջպետական համաձայնություններ Ռուսաստանի, Ուզբեկստանի, Ուկրաինայի, Վրաստանի և այլ պետությունների հետ:

Հայաստանում, ինչպես նաև բազմաթիվ այլ երկրներում գործում է քրեական պատժից վաղաժամկետ ազատելու ինստիտուտը: Բացառություն չեն նաև թրաֆիքինգի համար դատապարտված անձինք, բայց նրանց նկատմամբ այդ նորմերը կիրառելիս պետք է հաշվի առնել բոլոր առանձնահատկությունները, որոնք կապված են և հանցագործության բնույթի ու վտանգավորության աստիճանի, հանցագործի անձը բնութագրող հատկանիշների, ինչպես նաև նրա ու հասարակության (հասարակության որևէ խմբի) միջև ձևավորված հարաբերությունների հետ:

Համաձայն ՀՀ քր.օր-ի 76-րդ հոդվածի, ազատագրված անձը պատիժ կրող անձը (իսկ 132-րդ և 132<sup>1</sup>-րդ հոդվածներով որպես պատիժ նախատեսված է միայն ազատագրումը) կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը հաշվի է առնում նաև դատապարտվածի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը:

Համաձայն ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի, պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը իրականացնող մարմնի կամ հիմնարկի վարչակազմը դատապարտյալի համաձայնությամբ լսում է դրական բնութագրվող և տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը: Միջնորդագրի հետ դատարան է ներկայացվում դատապարտյալի անձնական գործը, որտեղ առկա են նաև նրա բնութագրերը, կարգապահական տույժերի կամ խրախուսանքների եմթարկված լինելու կամ չլինելու փաստը հաստատող փաստաթղթեր և այլն: Բայց կուրորեն կիրառել այս նորմերը դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու համար չի կարելի և պետք է հանգամանորեն պարզել գործի և ազատման համար նշանակություն ունեցող բոլոր պայմաններն ու հանգամանքները: Պետք է հիշել նաև, որ պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելուց առաջ հարկ է համոզվել, արդյո՞ք փոխհատուցվել է տուժողին պատճառված վնասը, թե՛ ոչ: Այս պայմանը ամրագրված է և ՀՀ քր.օր-ի 76-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասով:

Բացի այդ, ՀՀ-ում առկա է նախադեպային որոշում, որտեղ հստակ նշվում է, որ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինում չի կիրառվում, երբ հանցագործության կատարմամբ մարդու առողջությանը պատճառվել է վնաս կամ առաջացրել է մարդու մահ, և դատապարտյալը ամբողջությամբ չի հարթել տուժողին պատճառված վնասը<sup>142</sup>: Հարկ է նշել, որ ՀՀ-ում

<sup>142</sup> ՀՀ Վճռաբեկ դատարանի 2007թ.-ի հուլիսի 13-ի որոշումը

պայմանական վաղաժամկետ ազատում 2007 և 2008 թվականներին. ՀՀ քր.օր-ի 132-րդ և 132<sup>1</sup>-րդ հոդվածներով դատապարտված տղամարդկանց նկատմամբ չի կիրառվել և բոլոր միջնորդությունները մերժվել են, իսկ նույն հոդվածներով դատապարտված կանանցից միայն 2-ի նկատմամբ է 2007թ. կիրառվել պայմանական վաղաժամկետ ազատում, իսկ 2008 թվականին՝ ոչ մեկի:

**Տուժողին պատճառված վնասը հատուցելու կառուցակարգերն ու խնդիրները.** Տուժողին պատճառված ընդհանուր վնասը բաղկացած է տարբեր վնասներից՝ ֆիզիկական, գույքային և բարոյական: Փոխհատուցումը կարևոր է թրաֆիքինգից տուժած անձանց համար ոչ միայն ֆինանսական առումով, այլ նաև՝ խորհրդանշական՝

- հասարակության մակարդակով - փոխհատուցման տրամադրմամբ թրաֆիքինգը ճանաչվում է որպես հանցագործություն,

- անհատի մակարդակով - տուժողի կրած վնասը ճանաչվում է, և փոխհատուցումը կարող է դառնալ առաջին քայլը պատճառած տրավման և բռնության հետևանքները հաղթահարելու ուղղությամբ,

- գործնական մակարդակով - փոխհատուցումը կարող է օգնել տուժողին սկսելու նոր կյանք,

- հատուցման մակարդակով - թրաֆիքինգ իրականացնողների վճարած փոխհատուցումները կարող են պատժի մաս կազմել և կանխարգելիչ ազդեցություն ունենալ թրաֆիքինգ իրականացնող այլ անձանց վրա<sup>143</sup>:

Հանցավոր ճանապարհով պատճառված վնասի փոխհատուցմանը վերաբերող նորմեր առկա են և միջազգային, և ազգային օրենսդրության մեջ:

ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայի իմաստով և թրաֆիքինգի դեմ պայքարին վերաբերող թիվ 2 արձանագրությամբ նախատեսվում է, որ թրաֆիքինգի ենթարկված անձանց հասանելի լինի փոխհատուցում ստանալու իրավական ընթացակարգի առնվազն մեկ տեսակ, և որ զոհերին տնդելություններ տրամադրվեն այդ հնարավորության վերաբերյալ: Թրաֆիքինգի ենթարկված անձանց՝ փոխհատուցում ստանալու իրավունքն ամրապնդվում է ԵՄ մարդկանց թրաֆիքինգի հակազդման մասին կոնվենցիայով, որը նախատեսում է կրած բարոյական և նյութական վնասի դիմաց թրաֆիքինգ իրականացնող անձից փոխհատուցում պահանջելու իրավունքը: Այն նաև նախատեսում է պետության կողմից ֆինանսավորվող փոխհատուցման ծրագրից օգտվելու իրավունք՝ հղում կատարելով Բռնի հանցագործությունների զոհերի փոխհատուցման մասին եվրոպական կոնվենցիայում (ԲՀԶՓԵԿ) առկա դրույթներին: Նաև շեշտվում են օժանդակ այնպիսի իրավունքները, որոնք փոխհատուցումը դարձնում են արդյունավետ և իրական, օրինակ՝ անվճար իրավաբանական աջակցությունը:<sup>144</sup>

<sup>143</sup> Վիեննայի ֆորումը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով 13-15 փետրվարի, 2008թ. Թիվ 023 աշխատանքային հանդիպում. իրավական դաշտի և թրաֆիքինգի դեմ պայքարի մասին օրենսդրության արդյունավետությունը, էջ 28

<sup>144</sup>Compensation for trafficked and exploited persons in the OSCE Region. OSCE\_ODIHR, 2008, p.19-20

Միջազգային չափանիշներով մշակվել է նաև այն սկզբունքը, որ թրաֆիքինգով զբաղվող անձանց ստացած նկամուտները պետք է օգտագործվեն թրաֆիքինգի ենթարկվածների աջակցության նպատակով:

Երբ ըստ Միջազգային քրեական դատարանի կանոնակարգով նախատեսված սահմանման խոսքը գնում է մարդու իրավունքների կոպիտ խախտման, մարդասիրական իրավունքի լուրջ խախտման կամ միջազգային հանցավորության մասին, շեշտադրվում են նաև երեխաների և կանանց հատուկ շահերը:<sup>145</sup>

ԱՄՆ միակ երկիրն է, որտեղ փոխհատուցումը պարտադիր է թրաֆիքինգի զոհերի համար այն քրեական գործերի շրջանակում, որտեղ քաղաքացիական իրավունքով առկա է թրաֆիքինգին առնչվող հատուկ հայցային պահանջ, և որտեղ թրաֆիքինգի զոհերը, սովորաբար, իրավունք ունեն պահանջելու փոխհատուցում նահանգային միջոցներից: Մնացած բոլոր երկրներում թրաֆիքինգի ենթարկված անձանց վերաբերվում են նույն կերպ, ինչպես այլ հայցվորներին, իսկ պահանջի վերաբերյալ որոշումը կայացվում է անհատական գործի հիման վրա<sup>146</sup>:

Համաձայն Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին ԵԽ-ի կոնվենցիայի 15-րդ հոդվածի 3-րդ մասի, յուրաքանչյուր կողմ իր ներքին օրենսդրության մեջ պետք է ամրագրի զոհերի՝ հանցագործից փոխհատուցում ստանալու իրավունքը, իսկ 4-րդ մասի համաձայն, յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են ներքին օրենսդրությանը համապատասխան զոհերի վնասների փոխհատուցումը երաշխավորելու համար, օրինակ, զոհերի վնասների փոխհատուցման հիմնադրամ ստեղծելու կամ այնպիսի միջոցառումներ ու ծրագրեր իրականացնելու միջոցով, որոնք ուղղված են զոհերի սոցիալական օգնությանը և սոցիալական ինտեգրմանը և որոնք կարող են ֆինանսավորվել 23-րդ հոդվածում նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած միջոցների հաշվին:

ՀՀ քաղ.օր-ի 17-րդ հոդվածում ամրագրված է, որ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում: Վնասներ են՝ իրավունքը խախտած անձի ծախսերը, որոնք նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված նկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

Ինչպես վերը նշվել է, թրաֆիքինգի զոհին պատճառվում են կամ կարող են պատճառվել հետևյալ վնասները՝

- ֆիզիկական – տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ, երբեմն նաև մահ, տարբեր տեսակի վարակիչ և ոչ վարակիչ հիվանդություններ, ներառյալ սեռավարակները և այլն,

<sup>145</sup> Compensation for trafficked and exploited persons in the OSCE Region. OSCE\_ODIHR, 2008, p.21

<sup>146</sup> Compensation for trafficked and exploited persons in the OSCE Region. OSCE\_ODIHR, 2008, p.23

- գույքային – գոհից կորզում են նրա մոտ առկա գումարը, չեն վճարում աշխատավարձը կամ այն վճարում են մասամբ, ազնվում են զբաղվել այլ աշխատանքով, որը կարող է եկամուտ բերել գոհին և այլն,

- բարոյական – հոգեբանական տառապանքները հաճախ հանգեցնում են անձի հոգեկան աշխարհի խարխիվմանը, որի հետևանքով կարող է առաջանալ նաև հոգեկան խանգարում կամ հիվանդություն<sup>147</sup>: Շատ դեպքերում կոմունալ-կենցաղային և սանիտարահիգիենիկ ծանր պայմանները և միջանձնյա նորմալ հարաբերությունների բացակայությունը շատ ծանր են անդրադառնում անձի վրա:

Համաձայն ՀՀ քր.դատ.օր-ի 70-րդ հոդվածի, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ քրեական գործով վարույթի ընթացքում հայց ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձին քր.օր-ով չթույլատրված արարքով պատճառվել է քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնաս, ապա նա ճանաչվում է քաղաքացիական հայցվոր և կարող է պահանջել պատճառված վնասի փոխհատուցում: Ընդ որում, քաղաքացիական հայցվոր ճանաչվելու համար անհրաժեշտ է հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի համապատասխան որոշում:

Իսկ «Պետական տուրքի» մասին ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն, պետական տուրք չեն վճարում այն հայցվորները, ում գույքային վնաս է պատճառվել հանցագործությամբ: Այս նորմը լրացուցիչ նրաշխիք է, որպեսզի հանցագործությունից տուժած անձը (տվյալ դեպքում թրաֆիքինգի գոհը) հնարավորություն ունենա առանց լրացուցիչ ծախսեր կատարելու դատական կարգով պահանջել իրեն պատճառված գույքային վնասի փոխհատուցումը:

Ի տարբերություն միջազգային իրավական նորմերի, որոնք առաջարկում են նախատեսել վնասների փոխհատուցման անհրաժեշտ կարգավորումներ, ՀՀ-ում հանցագործությամբ պատճառված բարոյական վնասը չի փոխհատուցվում, քանի որ ՀՀ գործող քաղաքացիական օրենսդրությունը այդպիսի փոխհատուցում ընդհանրապես չի նախատեսում:

Քաղաքացիական հայցով դիմելու տուժողի իրավունքը նրա իրավունքների ու ազատությունների պաշտպանության նրաշխիք է: Այդ նրաշխիքի իրականացման կառուցակարգերը, սակայն, բավարար չափով չեն ապահովում այդ իրավունքի իրագործման արդյունավետությունը: Տեղական հասարակական կազմակերպություններից մեկի ներկայացմամբ, ՀՀ-ում թրաֆիքինգի գոհերի քաղաքացիական հայցերը չեն բավարարվում անհիմն լինելու կամ անհրաժեշտ ապացույցներ չներկայացնելու պատճառաբանությամբ: Ճիշտ է, շատ դեպքերում ապացույցներն իրոք բացակայում են կամ թերի են: Գործնականում խնդիրն այն է, որ թրաֆիքինգի ենթարկվող անձը դժվար թե ի վիճակի լինի, գտնվելով շահագործման վիճակում, մտածել այն մասին, որ եթե նրան հաջողվի ազատվել այդ վիճակից, նա պետք է ունենա այնպիսի ապացույցներ, որոնք «կգոհացնեն» դատարանին, և նա կստանա իրեն հասանելի փոխհատուցման գումարը: Այս դեպքում պետք է հաշվի առնել, որ քրեական գործով արդեն իսկ

<sup>147</sup> Տվյալ դեպքում բարոյական վնասը արդեն վեր է ածվում ֆիզիկական վնասի, քանի որ առկա է հիվանդություն:

ապացուցվում է թրաֆիքինգի փաստը, իսկ համաձայն ՀՀ քաղ. դատ. օր-ի 52-րդ հոդվածի 3-րդ մասի, քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը պարտադիր է դատարանի համար միայն այն փաստերով, ըստ որոնց հաստատված են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք: Այնուամենայնիվ, քրեական գործով հնարավոր չէ հաստատել բոլոր այն փաստերը, որոնք նշանակություն կունենան քաղաքացիական գործի համար, թեև արդեն իսկ այն, որ իրականացվել է թրաֆիքինգ, մեծ ապացուցողական արժեք ունի քաղաքացիական հայցի շրջանակում վնասը փոխհատուցելու համար:

Հայցով դիմելու իրավունքի իրականացման մեխանիզմները ՀՀ-ում գործարկվում են միայն քաղաքացիական օրենսդրության շրջանակում, անկախ այն փաստից, թե քաղաքացիական հայցը ներկայացվել է քրեական գործի շրջանակում, թե՛ առանձին:

Որպես իրավական հիմք ընդունելով ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին Կոնվենցիայի 14-րդ հոդվածում ամրագրված՝ հանցագործությունից ստացված բռնագրավված եկամուտների կամ գույքի տնօրինման կառուցակարգերին վերաբերող դրույթները (հանցագործություններից ստացված եկամուտները կամ գույքը, որոնք բռնագրավվել են այդ Կոնվենցիայի 12-րդ կամ 13-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա, տնօրինում է այդ Մասնակից պետությունը՝ իր ներքին օրենսդրությանը և վարչական ընթացակարգերին համապատասխան), ժամանակն է քննարկել այդ կառուցակարգը ներդնելու հարցը: Հնարավոր իրավական լուծում կարող է լինեն այն, որ ազգային օրենսդրությամբ ապահովվի թրաֆիքինգ իրականացնողների գույքի տնօրինումը ի շահ թրաֆիքինգի ենթարկված անձանց: Այսպես, այդ գույքը կարող է օգտագործվել թրաֆիքինգի ենթարկված անձանց ծագման, տարանցիկ տեղափոխման և ժամանման երկրներում փոխհատուցում վճարելու համար, ինչպես նաև որպես նյութական և բարոյական վնասի հատուցում<sup>148</sup>:

<sup>148</sup> Վիեննայի ֆորումը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով 13-15 փետրվարի, 2008թ. Թիվ 023 աշխատանքային հանդիպում. իրավական դաշտի և թրաֆիքինգի դեմ պայքարի մասին օրենսդրության արդյունավետությունը, էջ 28; Legislative Guides for the Implementation of the United Nations Convention Against Transnational Organized Crime and the Protocols thereof, UNODC, 2004թ. հոկտեմբեր, էջ 143



## Գլուխ 8

### Թրաֆիքինգի կանխարգելումը և թրաֆիքինգի գոհների ազգային ուղղորդման կարգը

#### 8.1. Թրաֆիքինգի կանխարգելման էությունը և բովանդակությունը

Թրաֆիքինգի դեմ պայքարի կազմակերպումը Հայաստանի Հանրապետությունում սկսվել է 2002թ.-ի հոկտեմբերից, երբ թրաֆիքինգի հետ կապված հարցերն ուսումնասիրելու և առաջարկություններ ներկայացնելու նպատակով առաջին անգամ ստեղծվեց միջգերատեսչական հանձնաժողով:

Թրաֆիքինգի կանխարգելումը փոխկապակցված է հանցագործությունների ընդհանուր կանխարգելման հետ, բայց ունի իր առանձնահատկությունները:

Ընդհանրապես, հանցագործության կանխարգելում<sup>149</sup> ասելով հասկանում են այնպիսի միջոցների և դրանք իրականացնող սուբյեկտների համակարգ, որն ուղղված է՝

- հանցավորության և նրա առանձին տեսակների պատճառների, ինչպես նաև նպաստող պայմանների հայտնաբերմանը, վերացմանը և չեզոքացմանը,

- որոշակի տարածքում այնպիսի պայմանների ու հանգամանքների հայտնաբերմանը և վերացմանը, որոնք հանցագործության կատարման ամփոփական շարժառիթներ են,

- ազգաբնակչության կազմում բարձր քրեական ռիսկի խմբերի հայտնաբերմանը և այդ ռիսկի նվազեցմանը,

- այնպիսի անձանց հայտնաբերմանը, որոնց վարքը վկայում է նրանց կողմից հանցագործության կատարման հավանականության մասին և նրանց նկատմամբ զսպող և վերադաստիարակող միջոցների կիրառմանը (անհրաժեշտության դեպքում այդ միջոցները կարող են կիրառվել նաև նրանց մերձավոր անձանց նկատմամբ)<sup>150</sup>:

Հանցագործությունների կանխարգելման գործընթացը ամբողջությամբ, և մասնավորապես թրաֆիքինգի դեմ, նախատեսում է ինչպես ընդհանուր պետական միջոցառումներ, ինչպիսիք են՝ տնտեսական, սոցիալական, գաղափարախոսական, իրավական և դաստիարակչական, այնպես էլ հատուկ, որոնք իրականացվում են իրավապահ մարմինների կողմից: Այդ գործողությունները իրենց հերթին նույնպես կարող են լինել ընդհանուր և հատուկ: Ըստ պրոֆ. Ա.Մ. Բանդուրկայի, թրաֆիքինգի կանխարգելման առավել արդյունավետ միջոցառումներից են՝

- ազգաբնակչության հետ տարվող իրավական, քարոզչական և բացատրական աշխատանքները,

<sup>149</sup> Այս գլխում «հանցագործությունների կանխարգելում» և «հանցավորության կանխարգելում» տերմիններն օգտագործվելու են որպես հումանիզներ: Բայց հանցագործության կանխարգելման մասին կլխսվի այն ժամանակ, երբ անհրաժեշտ է նշել այդ գործողության կոնկրետ դեպքերի, նրանց ուղղվածության մասին, իսկ հանցավորության կանխարգելման մասին՝ երբ անհրաժեշտ է նշել այս երևույթը ընդհանուր առմամբ:

<sup>150</sup> Криминология/ Под ред. В.Н. Кудрявцева.-М.: “Юрист”, 2002.-С.279-280.

- թրաֆիքինգի և նրան նպաստող պայմանների ժամանակին հայտնաբերումը և չեզոքացումը,

- մեղավորների և տուժողների հայտնաբերմանն ուղղված օպերատիվ-հետախուզական գործունեության ակտիվացումը և թրաֆիքինգի դեմ պայքարում առկա թերությունների վերացումը,

- թրաֆիքինգի դեմ պայքարի գործընթացին ուստիկանության և հասարակության ներգրավումը:<sup>151</sup>

Ազգաբնակչության հետ տարվող իրավական, քարոզչական և բացատրական աշխատանքների իրականացումը բարձրացնում է անձանց իրավագիտակցությունը թրաֆիքինգին վերաբերող հարցերի շուրջ: Հայտնի են դեպքեր, երբ նմանատիպ բացատրական աշխատանքի արդյունքում հայտնաբերվել են թրաֆիքինգի փորձի դեպքեր: Ներկայում ՀՀ-ում նմանատիպ աշխատանք իրականացնում են ինչպես միջազգային և հասարակական կազմակերպությունները, այնպես էլ իրավասու պետական մարմինները: Ընդհանուր կանխարգելիչ միջոցառումներ պետք է իրականացվեն այն անձանց հայտնաբերման ուղղությամբ, ովքեր կարող են լինել թրաֆիքինգ հանցագործության սուբյեկտներ: Նրանց թվում են, առաջին հերթին, այն անձինք, ովքեր նախկինում դատապարտվել են թրաֆիքինգի կամ նմանատիպ հանցագործության (հանցագործությունների) համար, և նրանց շրջապատի անձինք<sup>152</sup>: Այդ աշխատանքը պետք է ուղղված լինի՝

- նրանց մոտ հանցավոր դիտավորության վերացման, նրանց մտածելակերպի փոփոխմանը,
- այն պայմանների չեզոքացմանը, որոնք նպաստում են հանցագործության կատարմանը, կամ այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք կդարձնեն անհնարին կամ կդժվարացնեն հանցագործության կատարումը,

- հանցավոր խմբերի ձևավորման արգելմանը կամ արդեն իսկ ձևավորվածների կազմալուծմանը,

- այդ անձանց մոտ այլ հանցակիցների նկատմամբ անվստահության ստեղծմանը և այնպիսի փաստերի ներկայացմանը, որոնք անձի մոտ կառաջացնեն վախ պատժի և պատասխանատվության նկատմամբ:

Ընդհանուր կանխարգելիչ միջոցառումներից է նաև իրավապահ մարմինների աշխատակիցների համագործակցությունը բժշկական հաստատությունների և դրանց աշխատակիցների հետ, ում միջոցով իրավապահ մարմինները կարող են իրագրել լինել հնարավոր տուժողների կամ ականատեսների մասին: Ընդ որում, հարկ է նշել, որ ազդեցության այս եղանակները սպառնիչ չեն և պրակտիկայում կարող են կիրառվել այլ մեթոդներ, որոնք կոնկրետ պայմաններում կլինեն անհրաժեշտ և առավել նպատակահարմար:

<sup>151</sup> А.М. Бандурка. Противодействие торговле людьми.- Киев-Харьков, 2003.-С.112.  
<sup>152</sup> Պատապարտյալների հետ նմանատիպ աշխատանքների կատարումը նախատեսված է ՀՀ Արդարադատության նախարարի 2008 թվականի 30 մայիսի «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության» կարգը հաստատելու մասին՝ N 44-Ն հրամանով:

Թրաֆիքինգը հնարավոր է կանխարգելել տարբեր եղանակներով, օրինակ՝ մոնիտորինգի, իրազեկության բարձրացման և կրթության կամ դասընթացների միջոցով: Սա իրականացվում է զանգվածային լրատվամիջոցներում ներկայացվող քարոզարշավներով, թռուցիկների բաժանմամբ (օրինակ՝ հյուպատոսական գրասենյակներում, դպրոցներում, մանկատներում, օդանավակայաններում և այլն), հեռախոսային թեժ գծերով, սահմանային անցակետերում և այլն:

Իրավապահները կարող են խորհրդատվական դերակատարում ունենալ նման քարոզարշավի նախագծման ընթացքում և հաղորդել իրենց փորձը: Թրաֆիքինգի հիմնական միտումների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը կանխարգելման մեկ այլ գործիք է: Ոստիկանության աշխատակիցները կարող են մասնակցել համայնքներում, դպրոցներում, համալսարաններում և այլ վայրերում անցկացվող տարբեր կրթական քարոզարշավներին՝ միաժամանակ քաղելով օպերատիվ նշանակության տեղեկություններ: Հասարակական կազմակերպությունների հետ միասին նրանք կարող են մասնակցել դասախոսություններին՝ բերելով թրաֆիքինգի գործնական օրինակներ<sup>153</sup>:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի առաջարկվող սկզբունքները և ուղեցույցը (սկզբունք թիվ 1 (4-6)) նախատեսում են, որ “Թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված ռազմավարությունը պետք է որպես թրաֆիքինգի հիմնապատճառ անդրադառնա պահանջարկին, իսկ պետությունները և միջկառավարական կազմակերպությունները պետք է ապահովեն, որպեսզի իրենց միջամտություններն անդրադառնան այն գործոնների վրա, որոնք մեծացնում են խոցելիությունը թրաֆիքինգի նկատմամբ, այդ թվում՝ գենդերային անհավասարությանը, աղքատությանը և խտրականության բոլոր ձևերին”:

Թրաֆիքինգի մեջ ներգրավված բոլոր պետական պաշտոնյաները պետք է կանգնեն դատարանի առջև, իսկ դատապարտվելու դեպքում՝ համապատասխան պատիժ կրեն: ՄԱԿ-ի Թրաֆիքինգի մասին արձանագրության 9-րդ հոդվածը պահանջում է կանխարգելման ընդգրկուն ռազմավարություն ընդունել՝ այդ թվում անդրադառնալով թրաֆիքինգի զոհերի խոցելիությանը նպաստող սոցիալական և տնտեսական պատճառներին<sup>154</sup>:

Թրաֆիքինգի դեմ պայքարի առաջնահերթ միջոցները համակարգված ձևով կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

<sup>153</sup> Anti-Trafficking Training for Frontline Law Enforcement Officers. Background reader, Vienna, 2006, p.34

<sup>154</sup> Anti-Trafficking Training Materials for Judges and Prosecutors. Background reader, Vienna, 2006, p.84

**Պայքարի տնտեսական միջոցներ**

**Ընդհանուր**

**Հատուկ**

ըստ եկամուտների ազգաբնակչության բևեռացման նվազեցում

իրական գործազրկության մակարդակի իջեցում

**Պայքարի քաղաքական միջոցներ**

**Ընդհանուր**

**Հատուկ**

պետական և մասնավոր շահերի պաշտպանության հավասար աջակցումը

թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների, նպատակների և խնդիրների ներառումը քաղաքական ուժերի և կուսակցությունների ծրագրերում

կաշառաքի դեմ պայքարն ուժեղացնելը

հարբեցողության, թմրամոլության և թունամոլության դեմ պայքարի քաղաքական ծրագրի մշակումն ու իրականացումը

բազմազավակ ընտանիքներին և միայնակ մայրերին սոցիալական աջակցության ցուցաբերումը, նրանց ֆինանսական օգնության տրամադրումը և համապատասխան պետական ծրագրերի մշակումը

անբարենպաստ պայմաններում հայտնված անչափահասների նկատմամբ պետական աջակցության ծրագրի մշակումն ու իրագործումը

**Պայքարի իրավական միջոցներ**

**Ընդհանուր**

**Հատուկ**

տերմինաբանական անհամապատասխանության վերացումը ինչպես միջազգային և ազգային օրենսդրության մակարդակով, այնպես էլ ազգային օրենսդրության տարբեր ճյուղերի մակարդակով՝ սահմանադրական, քրեական, աշխատանքային, քաղաքացիական

օրինակ, քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանության մասին օրենքի ընդունումը

արտագնա աշխատանքների մեկնող անձանց իրավական կարգավիճակի հաստատումը ու դրա օրենսդրական բազայի ստեղծումը

իրավապահ մարմինների ու թրաֆիքինգի դեմ պայքարով զբաղվող այլ ստորաբաժանումների գործունեության իրավական կարգավորման կատարելագործումը

փողի լվացման դեմ պայքարը

**Պայքարի հոգեբանական միջոցներ**

**Ընդհանուր**

**Հատուկ**

ազգաբնակչության մոտ վտահոլության  
ամրապնդումը պետական մարմինների  
նկատմամբ

անչափահասների վրա հանցավոր երևույթների  
ազդեցության նվազեցումը և այդ ազդեցության  
տարածման կանխումը

ազգաբնակչության մեջ պատասխանատվության  
անխուսափելիության գզացողության  
ամրապնդումը

ամենօրյա դաստիարակչական աշխատանքների  
իրականացումը ինչպես դատապարտված  
անձանց, այնպես էլ խոցելի խմբերի և  
հավանական հանցագործների հետ իրավապահ և  
պատիժ իրականացնող մարմինների և  
հասարակության, հասարակական  
կազմակերպությունների ու եկեղեցու  
ներկայացուցիչների կողմից

ազգաբնակչության իրազեկումը թրաֆիքինգի  
համար պատասխանատվության և դրա հետ  
կապված այլ հարցերի վերաբերյալ

այնպիսի վիճակի ստեղծումը, երբ  
ազգաբնակչությունը թրաֆիքինգը կրնալի որպես  
ծանր հանցագործություն

աշխատանքի տեսչության կողմից բացատրական  
աշխատանքների իրականացումը  
ազգաբնակչության բոլոր շերտերում և խմբերում  
դասախոսությունների, պրակտիկ  
պարապմունքների, սեմինարների, խաղերի ձևով

### **Պայքարի կազմակերպչական միջոցներ**

#### **Ընդհանուր**

#### **Հատուկ**

օպերատիվ տվյալների հավաքման և կիրառման  
մեթոդների կատարելագործումը

ՀՀ և արտերկրի իրավապահ մարմինների  
համագործակցությունը թրաֆիքինգի դեմ  
պայքարում

թրաֆիքինգի վերաբերյալ օրենսդրության  
փորձաքննությունը

հանցավոր երևույթների ուսումնասիրությունն այլ  
երևույթների հետ փոխկապակցված  
պայմաններում

կանխարգելիչ միջոցառումների ժամանակին  
իրականացումը հավանական զոհերի  
հայտնաբերման և նրանց հետ բացատրական  
աշխատանքների իրականացման ուղղությամբ  
հավանական շահագործման վայրերի  
պարբերաբար ստուգումները ինչպես իրավապահ  
մարմինների, այնպես էլ պետական և տեղական  
ինքնակառավարման մարմինների  
աշխատակիցների և հասարակական  
կազմակերպությունների կողմից

մարմնավաճառությամբ զբաղվող կանանց  
հաշվառման կարգի հստակեցում և  
կատարելագործում,

հստակ և հետևողական պայքարի իրականացումը  
այնպիսի երևույթների դեմ, որոնք հեշտացնում են  
թրաֆիքինգի իրականացումը (փաստաթղթերի  
կեղծում, ոչնչացում, կեղծ փաստաթղթերի  
օգտագործում, կեղծ ձեռնարկատիրական  
գործունեությամբ զբաղվելը և այլն)

ԶԼՄ-ների միջոցով հակազդումը  
անբարոյականությանը, դաժանությանը և  
բռնությանը

### **Պայքարի տեխնիկական միջոցներ**

#### **Ընդհանուր**

#### **Հատուկ**

տելսնիկական նորամուծությունների ներդրումը  
իրավապահ մարմինների աշխատանքում

տեղեկատվական որոնողական համակարգերի  
զանգվածային ներդրումը և առկա համակարգերի  
կատարելագործումը

իրավապահ մարմինների նյութատելսնիկական և  
ֆինանսական պատշաճ ապահովումը

իրավապահ մարմինների աշխատակիցների  
տելսնիկական և դատաիրավական  
պատրաստվածության մակարդակի բարձրացումը

իրավապահ մարմինների համագործակցումը  
պետական և տեղական ինքակառավարման  
մարմինների և հասարակական  
կազմակերպությունների հետ, և վերջիններիս  
գործունեության աջակցումն ու օժանդակումը

## 8.2. Թրաֆիքինգի սոցիալական կանխարգելումը

Թրաֆիքինգի սոցիալական կանխարգելիչ աշխատանքները պետք է իրականացվեն տեղեկատվական, գործնական, տնտեսական, թրաֆիքինգի էության պարզաբանման և այլ ուղղություններով:

Թրաֆիքինգի սոցիալական կանխարգելման հիմնական ուղղություններից են՝

- սոցիալական գովազդը, որի միջոցով անհրաժեշտ է ներկայացնել թրաֆիքինգի էությունը, ձևերը, հետևանքները, ստեղծված ծանր իրավիճակներից դուրս գալու ճանապարհներն ու եղանակները,

- օտարերկրյա գործատուների և ամուսնական գործակալությունների ստուգումը (նման գործունեությունը ներկայումս Հայաստանում լիցենզավորման ենթակա չէ),

- բացատրական աշխատանքը արտասահման աշխատելու մեկնող անձանց հետ,

- ազգաբնակչության իրավական մակարդակի բարձրացումը,

- արտերկրում աշխատանքի և ուսման հարցերի, օտարերկրացիների իրավունքների լուսաբանումը,

- թրաֆիքինգի գոհերին (տուժողներին) օգնելը աշխատանքի տեղավորման, բնակարանների տրամադրման, ապրուստի նվազագույն միջոցների ապահովման ուղղությամբ և այլն<sup>155</sup>:

Հարկ է նշել, որ սոցիալական օգնության կարիք ունեն ոչ միայն արտերկրում թրաֆիքինգից տուժած անձինք, այլ նաև Հայաստանի տարածքում գտնվող թրաֆիքինգի գոհերը, որոնց տրամադրվող սոցիալական վերականգման ծառայությունները մանրամասն նկարագրվել են սույն ձեռնարկի նախորդ գլուխներում: Ամփոփելով թրաֆիքինգի պատճառներն ու նպաստող պայմանները, ինչպես նաև սոցիալական աշխատանքների բազմազանությունը՝ թրաֆիքինգի դեմ պայքարում սոցիալ-կանխարգելիչ աշխատանքները կարելի է պայմանականորեն բաժանել մի քանի խմբի՝

- ողջ ազգաբնակչության համար (կանխարգելման զանգվածային ձև),

<sup>155</sup> А.М. Бандурка. Противодействие торговле людьми.- Киев-Харьков, 2003.-С.190-192.

- առանձին ռիսկային խմբերի համար (կանխարգելման խմբային ձև),
- կոնկրետ անձանց նկատմամբ, որոնք զբաղվում են անձանց արտերկիր ուղարկելով, ֆինանսական գործարքներով և այլն (կանխարգելման անհատական ձև):

Առաջին խմբի հետ հիմնականում պետք է իրականացվեն ընդհանուր կանխարգելիչ և պայքարի միջոցներ: Ռիսկային խմբերի դեպքում պետք է իրականացվի նախ տվյալ ռիսկային գործոնի ուսումնասիրությունը, իսկ հետագայում նաև այդ գործոնի վերացումը:

Սոցիալ-կանխարգելիչ աշխատանքների առանձին ոլորտ են զբաղվածության ոլորտի կանխարգելիչ միջոցառումները: Այս աշխատանքները պետք է ուղղված լինեն ինչպես ընդհանրապես գործազրկության նվազեցմանը, այնպես էլ համապատասխան աշխատանքով անձանց ապահովելուն՝ ելնելով վերջինիս մասնագիտությունից, մասնագիտացումից, ֆիզիկական ու հոգեբանական հատկանիշներից, որակավորման աստիճանից, աշխատանքային փորձից ու հմտություններից:

Ողջ աշխարհում մեծանում է գործատուների և աշխատողների միությունների և գործարարների դերակատարումը հարկադիր աշխատանքի և թրաֆիքինգի դեմ պայքարում: Աշխատողների իրավունքների պաշտպանության ոլորտում կարևորվում է Արհեստակցական միությունների միջազգային կոնգրեսի (ITUC) դերակատարումը հարկադիր աշխատանքի և թրաֆիքինգի դեմ պայքարի բնագավառներում: ITUC-ի անդամ բոլոր արհեստակցական միություններին կոչ է արվել, ելնելով իրենց պետությունների իրավիճակային առանձնահատկություններից, աշխատանքային ծրագրերի մեջ ներառել որոշակի միջոցառումներ, մասնավորապես.

- Հարկադիր աշխատանքի մասին ԱՄԿ-ի կոնվենցիայի և հարակից այլ կոնվենցիաների վավերացման և արդյունավետ իրագործման խթանում,
- Երկկողմ և եռակողմ բանակցություններում և համաձայնագրերում անդրադարձ հարկադիր աշխատանքի և թրաֆիքինգի խնդիրներին,
- արհեստակցական միություններում հարկադիր աշխատանքի դեմ պայքարի քաղաքականության մշակման համար անհրաժեշտ քաղաքական և նյութական օժանդակության ապահովում,
- աշխատանքի տեղավորման գործակալությունների, ինչպես նաև ընկերությունների, այդ թվում՝ նրանց մատակարարման շղթաների մոնիթորինգ հարկադիր աշխատանքի և թրաֆիքինգի դրսևորումներ հայտնաբերելու և դրանց դեմ պայքարելու նպատակով,
- արհեստակցական միությունների երկկողմ, ոլորտային կամ տարածաշրջանային համագործակցության համաձայնագրեր, ինչպես նաև դաշինքներ քաղաքացիական հասարակության այն կազմակերպությունների հետ, որոնք հայտնի են համապատասխան ոլորտներում իրենց գիտելիքներով և փորձով,

- համագործակցություն աշխատանքային տեսչության ծառայությունների, իրավապահ և այլ համապատասխան ազգային, տարածաշրջանային կամ միջազգային մարմինների կամ միջգերատեսչական խմբերի հետ,

- կապեր ոչ ֆորմալ, չպաշտպանված և միգրանտ աշխատողների ռիսկային խմբերի հետ և նրանց հասցնագրված ուղղակի օժանդակություն՝ լուծելու նրանց իրավիճակային խնդիրները և հոգալու նրանց բնորոշ կարիքները:<sup>156</sup>

Սոցիալական կանխարգելման խնդիրներն ուղղված են նաև բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելուն և անձանց համապատասխան օգնություն և աջակցություն ցուցաբերելուն: Այս առումով Հայաստանում առկա է որոշակի օրենսդրական բազա<sup>157</sup>:

### **8.3. Թրաֆիքինգի կանխարգելման գործընթացում միջազգային և հասարակական կազմակերպությունների մասնակցությունը**

#### ***8.3.1. Թրաֆիքինգի կանխարգելման գործընթացում միջազգային համագործակցությունը***

Պայքարը հանցավորության դեմ պնտության ներքին գործառույթն է, որն իրականացնում են իրավապահ մարմինները ազգային օրենսդրության հիման վրա, սակայն պայքարը ներպնտական հանցավորության հետ արդի պայմաններում այդքան էլ դյուրին չէ, քանի որ արագորեն ավելանում են այն հանցագործությունները, որոնք վտանգ են ներկայացնում ոչ թե առանձին պնտությունների, այլ ամբողջ տարածաշրջանների և մարդկության համար: Դրանցից են ահաբեկչությունը, թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, թրաֆիքինգը, կաշառակերությունը և այլն: Սա պայմանավորված է կազմակերպված հանցավորության անդրազգային բնույթով: Այս հանցագործությունները փոփոխվում են ոչ միայն քանակական ցուցանիշներով, այլ նաև որակական հատկանիշներով՝ կատարման եղանակով ու մեթոդով, իրականացման ոլորտով, ներգրավվող անձանց նկատմամբ կիրառվող սպառնալիքների և հարկադրանքի նախկինում չկիրառվող ձևերով և այլն: Հետևաբար, վերը նշված հանցագործությունների դեմ պայքարը պնտք է իրականացվի նաև միջազգային մակարդակով:

Այսօր կարելի է տարանջատել միջազգային համագործակցության երկու ուղղություն՝

- իրավապայմանագրային (կոնվենցիոն) մեխանիզմ, որն իրականացվում է պայմանագրերի կնքմամբ կամ հատուկ պայմանավորվածություն ձևք բերելով,

<sup>156</sup> Վիեննայի ֆորումը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով 13-15 փետրվարի, 2008թ. Թիվ 004 աշխատանքային հանդիպում. ինչու և ինչպես է հարկադիր աշխատանքի և սեռական շահագործման նկատմամբ պահանջարկը նպաստում մարդկանց թրաֆիքինգի երևույթին, էջ 9

<sup>157</sup> Օրինակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության 2005թ. փետրվարի 10-ի ու ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարների 2005թ. փետրվարի 21-ի՝ «Աղքատության ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության նշանակման գործերը վարելու ու ձևակերպելու, փոխադարձ հաշվետվությունների իրականացման հրահանգը հաստատելու մասին» համատեղ հրամանը, ՀՀ կառավարության 2006թ. հուլիսի 27-ի N1112-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2006թ. ապրիլի 13-ի N614-Ն «Ժամանակավոր օթևանի տրամադրման կարգը և պայմանները հաստատելու մասին» որոշումը և այլն: Սոցիալական կանխարգելման որոշ տարրեր առկա են նաև կառավարության 2007թ. դեկտեմբերի 6-ի «ՀՀ-ում 2007-2009թթ. ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» որոշման 2-րդ բաժնի 1-ին և 4-րդ նպատակների ռազմավարություններում:



• ինստիտուցիոնալ մեխանիզմ, որն իրականացվում է մեկ միջազգային կազմակերպության սահմաններում:

Քանի որ թրաֆիքինգը հաճախ անդրազգային հանցագործություն է, ուստի նախկինում քննարկվող համագործակցության և ուղղորդման համար առկա բոլոր չափանիշները և չափորոշիչները պետք է կիրառվեն նաև սահմաններից դուրս: Թեպետև մի քանի համաձայնագրեր թույլ են տալիս և կարգավորում են համագործակցությունը տարբեր իրավապահ մարմինների միջև, սակայն չկան բազմազերատեսչական միջազգային համագործակցության և զոհերի ուղղորդման անդրսահմանյան մեխանիզմների համաձայնեցված չափանիշներ: Այդուամենայնիվ, համագործակցությունն արտասահմանում գործող որոշ միջազգային կառույցների հետ կարող է վճռորոշ դեր խաղալ հետաքննության և, հատկապես, զոհի պաշտպանությանն առնչվող գործողությունների արդյունավետության համար: Ոչ իրավապահ գերատեսչությունների հետ միջազգային համագործակցությունը հարկավոր է նկատի ունենալ տեղեկատվության կամ ապացույցների հավաքագրման փուլում, ինչպես նաև հետաքննությունից հետո՝ զոհերի համար ռիսկերի գնահատում իրականացնելու, դատավարության ժամանակ և դրանից հետո վկաների պաշտպանությունը իրականացնելու և դեպի հայրենիք անվտանգ վերադարձն ապահովելու նպատակով:

Միջազգային կազմակերպված հանցավորության դեմ արդյունավետ պայքարելու համար էական է, որպեսզի իրավապահ մարմինները համագործակցեն իրար հետ միջազգային ասպարեկում:

Փոխադարձ իրավական աջակցության վերաբերյալ առավել կարևոր են հետևյալ միջազգային ակտերը՝

- Հանցագործների հանձման մասին եվրոպական կոնվենցիա (1957թ.),
- Հանցագործների հանձման մասին եվրոպական կոնվենցիայի (1957թ.) լրացուցիչ Արձանագրություն (1975թ.),
- Քրեական գործերում փոխադարձ իրավական աջակցության մասին եվրոպական կոնվենցիա (1959թ.),
- Քրեական գործերում փոխադարձ իրավական աջակցության մասին եվրոպական կոնվենցիայի (1959թ.) լրացուցիչ Արձանագրություն (1978թ.) և երկրորդ լրացուցիչ Արձանագրություն (2001թ.):

Ստորև ներկայացվում են քրեական գործերով միջազգային համագործակցություն հայցելու ընդհանուր կանոնները և այն հատուկ պահանջները, որոնք կարող են ի հայտ գալ թրաֆիքինգի ոլորտում:

***Քրեական գործերով միջազգային համագործակցության պահանջների ընդհանուր կանոններ***

*ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայով* նախատեսված բոլոր փոխադարձ իրավական աջակցության մասին դրույթները գետնիցված են 18-

րդ հողվածում: Այն ներառում է այն նպատակների ցանկը, որոնց համար կարելի է հայցել փոխադարձ աջակցություն, ինչպես նաև ընդգրկում է տեղեկատվության կամավոր և անձանց ժամանակավոր փոխանցման հնարավորություն: Ավելին, այնտեղ ամրագրված է, թե ինչպես պետք է կատարվեն փոխադարձ իրավական աջակցության պահանջները, ինչ տվյալներ պետք է այնտեղ պարունակվեն և որ մարմինն դրանք պետք է հասցեագրված լինեն:

*ԵՆ-ի փոխադարձ իրավական աջակցության մասին կոնվենցիայով* նախատեսված փոխադարձ իրավական աջակցության մասին դրույթները զետեղված են 2-ից 6-րդ և 14-ից 20-րդ հոդվածներում: ԵՆ-ի փոխադարձ իրավական աջակցության մասին կոնվենցիան պարունակում է տարրական կանոններ, որոնք պետք է կիրառվեն փոխադարձ իրավական աջակցություն հայցելիս և նման պահանջները կատարելիս: Դրա լրացուցիչ Արձանագրությունը կոնվենցիայի կիրառման ոլորտը տարածում է ֆինանսական հանցատեսակների վրա, սակայն նույնպես ավարտուն է:

Այն խնդիրները, որոնք կարող են առաջանալ այս փաստաթղթերը կիրառելիս, լրացնում են կոնվենցիայում նախատեսված փոխադարձ աջակցության համակարգը:

*ԵՆ-ի փոխադարձ իրավական աջակցության մասին կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ Արձանագրությունը* նախատեսված է լրացնելու կոնվենցիան՝ արդիականացնելով փոխադարձ աջակցությունը կարգավորող առկա դրույթները և ընդարձակելով այն հանգամանքների շրջանակը, որոնցում կարելի է հայցել միջազգային համագործակցություն և դարձնելով այն ավելի արագ և ճկուն: Այս տեսակետից տեքստը մեծապես հիմնված է ԵՄ Փոխադարձ իրավական աջակցության մասին կոնվենցիայի և Շենգենի պայմանագրի իրականացման մասին կոնվենցիայի վրա:

*Հանցավոր եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին ԵՆ-ի կոնվենցիայի* 18-ից 20-րդ և 23-ից 35-րդ հոդվածները պարունակում են այս կոնվենցիայի շրջանակներում պետությունների միջև համագործակցության վերաբերյալ ընդհանուր կանոններ, որն ուղղված է նպաստելու միջազգային համագործակցությանը բոլոր հանցատեսակներից և, հատկապես, լուրջ հանցագործություններից (թմրամիջոցների անօրինական շրջանառությունից, զենքի ապօրինի առևտրից, ահաբեկչությունից, թրաֆիքինգից և մեծ շահույթ բերող այլ հանցատեսակներից) ստացված եկամուտների հետաքննության, հետախուզման, առգրավման և բռնագրավման միջազգային համագործակցությանը նպաստելուն:

***Հատուկ պահանջներ թրաֆիքինգի ոլորտում***

*ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին 2000թ. թիվ 2 Արձանագրության* 10-րդ հոդվածը նախատեսում է համագործակցություն մասնակից պետությունների իրավապահ մարմինների, ներգաղթային և համապատասխան այլ մարմինների միջև: Այս մարմինները պետք է համագործակցեն միմյանց հետ՝ անհրաժեշտության դեպքում փոխանակելով տեղեկություններ, որոնք նրանց թույլ կտան որոշելու:

• արդյոք այլ անձանց պատկանող փաստաթղթերով կամ առանց փաստաթղթերի միջազգային սահմանը հատող կամ հատելու փորձ կատարող անհատները թրաֆիքինգ իրականացնող հանցագործներ են, թե՛ թրաֆիքինգի զոհեր,

• փաստաթղթերի այն տեսակները, որոնք անհատներն օգտագործել են կամ փորձել են օգտագործել թրաֆիքինգի նպատակով միջազգային սահմանը հատելու համար, և

• այն միջոցները և մեթոդները, որ օգտագործել են կազմակերպված հանցավոր խմբերը թրաֆիքինգի նպատակով, այդ թվում՝ զոհերի հավաքագրումը և փոխադրումը, թրաֆիքինգով զբաղվող անհատների և խմբերի միջև առկա երթուղիները և կապերը, ինչպես նաև նրանց հայտնաբերման հնարավոր միջոցները:

*ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող Յամարով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներս բերելու դեմ 2000թ. թիվ 2 Արձանագրության* 8-րդ և 9-րդ հոդվածները մասնակից պետությունների համար հստակ միջոցներ են նախատեսում այլ մասնակից պետությունների հետ համագործակցելու առումով այն նավերի դեմ, որոնց վերաբերյալ պետությունն ունի ողջամիտ հիմքեր կասկածելու, թե տվյալ նավը զբաղվում է ծովով միգրանտների ապօրինի ներմուծմամբ:

Այս Արձանագրության 10-րդ հոդվածով մասնակից պետությունները կարող են համապատասխան տեղեկատվություն փոխանակել արձանագրությամբ նախատեսված նպատակներին հասնելու համար այնպիսի հարցերում, ինչպիսիք են.

- նավի երթուղիները և փոխադրողները,
- հանցավոր կազմակերպությունների և կազմակերպված հանցավոր խմբերի ինքնությունը և մեթոդները,

• մասնակից պետության կողմից թողարկված ճամփորդական փաստաթղթերի իսկությունը և պատշաճ ձևը, և ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթղթերի դատարկ ձևերի հափշտակումը կամ դրա հետ կապված չարաշահումները,

• մարդկանց քողարկման և փոխադրման միջոցները և մեթոդները, ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթղթերի ապօրինի փոփոխությունը, վերարտադրումը կամ ձեռք բերումը կամ այլ չարաշահումները, ինչպես նաև դրանց հայտնաբերման ճանապարհները,

• սույն արձանագրության 6-րդ հոդվածում նշված գործողությունների կանխարգելման և հակազդման ուղղությամբ առկա օրենսդրական փորձը, ընթացակարգերը և միջոցառումները, և

• իրավապահ մարմինների համար օգտակար գիտական և տեխնոլոգիական տեղեկություններ:

*ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայի 16-րդ հոդվածը* նախատեսում է մի շարք կանոններ, որոնք կիրառելի են այս կոնվենցիայի շրջանակներում այն հանցագործությունների և դեպքերի նկատմամբ, որոնցում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի ընդգրկված է կազմակերպված հանցավոր խումբ կամ անձ, որը հանձնման պահանջի առարկա է և գտնվում է այդ պահանջը ստացած պետության տարածքում, իսկ այն հանցագործությունը, որի

համար հայցվում է նրա հանձնումը, պատժելի է երկու մասնակից պետությունների օրենսդրություններով:

*Դատավարության փոխանցում.* պետությունները կարող են որոշում կայացնել փոխանցել դատավարությունը մեկ այլ պետություն, որն ավելի հարմար համարվի դատավարության անցկացման համար: Դա նշանակում է, որ որոշ գործերով դատավարություններն այս կամ այն պատճառներով (որոնք նշված են կիրառելի կոնվենցիաներում և համաձայնագրերում) փոխանցվում են տվյալ գործով դատաքննություն անցկացնելու իրավասություն ունեցող մի պետությունից մեկ այլ պետության, որը չունի այս իրավասությունը, սակայն ստանում է այն դատավարության փոխանցման պահանջի միջոցով: Այն պատճառները, որոնց հիման վրա որոշակի գործի դատաքննությունը կարող է փոխանցվել, հիմնականում կենտրոնացած են կասկածյալի շուրջ: Այն պետությունը, որի քաղաքացի կամ բնակիչ է հանդիսանում կասկածյալը կամ այն պետությունը, որտեղ նա կրում է կամ կրելու է ազատագրկման ձևով պատիժը, որոշելու է, թե՞ որ պետություն կարող է փոխանցվել դատավարությունը:

ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայի 21-րդ հոդվածը պահանջում է պետությունից՝ ուսումնասիրել հանցագործության դատաքննության փոխանցման հնարավորությունը այս կոնվենցիայի շրջանակներում, եթե համարվում է, որ նման փոխանցումը բխում է արդարադատության պատշաճ կատարման շահերից, մասնավորապես այն դեպքերում, երբ գործը գտնվում է մեկից ավելի իրավասություններում:

Թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում միջազգային համագործակցությունը իրականացվում է նաև տարածաշրջանային այլ պայմանագրերի շրջանակներում: Այդ մեխանիզմը նկարագրենք 2002թ. հոկտեմբերի 7-ին ԱՊՀ առանձին անդամ պետությունների միջև Քիշնևում ստորագրված Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին կոնվենցիայի շրջանակում: Կոնվենցիայի 60-րդ հոդվածի համաձայն, քրեական գործով իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ հանձնարարությունը կազմվում է այդ կոնվենցիայի 7-րդ հոդվածի պահանջներին համապատասխան և պետք է ներառի.

ա) կատարված հանցագործության նկարագիրը և որակումը, վնասի չափի մասին տվյալները, եթե այն պատճառով է հանցավոր արարքի հետևանքով,

բ) այն դատավարական գործողությունների, հետախուզական կամ օպերատիվ-հետախուզական միջոցառումների մանրամասն ցանկը, որոնք անհրաժեշտ է իրականացնել քրեական գործի շրջանակներում, ինչպես նաև հանձնարարության կատարման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ,

գ) այն հարցերի ցանկը, որոնք անհրաժեշտ է պարզել հարցաքննության ժամանակ,

դ) այն օրենքի նորմի լրիվ տեքստը, որի հատկանիշներով քննվում է քրեական գործը:

Նույն կոնվենցիայի 63-րդ հոդվածը նախատեսում է, որ մեկ կամ մի քանի անձանց կողմից երկու և ավելի Պայմանավորվող կողմերի տարածքներում կատարված կամ նրանց շահերը

շոշափող հանցագործությունների արագ և բազմակողմանի քննության նպատակով կարող են ստեղծվել համատեղ քննչական օպերատիվ խմբեր: Համատեղ քննչական օպերատիվ խումբ ստեղծելու վերաբերյալ առաջարկությունը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում, հայցվող Պայմանավորվող կողմը հայցող Պայմանավորվող կողմին ծանուցում է ընդունված որոշման մասին և, համաձայնության դեպքում, միաժամանակ նրան է տրամադրում այդպիսի խմբի մեջ ներգրավված պաշտոնատար անձանց ցանկը: Համատեղ քննչական օպերատիվ խմբի անդամները անմիջականորեն փոխգործակցում են միմյանց հետ, համաձայնեցնում նախնական քննության հիմնական ուղղությունները, քննչական գործողությունների, հետախուզական կամ օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացումը, փոխանակում ստացված տեղեկատվությունը: Ըստ համաձայնության՝ նրանց գործունեության համակարգումն իրականացնում է համատեղ քննչական օպերատիվ խմբի ստեղծման նախաձեռնողը կամ նրա անդամներից որևէ մեկը:

Համագործակցությունն իրականացվում է նաև հանցագործների հանձնման միջոցով՝ իրենց տարածքներում գտնվող անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու կամ դատավճիռն ի կատար ածելու համար:

Մեկ անձի կամ անձանց խմբի կողմից երկու կամ ավելի Պայմանավորվող կողմերի տարածքներում հանցագործություններ կատարվելու դեպքում այդ հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը կարող են միավորվել մեկ վարույթում: Օգնությունը ցուցաբերվում է նաև այլ հարցերում՝ հետախուզման, կալանքի և այլն: Այսպես, Պայմանավորվող կողմերի իրավասու արդարադատության հիմնարկները քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ հանձնարարությունների հիման վրա, ներքին օրենսդրությանը համապատասխան, կատարում են հանցավոր ճանապարհով ստացված գույքի, փողի և արժեքների, ինչպես նաև հանցավոր գործունեությունից մեղադրյալներին (ամբաստանյալներին, դատապարտյալներին) պատկանող եկամուտների հայտնաբերմանն ուղղված բոլոր անհրաժեշտ՝ քննչական, հետախուզական կամ օպերատիվ-հետախուզական միջոցառումները: Հայտնաբերելով այդպիսի գույքը, փողը, արժեքներն ու եկամուտները, Պայմանավորվող կողմերի իրավասու արդարադատության մարմինները միջոցներ են ձեռնարկում դրանց պահպանության ապահովմանն ուղղությամբ՝ դրանց հետ ցանկացած գործառնության կանխարգելման և դրանց առգրավման նպատակով կալանք դնելու ձևով:

Միջազգային համագործակցությանը վերաբերող նորմեր առկա են նաև մասնագիտական ուղղվածությամբ որոշ ակտերում: Օրինակ, *Մարդկանց, մարդկային օրգանների և հյուսվածքների առևտրի դեմ պայքարում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագրի* 4-րդ հոդվածի համաձայն, կողմերը համագործակցում են հետևյալ հիմնական ոլորտներում՝

- օպերատիվ, քրեագիտական, վիճակագրական և այլ տեղեկատվություն, այդ թվում՝ նախապատրաստվող և կատարված հանցագործությունների, այդ արարքներից ստացված

եկամուտների օրինականացման և դրանց մասնակից ֆիզիկական և իրավաբանական անձանց մասին տեղեկությունների փոխանակում,

- օպերատիվ հետախուզական միջոցառումներ անցկացնելու մասին հարցումների կատարում,

- համակարգված օպերատիվ հետախուզական և կանխարգելիչ միջոցառումների պլանավորում և իրականացում,

- մարդկանց առևտրի նպատակով ինտերնետ ցանցի օգտագործումը կանխելուն և խափանելուն ուղղված համաձայնեցված միջոցների մշակում և իրականացում,

- անձնագրավիզային վերահսկողության տեղեկատվական համակարգի ներդրման փորձի փոխանակում, ներառյալ բիոմետրիկ տվյալների օգտագործումը,

- մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի գոհերի սոցիալական և բժշկական վերականգնման նոր մեթոդների մշակում և ներդրում:

Բացի այդ, համագործակցությունը հնարավոր է նաև տարբեր քննչական գործողություններ իրականացնելիս կամ այդ գործողությունների արդյունքում ստացված տվյալները օգտագործելիս: Օրինակ, Ֆադիլ Բերիշան ընդդեմ Նիդերլանդների որոշմամբ Եվրոպական դատարանը ճանաչում է այն հանգամանքը, որ մի պետության տարածքում գտնվող տուժողի ցուցմունքները կարող են ապացույց հանդիսանալ մեկ այլ պետության տարածքում դատավարության ընթացքում, և տուժողի մասնակցությունը պարտադիր չէ<sup>158</sup>:

Այսպիսով, միջազգային ոստիկանական համագործակցության բնագավառում առանձնացվում են գործունեության հետևյալ հիմնական ոլորտները՝

- 1) հանցագործների հանձնման հայտեր,

- 2) փոխադարձ իրավական օգնության տարբեր դրույթներով պահանջագրերի ներկայացում և կատարում այնպիսի գործունեության համար, ինչպես, օրինակ, տարածքի խուզարկումը պատշաճ փաստաթղթով և ապացույցների առգրավումը, վկաների հարցաքննումը, փաստային ապացույցների ձեռքբերումը և այլն,

- 3) պաշտոնական պահանջագրեր ներկայացնելուց առաջ մեկ իրավապահ մարմնից մյուսին ուղղվող հայտեր՝ ապացուցման փաստերի գոյությունը կամ այլ կարգավիճակը որոշելու նպատակով,

- 4) մեկ իրավապահ մարմնից մյուսին ուղղվող օպերատիվ աջակցության հայտեր, օրինակ՝ վերահսկման, առաքումների հսկողության և այլն:

ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին Կոնվենցիայի 19-րդ հոդվածի համաձայն մասնակից պետությունները քննարկում են երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների կնքման հնարավորությունը, որոնք հնարավոր կդարձնեն մեկ կամ մի քանի պետություններում քննության, քրեական հետապնդման կամ դատական քննության առարկա համարվող գործերի կապակցությամբ

<sup>158</sup> Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի լրատու. N3.- Եր., 2009.-էջ201-206:

շահագրգիռ իրավասու մարմինների որոշմամբ համատեղ քննություններ անցկացնող օդակների ստեղծումը: Այդպիսի համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների բացակայության դեպքում համատեղ քննությունները կարող են անցկացվել յուրաքանչյուր առանձին դեպքում՝ ըստ համաձայնության՝ տվյալ պետության ինքնիշխանության լիակատար հարգման սկզբունքի հիման վրա:

**8.3.2. Թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով համագործակցող միջազգային կազմակերպությունները**

Թրաֆիքինգի դեմ պայքարում կարևոր դեր են խաղում միջազգային կազմակերպությունները: Ստորև ներկայացվում են առավել ազդեցիկ կառույցները:

1. «Ինտերպոլ-ն» ամենախոշոր ոստիկանական կազմակերպությունն է աշխարհում: Այն հիմնադրվել է 1923թ.-ին՝ նպաստելու քրեական ոստիկանության միջազգային համագործակցությանը և ներկայումս ունի 184 անդամ պետություն: Այն սատարում և աջակցում է բոլոր այն կազմակերպություններին, մարմիններին և ծառայություններին, որոնց առաքելությունն է կանխարգելել միջազգային հանցավորությունը և պայքարել դրա դեմ:

Ֆրանսիայի Լիոն քաղաքում գտնվող Ինտերպոլի գլխավոր քարտուղարության միջոցով ապահովվում է ոստիկանությունները կապող հաղորդակցման համակարգը: Կազմակերպության ուշադրության տակ գտնվող առաջնային ոլորտներն են՝ հասարակական անվտանգությունը և ահաբեկչությունը, հանցավոր կազմակերպությունները, թմրամիջոցների հետ կապված հանցագործությունները, ֆինանսական և բարձր տեխնոլոգիաների հետ կապված հանցագործությունները, թրաֆիքինգը և հետախուզվող անձանց որոնման աջակցությունը: Ինտերպոլի կարևորագույն խնդիրներից մեկը մասնակից պետություններին ահազանգելն է այն անձանց վերաբերյալ, որոնք հետախուզվում են աշխարհի ոստիկանության ծառայությունների կողմից: Թրաֆիքինգով զբաղվող անձին որոնելու դեպքում նրան Ինտերպոլի կողմից հետախուզվող անձանց ցուցակում ընդգրկելու հայտը պետք է ներկայացնի անդամ պետության ներպետական ոստիկանությունը: Հենց ներպետական ոստիկանությունն է, որ հիմնականում պետք է հայտնաբերի և ձերբակալի նրան:

Գլխավոր քարտուղարությունը, որպես համակարգող մարմին, իր անդամներին տրամադրում է քրեական տեղեկատվության միջազգային մուտքի հնարավորություն տվյալների շտեմարան, ինչպես նաև ամփոփագրում է հատուկ հանցագործությունների, սխեմաների և միտումների համաշխարհային պատկերը:

Ոստիկանության համաշխարհային կապի համակարգից, քրեական տվյալների շտեմարաններից և վերլուծական ծառայություններից բացի, Ինտերպոլն ապահովում է նաև ոստիկանական ծառայությունների օպերատիվ աշխատանքի կանխազդական աջակցությունը, օրինակ՝ տեղեկատվության փոխանակման, միջազգային համագործակցությանը նպաստելու և անդամ երկրների համատեղ օպերատիվ գործունեությունը համակարգելու միջոցով:

2. «Եվրապոլ»-ը ԵՄ իրավապահ կազմակերպությունն է, որը տեղակայված է Հաագայում և գրառվում է քրեական հետախուզությանը: Դրա նպատակն է բարելավել միջազգային կազմակերպված հանցավորության և ահաբեկչության կանխարգելմանն ու հակազդմանն ուղղված համագործակցությունը մասնակից երկրների իրավասու մարմինների միջև: Սկսած 2002 թվականից Եվրապոլի մանդատն ընդգրկում է միջազգային հանցավորության բոլոր լուրջ ձևերն՝ ըստ Եվրապոլի մասին կոնվենցիայի հավելվածում բերված ցանկի, այդ թվում՝ թրաֆիքինգը: Այս հանցատեսակի առնչությամբ Եվրապոլը ճանաչում է ԵԽ-ի շրջանակային որոշման մեջ բերված սահմանումը:

Եվրապոլը ոչ միայն աջակցում է իրեն անդամակցող պետություններին թրաֆիքինգի և այլ հանցագործությունների դեմ պայքարում, այլև բանակցել է այլ միջազգային կազմակերպությունների և պետությունների, օրինակ՝ Բուլղարիայի, Ռումինիայի և Ռուսաստանի հետ՝ երկկողմ օպերատիվ կամ ռազմավարական համաձայնագրերի շուրջ:

Երկրների պահանջով Եվրապոլը նպաստում է տեղեկատվության փոխանակմանը Եվրապոլի կապավոր սպաների միջև (ԵԿՄ)՝ ազգային օրենսդրությանը համապատասխան: ԵԿՄ-ները գործուղվում են Եվրապոլ անդամ պետությունների կողմից որպես ազգային իրավապահ մարմինների ներկայացուցիչներ: Եվրապոլը նաև համակարգում և տրամադրում է օպերատիվ վերլուծություն՝ անդամ պետությունների իրավապահների աշխատանքին աջակցելու նպատակով, տրամադրում է ռազմավարական զեկույցներ (օրինակ՝ սպառնալիքների գնահատումներ) և հանցատեսակների վերլուծություններ՝ անդամ պետությունների կողմից և նրրորդ անձանց կողմից տրամադրված տեղեկատվության և օպերատիվ տվյալների հիման վրա, ապահովում է փորձագիտություն և տեխնիկական աջակցություն ԵՄ-ում իրականացվող հետաքննությունների և օպերատիվ միջոցառումների համար<sup>159</sup>:

3. Երկկողմ համաձայնագրերի հիման վրա Եվրապոլի կապավոր սպաները գործուղվում են իրենց հայրենիքից նրրորդ երկրում աշխատելու համար՝ ընդունող մարմինների հետ ունեցած համաձայնությամբ: Տեղում գտնվող կապավոր սպաների միջոցով հաստատվող երկկողմ կապերի օգտագործումը վերջին տարիներին եղել է օգտակար: Վստահությունը, որը տեղեկատվության փոխանակման հիմքն է, ավելի արագ ու հեշտ է ձևավորվում անհատական շփմամբ: Այս կապերի միջոցով օպերատիվ տվյալների և տեղեկատվության փոխանակումն ավելի արագ և ուղղակիորեն է ընթանում՝ շրջանցելով բարդ վարչարարական ընթացակարգերը և բարձրացնելով արդյունավետությունը: Ավելին, այս համակարգը թույլ է տալիս մոտիկից հետևել առանձին գործերին հետաքննության ընթացքին՝ ապահովելով արդյունավետ և անխափան համակարգում այլ երկրների համապատասխան գործընկերների հետ<sup>160</sup>:

4. «Եվրոջաստ»-ը ԵՄ մարմին է, որը հիմնադրվել է 2002թ.-ին և տեղակայված է Հաագայում<sup>161</sup>: Այն ստեղծվել է՝ բարձրացնելու անդամ պետությունների հետաքննչական և

<sup>159</sup> Anti-Trafficking Training for Frontline Law Enforcement Officers. Background reader, Vienna, 2006, p.45.

<sup>160</sup> Anti-Trafficking Training for Frontline Law Enforcement Officers. Background reader, Vienna, 2006, p.45-46.

<sup>161</sup> Հայաստանի Հանրապետությունը չի անդամակցում, սակայն օգտակար է իմանալ այդ կազմակերպության մասին:



դատախազական իրավասու մարմինների արդյունավետությունը լուրջ և կազմակերպված անդրազգային հանցագործությունների հետաքննության և դատական հետապնդման շրջանակներում: Անդամ պետություններից յուրաքանչյուրը ներկայացված է Եվրոջաստում ազգային անդամի կողմից, որը կարող է լինել դատախազ, քննիչ կամ դատավոր: Գործնական տեսակետից և օպերատիվ աշխատանքի համատեքստում Եվրոջաստը ջանում է բարելավել դատական համագործակցությանն ու փոխադարձ իրավական աջակցությանն առնչվող այն առկա փաստաթղթերի բոլոր տեսակների աշխատանքը, որոնք օգտագործվում են ԵՄ-ում (համապատասխան փաստաթղթերի օրինակներ են՝ 1959թ.-ի ԵԽ-ի կոնվենցիան քրեական գործերում փոխադարձ աջակցության մասին, ԵՄ խորհրդի շրջանակային որոշումը համատեղ հետաքննչական խմբերի մասին): Եվրոջաստն օժտված է լրացուցիչ լիազորությամբ՝ իր տարեկան զեկույցում ԵՄ նախարարական խորհրդին ներկայացնել հանձնարարականներ և առաջարկություններ օրենսդրության և/կամ դատական համագործակցության ոլորտում ընթացակարգերի արդյունավետության վերաբերյալ:

Եվրոջաստի հիմնական նպատակներն են անդամ պետություններում բարելավել իրավասու ազգային մարմինների՝ միայնաց հետ համագործակցու կարողությունները և բարելավել անդրազգային հետաքննությունների համակարգումը: Եվրոջաստը կարող է նաև աջակցել անդամ պետություններին երրորդ պետությունների իրավասու մարմինների հետ համագործակցելու հարցում, եթե գոյություն ունեն տվյալ երրորդ պետության հետ համագործակցության մասին համաձայնագրեր կամ ձեռք են բերվել այլ համաձայնություններ: Եվրոջաստը կարող է կարևոր դերակատարում ունենալ իրեն ուղղորդված կազմակերպված հանցավորության վերաբերյալ բոլոր գործերի, այդ թվում՝ թրաֆիքինգի գործերի հարցում<sup>162</sup>:

5. UNODC – ՄԱԿ-ի թմրամիջոցների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գրասենյակն է, որի հիմնական նպատակն է պայքարը թմրամիջոցների ապօրինի շրջանառության և այլ հանցագործությունների դեմ: Քանի որ թրաֆիքինգը համաշխարհային խնդիր է և կապված է կազմակերպված հանցավորության հետ, UNODC-ն բազմաթիվ ուսումնասիրություններ և հետազոտություններ է կատարել կազմակերպված հանցավորության, այդ թվում թրաֆիքինգի մասին: Մասնավորապես, UNODC-ն պատրաստել է ձեռնարկ մասնակից պետությունների օրենսդիր մարմինների համար՝ ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին Կոնվենցիայի պահանջները իրականացնելու և տեխնիկական աջակցության վերաբերյալ:

6. ՄԶՁՄԿ (ICMPD) – Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոն: Այն պատրաստել է թրաֆիքինգի խնդրի լուծմանն ուղղված համալիր ծրագիր, որը և իրագործել է Հարավարևելյան Եվրոպայի որոշ երկրներում: Կազմակերպությունը բավականին ծավալուն աշխատանք է կատարել թրաֆիքինգի դեմ պայքարում ներգրավված իրավապահ մարմինների վերապատրաստման ոլորտում:

<sup>162</sup> Anti-Trafficking Training Materials for Judges and Prosecutors. Background reader, Vienna, 2006, p.138

**8.3.3. Թրաֆիքինգի կանխարգելման գործընթացում հասարակական կազմակերպությունների մասնակցությունը**

Թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում արդարադատության համակարգը պետք է ներառի ոչ միայն թրաֆիքինգ իրականացնողներին պատժելու, այլ նաև՝ թրաֆիքինգից տուժած անձանց պաշտպանելու և օժանդակելու մեխանիզմներ: Մոտեցումները կարող են լինել տարբեր, և դա կախված է բազմաթիվ գործոններից:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով 2008թ. փետրվարին կայացած Վիեննայի ֆորումը, օրինակ, առաջ քաշեց այն հարցը, որ պաշտպանության և օժանդակության միջոցառումների իրագործումը չպետք է պայմանավորված լինի քրեական գործի շրջանակներում իրավապահ մարմինների հետ համագործակցելու՝ թրաֆիքինգից տուժած անձի պատրաստակամությունից. այլ կերպ ասած, թրաֆիքինգի դեմ պայքարում կարևորվում են նախ և առաջ մարդու իրավունքները: Լավագույն տարբերակն այն է, որ թրաֆիքինգից տուժած բոլոր անձանց տրվի առնվազն 30 օր ժամանակ իրավապահների հետ համագործակցելու մասին խորհելու և որոշում կայացնելու համար (reflection period)<sup>163</sup>:

Այստեղ հարկ է նշել, որ համաձայն Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, սոցիալական աջակցության տրամադրումը չի կարող հետապնդել տրամադրված սոցիալական ծառայությունների դիմաց այլ ծառայություններ կամ որևէ փոխհատուցում ստանալու ակնկալիք:

Տուժողների պաշտպանության և օժանդակության քաղաքականությունը պետք է ներառի ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին 2000թ. թիվ 2 Արձանագրությունում և Եվրոպայի խորհրդի 2005թ. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին կոնվենցիայում ամրագրված բաղադրիչները: Որպեսզի թրաֆիքինգի դեմ պայքարի մեխանիզմների հիմքում դրվեն մարդու իրավունքները, տուժողների պաշտպանության և օժանդակության քաղաքականության կառուցակարգերից պետք է կարողանան օգտվել թրաֆիքինգից տուժած բոլոր անձինք՝ առանց որևէ նախապայմանի<sup>164</sup>: Այս գործընթացում կարևորվում են ինչպես պետական ու միջազգային, այնպես էլ հասարակական կազմակերպությունների դերն ու նշանակությունը:

Հասարակական կազմակերպությունները (այսուհետ՝ ՀԿ) հաճախ ստեղծվում և ֆինանսավորվում են և՛ պետական, և՛ հասարակական կազմակերպությունների կողմից՝ որպես թրաֆիքինգից տուժած անձանց աջակցության ծառայություններ մատուցող կառույցներ: Քրեական գործերի քննության առումով հասարակական կազմակերպությունների դերը պետք է հստակորեն սահմանված լինի և համակարգվի այնպիսի գործիքներով, ինչպիսիք են փոխըմբռնման

<sup>163</sup> Վիեննայի ֆորումը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով 2008թ. փետրվարի 13-15, Ավստրիա կենտրոն, Վիեննա. պաշտպանությունից մինչև հետապնդում. ռազմավարական մոտեցում. - էջ 5:

<sup>164</sup> Նույն տեղը. էջ 6:

հուշագրերը, ուղղորդման ազգային մեխանիզմները և (կամ) գործողությունների ազգային ծրագրերը:

Կազմակերպություններն իրենց կամ պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությամբ կարող են պայմանագրային կամ փոխադարձ համաձայնության այլ ձևերով ամբողջությամբ իրականացնել կամ մասնակցել պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների սոցիալական, առողջապահական, կրթական, դաստիարակչական, մշակութային, մարզական և այլ հասարակական նշանակության ծրագրերի, այլ միջոցառումների: Արգելվում է պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների ու նրանց պաշտոնատար անձանց միջամտությունը կազմակերպության գործունեությանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Յանկացած ՀԿ, համաձայն 2001թ. դեկտեմբերի 4-ի «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի, իր կանոնադրությանը համապատասխան, կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական ոչ առևտրային կազմակերպություններին և ունենալ միջազգային այլ կապեր: Կազմակերպությունը, իր կանոնադրությանը համապատասխան, կարող է այլ պետություններում ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ այդ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ: Այսինքն, մինչույն ՀԿ-ն, ունենալով ստորաբաժանումներ տարբեր երկրներում, կարող է հնչուսացնել թրաֆիքինգի դեմ պայքարի իրականացումը և թրաֆիքինգի զոհերին աջակցությունը:

Հասարակական կազմակերպությունները կարևոր գործընկերներ են հատկապես կանխարգելմանն ու աջակցությանն ուղղված հարցերում, սակայն կարող են նաև առանցքային դերակատարում ունենալ դատական հետապնդման ոլորտում աջակցելու հարցում՝ սկսած թրաֆիքինգի զոհերի նույնացումից մինչև իրավական, բժշկական և հոգեբանական օգնության տրամադրումը, հայրենիք կամավոր վերադարձին և վերաինտեգրմանը նպաստելը, կամ էլ ընդունող երկրում ինտեգրմանն օժանդակելը, եթե զոհին շնորհվել է կեցության կարգավիճակ:

Քաղաքացիական հասարակության մասնակցությունը թրաֆիքինգի դեմ պայքարում պետք է ապահովվի և խրախուսվի օրենսդրի կողմից՝ ոչ միայն ընդգրկելով ՀԿ-ներին թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում, այլև գործարկելով այս նպատակին ծառայող համարժեք և բավարար ֆինանսավորման մեխանիզմներ:

Թրաֆիքինգի դեմ պայքարող հասարակական կազմակերպությունները գործում են ըստ երկու կարևոր մոդելի՝ ներկայացուցչական և խորհրդատվական:

Ներկայացուցչական մոդելը, որն ավելի ընդգրկուն է թրաֆիքինգի հակազդմանն ուղղված կառավարության ջանքերում, ներառում է թրաֆիքինգի հիմնախնդրով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ընդգրկումը թրաֆիքինգի հակազդման քաղաքականության իրականացմամբ զբաղվող ազգային միջգերատեսչական մարմնի կազմում:


Ի տարբերություն դրա՝ խորհրդատվական մոդելը ներգրավում է հասարակական կազմակերպություններին որպես խորհրդատու կառույցներ: Սա կարող է ընդգրկել նման կազմակերպությունների պատրաստած զեկույցների լուսմը քաղաքականության մշակմանը և կատարելագործմանն ուղղված խորհրդարանական լսարանի կողմից իրականացվող հետազոտություններում և հետաքննություններում, կամ որպես անկախ փորձագետներ նրանց ներգրավումը քաղաքականության գնահատման գործընթացում<sup>165</sup>:

#### **8.3.4. Թրաֆիքինգի ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը**

2008 թվականի նոյեմբերի 20-ին N1385-Ա որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատեց Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը, որը նպատակ ունի արդյունավետ ուղի սահմանել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին ծառայություններ մատուցելու համար: Ընդ որում, այդ արդյունավետ ուղին պետք է իրականացվի զոհի իրավունքների պաշտպանության համատեքստում:

Կարգում նշված են բոլոր շահագրգիռ կողմերը, որոնք մասնակցում են կամ կարող են մասնակցել թրաֆիքինգի ենթարկված անձանց ուղղորդմանը: Կարգով նախատեսվում է, որ բոլոր պետական և հասարակական մարմինները զոհերի հետ աշխատելիս ստացվող տեղեկություններն ըստ բնույթի պետք է տարանջատեն նրկու խմբի՝ հայտնաբերված զոհի մասին տեղեկության և հանցագործության մասին տեղեկության: Հայտնաբերված զոհի մասին տեղեկությունը պետք է տրամադրվի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, քանի որ այդ մարմինը զոհերի աջակցության և դրա համակարգման համար պետական կառավարման լիազորված մարմինն է: Իսկ հանցագործության մասին տեղեկությունը պետք է տրամադրվի ՀՀ ոստիկանությանը, որը ՀՀ-ում թրաֆիքինգի հանցագործության դեմ պայքարի պետական կառավարման հիմնական լիազորված մարմինն է: Քանի որ Կարգում հնարավոր չէ սպառիչ նշել բոլոր մարմինները, որոնք առնչվում են թրաֆիքինգի զոհերի հետ, Կարգի 7-րդ կետում նշվում է, որ մյուս բոլոր կազմակերպություններն ու մարմինները, որոնք իրենց գործունեության ընթացքում նույնպես կարող են առնչվել թրաֆիքինգի հետ կապված դեպքերին, տեղեկատվության աղբյուր են պետական կառավարման լիազորված մարմինների համար:

<sup>165</sup> The appropriate legal responses to combating trafficking in persons. A handbook for Parliamentarians. Draft-summary, p.28-29.



Կարգի 15-րդ կետում նշված է, որ զոհն ուղղորդվում է միայն իր համաձայնությամբ՝ հայտնաբերման պահից: Այստեղ չկա նշված համաձայնության ձևը՝ պետք է լինի գրավոր, թե՛ բանավոր, իսկ դա ունի գործնական մեծ նշանակություն, մասնավորապես, այն դեպքերում, երբ զոհը փոխում է իր մտադրությունը համագործակցելու վերաբերյալ, և այս հանգամանքը դժվարություններ կարող է առաջացնել:

Կարգում մանրամասնորեն նշվում է, թե՛ ինչպես պետք է ուղղորդվի զոհը և ներկայացված են հնարավոր տարբերակները՝

- 1) թրաֆիքինգի ենթարկված կամ թրաֆիքինգի ենթարկման վտանգի տակ հայտնված զոհը հայտնաբերման պահին գտնվում է ՀՀ-ում,
- 2) ՀՀ քաղաքացի հանդիսացող զոհը գտնվում է օտարերկրյա պետությունում,
- 3) այլ պետության քաղաքացի հանդիսացող՝ թրաֆիքինգի ենթարկված կամ թրաֆիքինգի ենթարկման վտանգի տակ հայտնված զոհը հայտնաբերման պահին գտնվում է ՀՀ-ում:

Բոլոր դեպքերում թրաֆիքինգի ենթարկված անձինք պետք է նույնացվեն և ստանան օգնություն ու աջակցություն:

Համաձայն Կարգի 19-րդ կետի, գոհի նույնացումը շարունակական և, միևնույն ժամանակ, ամբողջական գործընթաց է, որը նախատեսում է տարբեր ծավալի աջակցություն: Աջակցության ծավալների համարժեք և նպատակային տրամադրման համար տարանջատվում են գոհերի նույնացման երեք հիմնական փուլեր՝

- 1) նախնական նույնացում,
- 2) միջանկյալ նույնացում,
- 3) վերջնական նույնացում:

Ձոհի հայտնաբերումը համարվում է նախնական նույնացում, որն իրականացվում է պետական կառավարման լիազորված մարմինների կողմից՝ ինքնուրույն, կամ որևէ աղբյուրի միջոցով հայտնաբերված անձի՝ ենթադրյալ գոհի նկատմամբ՝ ուղղակի և անուղղակի չափորոշիչների կիրառման արդյունքում:

Ձոհի միջանկյալ նույնացումն իրականացնում է նախաքննության մարմինը՝ ընդունելով որոշում նախնական նույնացված գոհին տուժող ճանաչելու մասին՝ թրաֆիքինգին վերաբերող ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով հարուցված քրեական գործերով: Ձոհի միջանկյալ նույնացումն իրականացվում է քննիչի՝ տուժող ճանաչելու մասին որոշման հիման վրա:

Ձոհի վերջնական նույնացումն իրականացվում է դատարանի կողմից: Այն դեպքում, երբ գործը չի հասնում դատարան, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան, վերջնական նույնացման համար հիմք է հանդիսանում քրեական հետապնդման մարմնի կողմից անձին որպես տուժող ճանաչելու մասին որոշումը:

Ելնելով նույնացման փուլերից, ՀՀ-ում գոհին տրամադրվող աջակցությունը նույնպես բաղկացած է երեք փուլից՝ նախնական, միջանկյալ և վերջնական աջակցություն:

Այն դեպքում, երբ թրաֆիքինգի ենթարկված կամ թրաֆիքինգի ենթարկման վտանգի տակ հայտնված գոհը հայտնաբերման պահին գտնվում է ՀՀ-ում, հայտնաբերված և նախնական նույնացված գոհին նախնական աջակցություն ցուցաբերվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջնորդությամբ, ՀՀ համապատասխան մարմինների և կառույցների, այդ թվում նաև ՀՀ մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) երեխայի իրավունքների պաշտպանության բաժինների միջոցով: Ելնելով անհրաժեշտությունից՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կարող է համագործակցել համապատասխան համագործակցող ՀԿ-ների հետ:

Նախնական նույնացված անձը ստանում է նախնական աջակցություն, որը ներառում է՝

- 1) առաջնային բժշկական օգնությունը,
- 2) անհետաձգելի բնափրային օգնությունը (սնունդ, հագուստ, հիգիենայի պարագաներ և այլն),
- 3) իրավաբանական խորհրդատվությունը,

4) անհրաժեշտության դեպքում՝ կարճաժամկետ՝ առավելագույնը 7 օրով, կացարանի տրամադրում:

Այն դեպքում, երբ զոհը գտնվում է օտարերկրյա պետությունում, աջակցության տրամադրման մասին որոշումը կայացնում են դիվանագիտական և հյուպատոսական ծառայությունները՝ ելնելով տվյալ երկրում գործող աջակցության համակարգից:

Միջանկյալ աջակցությունը ցուցաբերվում է միջանկյալ նույնացման փուլում և ներառում է՝

1) ժամանակավոր՝ մինչև 60 օրով, կացարանի տրամադրումը,  
2) բժշկական հետազոտությունը և օգնությունը՝ ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» N 318-Ն որոշմանը համապատասխան,

3) իրավաբանական օգնությունը,

4) հոգեբանական օգնությունը,

5) հասարակության մեջ վերաինտեգրվելուն ուղղված քայլերը, այդ թվում նաև մասնագիտական վերապատրաստմանն օժանդակությունը,

6) անհրաժեշտության դեպքում՝ սահմանված չափի հրատապ դրամական օգնությունը:

Վերջնական աջակցությունն իրականացվում է վերջնական նույնացման հիման վրա՝ ելնելով տվյալ անձի կարիքների գնահատումից, և նախատեսում է 2005 թվականի հոկտեմբերի 24-ի «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված աջակցության ամբողջ փաթեթը, ինչպես նաև վերաինտեգրման հետագա միջոցառումները: Համաձայն այդ օրենքի 2-րդ հոդվածի, սոցիալական աջակցությունը՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց՝ նրանց կյանքի դժվարությունները (դժվարին իրավիճակը) հաղթահարելու, կանխելու կամ մեղմելու, նրանց կենսական պահանջմունքները բավարարելու, հասարակության մեջ ինտեգրվելու նպատակով ընտանիքին տրամադրվող սոցիալական ծառայությունների ամբողջությունն է: Իսկ կյանքի դժվարին իրավիճակ է դիտվում՝ հաշմանդամության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, հիվանդության, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, երկարատև գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության ենթարկվելու, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատագրվման վայրերից վերադառնալու հետևանքով մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակը, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող: Վերոգրյալից տրամաբանական է ենթադրել, որ եթե թրաֆիքինգի զոհը ենթարկվել է դաժան վերաբերմունքի կամ բռնության, ապա սոցիալական աջակցության փաթեթը կկիրառվի այդ անձի նկատմամբ, իսկ եթե թրաֆիքինգի զոհը բռնության չի ենթարկվել, այլ ենթարկվել է շահագործման վիճակի խոցելիությունը օգտագործելով կամ խաբեությանը, ապա այս պարագայում նա չի կարող օգտվել սոցիալական աջակցության փաթեթից, ինչն անթույլատրելի է, և այս հարցի լուծման միակ տարբերակն է համապատասխան լրացում իրականացնել գործող օրենսդրության մեջ:

Ինչևիցե, նույն օրենքի 7-րդ հոդվածի համաձայն, կարող է տրամադրվել հետևյալ օգնությունը՝

1) խորհրդատվական - այն տրամադրվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացուն ստեղծված իրավիճակից դուրս գալու, նրա սոցիալական խնդիրների լուծման ուղիներ և եղանակներ գտնելու միջոցների մասին խորհուրդների և առաջարկությունների, ինչպես նաև համարժեք սոցիալական ծառայություններ ստանալու վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու ձևով:

2) վերականգնողական - այն տրամադրվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացուն բժշկական վերականգնման, վերականգնման տեխնիկական միջոցների և այլ օժանդակ սարքերի, հոգեբանական վերականգնման կամ մասնագիտական վերականգնման ու աշխատանքային թերապիայի տրամադրմամբ, ինչպես նաև օրենքով չարգելված այլ ձևերով:

3) դրամական - դրամական օգնությունը պետական բյուջեից կամ համայնքի բյուջեից անհատույց տրամադրվող հասցեական, նպատակային աջակցություն է: Դրամական օգնության ձևերն են՝ պետական նպաստները, նպատակային նշանակություն ունեցող դրամական օգնությունը և քաղաքացիների որոշակի ծախսերի մասնակի հատուցումը:

4) բնաիրային - բնաիրային օգնությունը տրամադրվում է սննդի կազմակերպման, հագուստի, կոշիկի, հիգիենայի միջոցների, երեխաների խնամքի պարագաների և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների, օրենքով սահմանված դեպքերում բնակելի տարածության, հատուկ տրանսպորտային միջոցների, հաշմանդամների վերականգնողական տեխնիկական միջոցների տրամադրման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով:

5) ժամանակավոր օթևանի տրամադրումը - ժամանակավոր օթևան տրամադրվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին, անօթևան կամ բռնության ենթարկված քաղաքացիներին ժամանակավոր կացարան ապահովելու և նրանց սոցիալական խնդիրների լուծումներ գտնելու նպատակով: Այն տրամադրվում է մինչև 60 օր տևողությամբ և այնտեղ անձին տրամադրվում են սնունդ, հիգիենայի պարագաներ, հագուստ, կոշիկ, սոցիալական, բժշկական, հոգեբանական և իրավական օգնություն, իսկ համարժեք սոցիալական ծառայություններ ստանալու անհրաժեշտության դեպքում կազմակերպվում է մասնագիտական կազմակերպություններում:

6) խնամքի կազմակերպումը - խնամքի տրամադրումը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ծեր, հաշմանդամ քաղաքացիներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ընտանեկանին առավել մոտ սոցիալ-կենցաղային պայմանները ապահովելու կամ ծեր, հաշմանդամ քաղաքացիներին իրենց հարազատ սոցիալական միջավայրում հնարավորինս երկար պահելու նպատակով անհրաժեշտ օգնությունն է: Խնամքը տրամադրվում է սննդի, այդ թվում՝ դիետիկ, բժշկական, սանիտարահիգիենիկ սպասարկման, հագուստի, կոշիկի և առաջին անհրաժեշտության այլ պարագաների տրամադրման, մշակութային, կրթական, ժամանցի, անհրաժեշտության դեպքում՝ հաճախորդների դիսպանսերիզացման և հոսպիտալացման, իրավաբանական օգնության և այլ միջոցառումների կազմակերպման միջոցով: Մահամերձ



վիճակում գտնվող քաղաքացուն տրամադրվում է հոսպիսային օգնություն՝ կյանքի վերջին ամիսների, օրերի ընթացքում նրան, իսկ անհրաժեշտության դեպքում նաև նրա ընտանիքի անդամներին՝ նրանց ֆիզիկական և հոգեկան տառապանքները թեթևացնելու նպատակով: Խնամքը տրամադրվում է տնային պայմաններում կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում կամ սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններում:

7) իրավաբանական - այն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացուն սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպության իրավասությունների շրջանակում տրամադրվող իրավաբանական խորհրդատվություն է, ինչպես նաև նրա իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով փաստաբանական օգնության կազմակերպումը:

8) սոցիալական ծառայությունների՝ օրենքով չարգելված այլ տեսակներ:

Այսպիսով, թրաֆիքինգի ենթարկված անձանց օգնելու իրավական բազան ՀՀ-ում առկա է, սակայն դեռևս պետք է մշակվեն այդ օգնությունը տրամադրելու բոլոր անհրաժեշտ մեխանիզմները:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱԿՏԵՐ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948թ. դեկտեմբերի 10
2. Եվրոպայի խորհրդի 2005թ. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին կոնվենցիա
3. Եվրոպայի խորհրդի Կիբերհանցագործության մասին կոնվենցիա, 2001թ. նոյեմբերի 23
4. ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին կոնվենցիա, 2000թ.
5. ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին կոնվենցիան լրացնող՝ Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման ու խափանման և դրա համար պատժի մասին 2000 թ. թիվ 2 Արձանագրություն
6. ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին կոնվենցիան լրացնող՝ Յամաբոյ, ծովով և օդով միգրանտների անօրինական ներմուծման դեմ 2000 թ. թիվ 1 Արձանագրություն
7. ԱՄԿ-ի Հարկադիր աշխատանքի վերաբերյալ թիվ 29 կոնվենցիա, 1930թ. հունիսի 28
8. ԱՄԿ-ի Հարկադիր աշխատանքը վերացնելու մասին թիվ 105 կոնվենցիա, 1957թ. հունիսի 25
9. ՄԱԿ-ի Ստրկության դեմ պայքարի մասին կոնվենցիա, 1926թ., սեպտեմբերի 25
10. ՄԱԿ-ի Ստրկության վերացման, ստրկավաճառության և ստրկությանը մոտ սովորույթների ու ինստիտուտների վերացման մասին լրացուցիչ կոնվենցիա, 1956թ., սեպտեմբերի 7
11. Կոնվենցիա քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին (Քիշնևի կոնվենցիա), 2002թ., հոկտեմբերի 7
12. ՀՀ Սահմանադրություն
13. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունված 18.04.2003թ.)
14. ՀՀ աշխատանքային օրենսգիրք (ընդունված 9.11.2004թ.)
15. ՀՀ քրեակատարողական օրենսգիրք (ընդունված 24.12.2004թ.)
16. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (ընդունված 01.07.1998թ.)
17. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ընդունված 05.05.1998թ.)
18. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (ընդունված 17.06.1998թ.)
19. ՀՀ մաքսային օրենսգիրքը (ընդունված 06.07.2000թ.)
20. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 2008թ. մայիսի 26-ի ՀՀ օրենք
21. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» 2007թ. հոկտեմբերի 22-ի ՀՀ օրենք
22. «Դատախազության մասին» 2007թ. փետրվարի 22-ի ՀՀ օրենք
23. «Օտարերկրացիների մասին» 2006թ. դեկտեմբերի 25-ի ՀՀ օրենք
24. «Աշխատանքի պետական տեսչության մասին» 2005թ. մարտի 24-ի ՀՀ օրենք
25. «Փաստաբանության մասին» 2004թ. դեկտեմբերի 14-ի ՀՀ օրենք
26. «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 2004թ. դեկտեմբերի 14-ի ՀՀ օրենք (ուժը կորցրել է)
27. «Մարդու օրգանների և (կամ) հյուսվածքների փոխադրման մասին» 2002թ. ապրիլի 16-ի ՀՀ օրենք
28. «Անհատական տվյալների մասին» 2002թ. հոկտեմբերի 8-ի ՀՀ օրենք
29. «Սահմանապահ գործերի մասին» 2001թ. նոյեմբերի 20-ի ՀՀ օրենք
30. «Հասարակական կազմակերպությունների մասին» 2001թ. դեկտեմբերի 4-ի ՀՀ օրենք
31. «Ոստիկանության մասին» 2001թ. ապրիլի 16-ի ՀՀ օրենք
32. «Պետական տուրքի մասին» 1997թ. դեկտեմբերի 27-ի ՀՀ օրենք

33. «Բանկային գաղտնիքի մասին» 1996թ. հոկտեմբերի 1-ի ՀՀ օրենք
34. ՀՀ կառավարության 2007թ. դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետությունում 2007-2009թթ. ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» որոշում
35. ՀՀ կառավարության 2005թ. մայիսի 19-ի «Մաքսային մարմինների կողմից իրականացվող՝ օպերատիվ-հետախուզական գործունեության հետ կապված այն պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին, որոնցում նշանակումները կատարվում են առանց մրցույթի՝ վերադաս մաքսային մարմնի ղեկավարի կողմից» N 602-Ա որոշում
36. ՀՀ վարչապետի 1999թ. հունիսի 1-ի «Օպերատիվ-հետախուզական գործունեության հատուկ ուղեկցման ոլորտում համագործակցության մասին» միջգերատեսչական համաձայնագիրը վավերացնելու մասին» N 327 որոշում
37. ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2006թ. դեկտեմբերի 19-ի «Քրեական դատավարությունում մեղադրյալին կամ ամբաստանյալին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու դատական պրակտիկայի մասին» N 199 որոշում

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

38. Anti-Trafficking Training for Frontline Law Enforcement officers, ICMPD, Vienna, 2006
39. Anti-Trafficking Training Materials for Judges and Prosecutors. Background reader, ICMPD, Vienna, 2006
40. Anti-Trafficking Training Materials for Judges and Prosecutors. ICMPD Handbook, Vienna, 2006
41. Anti-Trafficking Training Materials for Judges and Prosecutors. Curriculum-Training Guide, ICMPD, Vienna, 2006
42. Crime Reduction Toolkits (UK)// [www.crimereduction.homeoffice.gov.uk/toolkits/t\\_p0601.htm](http://www.crimereduction.homeoffice.gov.uk/toolkits/t_p0601.htm)
43. Global Programme against Transnational Organised Crime, September, UNODC, 2002
44. Human (Child) Trafficking: a look through the internet window. Ավստրիայի հակաթրաֆիքինգային գործողություն, Բելգրադ, Սերբիա, 2006
45. Legal Advisory Section, Expert Working Group Final Report on Witness Protection in the Justice System, United Nations Office on Drugs and Crime, Vienna, 22-24 September 2005, 2006
46. Levenkorn, Nomi., Another delivery from Tashkent: Profile of the Israeli Trafficker, 2007
47. Oxford Advanced Learner's Dictionary, 7-th edition, Oxford University 2007
48. Parliamentary Forum, Vienna, 12 February 2008. The appropriate legal responses to combatting trafficking in persons. A handbook for Parliamentarians. Draft-summary
49. Rebecca Surtees. "Listening to Victims. Experiences of identification, return and assistance in South-Eastern Europe". ICMPD, 2007.
50. Trafficking in Women: the Czech Republic Perspective, Prague, 2004
51. Trafficking in Human Beings in the Commonwealth of Independent States (CIS)
52. Trafficking for Forced Labor. How to monitor the recruitment of migrant workers, ILO, 2005
53. Աղայան Է.Բ. Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1977, հատոր 1
54. Բոշնալյան Ա., Երեմյան Ա. »Հանցավոր եկամուտների օրինակացմանը և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու վերաբերյալ հիմնարար միջազգային փաստաթղթեր. (տեսական մեկնաբանություններով)», Ժողովածու.- Եր.: Ասողիկ, 2005
55. Երեմյան Ա.Վ., Ղամբարյան Ա.Ս. Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանությունը.- Եր., 2006
56. Երեյսաները Հայաստանի մանկատներում և հատուկ դպրոցներում. Թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհեր, Երևան, ՀՕՄ, 2005
57. Իրավապաշտպանների միջազգային լիգա, <http://europ.eu.int/comm/employment-social/eguoopp/index.en.htm>

58. Հանա Շնայդրովա, Բլանկա Հանչիովա, Մարդկանց թրաֆիքինգը ՀՀ-ում. Թրաֆիքինգի դեմ պայքարի ուղղությամբ ներկայում իրականացվող միջոցառումների գնահատում - Երևան, ԵԱՀԿ Երևանի գրասենյակ, 2007
59. Հայ միգրանտների ապօրինի առևտուր և աշխատանքային շահագործում.- Երևան, 2005
60. Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքար իրականացնող իրավապահ մարմինների վերապատրաստման կարիքների գնահատման զեկույց, Երևան, 2007
61. Հայաստանում թրաֆիքինգի զոհերին ցուցաբերված աջակցությունը.- Երևան, 2007
62. ՀՀ Քրեական իրավունք (ընդհանուր մաս)/ Գ.Ս. Ղազինյանի գլխավորությամբ.- Երևան: Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2007
63. ՀՀ Քրեական իրավունք. Հատուկ մաս. Երևան.: Երևանի պետական համալսարանի հրատ., 2007
64. ՀՀ դատարանակազմությունը և իրավապահպան մարմինները/ Ս. Դիլբանդյան, Գ. Ղազինյան.- Եր.: “Տիգրան Մեծ”, 2003
65. Հարությունյան Ա.Ա. Մարդկանց առևտրի, պոռնկության կամ սեռական այլ շահագործման վերաբերյալ գործերի քննության մեթոդիկան, Երևան, 2005 թ.
66. Մարդկանց շախագործում. ինտերնետային հավաքագրում, Եվրոպայի Խորհուրդ, 2007
67. Մարդկանց շահագործման դեմ պայքարի Վիեննայի ֆորում 2008թ. փետրվարի 13-15, Ավստրիա կենտրոն, Վիեննա. Ընդհանուր տեղեկանք
68. Մարդկանց շահագործման դեմ պայքարի Վիեննայի ֆորում, 2008թ. փետրվարի 13-15, Սեմինար 017. տեխնոլոգիաները և մարդկանց շահագործումը
69. Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի առաջարկվող սկզբունքներ և ուղենիշեր. ՄԱԿ-ի մարդու իրավունքների գծով գերագույն հանձնակատարի զեկույցը Տնտեսական և սոցիալական խորհրդին. Լրացում. 2002
70. Միգրացիան և տեղահանումը ԱՊՀ երկրներում, «Փախստականների հարցերով միջազգային օրենսդրություն» թեմայով սեմինար, 20 օգոստոսի 2007թ.
71. Շահինյան Գ.Ա. Մարդկանց վաճառք. Երևան, 2003.
72. Վիեննայի ֆորումը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով 13-15 փետրվարի, 2008թ. Թիվ 004 աշխատանքային հանդիպում. ինչու և ինչպես է հարկադիր աշխատանքի և սեռական շահագործման նկատմամբ պահանջարկը նպաստում մարդկանց թրաֆիքինգի երևույթին
73. Վիեննայի ֆորումը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով, 13-15 փետրվար 2008թ., թիվ 006 աշխատանքային հանդիպում. քրեական արդարադատության համակարգի արձագանքը մարդկանց թրաֆիքինգի երևույթին
74. Վիեննայի ֆորումը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով. 13-15 փետրվարի, 2008թ. Թիվ 007 աշխատանքային հանդիպում. պաշտպանությունից մինչև հետապնդում. ռազմավարական մոտեցում
75. Վիեննայի ֆորումը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով. 13-15 փետրվարի, 2008թ. Թիվ 016 սեմինար. մարդկանց շահագործողների նկարագիրը.
76. Վիեննայի ֆորումը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով. 13-15 փետրվարի, 2008թ. Թիվ 020 սեմինար. կոռուպցիան և մարդկանց շահագործումը՝ կաշառք, որը դյուրացնում է հանցանքը
77. Վիեննայի ֆորումը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով. 13-15 փետրվար 2008թ., թիվ 023 աշխատանքային հանդիպում. Իրավական դաշտի և թրաֆիքինգի դեմ պայքարի մասին օրենսդրության արդյունավետությունը
78. Վիեննայի ֆորումը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով. 13-15 փետրվարի, 2008թ. Թիվ 027 սեմինար. Անդրազգային կազմակերպված հանցագործություն. ազդեցությունը աղբյուրից մինչը նպատակակետ
79. Տասնվեց երկրում և մեկ շրջանում գտնվող 40 հանցավոր խմբերի փորձնական վերլուծության արդյունքներ, UNODC, September 2002// [www.unodc.org/crime/publications/Pilot\\_survey.pdf](http://www.unodc.org/crime/publications/Pilot_survey.pdf).
80. Տնտեսական և սոցիալական խորհուրդ, Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի առաջարկվող սկզբունքներ և ուղենիշեր, ՄԱԿ, 20 մայիսի, 2002թ.

81. Азарян Е.Р. Преступление. Наказание. Правопорядок. – Санкт-Петербург: “Юридический центр Пресс”, 2004
82. Андрианов С.Н., Берсон А.С., Никифоров А.С.-Англо-русский юридический словарь, Москва, изд-во “Руссо”-2000
83. Антонян Ю.М., Бородин С.В. Преступное поведение и психические аномалии. М. 1998
84. Бессарабов В.Г., Быкова Е.В., Курочкина Л.А. Европейские стандарты обеспечения прав и свобод человека и гражданина в российском уголовном процессе. - М.: Изд. Юрлитинформ. 2005
85. Брусницын Л.В. Правовое обеспечение безопасности лиц, содействующих уголовному правосудию. - М.: Спарк, 1999
86. Глобальный альянс против принудительного труда, МОТ, 2005
87. Де Сальвиа М. Прецеденты Европейского Суда по правам человека. Руководящие принципы судебной практики, относящейся к Европейской конвенции о защите прав человека и основных свобод. Судебная практика с 1960 по 2002г. СПб: Издательство “Юридический центр Пресс”, 2004
88. Европейская сеть против торговли людьми. Доклад по вопросам торговли людьми. Болгария, Дания, Италия, Румыния, Испания, Великобритания, Спасем детей (Save the Children), Италия, 2004
89. Зайцев О. А. Государственная защита участников уголовного процесса. - М.: Экзамен. 2001
90. Изменение схем и трендов торговли людьми в Балканском регионе.- МОТ, 2004
91. Криминалистика, Учебник для высших учебных заведений/ Под. ред. проф. А.Г. Филиппова и проф. А.Ф. Вольнского.- М.: ”Спарк”, 1998
92. Криминология: Под ред. В.Н. Кудрявцева и В.Е. Эминова.- М.: “Юрист”, 2002
93. Механизмы перенаправления жертв торговли людьми на национальном уровне, Объединяя усилия по защите прав жертв торговли людьми, Практическое руководство, ОБСЕ, БДИПЧ, 2004
94. Мизулина Е.Б. Торговля людьми и рабство в России: международно-правовой аспект. - Москва.: “Юристь”, 2006
95. Мозякова В. В. Руководство для следователей - М.: Экзамен, 2003
96. Набор методических пособий по вопросам борьбы с торговлей людьми, ООН, Нью-Йорк, 2006
97. Освещение в средствах массовой информации проблемы торговли людьми, Пособие для журналистов, ОБСЕ, Киев, 2007
98. ООН, Управление по наркотикам и преступности, Набор методических пособий по вопросам борьбы с торговлей людьми, Нью-Йорк, 2006
99. Отчет об организованной преступности, ЕВРОПОЛ, 2004
100. Понимаем права человека, Руководство по образованию в области прав человека, Польша, 2005
101. Пособие по борьбе с торговлей людьми для правоохранительных органов, Международный центр по развитию миграционной политики и Программа развития ООН /ПРООН/ 2006
102. Пособие по борьбе с торговлей людьми для правоохранительных органов, Вена, 2006
103. Предотвращение домашнего насилия и торговли людьми, Учебник по проведению тренингов, Киев, 2001
104. Предотвращение торговли людьми, Учебно-методическое пособие, Киев-Харьков, 2001
105. Прислушиваясь к жертвам. Опыт идентификации, возвращения и помощи в Юго-Восточной Европе, Международный центр развития миграционной политики, 2007
106. Проблема незаконной миграции в России: реалии и поиск решений.- М.: “Гендальф”, 2004
107. Противодействие торговле людьми /Под. ред. А.М. Бандурки.- Киев-Харьков, 2003
108. Проституция и преступность. Москва, 1991
109. Путеводитель о прецедентной практике Европейского суда по правам человека за 2002 год./ Науч. ред. – сост. Берестнев Ю.Ю., Виноградов М.В. пер. с англ. Власихин В.А. -М., 2004
110. Руководящие принципы по пересмотру законодательства против торговли людьми с особым акцентом на регион юго-восточной Европы, ОБСЕ, БДИПЧ, 2001
111. Справочная публикация 1999/3. Последствия для ОБСЕ, БДИПЧ, опубликовано [http://www.osce.org/documents/odihr/1999/09/1503\\_en.html](http://www.osce.org/documents/odihr/1999/09/1503_en.html)

- 112.Стандарты Европейского суда по правам человека и российская правоприменительная практика. Сб. аналитических статей/ Под ред. М.Р. Воскобитовой. - М.: ,Анахарсис, 2005
- 113.Торговля людьми в целях принудительного труда. Как осуществлять мониторинг вербовки рабочих-мигрантов.- Женева, 2006
- 114.Тюрканова Е.В. Принудительный труд в современной России: нерегулируемая миграция и торговля людьми.- Женева, 2006
- 115.Уголовное право/ Под ред. Н.Г. Кадкова.- М.: Городец, 2006
- 116.Управление по наркотикам и преступности, Набор методических пособий по вопросам борьбы с торговлей людьми, Нью-Йорк, ООН, 2006
- 117.Шагинян Г. А. Траффикинг, старая проблема - новые решения, Ереван, 2005
- 118.Шагинян Г. А. Торговля людьми, Справочное пособие, Ереван, 2004
- 119.Энциклопедический юридический словарь/ Под общ. ред. В.Е. Крутских.- М.: “Инфра М”, 1998

#### ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 120.ՀՀ Քրեական Օրենսգրքի մեկնաբանություններ- Եր.: Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2004.
- 121.ՀՀ Վճռաբեկ դատարանի 2007թ.-ի հուլիսի 13-ի որոշում

#### ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

- 122.Գաբրիելյան Ա. Դատարանի զարմանալի բարեհաճությունը թրաֆիքինգի հողվածով մեղադրվողի հանդեպ// “Հայոց աշխարհ”, 9 օգոստոսի 2007թ.
- 123.Երևմյան Ա. Արդարադատության հետ համագործակցող անձանց պաշտպանության մասին (հարցի միջազգային-իրավական ասպեկտը): Ազգային Ժողով, 2005, սեպտեմբեր 7.
- 124.Եղիազարյան Կ. 600 դատապարտյալ ազատվել է, իսկ արդարացման դատավճիռներ գրեթե չեն կայացվում// “Հայոց աշխարհ”, 2003.-№159.
- 125.Թադևոսյան Ջ. Պատժի համակարգն ըստ քրեական օրենսգրքի//. Օրենք և իրավանդություն, 2004.-N1-2.
- 126.ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիոն գործակալության պետ Գ.Եզանյանի ելույթից, Առավոտ, 21 հունիսի 2008թ.
- 127.Մաթևոսյան Շ. Թրաֆիքինգի դասական օրինակ// Հայոց աշխարհ, 2005թ.-ի օգոստոսի 26.
- 128.Մելքոնյան Ռ. Պատժի նշանակման գիտագործնական նշանակությունը// “Դատական իշխանություն”, 2004.- №12.
- 129.Տրուգյան Ս. Եվրոպատուհաններ ունեցան նաև բանտերը// “Երկիր”, 2004.- №10.
- 130.Бегларян А. Рабы XXI века// Аргументы и факты, 2008.-№24
- 131.Волошин Ю. Сегодня нелегальная торговля людьми (траффикинг) стоит на третьем месте после торговли оружием и наркотиками// <http://www.zerkalo-nedeli.com>.
- 132.Гончаров В.Б., Кожевников В.В. Проблемы безопасности участников уголовного процесса// “Государство и право”, 2000. - № 2
- 133.Коршунова В., Симонова А. Рабы XXI века// ”Юридический мир” 2005.- №6
- 134.Мизулина Е. правовой аспект противодействия торговле людьми// “Юридический мир” 2005.- №6
- 135.Михалковская Ю. Почему процветает рабство// ,”Парламентская газета” 2005, 11 октября
- 136.Чилингарян А. Место назначения – Дубай// Голос Армении, 17 сентября 2005.

**Թրաֆիքինգի դեմ պայքարի բնագավառում  
միջազգային իրավական գործիքներ**

Թրաֆիքինգի դեմ պայքարի միջազգային իրավական փաստաթղթերը պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի՝

1. Հումանիտար իրավունքի, մարդու իրավունքների և ընդհանուր կիրառման փաստաթղթեր,
2. Փաստաթղթեր ստրկության կամ թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով,
3. Փաստաթղթեր, որոնք վերաբերում են մարդկանց առևտրին կամ ստրկությանը, կապված սեռական

շահագործման հետ:

Ըստ խմբավորման այդ փաստաթղթերի ոչ սպառիչ ցանկը զետեղված է սույն ձեռնարկում որպես հավելված:

***Հումանիտար իրավունքի, մարդու իրավունքների և ընդհանուր կիրառման փաստաթղթեր***

1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948թ. դեկտեմբերի 10
2. Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին կոնվենցիա, Ժնև, 1949թ., օգոստոսի 12
3. Ծովում զինված ուժերի կազմից վիրավորների, հիվանդների և նավաբեկումից տուժած անձանց պաշտպանելու մասին կոնվենցիա, Ժնև, 1949թ., օգոստոսի 12
4. Ռազմագերիների հետ վարվելու մասին կոնվենցիա, Ժնև, 1949թ., օգոստոսի 12
5. Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին կոնվենցիա, Ժնև, 1949թ., օգոստոսի 12
6. Տեղական զինված կոնֆլիկտների զոհերի պաշտպանության վերաբերյալ 1949թ. Ժնևի կոնվենցիայի լրացուցիչ Արձանագրություն, արձ. 2, 1977թ., հունիսի 8
7. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 1966թ., դեկտեմբերի 16
8. Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա, 1951թ. հուլիսի 28
9. Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիային կից Արձանագրություն, 1967թ. հոկտեմբերի 4
10. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, 1989թ. նոյեմբերի 20
10. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընդհանուր Արձանագրություն, 2000թ. մայիսի 25
11. Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին կոնվենցիա, 1999թ. հունիսի 17, Ժնև
12. Վիեննայի հռչակագիր և գործողությունների ծրագիր՝ ընդունված մարդու իրավունքների վերաբերյալ համաշխարհային կոնֆերանսում 1993թ. հունիսի 25-ին
13. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, 1979թ. դեկտեմբերի 18
14. ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագիր, 2000թ. սեպտեմբերի 8
15. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, 1950թ. նոյեմբերի 4
16. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 1966թ. դեկտեմբերի 16
17. Էքստրադիցիայի մասին եվրոպական կոնվենցիա, 1957թ.

***Փաստաթղթեր ստրկության կամ թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով***

1. Ստրկության դեմ պայքարի մասին կոնվենցիա, 1926թ., սեպտեմբերի 25
2. Ստրկության վերացման, ստրկավաճառության և ստրկությանը մոտ սովորույթների ու ինստիտուտների վերացման մասին լրացուցիչ կոնվենցիա, 1956թ., սեպտեմբերի 7
3. ԱՄԿ-ի Հարկադիր աշխատանքի վերաբերյալ թիվ 29 կոնվենցիա, 1930թ. հունիսի 28
4. ԱՄԿ-ի Հարկադիր աշխատանքը վերացնելու մասին թիվ 105 կոնվենցիա, 1957թ. հունիսի 25
5. ԱՄԿ-ի Աշխատանքի ընդունելու նվազագույն տարիքի մասին, 138 կոնվենցիա, 1973թ. հունիսի 26
6. Երեխաների աշխատանքի խտրականության վերացման մասին կոնվենցիա, 1957թ.
7. ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» կոնվենցիա, 2000թ.
8. Պալերմոյի 2000 թ. Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման ու խափանման և դրա համար պատժի մասին թիվ 2 Արձանագրություն
9. Պալերմոյի 2000 թ. Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներմուծման դեմ թիվ 1 Արձանագրություն
10. Եվրոպայի խորհրդի 2005թ. մայիսի 16-ի Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին կոնվենցիա

***Փաստաթղթեր, որոնք վերաբերում են մարդկանց առևտրին կամ ստրկությանը, կապված սեռական***

***շահագործման հետ***

1. Սպիտակ ստրկուհիների առևտրի դեմ պայքարելու մասին միջազգային համաձայնագիր, 1904թ. մայիսի 18
2. Սպիտակ ստրկուհիների առևտրի դեմ պայքարելու մասին միջազգային կոնվենցիա, 1910թ. մայիսի 4
3. 1904թ. մայիսի 18-ի համաձայնագրի և 1910թ. մայիսի 4-ի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն, 1910թ. մայիսի 4
4. Սպիտակ ստրկուհիների առևտրի դեմ պայքարելու մասին միջազգային համաձայնագրի լրացուցիչ արձանագրություն, 1949թ., մայիսի 4
5. Կանանց և երեխաների առևտրի դեմ պայքարելու մասին կոնվենցիա, 1921թ. սեպտեմբերի 30
6. Չափահաս կանանց ապօրինի փոխադրումները կանխելու վերաբերյալ կոնվենցիա, 1933թ. հոկտեմբեր 11
7. 1921թ. սեպտեմբերի 30-ի կանանց և երեխաների առևտրի դեմ պայքարելու մասին կոնվենցիայի լրացուցիչ Արձանագրություն, 1947թ. նոյեմբերի 12
8. 1933թ. հոկտեմբեր 11-ի Չափահաս կանանց ապօրինի փոխադրումները կանխելու վերաբերյալ կոնվենցիայի լրացուցիչ Արձանագրություն, 1947թ. նոյեմբերի 12
9. Մարդկանց առևտրի և երրորդ անձանց կողմից պոռնկության շահագործման դեմ պայքարելու մասին կոնվենցիա, 1949թ. մարտի 21



**Թրաֆիքինգի կանխարգելման գործընթացում ՀՀ առանձին մարմինների  
իրավասության ընդհանուր ակնարկ**

Ձեռնարկում սույն հավելվածը ներառելու անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ ոչ մասնագետ ընթերցողը պետք է տարրական գիտելիքներ ունենա այն մարմինների իրավասության շրջանակի մասին, որոնք առնչվում են թրաֆիքինգ երևույթի հետ և կոչված են պայքարելու այդ երևույթի դեմ: Դա, անհրաժեշտության դեպքում, կարող է նպաստել համակարգված գիտելիքների նպատակային կիրառմանը թրաֆիքինգի կանխարգելման բնագավառում:

**Ոստիկանության գործունեությունը.** Ոստիկանության մասին օրենքի 2-րդ հոդվածի համաձայն, ոստիկանության խնդիրներից մեկն է ապահովել անձի կյանքի և առողջության, իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանությունը հանցավոր և հակաիրավական ոտնձգություններից, իսկ համաձայն նույն օրենքի 11-րդ հոդվածի՝ ոստիկանությունը հանցագործությունների և այլ իրավախախտումների դեմ պայքարելիս պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռնարկել համալիր բոլոր հնարավոր միջոցներն ու միջոցառումները, որոնք կարող են նպաստել նախապատրաստվող, իրականացվող կամ արդեն կատարված թրաֆիքինգի հայտանաբերմանը և բացահայտմանը: Այդ իրավասության շրջանակը, ըստ էության, որոշված է վերը նշված օրենքով, ՀՀ քր.դատ.օր-ով և այլ իրավական ակտերով:

Թրաֆիքինգի դեմ պայքարի համատեքստում կարևորվում է անձնագրային և վիզաների բաժնի դերը, որը «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն, կազմակերպում, իրականացնում և վերահսկում է ՀՀ անձնագրային համակարգի գործունեությունը, ինչպես նաև հսկողություն է իրականացնում ՀՀ տարածք մուտք գործելու, ՀՀ տարածքում գտնվելու, ՀՀ տարածքից դուրս գալու, տարանցիկ գտնվելու և (կամ) երթևեկելու վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կանոնների պահպանման նկատմամբ:

Թրաֆիքինգի դեմ պայքարում ոստիկանությունն իրականացնում է կարևորագույն գործառնություններից մեկը՝ հարուցում է քրեական գործ և իրականացնում հետաքննություն:

ՀՀ քր.դատ.օր-ի 190-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ՀՀ քր.օր-ի 132-րդ, 132<sup>1</sup>-րդ, 262-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով նախաքննությունը կատարում են միայն ոստիկանության քննիչները: Համաձայն ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ հոդվածի, քննիչը լիազորված է թրաֆիքինգի դեպքով նախապատրաստել նյութեր և հարուցել քրեական գործ, գործն ընդունել վարույթ կամ քննության համար ուղարկել այլ քննիչի, իր վարույթում եղած գործի քննության ընթացքում հարուցել քրեական գործ, եթե հայտնաբերվել է նոր՝ թրաֆիքինգի հետ կապված հանցագործության դեպք: Քննիչը պատասխանատվություն է կրում քննչական և այլ դատավարական գործողություններն օրինական ու ժամանակին կատարելու համար<sup>166</sup>:

**Սահմանապահ գործերի գործունեությունը.** «Սահմանապահ գործերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը նախատեսում է, որ սահմանապահ գործերը կոչված են ՀՀ պետական սահմանը պահպանելու, պետական սահմանում ՀՀ անվտանգությունը և անկախությունը ապահովելու, պետական սահմանի անցման կետերում սահմանային վերահսկողություն, պետական սահմանի ռեժիմ իրականացնելու համար: Քանի որ թրաֆիքինգը հիմնականում իրականացվում է մի պետությունից մեկ այլ պետություն գոհին (տուժողին) տեղափոխելով, սահմանապահ գործերի հստակ աշխատանքը և դերը կարևորագույն կանխարգելիչ նշանակությունն ունի: Այս առումով, մասնավորապես, սահմանապահ գոտում և պետական սահմանի անցման կետերում սահմանապահ գործերի թրաֆիքինգի հետ կապված առավել կարևոր գործողություններն են՝

<sup>166</sup>Քննիչի գործողությունների մասին տես նաև սույն ձեռնարկի 6.2 ենթագլխում:

- անձանց և տրանսպորտային միջոցների փաստաթղթերի ստուգումը և տրանսպորտային միջոցների զննությունը,

- ձերբակալվածների մոտ եղած իրերի և փաստաթղթերի զննությունը և կեղծ փաստաթղթերի հայտնաբերումը,

- թրաֆիքինգի զոհի նախնական նույնացման դեպքում համապատասխան մարմինների ներգրավման իրականացումը,

- պետական սահմանի պահպանությունն ապահովելու նպատակով իրենց իրավասության սահմաններում հետախուզական, հակահետախուզական և օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացումը:

Փոխադրումներ իրականացնող ընկերությունները պետք է ապահովեն, որ բոլոր ուղևորները ունենան անհրաժեշտ փաստաթղթեր, այդ թվում՝ անձնագրեր և վիզաներ՝ վերջնակետ հանդիսացող կամ տարանցիկ երկրներ մուտք գործելու համար:

**Ղատախազության գործունեությունը.** Համաձայն «Ղատախազության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի, ղատախազությունը կատարում է հետևյալ գործառնությունները՝

1. հարուցում է քրեական հետապնդում,
2. հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ,
3. դատարանում պաշտպանում է մեղադրանքը,
4. պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան,
5. բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները,
6. հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն, որպես կանոն, իրականացնում է տվյալ քրեական հետապնդում հարուցած դատախազը, բացառությամբ, երբ նրան օրենքով նախատեսված դեպքերում փոխարինում է վերահաս դատախազը: Այս հսկողությունն իրականացնելիս դատախազը պատասխանատու է հետաքննության և նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության համար: Ընդ որում, հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը, հայտնաբերելով ոչ պատշաճ վարքագիծ կամ քննություն, իրավունք ունի որոշում կայացնելու հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձին վարույթից հեռացնելու վերաբերյալ, սակայն չի կարող որոշում կայացնել նոր անձ նշանակելու մասին:

Մինչդատական վարույթում դատախազի լիազորությունները նախատեսված են ՀՀ քր.դատ. օր-ի 53-րդ հոդվածով:

Ոչ պակաս կարևոր է մեղադրանքի պաշտպանությունը դատարանում, որը, որպես կանոն, իրականացնում է տվյալ քրեական գործով հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացրած դատախազը, բացառությամբ, երբ օրենքով նախատեսված դեպքերում նրան փոխարինում է վերահաս դատախազը: Այս դատախազի մասնակցությունը պարտադիր է առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործի քննությանը, ներառյալ՝ նախնական լուսնների: Ընդ որում, դատախազին տրված է բացառիկ լիազորություն: Այն է, եթե առաջին ատյանի դատարանում մեղադրողը գտնում է, որ մեղադրանքը ենթակա է մեղմացման կամ խստացման, քանի որ դատական քննության ժամանակ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չէին մինչդատական վարույթում, դատախազն իրավունք ունի միջնորդություն ներկայացնելու դատարան՝ արարքը վերադրակելու նպատակով դատական նիստը հետաձգելու վերաբերյալ:

Դատարանը դատախազի միջնորդությամբ հետաձգում է նիստը՝ անհրաժեշտ քննչական գործողություններ կատարելու և նոր մեղադրանք առաջադրելու համար:

Քրեական գործը դատարանի կողմից քննելիս մեղադրողի լիազորությունները նախատեսված են ՀՀ քր. դատ. օր-ի 54-րդ հոդվածով:

Բացի այդ, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն, վճիռը կայացնելուց հետո գործին մասնակցող դատախազը պարտավոր է բողոքարկել օրինական ուժի մեջ չմտած այն դատական ակտը, որն իր կարծիքով հիմնավոր չէ կամ ապօրինի է: Այդ դատական ակտը կարող է բողոքարկել նաև վերադաս դատախազը, իսկ եթե դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ, նրա դեմ վճռաբեկ բողոք կարող են բերել միայն գլխավոր դատախազն ու նրա տեղակալները:

Դատախազական հսկողությունը իրականացվում է նաև դատարանի կողմից նշանակված պատժի կրման ընթացքում: Այն իրականացնելու նպատակով դատախազը, համաձայն վերը նշված Օրենքի 29-րդ հոդվածի իրավունք ունի՝

- ցանկացած ժամանակ անարգել այցելելու այն բոլոր վայրերը, որտեղ պահվում են ազատությունից զրկված անձինք (սույն նորմը ամրագրված է նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով),

- ծանոթանալ այն փաստաթղթերին, որոնց հիման վրա անձը ենթարկվել է պատժի կամ հարկադրանքի այլ միջոցի,

- պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձանց իրավունքների և ազատությունների խախտման կասկածի դեպքում պաշտոնատար անձանցից պահանջելու բացատրություններ ձեռնարկված գործողությունների կամ անգործության մասին,

- իրականացնել այլ լիազորություններ:

**Փաստաբանների գործունեությունը.** Փաստաբանության մասին օրենքի 5-րդ հոդվածի համաձայն, փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած օրինական շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով:

Փաստաբանը հանդիսանում է քրեական դատավարության այն մասնակիցը, որը կարող է ի հայտ գալ և որպես կասկածյալի, մեղադրյալի կամ ամբաստանյալի պաշտպան, ինչպես նաև ներկայացնել և պաշտպանել տուժողի շահերը: Հետևաբար, անկախ այն հանգամանքից, թե դատավարական որ կողմն է նա ներկայացնում՝ մեղադրանքի, թե պաշտպանության, նա պետք է հստակ իրականացնի իր գործունեությունը՝ ելնելով գործող օրենսդրությունից, փաստաբանների պալատի կանոնադրությունից և փաստաբանի վարքագծի կանոններից:

Իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ փաստաբանը՝

- խորհրդատվություն է տրամադրում իրավական հարցերով ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր,

- կազմում է դիմումներ, բողոքներ, գանգատներ, միջնորդություններ և իրավական բնույթի այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց նախագծեր,

- որպես ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցում է քրեական դատավարությանը և վարչական իրավախախտումների գործերով վարույթին,

- ներկայացնում է վստահորդի շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական միավորումներում և այլ կազմակերպություններում, օտարերկրյա պետությունների պետական իշխանության մարմիններում, դատարաններում, հետաքննության կամ նախաքննության մարմիններում, միջազգային դատական մարմիններում, օտարերկրյա պետությունների ոչ կառավարական մարմիններում, եթե

այլ բան նախատեսված չէ տվյալ երկրի օրենսդրությամբ, միջազգային դատական մարմինների և այլ միջազգային կազմակերպությունների կանոնադրային փաստաթղթերով կամ ՀՀ միջազգային պայմանագրերով:

Օտարերկրացի փաստաբանը ՀՀ-ում փաստաբանական գործունեություն իրականացնում է նույն օրենքով, փաստաբանների պալատի կանոնադրությամբ և փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանված կարգով, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ: Օտարերկրացի փաստաբանը ՀՀ-ում գործում է իր պետության համապատասխան փաստաբանական կառույցի տված արտոնագրի հիման վրա և պետք է հավատարմագրվի փաստաբանների պալատում: Օտարերկրացի փաստաբանը չի կարող իրավաբանական օգնություն ցույց տալ ՀՀ պետական կամ ծառայողական գաղտնիքի հետ կապված հարցերով: Քրեական դատավարությունում որպես վստահորդի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի իրավունքները սահմանվում են օրենքով:

• Փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ստանալու համար դիմած անձի հանձնարարությունն ընդունելու, եթե այն ակնհայտ անօրինական բնույթ է կրում կամ եթե վստահորդի հետ կնքած պայմանագրի առարկայի շուրջ ունի ինքնուրույն շահ, որը տարբերվում է տվյալ անձի հետապնդած շահից:

Վստահորդն իրավունք ունի ցանկացած պահի հրաժարվելու փաստաբանի ծառայությունից:

**Աշխատանքային տեսչության գործունեություն.** ՀՀ Աշխատանքային օրենսգրքում ներառված դրույթները արգելում են հարկադիր աշխատանքը, բռնությունն աշխատողի նկատմամբ, մինչև 14 տարեկան երեխայի՝ աշխատանքային գործունեության մեջ ներգրավվելը և ապահովում են գործատուի գործունեության նկատմամբ պետական վերահսկողությունը: Իսկ համաձայն Աշխատանքի պետական տեսչության մասին օրենքի, աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի կիրարկման նկատմամբ պետական հսկողությունը և վերահսկողությունը իրականացնում է աշխատանքի պետական տեսչությունը՝ համագործակցելով պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների ու հասարակական միավորումների հետ: Նույն օրենքով սահմանված են աշխատանքի պետական տեսչության խնդիրները՝ աշխատանքի պայմանների, աշխատողների աշխատանքային ազատությունների և իրավունքների պահպանման և պաշտպանության ապահովումը: Տեսչությունը ստուգումների արդյունքում ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի՝ հանցագործության հատկանիշներ պարունակող խախտումների մասին նյութերը պարտավոր է ներկայացնել իրավապահ մարմիններին: